



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**



Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





6

Կ Ն Դ Ի Ւ

43

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԱՑ

203.5
Խ-63

ԵԿ ՆՈՐԱ ՊԱՅՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԱՑ ԱՐԴՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆԱԿ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄՐԵՈՅ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Տ ՏՊԵՐԱՆԻ ԱԹՈՒՈՅ Ա. ՅԱԿՈՎԼԵՎԻՑ

— 1871 —



32/83-к.к.

130-62



34 | 15102-58
49

Խ Ն Դ Ի Բ

ՍՐԲԱԶԱՆ ՏԵՂԵԵԱՅ

1870 Օգոստոս ամսոյն 17 ին էր
եկաւ յԱրուսաղէմ Անձ . Այս սիփէ է
ֆէնտին, և անկէ առաջ եկած էր Դա-
մասկոսէն Ա սեմ . Ա հմէտ Բէշիտ վա-
լի փաշայն և Գաղղիոյ Պ. հիւպատոսն
նոյն քաղաքին՝ հրամանաւ Ա սեմափոյլ
Դեսպանին՝ իբր ՚ի կողմանէ । ատին
կղերին քննութեանց ներկայ գըտ-
նուելու պաշտօնիւ : Յիշեալ ամսոյն
23 ին դնացին միաբան ՚ի Ռեթէհէմ,
նոյն սպէս և Հայոց և Յունաց Պատ-
րիալքունք և Թարգմանք . և । ատինաց
կողմէն երկու կարգաւոր և թարգ-
մանն նոցա : Հոն । ատինաց վանքը
սակաւ մի հանգիստ առնելով՝ իջան
սուրբ Այրի եկեղեցին նոյն դռնէն
անցնելով՝ որ կէս դարէն ՚ի վեր վե-
ճի տակ է Հայոց և । ատինաց մէջ, և

Արքազան Պատրիարքն մեր Ոխնիք է ։
 Փէնտիբն ու շաղրութիւնը հրաւիրեց
 անոր խնդրոյն վրայ՝ իբր սկզբնապատ-
 ճառ բոլոր վէճերուն և անկարգու-
 թեանց ։ ըստ որում | ատինք սուրբ
 Այրը մանելու համար իրենց ունե-
 ցած յատկացեալ Ճամբէն ու դռնէն
 չանցնելով, վերսիշեալ դուռը բըռ-
 նութեամբ բացած են Եղիպատոսի
 իշխանութեան ժամանակ, և մեր եկե-
 ղեցւոյն մէջէն կ'անցնին կը դառնան։

Ուրբ Այն իջնելով՝ քննութեան
 կ'առնուն զայն որ բուն վէճի տեղն է
 երեք ազգաց մէջ, ուր | ատինք կրակ
 ձգելով այրեցին կանթեղները և յե-
 տոյ գողացան Հայոց Հօ և Յունաց
 շպատկերները, պատճառաւ հնա-
 ցեալ վարագուրի մի որ երեք ազ-
 գաց կը վերաբերի, և | ատինք կ'ու-
 զէին զայն առանձինն նորոգել։ Հոն
 յայտնեց Ո՞ւծ ։ Ոխնիք է Փէնտին
 թէ Յարձրագոյն Դրան կողմէն նոր
 վարագոյրը գալուն՝ Հայոց մնացեալ
 պատկերներն ալ տեղը պիտի դրուին
 առաջուան պէս։

Անկէ Վառասնից այրը երթալով
 և մանրախոյդ քննութեամբ ազքէ ան-
 ցընելէն ետքը կը դառնան Յունաց
 վանքը հանգիստ առնելու . եւ կը
 սկսին հոն նոյն Այրին վրայօք հարցա-
 փորձեր ընել : Յունաց պատրիարքը
 կը յայտնէ թէ , | ատինք 1839 թը-
 ւին յիշեալ Այրին մէջ վառօդ դնե-
 լով ուղեցին վլցընել որ յետոյ շինե-
 լու առիթ ունենալով իրենց սեփա-
 կանեն : Այս փորձը թէպէտ մի քիչ
 վնասեց այրին , բայց չայք և Յոյնք
 իմանալով բողոքեցին , եւ անոր հա-
 սարակաց ուխտատեղի ըլլալը ապա-
 ցուցանելով , հրաման եկաւ Ռ. Դըր-
 նէն և երեք ազգաց ծախիւք նորոգե-
 ցաւ : Այն դէպէր վկայեց նա եւ
 Ամեն . Արբազան Պատրիարքն մեր , ե-
 ռաց թէ , մինչեւ մօտ ժամանակներս
 գիւղացիք իրենք կը տանէին իւղ և
 մամ և կը լուսէին : 1866 ին կրկին
 փորձ մի ըրին | ատինք այրը իւրացը-
 նելու . կրկին դատ բացուեցաւ եւ
 մեր չայոցս և Յունաց քով գտնուած
 վաւերական թղթերով հառատառե-

յաւ հասարակաց ուխտատեղի ըլլա-
լը . և տեղւոյս քաղաքական ժողովոյն
հանրագրութեամբը Ի . Դուռը տե-
ղեկագրեցաւ . և հրաման եկաւ որ
Լատինաց նոր շինած պատը քանդուի,
որու համար էր այն ժամանակի ծա-
գած վէճը, և Եզրէթ փաշայն Ի . դրան
հրամանը կատարեց առջի վիճակին
դարձրնելով յիշեալ Այրը : Երկու
տարիէն յետոյ Լատինք կրկին ձեռնա-
մուխ եղան նոյն Այրը բոլորովին իւ-
րացընելու , յորմէ ստիպեալ Հայոց
և Յունաց պատրիարքունք կրկին բո-
ղոք ըրին առ Ի . Դուռն . և ահա այս
բողոքոյն պատասխանն է, ըստ , եկած
նոր հրամանագիրն զոր սկսած էք 'ի
դործ դնել համեմատ կամաց Բարե-
գութ Տէրութեան :

Յունաց վանքէն ենելով սուրբ
Օննդեան դրսի մեծ հրապարակը
կու գան . հոն Արքազան Պատրիարքն
մեր գերեզմանատան մէջ բլի նման
աղքիւսը ցոյց տալով Անձ . Աննիֆ
էտէնտիին՝ և Վսեմ . Վալի փաշային,
կըսէ . « Այս տեղս Հայոց գերեզ-

մանատան մէկ մասն է , որուն հա-
մար շատ անգամ բողոքած ու դատ
վարած եմք Յունաց հետ , եւ մերն
ըլլալը հաստատելով պարսպի մէջ
ամփոփել ուղած եմք . բայց ամեն
անգամ ալ Յունաց միաբանութիւ-
նը արգելք եղած է , և չէ թողու-
ցած որ մինչեւ անգամ մաքրել
տանք տեղը ապականութենէն՝ որ
հասարակաց առողջութեան ևս զնա-
սակար է : ” Անձ . Այսիփ է ֆէնտին
իրաւունք կուտայ զարմանալով միան-
գամայն Յունաց բռնութեան վրայ ,
որոնք ժամանակ ժամանակ ցոյց տուած
են այլոց սեփականութեանց ազատ
գործադրութեան մասին : Այսչափ
քննութիւններ եղան Իեթէհէմի մէջ
վէճի տակ եղած խնդրոց վրայօք :

(Օգոստոսի 24 ին տեղի ունեցաւ
առաջին ժողովը ’ի պալատ քաղոքա-
պետին , ուր ներկայացան վերոյիշեալ
անձինքը Երեք միաբանութեց կողմէն ,
այլ և Գաղղիական Պ . Հիւպատոսն
Դամասկոսի . և խնդիրն էր Պառասնից
Այրին վրայօք : Հոն Անձ . Այսիփ

Եֆէնտին Հայոց և Յունաց արդեն
 ծանուցեալ վաւերագիրները մէջ բե-
 րելէն եւ անսնց հաստատութիւնը
 ընդունուելէն յետոյ. | ատինաց կողմէ
 տրուած ցաւցակ մի ևս մէջ բերելով
 թուականներու շարք մի կը կարդայ .
 որոնք իբր թէ նոյն թուականներուն
 մէջ մէկ մէկ վաւերագրեր ու հրովար-
 տակներ ընդունած ըլլան | ատինք
 յիշեալ Այրին համար : Օ արմանա-
 լով Ա. Պատրիարքն մեր կը հարցընէ
 թէ՝ «Այդ թուականները հէօճէթ
 ներու ու հրամանագիրներու են : —
 Վ կայագիրներ են , կ'ըսէ Անձ . Այս-
 նիֆ Եֆէնտին , զորոնք | ատինք ըս-
 տացեր են ուխտի եկող Եւրոպացի
 կոմսներէ , իշխաններէ , եւ երեւելի
 ճանապարհորդներէ , որոնք տեսած
 են յիշեալ Այրը , և կը վկայեն թէ՝
 | ատին կարգաւորք հռն պաշտօն կը
 վարեն եղեր : — Անդ ընդունելի չեն
 ատոնց վկայութիւնը , կը կրկնէ Այր-
 բազան Պատրիարքը , ըստ որում ոչ
 մեր ազգէն են և ոչ մեղ կրօնակից .
 ուխտաւորք ինչ որ լսեն իրենց կար-

գաւորներէն՝ նոյնը կ'ըմբռնեն և ըստ
 այնմ կը վկայեն : „ Գիտէր Այստիք
 էֆէնտին ևս այն թղթերուն ինչ ար-
 մէք ունենալը : Ըետոց ուրիշ հնա-
 դոյն թուղթ մի մէջ կը բերէ արաբե-
 րէն լեզուով գրուած , որ հնութեան
 երեսէն եղծուած ու գրեթէ անըն-
 թեռնի եղած էր . այս թղթին համար
 լատինք կը վկայեն թէ՝ Եպիստոոի
 Աութանները տուածենիրենց, որեթէ
 ստոյգ եւս ըլլար , դարձեալ արժէք մի
 չէր կրնար ունենալ ։ Դրան կողմէն
 տրուած հէօճէթներուն քոլ : Աւստի
 այս քննութիւններէն յայանի ըլլարով
 Քառասնից Այրին հասարակաց սե-
 փական և բոլոր քրիստոնէից ուխուա-
 տեղի ըլլալը ըստ հաստատութեան
 հայոց և Յունաց ձեռքն եղած հը-
 րամանագիրներուն , ժողովը լուծ-
 ուեցաւ առանց վերջին որոշում մի
 արուելու :

Հետեւեալ օրը երկրորդ նիստն
 եղաւ նոյն պալատին մէջ , և խնդրոց
 առարկայ էր սուրբ Յակովը եկե-
 ղեցւոյ մէջ լատինաց պատարագե-

լուն արդելուիլը : Այս ժողովոյս մէջ
 յիշեալ միաբանութեան կողմէ մարդ
 չէր կանչուած , և միայն Դամասկոսի
 հիւպատոսը ներկայ էր : Ո՞նիք էֆէն
 տին սկիզբն տուաւ քննութեան և
 հարցուց Ա . Պատրիարքին . “ Ո՞րչափ
 ժամանակէն ՚ի վեր է լատինաց Ո՞ւր-
 կագուալ եկեղեցւոյն մէջ պատարագ
 ընելու սովորութիլը , և ո՞ր իրաւամբք
 ստացեր են այդ թոյլուութիւնը ,
 և որո՞նք են արդելման պատճառները : ”
 Այս հարցմանց պատասխան տուաւ
 Ո՞րբազան Պատրիարքը . “ Բայց համար-
 ձակութեամբ առանց բան մի ծած-
 կելու , քանի որ անժխտելի իրաւունքը
 ներ ունիմ : Հարիւր տարիի չափ կայ
 և ոչ աւելի՝ որ իմ նախորդներս թոյլ-
 տուութիւն ըրած են լատինաց՝ տա-
 րին անդամ մի պատարագ ընելու մեր
 երկու եկեղեցւոյն մէջ . և այս թոյլ-
 տուութեան միմիայն պատճառ եղած
 է այն ժամանակներս մեր և լատին
 միաբանութեանց փոխադարձ սէրը ,
 որով իրարու հետ կապուած էին :
 Բայց որում իրենք ալ այս շնորհմանս

փոխարէն թոյլտուութիւն ըրած էին
մեր ցամաքային ուխտաւորաց . որոնք
Նաղարէթէն անցած ժամանակնին
մեծ մարդասիրութեամբ կը հիւրա-
սիրէին զիրենք , և իրենց եկեղեցւոյն
մէջ կը թոյլատրէին որ մեր քահանանե-
րը աղդային լեզուաւ իրենց ժամեր-
գութիւնն մինչեւ անդամ աստուա-
ծային պաշտօնը կատարեն 'ի մեծ մը
խիթարութիւն մեր ուխտաւորաց .
Բայց անոնց այս մարդասիրութիւնը
երկար ժամանակ չտեւեց . մեր ուխ-
տաւորաց այն ճանապարհէն գալու
երթեւեկութիւնն ալ նուազեցաւ .
և հիմոյ հան հանդիպող սակաւ աթիւ
չայ ուխտաւորաց ոչ թէ պատարագ,
այլ Աւետարան կարդալու անդամ չեն
ներեր , և ոչ իսկ իրենց վանքը կ'ըն-
դունին :

“ Այնակէս հոս | շն-թէրիմ (Յով
հաննու ծնունդ) ըսուած գիւղը վանք
մի ունին | ատինք որ ուխտատեղի է
քրիստոնէից , ուր տարին անդամ մի
մեր ուխտաւորները կը խրկենք , ո-
րոնք չորս հինգ օր կարդաւ կ'երթան

ուխտ ընելու : Հոն առջի ժամանակ
ները մեր քահանայք հոգեւորական
պաշտօն եւս կը կատարէին , իսկ ան-
ցեալ տարիները և ոչ իսկ աւետարան
թողուցին որ կարդան , թէ պէտ եւ
բոլոր քրիստոնէիցո աւետարանն մի և
նոյն վարդապետութիւնն կ'ուսուցա-
նէ . բայց որովհետեւ վանքը իրենց
սեփական է , իրաւունք չունեցանք
բողոքելու :

“ Կ'սոնցմէ ՚ի զատ ուրիշ շատ զրկո-
ղութիւններ ունեցանք և կ'ունենանք
միշտ | ատինաց կողմէն , զորոնք յիշե-
լու համար ասկէ աւելի յարմար ա-
ռիթ չեմ կրնար գտնել : Քանի որ իմ
քարեգութ Տէրութես կողմէն քըն-
նիչ եկած էք , պարտաւոր էք իմանալ
Տէրութեանս հարազատ և հաւատա-
րիմ հպատակացս կրած զրկողութիւն-
ները , և ետ գառնալնուդ իմացընէք
զանոնք իմ () գոստափառ Տիրոջս և ա-
զաշէք որ իւր գթութիւնը իսնարհ
հպատակացս վրան դարձընէ : Ահա-
ւասիկ մեր կրած զրկանքները :

“ Ա . Վ երսիշեալ | շյն—Քէրիմ գիւ-

զին մէջ յառաջ ժամանակաւ վանք
մի ունէինք , ինչպէս մինչեւ յայսօր
դեռ գեղացի ֆէլլահք կը վկայեն . և
Վաղըբափի Արաբացւոց յարձակմանց
պատճառաւ բարձի թողի եղած և
աւերուած կը կենար . հիմակ քանի մի
տարի կայ որ լատինք սկսած են տի-
րել անոր :

“Բ . Ի՞նչթիշէմի եկեղեցւոյն հիւսիւ-
սային գասուն մէջ եղած միջնադու-
ռը , զոր Հզիսկտոսի իշխանութեան
հրամանաւ կրկին անդամ բացին , ո-
րուն մշտնջենապէս գոց մնալուն
հրովարտակն և հէօձէթները ամբողջ
քովերնիս կը գտնուին , եթէ բարե-
հաճիք կրնաք տեսնել զանոնք , և գը-
րեթէ մեր ժողովուրդը կոխկրուելով
կ'անցնին կը գառնան :

“Դ . Այս եկեղեցւոյ սուրբ Այրին
հըկիզութիւնը և մեր 12 պատկերսց
գողցուիլը :

“Դ . Այս Այրին աստիճանները աւ-
լելու համար մեր ունեցած իրաւուն-
քը խափանել ուղելինին , և գլուխտա-
նելու համար դինեալ կրօնաւորաց

խումբ մի հոն բերենին, ինչպէս դիտէ Վսեմ. Քեամիլ փաշայն, և կըքնաք ստուգութին իմանալ Ալի պէսկէն, որ բարեկարգութիւնը պահելու համար հոն խրկուած էր Վութասարուֆ փաշայէն, բայց Լատինք անոր իշխանութիւնն անդամ՝ յանդրդնեցան չճանաչել, եւ միայն Գաղղիոյ հիւպատոսին հրամանացը կը հնազանդիմք ըսելով ետ դարձուցին :

“Ե. Ախօնի գերեզմանատան խնդիրը, ուր տեղ Իզզէթ փաշայի օրով համարձակեցան Լատինք երկու դուռքանալ մեր գերեզմանատան մէջ՝ ազգիս իրաւունքը ոտնակոխ ընելով։ Եւ թէպէտ յիշեալ փաշայն անոնց ըրած անիրաւութիւնը աչօքը տեսած ատեն ըսաւ թէ՝ “ Հայոց գերեզմանատան վրայ դուռք բանալու իրաւունք չունիք, քանի որ հիւսիսային կողմը արքունի պողոտայ կայ։ Եւ ես, կ'ըսէր նա, Երուսաղէմի Վութասարը ըլլալով՝ հոս ձեր շինած դըռները չեմ ճանչնար, ո այսու ամենայնիւ որմնադիրները անոր երեսն ՚ի

վեր նայելով՝ իրենց գործը կը շարու-
 նակէին, և չէր համարձակեր շինու-
 թիւնը դադրեցընել իւր իշխանու-
 թեան ուժովը եւ մեր իրաւունքը
 պաշտպանել: — Անսնք պաշտպան ու-
 նին իրենց Պաղղիոյ հիւպատոսը, ըսի
 ես, որու զօրութեամբը այս անիրա-
 ւութիւնները կ'ընեն, դուք ալ
 պարտաւոր էք Օսմանեան մեծա-
 զօր Տէրութեան կողմէն մեզ պաշտ-
 պանել: — Ասկէ աւելի բան մի չեմ
 կրնար ընել, պատասխանեց Իզզէթ
 փաշայն, և ոչ իմ Տէրութիւնս կրնայ.
 դուք ալ եթէ կ'ուզէք կրնաք ձեզ
 ուրիշ տէրութենէ մի պաշտպանու-
 թիւն գտնելո՞ Այս պատասխանիս վը-
 րայ սա միայն աւելցուցի ըսելով, թէ
 իմ Տէրութիւնս ամենեւին տկար չէ
 անիրաւութիւն մի զսպելու համար,
 այլ դուք էք որ կը տկարացընէք Տէ-
 րութեան զօրութիւնը: Եւ խնդրեցի
 իրմէն որ գրով տայ ինձ այս արտօնու-
 թիւնը, բայց նա վախցաւ՝ ինչպէս
 որ ընական է: Անոր վրայ երկու ան-
 գամ բողոք ըրի առ Բ. Դուռն,

բայց օգուտ մի չտեսայ , որով ստու-
գուեցաւ Կղզէթ փաշային խօսքը :

“Զ . ‘Դարձեալ զրկողութիւն կրե-
ցինք । ատինացմէ Յունաց հետ , երբ
յափշտակեցին անոնք հասարակաց
այն սուրբ տեղը Դեմուեմանի ձորին
մէջ , ուր տեղ Անսիա (Քրիստոս) ա-
զօթած է . և հակառակ մեր երկու
ազգացս բողոքին զոր Ապիֆ փաշային
մատուցինք , անոնք ոչ միայն տիրե-
ցին տեղւոյն , այլ եւ պարիսպ դար-
ձուցին բալորտիքը բանի մը տեղ չդնե-
լով Փաշային հրամանը , որով շինու-
թիւնը կ’արգիլէր :

“Բոլոր այս զրկանացս և անիրաւու-
թեանց սիրով համբերեցինք յոյսեր-
նիս միայն Անձազօր Առւլդանին ար-
դարութեանը վրայ դնելով թէ օր մի
հարկաւ իւր արքունի գլութեամբ
մեր դատը արդարութեամբ կ’որոշէ :
Հայց երբ համարձակեցան ատինքիմ
սեփիհական եկեղեցիս ալ երկու ան-
գամանարդել ալ համբերութիս հա-
տաւ և միտքս դրի որ մեր եկեղեցեաց
մէջ պատարագ ընելու համար անոնց

տրուած չնորհը ետ առնում։ | ասն զի,
 կրկնեց Արքազան Պատրիարքը ներւ-
 ղութիւն խնդրելով Վիւնիք էֆէն-
 տիէն խօսքը երկարելուն համար . ա-
 ռաջին անգամուն՝ որ Եղիպտաս կը
 գտնուէի Դաղղիոյ հիւպատոս Խամսն
 առ Պարրիէրը՝ Ապիքի փաշայէն խումբ
 մի կանոնաւոր զօրք բերել տալով՝
 Տէրութեան հպատակ ազգային վան-
 քիս դիմաց շարել կուտայ՝ որպէս թէ-
 ինքը գալու և երթալու ժամանակը
 զինքը պաշտօնապէս բարեւեն, եւ
 քանի մի զապթիէ եւս եկեղեցւոյն
 դուռը կայնեցընել կուտայ և Եյքա-
 նին գոհ չըլլալով՝ աւելի պաշտօնական
 կերպարանք մի տալու համար, | ա-
 ռին եկեղեցւոյ մէջ գնելու առանձին
 արտօնութիւն ունեցած իւր պաշտօ-
 նական աթոռն ալ հետը կը բերէ իմ
 ազատ եկեղեցւոյս մէջ գնելու, և բոլոր
 ազգիս իրաւունքները ոտքի տակ առ
 նելով և զիս և իմ ազգս Վեճազօր
 Տէրութեանս աչքին կասկածելի ցու-
 ցընելու համար պաշտօնական (ունի-
 ֆօրմա) զգեստները հագած այնպէս

կուգայ, որ բնաւ եղած բան չէր:

“Եյս ցաւալի լուռը թէպէտ և իւմացայ Եգիպտոսի մէջ, բայց ի՞նչ կրնայի ընել, արդէն եղածն եղած էր. նա իւր նպատակը ’ի գործ դնելու միջոց գտած էր.”

“Հետեւեալ տարին իմացայ հեռուանց՝ թէ յիշեալ հիւպատոք նոյն հանդիսիւ ու պաշտօնապէս դալու դարձեալ միտք ունի. ուստի 20 օր յառաջ իրեն մէկ սերտ բարեկամը քովս կանչել տալով. և առջի տարուան եղած դէպքերն իրեն պատմելով՝ նոյն բարեկամին հետ լուր խրկեցի իրեն որ եթէ դարձեալ այն կերպով գալու լինի՝ չեմ ընդունիր զինքը, վասն զի այլէ բարեկամութիւնն ըսի, և այլէ պաշտօնականութիւնը՝ որու մէջ կրնայ իրաւունք ներ զահ ըլլալ, և քաղաքականութեն գէմ անսպատեհութիւններ ծագիլ: Ենցեալ տարուան բերած զօրքերուն, զապթիէներուն, պաշտօնական աթուանն և ունիֆորմայով գալուն համար իրեն կը բողոքեմ միայն ’ի շնորհս իւր

բարեկամութեանը . բայց եթէ մտիկ
 ընելու չըլլայ , այն ժամանակ տեղւոյս
 կառավարութեան կը բողոքեմ , վասն
 զի անոր այն ընթացքը իմ իրաւանցս
 կը դուչէր . Հիւպատոսին բարեկամը
 խօսք տուաւ ինձ խաղաղութեամբ
 գործը լրացընելու՝ երեք չորս օր պայ-
 մանաժամ ինդրելով : Աս վեց օր պայ-
 մանաժամ՝ տուի . բայց նա ոչ վեց և
 ոչ տասն օրէն երեւցաւ . ուստի լուր
 խրկելով կանչեցի զինքը ու չդալուն
 պատճառը հարցուցի : Ա, սկսաւ զա-
 նաղան պատճառներ մէջ բերելով մի-
 ամտեցնել զիս . և դարձեալ երեք օր
 պայմանաժամ ինդրեց որ երթայ հա-
 մոզէ զիիւպատուը որ իւր նպատակէն
 ետ կենաց : Դարձեալ վեց օր անցաւ
 և երբ չերեւցաւ բարեկամը , բողոքա-
 գեր մի խրկեցի առ Ա, աղիք փաշայն,
 և անոր հետ մէկ տեղ անցեալ տա-
 րուան ըրածին համար բողոքեցի , ցու-
 ցընելով թէ՝ հիւպատոսին այս ըն-
 թացքը թէ մեր սովորութեան և թէ
 բաղաքականութեան հակառակ է . և
 որովհետեւ Ա . Դրան հպատակ ժո-

ղովուրդ մի եմք , չեմք կրնար ընդուՆիլ զինքը մեր եկեղեցւոյ մէջ՝ Եթէ պաշտօնական շքով եւ զինուորական հանդիսիւ գալու լինի . վասն զի կըք նայ այն ժամանակ Տէրութիւնը իւրաւամք կասկածել մեր վրայ , իբրութէ Գաղղիոյ պաշտպանութեան ներքեւ դանուելու տրամագիր եղած ըլլամք :

“Այսն բողոքս ընդունուեցաւ , և Վսեմ . Կազիֆ փաշայն ալ մեր իրաւունքը քաջ ճանաչելով՝ կ'ուղէր մեր զրկանացը վերջ մը տալ , կամ գոնէ խաղաղասիրական միջոց մը դտնել , վասն զի կը վախնար միանգամայն . գիտելով | ատին կղերին ժամանակ ժամանակ ըրած յանդուգն ձեռնարկութիւններն , և անոնց մէջ որ և իցէ կերպիւ յաջողենին , վասն որոյ չվրտահեցաւ կտրողական պատասխան մը տալ , Երբ միջոցը երկու օր մնաց | ատինաց գալուն , Վսեմ . Կազիֆ փաշայն իւր թարգման Ստիրեատիս էֆէնտիֆին հետ մեր վանքն եկաւ աեսութեան պատճառաւ , եւ ոսյն

ինդիրը ինքը բացաւ մեղմէ յառաջ,
 և ըստ . “ Ձեր բողոքը կարդացի ,
 իրաւունքնիդ արդար է , և ես պար-
 տաւոր եմ իմ Տէրութեանս հպա-
 տակաց իրաւանց վրայ օրինաւոր հըս-
 կելու . այլ բան մըն ալ կայ որ , այն ալ
 պէտք է մոտածեմք , ետքը ռաշեաբար-
 ժեն , իւսու չըգարճայալը : Այս լ ատին
 կղերաց արարքներն եւ բնութիւնն
 դուք մեղմէն լաւ գիտէք . ասոնք երբ
 իմանան թէ իրենց այս սովորութիւնն
 պիտի խափանուի , թէ և արդարու-
 թեամք , բայց անոնք բոլոր աշխարհ
 վլ վլուկի կուտան , նախ դեսպանին ,
 ապա Յարային , յետոյ բոլոր Եւրո-
 պիոյ տէրութեանց սուտ ու սիսալ
 տեղեկութիւն կուտան : Այս մանա-
 ւանդ , ահա երկու օր մնաց անոնց
 գալուն . ամեն բանէն յառաջ իրենց
 բնական եղած ապստամբական ոգին
 ձեռք պիտի առնեն , բուռն զօրութիւ-
 պիաի յարձակին ձեր վրայ , եւ ես
 պիտի պարտաւորուիմ միջամտութիւ-
 նել զօրք խրկելով , և իրենց սովորու-
 թիւնն կատարել տալ , որով աւելի

գէշ կ'ըլլայ ձեզ . ահա ասոր համար
եկայ որ պէտք եղածները ձեզ խօսիմ .
որ իւ դուք ըստ այնմ պատրաստ գրու-
նուիք :

“ Հրամանյեցէք Փաշա էֆէնտի , ըսի ,
մեր ինչպէս գոնուելուն եղանակը
մեղի ծանուցանել , որ մենք ալ իմա-
նամք , և եթէ արդար և օրինաւոր է
և մեր իրաւանց չդպչիր , պարտաւոր
եմք ընդունել և գործադրել իբրեւ
հարազատ հպատակ Տէրութեն . բայց
տար Վատուած որ Ձեր Ասեմութեան
ըսելիքներն ալ հարազատ և հաւա-
տարիմ հպատակի արժանաւոր ըլլա-
յին , և անոր արդար իրաւանց պաշտ-
պանութեանը օդատակար : —

“ Վարունակեց Ասեմ . Կաղիֆ փա-
շայն . — Դուք ձեր տուած բողոքով
կ'ուզէք որ Տէրութեան զօրքը չդայ
ձեր վանքին դիմացը , և զապթիեներ
չկայնին եկեղեցւոյ փակին մէջ . հիւ-
պատոսը համազգեստով չդայ , և իբեն
յատկացեալ պաշտօնական աթոռը
հետը չքերէ . ասոնք չե՞ն ձեր արգի-
ւել ուղածնիդ տուած ինդրագրեր-

Նուդ Համեմատ : —

“ Եսո՛ , պատասխանեցի : — Եսոնց
ամենն ալ ոչ ինչ բաներ են , ըստ
Վահեմ . Կազիֆ փաշայն . մաիկ ըրէք
որ ձեղ բացատրեմ : Կախ՝ կը ցաւիք
և չէք ուզեր որ Տէրութեան կանո
նուց դիմացը գան այն օրը . ասկից
ինչ կ'ելլէ , զօրքը Գաղղիոյ տէրու
թեան զօրքը չէ , այլ մեր տէրութեան
որուն Հավանաւորութեան տակ կը
գտնուիք գուք . այս աւելի ձեղ օգ-
տակար և պատիւ է , ասկից երբէք
միաս մի չկրնար ծնանիլ , ուրեմն ա-
սոր Համար այսքան տագնապիլ և աս-
դին անդին իյնալ բողոքենիդ աւելի
է : Երկրորդ , Գաղղիոյ հիւպատոսին
Համազգեստով գալը . ասկից ևս ինչ
միաս կրնայ ծագել , Համազգեստով
կամ առանց Համազգեստի եկեր է .
ինքը գիտէ , ինչպէս կ'ուզէ թող գայ.
եթէ պատիւ և եթէ անարգութիւն
երենն է , քանի որ ինքն կ'ընդունի և
կ'ընէ՝ ինքը գիտէ . ասկից ալ ձեր ի-
րաւունքին դպչելու բան մը չեմ նըւ-

մարեր, վասն որոյ խօսելնիս անդամ
չարժեր, լուելը աւելի լաւ է՝ որ վերջը
ըլլալիք գէշութիւններէն ազատ կը
մնաք: Երբորդն է, Գաղղիոյ հիւպատո-
սին իրեն յատկացեալ աթոռը հետը
բերելը, այս եւս ՚ի կարգի միւս խըն-
դրոց նկատել պարտիմք: Նոյն աթոռը
բերելը չըերելը բան մը չգցացըներ.
Եթէ բերած աթոռը կրկին ետ չուա-
նի եւ ձեր եկեղեցին ձգէ տեղ մը
յատկացնելով, այն ժամանակը իրաւ-
որ ձեր իրաւանց դպած կ'ըլլայ. քա-
նի որ կըտանի, անկից ալ վտանգ մը
չկայ: —

“Այս խօսքերը քանի որ Վաեմ.
Կաղիք փաշայն կը խօսէր, իրեն
թարգմանն ալ միշտ՝ Այն, այնպէս է,
այս բաներուս վրայ բան խօսելը ան-
դամ աւելի է, այս բաներուն մէջ
զնասակար բան մը չկայ, քանի որ կու-
դան և գալու սովորութիւն ունին,
ինչպէս կ'ուղեն այնպէս դան, ինչ
կ'ըլլայ. կ'ըսէր: — Արդեօք ձեր ըսած-
ները լրացուցիք հարցուցի Վաեմ.
Փաշային: — Այն, պատասխանեց Կու-

բին Վ սեմութիւնն : —

“ Ակսայ խօսել յետոյ այսպէս .
Կընդունիմ Ձեր Վ սեմութեան ը-
սածները՝ երբ նոյն ըսածիդ համեմատ
իմ ըսելիքներուս ալ այդպէս գատառ-
տան ընէք և իրաւունք առք : Վեզի
ալ սովորութիւն եղած է , ինչպէս
վերն ալ յիշեցաւ , ամեն տարի Այն-
Քէրիմ (Յովհաննու ծնունդ) ըս-
ուած գիւղին մէջ իրենց ուապհոկան
եկեղեցին երթալ շարունակ ամեն
տարի երեք չորս՝ երբեմն եթէ ուխ-
տաւորնիս շատ ըլլայ՝ մինչև հինգ օր
մաս առ մաս կը տանենք՝ հրաման
առնելով իրենցմէն , ինչպէս իրենք ևս
հրաման կառնեն մեզմէն մեր սուրբ
Յակովը և սուրբ Փրկիչ եկեղեցի-
ները գալու համար :

“ Վ յսուհետեւ ես ալ պէտք է ըս-
կրսիմ Յովհաննու ծնունդ երթալու
օրերը Ձեր Վ սեմութեանը լուր տալ ,
որ ինչպէս Գաղղիոյ հիւպատոսին մեր
վանքը գալու համար զօրք կուտաք ,
վաղն ալ ես անձամբ Յովհաննու ծը-
նունդ սիտի երթամ , հիւպատոսին

Համազգեստին տեղ իմ Տէրութեանս
 շնորհած շքանշանովը , անոր աթու
 ռին փոխարէն հետս մէկ պատրիարք
 քական աթուռ տանելով իրենց եկեղեցւոյ մէջ գնել նստելու . զօրքին
 զօրք , համազգեստին համազգեստ ,
 աթուռին աթուռ , բայց սա տռաւելութեամբ որ իմ իրաւունքս պահապանելով ձեր պարաքը կառարէք , որ
 է՝ նկատել հիւպատոսին աստիճանն և իմ , անոր օտար տէրութեան պաշտօնեայ ըլլան և իմ մեծազօր (Կոմանեան Տէրութեան հաւատորիմ հըպատակ և ընդհանուր Ացքի մը Պատրիարք ըլլալս և նմանապէս Տէրութեան հրովարտակով ՚ի պատիւ ընդհանուր Հայոց ազգիս շնորհած արտօնութիւնները : Եթէ Ճիշտ այս նկարագրութեանը համեմատ փոխարէն հատուցանելու խօսք կուտաք , և այն ոչ միայն բանիւ այլ և Շեր Վ սեմութեան և անոնց ստորագրութեամբը , իսկոյն հաճութիւն պիտի տամ , քանի օր որ տեւէ մեր սւխտաւոր տանելը անոնց եկեղեցին , ուր առաջին օրը անձամբ

ես կ'երթամնոյն հանդէսով և պատրաստութեամբ . երկրորդ օրը փոխանորդս կը խրկեմ , երրորդ օրը այլ ոք Եպիսկոպոս , օր մի ալ ժամագմանը կը խրկեմ : Եթէ սցսպէս կը հաճիք և կը հաճին լատինք , հիմակուրնէ իմ հաճութիւնս տալով՝ Ձեր Վահմութեանը լուր կուտամ որ նոյն արտրողութիւնս կատարելու համար զօրք պատրաստէք , և տեղն ալ երկուժամէն աւելի հեռի ըլլալուն համար՝ այսօրւընէ սկսիք հոն տեղ մը պատրաստել , այսինքն շինել , զօրաց պատրապարութեանը համար :

Ա սեմ . Եպիֆ փաշոյն այս բանին վրայ բաւական մտածելէն զկնի ըստու . — Իրաւունք ունիք այս բանին մէջ , և իմ սլարտաւորութիւնս է որ ձեղի ալ զօրք առավ ձեր իրաւունքը եւ պատիւը պահպանեմ , բայց երկու ժամէն աւելի տեղ զօրք խրկել այդ դժուարէ , եթէ մէկ օր ըլլար գոնէ՝ կարելի էր . եւ այն տեղ զօրքը եթէ մնայ՝ տեղ չկայ , եթէ վերադառնայ , դարձեալ երթալ կարե-

լի չե ամեն օր ։ այս ալ չեղաւ ։ —
Դարձեալ աշխատեցաւ որ զմեղ հա-
մողէ առջի ըստին վրայ ։

“Արկնեցի ես. Եթէ ոյդ բանը ձեզ
համար անկարելի կը թուի կատարել,
ուրեմն կ'երեւի թէ Գաղղիոյ հիւպա-
տասին խնդրանաց համեմատ անցեալ
տարուան պէս դարձեալ զօրք պիտի
տաք ։ Այս, առաց բգեշխը ։ Տու էք
վնաս չունի ըստ. Թող գայ զօրքը վա-
նուցս դիմացը շարուի, առաւօտուն
Հիւպատոսին գալու միջոցները ես
անձամբ վար կ'իջնամ, զկնի զօրաց
գլխաւոլը բարեւելոյ՝ կ'ըսեմ իրեն.՝
Ով խրկեց զձեզ, զօրապետ տէր, և
ինչ պաշտօն կատարելու եկած էք
հոս. ՚ի հարկէ պիտի ըսէ, հրամա-
նաւ Վոեմ. Փաշացին եկած եմ, որ
Գաղղիոյ հիւպատոսին գալու ատեն
զօրքերս բարեւ բանեն ՚ի պատիւ ե-
րեսաց նորա ։ Բաց այս երկու կտոր
հրամաններէ՝ ուրիշ հրաման ունիք
ձեր Վոեմ. Փաշացէն, կը հարցնեմ
իրեն, ՚ի հարկէ պիտի ըսէ՝ նչ. ու-
րեմն, զօրապետ տէր, դուք միայն

ձեզ հրամայեալ պաշտօնը լաւ կատա-
րեցէք ամենայն դգուշութեամբ , և
եթէ ուրիշ բան պատահի մեր և լա-
տինաց մէջ ձեր հոս եղած ժամանակ ,
կը խնդրեմ միջամտութիւն ընէք ,
վասն զի՞ ինչպէս ձեզ ձեր տիրոջմէ-
տրուած պատուէրը ընդունելի է և
պարտաւոր էք ըստ այնմ դործել և
հսկել , և ես ձեզ նման զօրապետ մի-
եմ մի և նոյն մեծազօր Տէրութեան
կողմէն ընդհանուր ազգիս հաճու-
թեամբ ազգային սեպհականութիւն-
ներս պահպանելու և հսկելու հա-
մար . իմ վեհափառ Տէրս թագաւոր
ըլս իւր հրովարտակովը զիս նուաս-
տըս այս բոլոր սեպհականութեան
վրայ Պատրիարք և զօրապետ կարգած-
է . և սաստիկ պատուէր տուած է որ
իմ ազգային իրաւունքներուս վրայ
հսկեմ , վասն զի իւր իրաւունքները
կը սեպուին՝ քանի որ ես անոր ողոր-
մած հովանաւորութեան թեւերուն
տակն եմ զինի Աստուծոյ : —

“Օ զօրապետաց այսպէս ըսելէս ետ-
քը պէտք եղած պատրաստութիւն-

ներն կը տեսնեմ, նոյն հիւպատոսին
 դարձեալ համազգեստով և աթոռով
 գալը իմանալնուս պէս՝ թարգմանս կը
 խրկեմ. իրեն ըսելու թէ՝ Պատրիարք
 բարեկամնիդ լուր կուտայ իմ բեր
 նովս թէ, ինքը (Օսմանեան Ա է հա-
 վառ թագաւորին հսկատակն է, եր-
 բեր չուզեր որ Հայոց ազգին իւր վը-
 րայ ունեցած հաւատարմութիւնն
 ամենափոքր բժով անգամ ազարտել,
 այր վասն չկընար ձեր Ա սեմութիւնն
 այսպիսի պաշտօնական հանդերձին-
 (ունիֆօրմայով) և աթոռով ընդու-
 նիլ, եթէ պարզ հագուստով կը բա-
 րեհաճիք զմեզ պատուել՝ հրամայե-
 ցէք. Եթէ զկնի այսր դարձեալ շա-
 րունակէ իւր գալուստը, իսկոյն լուր
 կուտամ պատրաստած մարդկանց որ
 վանուց երկաթեայ դուռն իփակեն,
 բանալիքներն ինձ բերեն, ինչպէս ը-
 րաւ. մօտ տարիներս իրեն սեփհական
 եղած Ա ատին եկեղեցւոյ Պատրիար-
 քը, սուրբ Յարութեան դուռն ա-
 նոր երեսին փակել տալով հանդիւ-
 սաւոր օր մը նոյն հիւպատոսին կար-

գեղ դուրս զօրք բերելուն համար :

“Եսոր ալ վերջը գեշ եկաւ, բաւ
Վսեմ. Փաշայն, այդպիս ալ աղեկ չէ :
— և ուրեմն, ըսի, ես բոլոր միա-
բանութիւնս ժողվեմ իմ սեփական
վանքես դււրս ելլեմ, թող լատինք
դան տիրապետեն, վասն զի այս
ձեր բռնած ընթացքը այդ ըսել է .
քանի որ դուք, որ այսօր իմ Վեհ :
Թագաւորիս ներկայացուցիչն էք և
պարտիք իմ այս տագնապիս մէջ զիս
ամենայն կերպիւ պաշտպանել, դուք
ոչ կամիք, և ինձ ոչ թոյլ տաք իմ
սեփականութիւնս պաշտպանելու
համար ընելիքներս ընել : —

“Խարձեալ Վսեմ. Փաշայն բարե-
մտութեամբ կ'աշխատեք իւր թարդ-
մանին հետ զիս համոզելու, բայց
քանի որ իրաւունք մի կորսնցնելով
պիտի ըլլար, իմ համօզուիլս ալ ան-
կարելի էք, և անկարելի եղաւ :

“Խարձեալ ստիալեալ Վսեմ. Փա-
շային այս խաղաղասիրական միջոցէն,
որ երբեք չէք ուղեր դիմադրու-
թեան նշոյն անդամ ցոյց տալ լա-

տինաց կամ Հիւպատոսին, պարտա-
 ւորեցանք երրորդ եղանակ մի եւս
 մտածել, և ասացի. — Ա աղօւեան օր
 լուր կուտամ Ձեր Վանմութե թէ
 Լատինք պիտի գան մեր Եկեղեցին
 պաշտօն կատարելու . այսուհետեւ
 անսնց վրայ վստահութիւն չունիմ,
 քանի որ այսպէս անիրաւ յարուց-
 մունքներ կ'ընեն. ոյր վասն վազուեան
 օրը ինձ տասն հատ քաղաքապահ զօրք
 շնորհես վանուցս դուռը գտնուին .
 այսպէսուվ ԱՇԾ . Հիւպատոսին ալ
 եկած ժամանակը բարեւ ալբոնելու
 զօրք խրկելէն կ'ազատիք . Տայց երք
 Պ. Հիւպատոսը ձեղմէն զօրք ուղէ,
 պէտք է ըսէք՝ որ Հայոց Պատրիարքը
 լուր խրկած էր որ այսուհետեւ Լա-
 տինաց վրայ հաւատարմութիւն չու-
 նիմ, վասն որոյ վազուեան օրը ինձ
 տասն հատ քաղաքապահ զօրք շնորհք
 ըրէք՝ և խրկեցի . և ահա հոն զօրք
 կան . նորին Վսեմութիւնն ալ եթէ
 երթալու ըլլայ՝ բարեւ ալ պիտի բրա-
 նեն, ուրիշ զօրքի կարօտութիւն չու-
 նիք ըսելով զօրք տալէն կ'ազատիք ,

զուր տեղը Տէրութեան զօրքերն ալ
չէք յոդնեցըներ :

“ Աւ է այս եղանակն, ըստ Վ սեմ
Փաշային զօրաց մասին, այլ Հիւլա-
տոսին օնիֆորմայով գալուն և աթոռ-
բերելուն մասին ինչ պիտի ընէք և
լիչ եղանակ պիտի բանեցնէք, ա-
սոնք ալ այսպէս դիւրին կերպիւ-
պէտք է լուծել : —

“ Վ սացի . այն երկու տեսակ պաշ-
տօնական անիրաւութիւնքն ուրիշ
միջոցաւ չեմ կրներ լուծել, եթէ ոչ
վերսիշեալ եղանակաւ, զոր այժմ
պատմեցի Զեր Վ սեմութեանը : Ե-
տոր լուծումը Պ. Հիւլատոսին ձեռ-
քըն էր, և շատ դիւրութեամբ եթէ
կամենար՝ և եթէ իրեն բարեկամին
ձեռօք լուր տուած ատենս յանձն
առնէր այնպէս առնել, նոյն խնդիրը
խկոյն իր դժուարութեան մէջ ինքնի-
րեն պիտի լուծուէր . այլ նա չկամե-
ցաւ . ոյր վասն պէտք է՝ ինչպէս վերը
ըսի, այնպէս զինքն ալ և իր պաշտօ-
նական աթոռն ալ ետ դարձնեմ . ա-
տոր ուրիշ միջոց չեմ կրնար գտնալ,

և կը խնդրեմ որ ալ զիս ասկից աւելի զիջում ընելու շատիպէք . չպիտի կարենամ ընդունիլ, վասն զի մեծ վրանգ կայ իմ աղդային սեփհականութեանս և Տէրութեանս պատուոյն , որոց և ոչ մին կրնամ զոհել առանց Տէրութեանս և Ազգիս ամբողջութեանը դէմ մեղանչելու . —

“Ուրեմն , ըսաւ Վաեմ . Փաշայն , այդ ձեր զօրք խնդրելու համար խըրկելիք խնդիրդ այս իրիկունէն խրկեցէք, վաղուեան չմնայ:” Եւ շատ չանցաւ ոտք ելաւ երթալու : Ես դարձեալ կրկնեցի որ երք Պ. Հիւպատոսը զօրք ուզէ իրենմէ , վերի ըսածիս պէս ճիշդ ըսէ թէ՝ “Այսոց Պատրիարքը լուր խրկեր էր որ վաղը | ատինք մեր վանքը պիտի գան , այսուհետեւ անոնց վրայ վստահութիւն չունիմ, ինձ տասն հատ քաղաքապահ զօրք տուր , և ես խրկեցի . և թէ՝ Պ. Հիւպատոսը թէ որ երթալ կը արեհաջի , պատուէր տրուած է անոնց որ բարեւ ալ բռնեն , ուստի ուրիշ վրաց կարօտութիւն չկայ:” Այսպէս

սով բաժնուեցաւ Վահեմ. Փաշայն բարեմաղթելով որ խաղաղութեամբ գլուխ ելլէ գործս :

“Ո՞իջոցը շատ չանցաւ թարգմանս խրիեցի նոյն քաղաքապահ զօրքերը հետեւեալ առուր համար խնդրելու. գնաց եկաւ թարգմանս ըստ՝ վազը ժամբ վեց ու կէս կամ եօթնին (Ո՞ար Եագուալ) սուրբ Յակովը վանուց գուռը պիտի գտնուին զօրքերը ըստ խնդրանաց ձերոց :

“Նետեւեալ օրը ժումբ եօթներորդին տասն զօրք քաղաքապահ եկան կանդնեցան վանուց դրան առաջը, երբ լատինաց ժողովուրդն ալ հետ զհետէ գալ սկսած էին, նոյնպէս և կարգաւորք և անկարգ միաբանք նոցա, երելով երեկոյեան պաշտամունքը՝ ըստ սովորութեան իւրեանց մեկնեցան, թէ և առանց պվտի գժութեան մի չանցաւ դարձեալ նոյն երեկոյեան պաշտօնն ալ. վասն զի իւրեանց շարժական փոքր երգէոնը, զոր հետերնին բերելով սուրբ Կըսադրի դրան ետեր

կը դնէին միշտ, այս անդամ՝ դասին
մէջ զետեղած էին: Այս որ լսեցի՝
խելոյն դուրս հանել տուի առաջին
տեղն դնելու. թէ և այս փորձն ալ
առաջին անդամը չէր, ուրիշ անդամ՝
եւս ըրած էին որ և իցէ նպատա-
կաւ, այլ միշտ դուրս հանուած է:

“ Ո իւս առաւօտ ժողովուրդն
երբ սկսան գալ, պատարագի ներկայ
գտնուելու, և ես կ'ըսալասէի թէ ար-
դեօք Պ. Հիւպատոսը պիտի գայ դար-
ձեալ ունիֆոռմայով, քանզի խմացայ
որ իմքաղաքապահ զօրք ուղելէս զկնի,
Պ. Հիւպատոսան ալ դարձեալ կանոնաւոր
զօրք ուղած է. մեծապէս շնորհակալ
եմ Ասեմ: Կաղիֆ Փաշայէն որ վերի
ըսածնիս պէս ճիշտ պատասխանած է
իրեն: Այլ ես պէտք եղած պատ-
րաստութիւնները կարգի դնելէս ըզ-
կնի, ինչպէս յիշեցինք վերը, Պատրի-
արքարանին պատուհանէն նստեալ
կը դիտէի Պ. Հիւպատոսին գալուս-
տը, և թարգմանիս ալ պատուէր տը-
ւած էի որ եթէ գալը խմանայ, քիչ մի
հեռու անոր դիմացն երթայ զինքը

այն հագուստով և պաշտօնական ա-
թուով ընդունելո իմացընէ :

“Հատ չանցաւ Պաղպիոյ հիւպա-
տոսարանին գանցելը ըստ թարգմանը
երեւցան և ուղղակի իմքովս եկան :
Օկնի սովորական տեսակցութեան ,
ըսին թէ՝ Պ. Հիւպատոսը ձեր որ-
պիսութիւնն կը հարցընէ , և ինքն
անձամբ պիտի գար Պատարագին ներ-
կայ գտնուելու , այլ փոքր ինչ տկա-
րութիւն ունեցաւ , վասն որոյ զմեզ
խրկեց իր կողմանէ Ձեր Որբազնու-
թեան հետ տեսակցելու , և այն :

“Ասացի . մեծապէս շնորհակալեմ
նորին Յարգութենէն , որ բարեհա-
ճեցաւ իր տկարութեան մէջ անգամ
զմեզ չմոռանալու . իսկ ես այսպէս
չէի ուղեր . այլ կ'ուղէի որ Պ. Հիւ-
պատոսը այսօր ըրածը երանի թէ քը-
սան օր յառաջ ըրած ըլլոր , երբ իր
միակ բարեկամին հետ առանձին ի-
րեն լուր տուի գեռ միայն Աստուած
գիտէր , իրեն բարեկամը եւ ինքը .
այն շնորհը ինք բուռն զօրութեամբ
պաշտօնական կերպով գործածել ու-

զեց | ատին կրօնաւորաց հաճոյանաւ
լու համար , և ելաւ կոյր զկուրայն
պաշտօնական կերպարանք տուաւ :

“Ե՛յժմ ձեր գալը Պ. Հիւպատու-
սին կողմէն , և մեր որպիսութիւնն
հարցընելը և Պ. Հիւպատոսի տկա-
րութեան պատճառաւ չկրնար գալը
իմացընելնիդ , նաեւ այլ և այլ ձեւե-
րով խօսելնիդ գիտեմ բոլորն ալ բո-
լիշիքայ են , և այն՝ Եւրոպից բոլի-
դիքայ : Ոտիք ըրէք ուրեմն . մենք
թիւրք եմք , և թիւրքիացի , և Օս-
մանեան մեծազօր կայսեր ողորմած
թեւերուն հովանաւորութեան տակ
պատսպարեալ՝ ազատ ունելով մեր
կրօնական պաշտամունքները : Ուր
բոլիդիքայն ուրիշէ , այսինքն , մենք
խօսքը ասդին անդին դարձնել չենք
գիտեր , ուստի մեր բոլիդիքն է՝ վեր-
ջը ըսելիքնիս առաջ ըսել , որ սրտի
մաքրութենէ յառաջ կուգայ . ըսեմ
ուրեմն ձեր յարգութեանցը :

“Ի՞նչ եղաւ , և ի՞նչ յարգ կրնայ
ունենալ հիմայ այս Ձեր խրկուիլը
մինչ այսօր սուրբ Երուսաղեմի բոլոր

բնակիչք իմացան և գիտեն, որոնց մէջ
 են նաեւ շւրոսկից բոլոր տէրու-
 թեանց չիւպատոսները, թէ ինչ անց-
 քեր անցան . ես չուղելով մեր բա-
 րեկամութեան և սիրոյ կապը խղել,
 իմ պարտաւորութենէս աւելի զի-
 ջում ընելով իրեն լուր տուած էի
 կանուխկեկ, որ առջի տարուան ըն-
 թացքը չըռնէ, փոխանակ զի պար-
 տաւորութիւն ուներ նա գոնէ մար-
 դասիրութենէ ստիպեալքանի որ տա-
 նուտէրը տունը չէր գտնուեր, նոյն
 տան պատիւը սլահել. այլ նա ոչ թէ
 միայն այս ըրբաւ, այլ գրգռեալ ա-
 տին կրօնաւորներէն, չայոց ազգին
 վեհանձնաբար իր միտկ եկեղեցւոյ
 մէջ պատարագելու համար ըրած շը-
 նորհքը, որ իրեն միայն բարեմտու-
 թեան և անխարդախ եղբայրաիրու-
 թեան արդասիքն էր, զայն չարաշար
 գործածել ձեռնարկեց, մինչ ես յիշ-
 պիպտոս էի, առանց մտածելու և
 առանց խնայելու թէ՝ այս Ազգը այ-
 սօր (Օսմանեան բարեխնամ կայսեր
 հպատակ են, իմ նոյն վանուց դու-

ուր զօրք տանելս , իմ ունիֆորմայով
 երթալս , իմ պաշտօնական Ամոռ
 տանիլս , նոյն աղգին իրաւանց կը
 դալի , անոր հարազատ հպատակու-
 թեան վրայօք կասկած կուտայ : Եր-
 բէք չուզեց մտածել ձեր Պ . Հիւ-
 պատոսը , այլ միայն | առին կրօնա-
 ւորներէն գրգռեալ անոնց կամքը
 կատարել և անոնց աչքին հաճոյա-
 նալ ուզեց , ոյր վասն այս աստիճան
 իմ սիրտս վշտացուց , որ պարտաւո-
 րեցայ այսօր փոխանակ ամենայն սի-
 րով տեսակցելու և յարգանքներ տա-
 լու ձեղ , իմ սրտիս վէրքերը բանալ-
 -Երբէք այդ մտադրութիւնն չունի
 Պ . Հիւպատոսը , ըստ գանչելէրը
 և միշտ կը սիրէ զձեղ , եւ ձեղմով
 բոլոր Հայոց աղգը , և պարտաւո-
 րութիւն կը ձգէ ձեր վրայ որ կա-
 րեւոր պարագոյի մէջ իրեն դիմէք ,
 և ամենայն սիրով պատրաստ է օգ-
 նել ձեղ . և թէ՝ կարելի եղածները
 կատարելէ զինի՝ անկարելի համար-
 ւածներն անդամ կարելի եղածին չափ
 պիտի աշխատի որ հնարաւոր ընէ : —

“Եսացի . Պարոնայք , ձգենք անկաւ
թելիներն հնարաւորել , հասարակաց
առածը կ'ըսէ . Կործքքողքեզ գովեն ,
և ոչքո բերանաւ Այս գործը որ կաւ-
թելի էր և ամենակարելի և խիստ դիւ-
րին . և չըրաւ , ինչպէս հաւատամ թէ
անկարելի եղածներն անգամ հնարա-
ւոր ընէ . Խնդրեմ պատաժսան տր-
եէք ինձ , ընդհանուր Հայոց ազգին
միակ սեփհական եղած վանքին դի-
մացը կանոնաւոր զօրք բերելու , ինքն
ունիթումայով և պաշտօնական աթու-
ռավ գալու անցեալ տարի՝ ինչեն ըս-
տիպուած էր , և մինչեւ ցայսօր տես-
նուած էր և լսուած էր . և դու բա-
րեկամ (Հաննա Գրառլոյին *) իմ մի-
արանիլա այս սուրբ Ամոռն Շն տա-
րի է , ես միայն նոյն միջոցը գիտեմ , և
երբէք այսպէս պաշտօնապէս գալ եր-
բէք տեսած չեմ , իսկ դուք բնիկ Ե-
րուսաղեմացի էք , և կրօնիւ ատին ,
քանի տարի է որ խելքերնիդ կըհատ .
նի , դոնէ քան կամ երեսուն տար-

*) Գրղիոյ հիւպատոսարանին թարգմանն է ,
բնիկ Երուսաղեմացի , իբրև 60—65 տարեկան այր-

ուան ծանօթութիւն չէք կրնար տալ
մեղի . ըսէ գոնէ որ ձեր քանչելէր
Պարսկը համազուի : —

“ Աչ թէ , ըսաւ Հաննա Գրառն ,
քսան և Երեսուն՝ այլ և քառասուն և
գուցէ յիսուն տարուան ծանօթու-
թիւն կրնամ տալ , որ Երբէք Եղած
չէր , ոչ զօրք բերել . ոչ ունի ֆորմայով
գալ և ոչ պաշտօնական աթոռ բերել ,
և ոչ իսկ ամեն տարի հիւպատոսն կու-
գար , այլ Երբեմն՝ և այն իրեն հասա-
րակ հագուստով . Ճշմարիտը այս է , և
ամեն մարդ գիտէ այսպէս ըլլալը : —

“ Բանի որ դուք բնիկ շրուսաղէմացի
ըլլալով , և քիչէն քիչ . քառասուն տար-
ւանը ճիշտ գիտնալով որ Երբէք այսպէս
արարք մը տեսած չէք , ըսէ ուրեմն ,
ձեր Պ . Հիւպատոսը ինչէն ստիպեալ
այսպէս յանդուգն ձեռնարկութիւն
ըրաւ : —

“ Դարձեալ հարցուցի նոյն թարգ-
մանին , թէ “ նոյն քառասուն կամ
յիսուն աարուան մէջ զոր դուք լաւ
գիտէիք , Երդմնեցուցանեմ զձեղ յլա-
տուած կենդանի և ՚ի գլուխ զա-

ւակացդ , թէ Հայոց Պատրիարքաց ,
թէ Համայն միաբանից թէ բոլոր երու-
սաղէմաբնակ Հայ ժողովրդոց , և թէ
նոյն աւուր պատահած ուխտաւորաց
կողմանէ՝ մէկնախատինք , հայհոյանք,
անպատուութիւն , խուվութիւն ,
գոնէ մէկ փոքր պակասութիւն մի
տեսած էք արդեօք . ես սյո ջ՛ տար-
ւանըս մէջ չեմ յիշեր և հոգւով կը
վկայեմ , գուք ձեր քառասուն և յի-
սուն տարիներուն մէջ պատահածը
ըսէք և կ'ուզէք իմ տեսած 27 տա-
րուան համար ալ վկայեցէք Եթէ
բան մը պատահած է և կրնաք վկայ-
ել : —

«Քանի որ իմ խելքս կը հասնի , իմ
մանկութենէս ՚ի վեր , ըստ Հաննա
Պառլոյ , համարէ թէ ամէն տարի
կ'երթամ կուգամ նոյն օրը , ոչ թէ
վերը ձեր յիշածները չտեսայ , այլ և
ոչ ամենափոքր պակասութիւն ան-
գամ չտեսայ և չլոեցի . այլ ընդ հա-
կառակը մեծ պատիւ , յարդութիւն ,
մարդասիրութիւն կը տեսնայինք և
կը վկայելէինք նոյն օրը ազգովին՝ աւե-

լի ճիշդը ըսեմ Ձեզ, նոյն աւուր
մեր տեսած բոլոր յարգանաց և ա
մենայն հանգստութեանց համար մենք
լատինքս ազգութին զարմացած ենք
թէ, ասոնք ինչ բարի և մարդասէր
մարդիկ են որ այսքան ատենուան
մէջ և ոչ փոքրիկ անարգութիւն ան-
գամ տեսած չեմք. արդեօք ասոնց
մէջ խռովարար, յանդուգն երիտա-
սարդներ և մարդիկ չկան. այս վան-
քը եկած օրերնիս մեր վայելած հան-
գլատութիւններն և ապահովութիւ-
նը շիտակը խօսելու համար՝ մեր ե-
կեղեցիններուն կամ վանքերուն մէջ
տեսած և վայելած չեմք. —

“Եւ մեր պէտք եղած պատիւը և
յարգանքը տալէն զկնի թէ իրենց և
թէ Պ. Հիւպատոսին, ելան գնա-
ցին ՚ի տեղիս իւրեանց : Եւ զկնի
լատինաց պատարագին վերջանալոյն,
բոլոր կղերնին վեր հրաւիրեցինք, ինչ
պէս միշտ կ'ընէինք . եկան նաեւ ա-
մենքին, առանց բառ մը անդամ ար-
տասանելոյ մեր նոյն անց քերուն վր-
շայօք, մարդասիրաբար և ամենայն

սիրով պատուեալ 'ի մէնջ գնացին 'ի
վանս իւրեանց :

“**Վ**հա այսպէս վերջացաւ , **Վ**սեմ .
Ոխնիֆ էֆէնտի , այն անցքը , այն
զօրք բերելնին համազգեստով եւ
պաշտօնական աթոռով **Պ** . **Հ**իւ-
պատոսին դալը նոյն օրը , թէ եւ
երկարատեւ եղաւ , և **Ձեր** պատուա-
կան գլուխը ցաւցուցի , բայց իմ վի-
րաւորեալ սրտիս ալ սփոփանք եղաւ .
նա մանաւանդ , որ դուք խնդրեցիք
և յօժարեցաք այս գործին վերաբե-
րեալներն ամենայն պարագայիւք լը-
սել : ” **Հ**ատ գոհ եղան ասոր համար
թէ **Վ**սեմ . **Վ**ալի փաշայն եւ թէ
Վսեմ . **Ո**խնիֆ էֆէնտին , և ըսին
թէ 'ի վաղիւ **Դ**ամասկոսի **Պ** . **Հ**իւպա-
տոսն ալ սփոտի գտնուի , դուք ալ
եկէք դարձեալ այս խնդրոյն վրայօք
սփոտի խօսիմք : **Տ**եսնանք անոնք ինչ
կ'ըսեն , և դեռ դուք ինչ կ'ըսէք :

Ոեր շնորհակալութիւննիս մա-
տուցանելով բաժնուեցանք .



Ետեւեալ օրը դարձեալ ըստ
 առաջին աւուր հրաւիրանաց սահմա-
 նեալ ժամուն ներկայացաւ սրբա-
 զան Պատրիարքն Ասեմ. Աալի փա-
 շային և Վիւնիւֆ էֆէնտիին . Հոն
 էր նաեւ Դամասկոսի Դաղղիական Պ.
 Հիւպատոսը : Օկնի սովորական տե-
 սութեանց՝ հարցուց Ասեմ. Վիւ-
 նիւֆ էֆէնտին և ըստ . “ Համբրիք
 էֆէնտի . քանի որ այդքան ժամանակ
 նոյն շնորհը վեհանձնաբար ըրած էք
 Լատինաց . և դուք իսկ ըստ ձեր խոս-
 տովանութեան՝ ձեր պատրիարքութե
 միջոցին ալ վեց տարի սիրով շարու-
 նակած էք , (՚ի բաց առեալ երկու
 տարի յառաջ Վաղիֆ փաշային օրովը
 պատահած անցքերը ,) արդեօք կարե-
 լի չէ որ դարձեալ նոյնը շարունակեք
 և սիրոյ կապը այդպիսի գժառթեամբ
 չխղէք : ո

Արդէն ձեր մեծութեան երեկո-
 եան օրը պատմեցի մի ըստ միոջէ , և
 կարծեմ որ դլուխնիդ ալ յաւեցաւ .
 արդեօք կ'ուղէք որ Պ. Հիւպատոսին
 ներկայութեամբը նորէն լսէք : Կ'ա-

դաշեմ, քանի որ նուասոս գաղղիարէն
չեմ գիտեր, դարձեալ ձեր մեծու-
թիւնը պիտի թարգմանէ, ըստ որում
ուրիշ մարդ ալ չէք լնդունիր այս
դատերուս մէջ, ուստի կ'աղաչեմ
դուք ձեզէն պատմեցէք Պ. Հիւ-
պատոսին երեկեան աւուր ձեր Ասե-
մութեան ըսածներս, որով հարազատ
հպատակի մը վրայ պարտք մը աւել-
ցուցած կ'ըլլաք :

Այս միջոցին Վսեմ. Ոիւնիւֆ
էֆէնտին կարելի եղածին չափ հաս-
կցուց օր յառաջ սրբազան Պատրիար-
քին խօսածներն, և տեղ տեղ Վսեմ.
Վալի փաշայն եւս կը յիշեցնէր նոյն
նիւթին վերաբերեալ տեղեկութիւն-
ներէն պակաս մնացածներն :

“Պ. Հիւպատոսը կը խնդրէ, ը-
սաւ Վսեմ. Ոիւնիւֆ էֆէնտին, որ
այս գործին սիրով վերջ մը տամբ :
Լատինք դարձեալ շարունակեն իրենց
սովորութիւնը . և ես սաստիկ պատ-
ւեր կուտամ երբէք կարգէ դուրս
բան մը ընելու ձեր իրտւանց դէմ,
նորանոր բաներ աւելցնելով ընդդէմ
սովորութեան :

լի՞ճապէս շնորհակալ եմ Պ. Հիւ
 պատոս, ձեր բարեսրտութենէն, ըստ
 Ա. Պատրիարքը, որ սուրբ Եկեղեցւոյ
 պաշտօնեաներն, որոնք սիրոյ և խա-
 ղաղութեան օրինակ ըլլալ պարտաւոր
 են, միշտ դուք զնոսա ՚ի խաղաղու-
 թիւն կը կոչեք. այլ խաղաղութիւնն
 և սէրն միշտ երկու կողմէն պէտք է
 հաւասարակշիռ ըլլայ. վասն զի, որ
 սիրուի և ոչ սիրէ, բոնաւոր է այն
 պիսին, և որ սիրէ, և ոչ սիրուի, նահա-
 տակ է այնպիսին: Վհանոյն պարտա-
 ւորութիւն էր, որ զիս կը պարտաւորէր,
 ոչ թէ միայն սիրով Եղած ժամանակ-
 նիս, այլ և անոնցմէ մեզի թշնամութիւն
 անձրեւի պէս տեղացած ժամանակն
 անգամ, ինչպէս յառաջագոյն պատ-
 մածներէս ալ կընաք մակաբերել:
 Նոյնը ըրած է ին իմ նախորդներս ալ,
 զնոյն և ես գործով ցոյց տուի իմ այս
 վեց տարի Պատրիարքութես միջոցին՝
 իմ նախնեաց օրինակին հետեւելով,
 և համբերեցի անոնց յանիրաւի ըրած
 զրկողութեանց, բայց անոր փոխա-
 ըէն միշտ ցաւ և խռովութիւն յա-

բուցած են մեղ . ուրեմն ի՞նչպէս կարելի է , այսպէս յայտնի թշնամիի մը , որուն այսօր բոլոր թշնամութիւնն և ըրած չարիքներն արեւի պէս յայտնուեցաւ , կրկին անդամ թոյլ տամոր գայ իմ սեփհական եկեղեցւոյս մէջ զիս նախատէ , զիս այպանէ , և իմ անսխալ և անմահ Արարչիս նուիրեալ սուրբ սեղանոյն վրայ , սխալական և մահկանացու մարդը անսխալքառզէ , ես զնոյնն իմ ականջովս լսեմ ՚ի գայթակղութիւն համայն աղդայնոցս : —

Պ . Հիւպատոսը պատասխանեց .
“Պապին անսխալութիւնն ձեղ տմենեւին վնաս մը չունի . Եթէ վնաս մը կայ՝ մեղի է , մենք պէտք է մոտածեմք և պատասխանեմք կամ բողոքեմք . Ի՞նչ կ'ըլլայ տարին մի անդամ ձեր եկեղեցին պատարագ մը ընելով , մանաւանդ որ այսքան ատեն շարունակ ըրած են և իրաւունք տուցած ” :

—Պ . Հիւպատոս , կրկնեց Ա . Պատրիարքը , Պապին անսխալութիւնն ինձ յայտնապէս վնաս մը չունի , վասն զի

Հայոց ազգը իրեն համար Պապ ունի,
 ուրիշ Պապի կարօտ չէ . այլ կը հարցը-
 նեմ ձեր Յարդութե՛, ի՞նչու Պաղպիոյ
 կայսրը ջնդունեց անոր անսխալուին ,
 ի՞նչու նոյն ժողովքին հսկելու համար
 յատուկ մարդ խրկեց . աւելի զար-
 մանալին ըսեմ, մեր մեծաղօր (Օսմա-
 նեան տէրութիւնն ի՞նչու համար 'ի
 ըւր աշխարհի բողոքեց անոր անսխա-
 լութեան դէմ, և ջնդունեց զայն ,
 մանաւանդ որ ինքն Վահմետական ըլ-
 լալով երբէք անկից կախում չունէր ,
 ի՞նչու ըրաւ , 'ի հարկէ այդ անսխա-
 լութեան խնդրոյն տակ քաղաքական
 գաղտնիք մի նշանարեց : Ի՞նչ Պապին
 նպատակը ի՞նչ էր ուրեմն անօխալ ըլ-
 լալու համար այնքան աճապարել աշ-
 խարհաժողով ընել . և ի՞նչէն ստիպ-
 ւեցաւ Հռովմայի եկեղեցիէն գուրս
 եղած բոլոր քրիստոնէից եկեղեցիներն
 անիծելու և նզովելու , և անոնց ան-
 մեղ ժողովուրդները , և միանդամայն
 սր եկեղեցիներն հերձուածող և հե-
 րետիկոս անուանելու . և ի՞նչ հարկ
 կայ ուրեմն նոյն անիծուած և նզով

ւած, մեկ խօսքով հերետիկոս կոչուած
եկեղեցին գալու և պատարագելու
համար այսքան իրար անցումներ ըս-
նել և մեր բարեխնամ Տէրութեան
պատուական գլուխը ցաւցընել: Կը
հարցնեմ ձեզ, Պ. Հիւպատոս, ար-
դեօք սյս շարժմանս տակը գարձեալ
դաղտնիք մը չկայ, մեղ Հայոցս հա-
մար վտանգ մը չըլլալուն կրնաք երաշ-
խաւորել, թէպէտ և ատենն անցաւ
երաշխաւորելու, վասն զի լատինք
իրենց վարմունքովը ամեն բան յայտ-
նեցին, անոնց միաքը իմանալու հա-
մար աշխատանք չժողուցին մեզի: —

Վ սեմ. Վ ալի փաշայն և Ո՞իւնիւֆ
էֆէնտին Ա. Պատրիարքին այս ըսած-
ները մի ըստ միոջէ Պ. Հիւպատոսին
թարգմանելէ զկնի, իրենք ալ իրենց
կողմէն և երբեմն Պ. Հիւպատոսին
ըսածներն ալ՝ Արքազնութեան կ'իւ-
մացնէին, սա մտքով թէ՛ եթէ կարելլ
է, այս գործին վերջ տրուի երկու
ազգաց մէջ սէր և խաղաղութիւնը
նորէն հաստատուելով:

Պատասխանեց Ա. Պատրիարքը. «Պ.

Հիւպատոս ձեր այս առաջնորդկածը
քրիստոնէական պարտաւորութիւն
մ'է, զայն ես արդէն գիտեմ, և գիտ-
նալուս համար էր որ այս վեց տարի
Պատրիարքութեն շրջանին մէջ սյստան
վշտաց և զրկողութեն համբերեցի, բայց
մեր քրիստոնէաբար համբերութիւնն
ձեր կարգաւորաց աւելի առիթ տուին
կարծելոյ թէ մենք իրենցմէ կը վախ-
նամք քամ լիցի, երբէք վախս մը չու-
նիմք մեծազօր Տէրութեանս շնորհիւ,
որ գիտէ արդարապէս հսկել իւր հա-
րազատ հպատակաց իրաւանց վրայ ։

Ժողովին արձակման ժամանակը
մօտ էր երբ Վասեմ. Վալի փաշայն
տոք ելլալով ըստաւ. “Բաթրիք տու-
տումուղ, եարբնքի կիւն պաշկայ պա-
գլաճագ իշլէրիմիղ վար ։ Լաքին պա-
գալքմ եարբն ագշամ մը օլուր՝ եա-
գուտ օպիր կիւն միւ օլուր, իսապար
վէրիրիղ, ալուցուրուպ կէլէսինիզ վէ-
պու իշլէրէ պիր դարար վէրէլիմ”։

Երբէլ պատրաստուէին մեկնելու,
Պ. Հիւպատոսը դարձաւ ըստաւ Վը-
սեմ. Ոյւնիւֆ էֆէնտիին. Ալլինդ-

ըեմ ըսէք Հայոց պատրիարք մեր բարեկամին որ ներողամիտ ըլլայ՝ մինչեւ ցարդ իրեն տեսութեան ըլլայ գնալուս։ Կը փափառիմ երթալ տեսնուիլ, ինչ պէս որ սլարտաւորութիւնս ալէ։”

— Ձեր գալէն յառաջ մենք պարտաւոր էինք, Պ. Հիւպատոս, ըստ Արքաղան Պատրիարքը, ձեր բարի գալուսոր շնորհաւորելու գալ, մանաւանդ ձեր սուրբ Երուսաղէմ մտնելու օրը անգամ պարտաւոր էի թարգմանս և եասախճիս ձեզ դիմաւորելու խրկելու, եթէ լատինաց վանքէն կամսուրբ Երուսաղէմի Դաղ զիական Պ. Հիւպատոսի կողմէն մեղ լուր տրուած ըլլար, ոյր վասն ձեր ներողամտութիւնն կը խնդրեմ յայտնելով ձեր Յարգութեան՝ որ միշտ պատրաստ եմք զձեզ ողատուելու ըստ կարեացս, վասն զի այլէ քաղաքականապէս տեսակցիլ պատուել և պատուիլ, այլէ սեպհական իրաւանց վրայ խօսակցիլ և նորա համար գատ վարել։ —

“ Ընորհակալ եմ մեծապէս ձեր

այս օրինաւոր միանգամայն մարդաս
սիրական խօսակցութենէ, պատասխա-
նեց Հիւպատոսը, և այս խօսակցու-
թիւններն ինձ մեծապէս յոյս կուտան
որ, այս գործոյն խաղաղասիրական
կերպիւ վերջմբ պիտի կրնամք տալ,
և երկու կողմբ գոհ ընելո :

—Վ. յդ իսկ է, Պ. Հիւպատոս, իմ
փափաքս ալ, բայց առանց մէկուն
իրաւանցը դպչելու պայմանաւ, երբ
արդարութեամբ իւրաքանչիւրոց ի-
րաւունքը կը յայտնուի և կը ստու-
գուի, գործը ինքնին կրնայ վկայել
որ, ովէ զրկողն և ովէ զրկեալն. իմ
սրտիս մէջ եղած վէրքերը չեմ կրնար
այս նեղ միջոցին ձեր Յարգութեան
յայտնել մանաւանդ որ Վ սեմ. Վիւ-
նիք էֆէնտիին ալ բաւական նեղուն
տուած պիտի ըլլամ իմ խօսածներս
ձեղ թարգմանելու . միայն սա կ'ա-
ղաչեմ, քանի որ Վ սեմ. Վ այի փաշայն
և Վիւնիւք էֆէնտիին և ձեր Յար-
գութիւնն հոս էք, օր մը յանձն առէք
միասին Վիօն լերան վրայ գտնուած
երեք աղգաց գերեզմանատուններն

աչքէ անցնելու և անոր քննութեներ-
 կայ գտնուելու, և | ատինաց ըրած
 շնութիւնն և յանիրաւի իմ սեփհա-
 կանութեանս վրայ երկու դուռ մէ կէն
 բանալին տեսնել քովը թագաւորա-
 կան արձակ պողոտայ եղած ժամանակ.
 և խկոյն պիտի համոզուիք իմ արդար
 և սեփհական իրաւունքիս չարաչար
 բռնաբարումը | ատին կղերաց կող-
 մէն, և այն՝ Գաղղիոյ Հիւպատոսին
 պաշտպանութեամբը: Եւ նոյն արդար
 իրաւունքիս դատը՝ թէ յանձն կ'առ-
 նու Պ. Հիւպատոսը, իրեն կը յանձ-
 նեմ հիմակուց, ինչպէս որ կը պա-
 հանջէ արդարութիւննանաչառաղէս
 դատէ զայն, և ես երբէք չգամ նոյն
 օրը ձեր | սեմութեն հետ, և ոչ բան
 մը յաւելում խօսել. տեսնեմ ինչպէս
 պիտի կրնայ արեւի նման յայսնի ե-
 րեւցած իմ բռնաբարեալ սեփհակա-
 նութիւնս չտեսնել. և իւր սեփհա-
 կան տիրաջը չդարձնել, վասն զի ոչ
 ոք կարէ այդ զրկողութիւնն ընելա-
 ռանց արդարութեան դէմ չարաչար
 մեղանչելոյ: —

“Ը ատ բարի , կուգամ անձամք
կը տեսնեմ , ըստ Պ . Հիւղատոսը .
և Երբէք չեմ ուզեր որ ձեր իրա-
ւունքն կորսուի . ես կ'ուզեմ որ ամեն
մարդուն իրաւունքը իրեն տրուի , և
միշտ խաղաղ և սիրով ըլլան , ինչպէս
կը պահանջէ քրիստոնէ ութիւնն և
միանգամայն աղքաց իրաւունքը : ”

— Այրելի էր ինձ , ըստ Որբազան
Պատրիարքը Վսեմափայլ Քեամիլ
փաշային դառնալով , եթէ կարող
ըլլոյի Պ . Հիւղատոսին հետ բերան
առ բերան խօսիլ առանց ծանրութի
տալու Վսեմ . թարգմանին , և իւր
չեզուով յայտնեի իրեն իմ սրտիս խոր
ցաւերը , վասն զի զիտեմ որ ձեր
Վսեմութիւնը թարգմանելու ժամա-
նակ բնականապէս իմ խօսքերս կը
զեղչէք : —

Այս խօսքերուս վրայ Ոյւնիւֆ .
Էֆէնտին ժպտեցաւ , և Ա . Պատրիար-
քը բամնուեցաւ խնդրելով իրենցմէ
որ ներողամիտ ըլլան իր տուած ձանձ-
րութեանը , աւելի ընդարձակ տեղե-
կուները ուրիշ ժամանակներու մէջ

տալու խօստանալով։ « Քանի որ հոս
էք, ըստու, մեկ քանի անգամ տեսնուե-
լու բաղդը պիտի ունենամք, և այս ոք
եղած տեղեկութիւնները ձեզ հա-
զորդել, ինչպէս որ դուք արդէն կը
փափաքէկք լիովին տաղեկանալու։ »

Ո՞եկնելու միջոցին Վաեմ. Քեա
միլփաշային և Գաղղիոյ Հիւպատոսին
հետ ընկերացած դուքս ելլելուն ։ Պատրիարքը քաղցր ժպիտով մը նորին
Վաեմուե մօտենալով ըստու . « Այս խըն-
դրեմ Փաշոյ Եֆէնաի, շնորհք ընէք
թարգմանել Պ. Հիւպատոս մերքարե-
կամին և յայտնել իրեն՝ որ իմ խօսքերս
որիքան որ եռանդուն կ'երեւին, և
բորբոքած որտէ մի յառաջ եկած, սա-
կայն կը խնդրեմ չկարծէ որ ատելու-
թեան նշան մի է այն, այլ վշտաց և
ցաւոց, զոր Պրանչիսկեան յարդելի
կրօնաւորները տուած են ինձ, որոնք
փոխանակ արեւելցւոց հետ քաղաքա-
վարութեամբ վարվելու. և բարեկրո-
թութեան օրինակ լինելու, որովհե-
տեւ քաղաքակրթեալ աշխարհէ եկած
են, և մեզ թուրքաստանցւոց պէ-

չեն, որ իրենց աչքին բիրտ և սոսու
մարդիկ համարուած եմք, սակայն
կը յուսամ որ Պ. Հիւպատոսը մեր
գործերը տեսնելով և անսնց արարք
ները և օրինաց և իրաւանց հակառակ
ընթացքը նշմարելով, անաչառապէս
մեզ իրաւունք պիտի տայ: Եւ ոյս իմ
ըսածներս հաստատելու համար էր որ
քիչ մը յառաջ Վսեմ. Ոիւնիւֆ է-
ֆէնտիին միջոցաւ իւր Յարդութենէն
խնդրեցի յանձն առնուլ գալ Ոիօնի
գերեզմանատան քննութեանը ներկայ
գտնուիլ, և ինքն անձամբ ըլլով անա-
չառ դատաւորը և միանգամայն իմ
կողմանէս գատախազը, ուրեմն այսու
պայմանաւ մնացէք բարեաւ ո ըսելով
ըաժնուեցան:

Հետեւեալ օրը ՚ի 26 Օգոստոսի
եղած նիստին մէջ, թէպէտ եւ Հա-
յոց Ա. Պատրիարքին ներկայութիւնը
կարեւորութիւն մի չունէր, սակայն
կանչուած լինելուն՝ փութացաւ եր-
թալ: Խնդիրն էր յառաջնութեան վը-
րայ ՚ի մէջ Յունաց և Ղատինաց մե-
ծաւորին, որովհետեւ երկու կողմն

ալ կը սնդէր հաստատապէս թէ՛ իւ-
րեան կը պատկանի յառաջնութիւնը,
նախապատիւ լինելու թէ՛ կառավա-
րութեան ժողովոց մէջ և թէ հանրա-
գրութիւններ ստորագրելու : Խնդի-
րըն ինչպէս յայտնի է, փառասիրու-
թեան վրայ կայացեալ էր, որուն եր-
բէք հետամուտ եղած չէ հայկական
կղերը, վասն որոյ Արբազան Պատրի-
արքը միայն ունկնդիր էր սոյն նիստին
մէջ. բայց երբ սաստկացաւ ինդիրը
ըստ Ա. Պատրիարքը Վանմ. Վա-
լի փաշային . “ Ղֆէնտիմ, այս դատը
շատ դիւրութեամք կրնայ լուծուիլ,
եթէ կը ներէք՝ ըսեմ. Քանի որ այս
մեր եղքայրները սյօքան կը հակառա-
կին և կըսկսդեն և երբէք զիջում չեն
ցուցներ, և չեն ուզեր համոզուիլ,
հրաման ըրէք՝ որ Հայոց Պատրիարքին
փոխանորդը նախ թող կնքէ, և սյօպէս
ինքնին կը լուծուի խնդիրը : ”

Այս խօսքը թէպէտ և զուարձա-
բանութիւն մի էր, այլ կերպիւ իւիք
Ճշմարտութիւն մի եւս ունէր իր մէ-
ջը, քանի որ մեր բարեխնամ Տէրու-

թեան հարազատ հպատակն եմք : Եւ
այս խնդրոյն լուծում մը տալու հա-
մար կանչեցին նախ | ատինաց կողմէն
եկած կարգաւորը յառանձին սենեակ
մի , և անոր գուրս ելնելէն յետոյ Յու-
նաց Պատրիարքը կանչեցին նոյն սենեա-
կը դարձեալ առանձին . և ապա լուծում
մը գտնալու համար հարկ եղաւ քըն-
նել թէ՝ Պաղեստինու երկրին մէջ որ
ազգը կամ հասարակութիւնը յառաջ
է բնակութեամբ քան զմիւսն . ուս-
տի ժողովին լուծուեցաւ առանց ինչ
որոշման :

Դամակոսի Գաղղական Հիւպատոսի մեր սուրբ
Յակովոյ վանքը այսելունեան գալը , և
սրբազն Պատրիարքի հետ սուրբ Յակովոյ
պատարագի խնդրոյն վրայ երկար խօսակցէլը :

Ետեւեալ օրը մինչդեռ Ա. Պատ-
րիարքը Պ. Հիւպատոսին բարի գա-
լուստը շնորհաւորելու համար եր-
թալու կը պատրաստուէր , կանխեաց
նորա կողմէն լրաբեր մը թէ՝ Պ. Հիւ-

պատոսը ձեր տեսութեան դալու է ,
Երբ կրնաք զնա ընդունիլ :

“ Կհա մենք պատրաստուած էինք
իրեն դալու , ըսաց սրբազան Պատ-
րիաբը , բայց քանի որ ինքը մեզմեն
կանուխ շարժեցաւ , պարտաւոր եմք
զինքն ընդունելու ամենայն սիրով .
Երբ և կամի , կրնայ դալ : ”

Եւ ահա Պ . Հիւպատոսն՝ իւր և
տեղւոյս հիւպատոսարանի թարգման
Հաննա Դառլոյի հետ եկաւ . և զինք-
քաղաքավարական խօսքելու և տե-
սակցութեան , անմիջապէս ինքնին
բացաւ սուրբ Յակովայ ներկայ խըն-
դիրն . թէ և սրբազան Պատրիաբն
չուղեց առաջին անգամ՝ տեսակցու-
թեան եկողի մը հետ նոյն խնդիրը
յուղել , այլ մէկ մի որ ինքն չէր խըն-
դիրը բացող , երկրորդ՝ բարեպատեհ
առիթն և առանձին ժամանակն եւս
ը կորսնցնելու համար՝ սկսաւ նոյն
խնդրոյն վրայ խօսիլ :

Պ . Հիւպատոսը դարձեալ կրկնեց
իւր խաղաղասիրական միջամտութիւ-
նը , ըսելով թէ՝ “ Երբէք ձեր իրա-

ւանց ալ զրկողութիւն չեմ ուզեր ,
միայն թէ մեր խնդրոյն զիջումընէք
և | ատինք դարձեալ սկսին գալ լստ
սովորութեան տարին մի անգամ պա-
տարագելու ՚ի սուրբ Յակովը . ես ա-
նոնց պատուեր կուտամ երբէք նո-
րանոր բաներ չը սահմանելու :

Որբազան Պատրիարքն երկրորդ
նստին մէջ լսած խօսքերը գրեթէ միւս
անգամ եւս կը կնեց առաւելընդար-
ձակ պարագայներով , և զանոնք չան-
նա Դառլցի վկայութեամբ հաստա-
տեց , ըստ որում տցն թարգմանն էր
երբեմն իբրեւ միջնորդ ծառայողն իւր
և | շամօն որ Պարրէր չիւսլատոսին
մէջ , ինչպէս վերը տեսանք :

Դամասկոսի Պ. Չիւպատոսը ար-
դէն համոզուած էր սրբազան Պատ-
րիարքի խօսքերուն ճշմարտութեանիք,
որ դուրսէն լսածներուն հետ կը հա-
մաձայնէր , բայց միանգամայն կ'աշ-
խատէր որ համոզելով գիւրացնէ | ա-
տինաց պատարագելու խնդիրը :

«Ո» . Չիւպատոս , ըստ սրբազան
Պատրիարքը , դուք կ'ուզէր իմ վե-

բաւորեալ սիրտո բժշկել, և եղածը
եղած անցած է ըսելով իմ ցաւերս
ինձ մոռցնել տալ, այս իսկ ճշմարիտ
քրիստոնէի գործ է . բայց եթէ վիրա-
ւորուածը մէկ սիրտ ըլլար, շատ դիւ-
րին էր ձեզ որ և է կերպիւ զայն բը-
ժշկել: Այս, այսօր ձեր աչքին դիւ-
մաց մէկ սիրտ միայն կը գտնէք, այս-
ինքն իմ սիրտս որ ձեր յարդութեան
հետ կը խօսի, բայց գիտցած ըլլաք
որ այն սիրտը մէկ չէ, այն սրտին հետ
հաղորդակցութիւն ունի չորս միլիոն
այսց ազգին զաւակաց սիրտը, դուք
անոնց որ մէկը բժշկել պիտի կարո-
ղանաք . մանաւանդ թէ վէրքը մէկ
չէ: Դուք կը կործէք թէ, միայն սք
Յակովը ինդիրն է, որ կը յուղուի,
քան լիցի, անկէ աւելի հին, անկէ
աւելի ստիպողական, և անկէ աւելի
բռնաբարեալ իրաւունքներ ունիմ,
զորս մի ըստ միոջէ պատմելու համար
օրերու կը կարօտիմ: —

“Արդեօք ի՞նչ իրաւունքներ են,
ըսաւ Պ. Հիւպատոսը, ձեր ըսած-
ները, որոնք բռնաբարեալ կ'անուա-

նէք . կարելի չէ որ զանոնք պատմեք ,
կամ անոնց վրայ ինձ լիովին տեղեւ
կութիւն տաք՝ որ ես ալ գիտնամ
թէ ի՞նչէ : Իմ նպատակս ուրիշին իւ
ըաւունքը բռնաբարել չէ բնաւ , և
ոչ զիս խրկող տէրութեանս նպատա-
կը . կարողէք դուք ձեր ցաւերը ինձ
պատմել , գուցէ նոյն իրաւունքները
իրենց տեղը բերելու և զձեղ դոհ
ընելու կարողանամ :

—Պ. Հիւպատոս քանի որ դուք
բարեօրտութեամբ կը ըսէք այդ , և
զմեղ կը քաջալերէք , ուրեմն խօսիմ ,
ըսաւ սրբազն Պատրիարքը , և սկը-
սաւ այսպէս խօսիլ :

“Վճրող տարի ու կէս է , ՚ի Շեթ-
էհէմ Քրիստոսի Տեառն մերոյ սուրբ
Շննդեան այրին մէջ կրակ ձգեցին ,
ուր այրեցան առաստաղի վարագոյն՝
որ երեք ազգաց կը վերաբերի . այրե-
ցան նմանապէս Յունաց և մեր պատ-
կերները , և թափեցան նոյն առաստա-
ղէն իւրաքանչիւր ազգաց կախուած
կանթեղները : Այս որ լսեցինք մենք
և Յունաց պատրիարքը , անմիջապէս

նոյն տեղը հաւաքուեցանք ամէն մարդ
իւր իրաւունքին տէր ըլլալու . Հոն
եկաւ նաեւ սուրբ Աշուսաղեմի Առւ
թասարուֆ Ասեմ.՝ Աազիֆ փաշայն :
Աոյն կէտին տեսնելու էիք այն սուրբ
տեղւոյն ցաւալի վիճակը . ինչ որ է՝
շատ մը օրտմաշուք խօսքերէ զկնի՝ զոր
կ'ընէին | ատին կրօնաւորք , վասն զի
իրենց նպատակին չը կրցան հանիլ,
իւրաքանչիւր ազգ իւր պատկերներն
ու կանթեղներն կախեց ներկայութք
Աազիֆ փաշային , և խաղաղութեամբ
վերադարձանք՝ կարծելով թէ լսացաւ
գործը , վասն զի անտեղեակ էինք ա
նոնց երկրորդ նպատակին :

“Այլ ի՞նչ կը նոյիս , զկնի 12 տւուր
նոյն կախուած պատկերներն ամբաղջ
գողցուեցան , թէ մերն և թէ Յու-
նաց : | ատինք հոն պատկեր չունին ,
անշուշտ Հայք և Յոյնք էին զրկեալ
ներն և զրկողները | ատինք : Աոյն գո-
ղութեան խնդիրը տարի ու կէս է՝
որ այնպէս երեսի վրայ մնացած է ,
այնքան կ'աղաչենք , կը պաղատինք ,
կը գրենք , կը բողոքենք , և դեռ իւ-

բաւունիքնիս աեղք եկած չէ : Կհա
այս լատին կրօնաւորաց արարքներ
ըէն մին է :

“Երկրորդ՝ դարձեալանդ՚ի Վեթեւ-
հէմ Քառամնից սյրի դատը յիշեցէք,
որոյ մասին անցեալ օր ձեր Յարդու-
թեան Ներկայութեանը դատ վար-
ւեցաւ . ի՞նչպէս կ’ըլլայ օր ձեռքեր-
նիս Տէրութեն կալուածագիրը (հէօ-
ձէթ) ունենանք միւշաէրէ կութեան,
և լատինք միայնակ տիրեն այն երեք
ազգաց սեփհականութեան վրայ :

“Երրորդ՝ շատ չեղաւ, տակաւին
այնչափ տարիներէ ՚ի վեր շարունակ-
ւած և որոշուած մեր սեպհական տե-
ղին աւլելուն վրայ յանիրաւի վէճ մը-
բացին՝ արդիւլել ուղելով զմեղ նոյն
տեղը աւլելէն, և ատրճանակներով
բիրերով պատրաստուեցան յարձակիլ
անզէն միաբանութեանս վրայ : Հա-
բաթ մը աւելի աշխատելէ և տքնելէ
զինի շնորհիւ արդարասէր Տէրութեն
հաղիւ հաղ խալաղացաւ :

“Չորրորդ՝ Գեթսեմանի ձորոյն
մէջ Քրիստոսի տեառն մերոյ ազօթած

տեղը որ երեք ազգաց կը վերաբերի,
անցեալ տարի խարէ ու թեամք պատ
մը քաշելով իւրացընել ու դեցին, այլ
երբ Տէրութե բողբեցինք՝ արդիլուե-
ցաւ. բայց Տէրութե արդելքն ան-
գամյետոյ բանի տեղը դնելով օրին
նաց դէմ դարձեալ շնչեցին և աիրե-
ցին անոր, որ ահա աչքի դիմացն է :

« Հինգերորդ՝ Շեթլեհեմի եկե-
ղեցւոյ աջակողմեան գասուն մեր ժա-
մատեղւոյն մէջ եղած դուռը Եղիպ-
տոսի իշխանութեան ժամանակ հրա-
մանագիր բերելով | ատինք, հրովար-
տակով ու հէօճէթի շերիով միշտ գոյց
մնալու համար արդիլուած յիշեալ
դուռը բացին, և համարեա թէ ամեն
օր սորքի տակ առած են զմեղ իրենց
անցու դարձովը, թէպէտ և իրենց ե-
կեղեցւոյն կողմէն յատուկ ճանապարհ
ունին դէպ 'ի այրը երթալու և չեն
գործածեր : Թողում ժամանակ ժա-
մանակ մեղի ըրած անարդութիւններ-
նին, որ անտանելի է . և մինչեւ ան-
գամ արիւնահեղ կոիւներ պատա-
հած է նոյն անցու դարձին պատճա-

ուաւ, և այն՝ մօտ տարիներս :

“Վեցերորդ՝ ուր թողունքը Ախօնի գերեզմանատան դատը, ուր իրենց գերեզմանատան հիւսիսակողմը թադաւորական ճանապարհ ըլլալով՝ փոխանակ իրենց դուռը անկէ բանալու՝ մեր սեպհական հողայն վրայ երկու դուռը մէկէն բացին բռնութեամք, ուր երբէք իրաւունք չունին (1). և ահա սոյն դատն էր, որ երեկեան օր ձեր Յարդութեանը ներկայացուցի Վաեմ. Այսիւժ էֆէնտիի միջոցաւ, և դարձեալ նոյն դատն է, զոր ձեզ յանձնեցի, որ անաշտուապէս դատէք և վճռէք, որոյ յատակագիծն ալ կըս նամ ցուցընել, ” ըսելով՝ գերեզմանատան յատակագիծը մէջ բերաւ . “Դիտեցէք ըստւ, ահա արեւու նման կ'երեւի իմ իրաւունքս յատակագծին”

(1) “Նոյն օրերը անգամ մի կտման տը Պարրէք Անդղիոյ հիւսիսատոսարանը ուրիշ քանի մի չիւսպատոսաց ընկերութեան [մէջ ’ի Շշմարտութենէ շարժեալ խոստովանած է ըսելով թէ՝ Լատինք ըստոյդ է որ իրաւունք չունին այդ երկու դուները բանալու՝ քանի որ ճանապարհի վրայ տեղ ունին”

մէջ զոր զլանալու կը ճգնին | ատին
կրօնաւորք : —Եւ նոյն յատակագծին
վրայ եղածները տեղն ՚ի տեղը հաս
կցնելով հարցուց Պ . Հիւ պատոսին
թէ, «Այսպէս մէկ դատ մը եթէ ձեր
թագաւորական երկրին մէջ պատա
հելու ըլլար, ինչպէս կը վճռէիք. բըռ
նաբարողին իրաւունքը կը պաշտպա
նէիք : —Քանի որ իրենց մէկ կողմը
Ճանապարհ կայ , միայն անկէ դուռ
քանալու իրաւունք ունին . բայց իւ
բենք կ'ըսեն որ, կրկնեց Պ . Հիւ պա
տոսը, մենք միշտ կ'անցնէինք և մեր
մեռեալներն անկէ կը տանէինք : —

«Այս, ըսաւ սրբազն Պատրիար
քըն , ըսածնին ստոյգ է , բայց ե՞րբ .
Քանի որ պատքաշուած չէր, այն ա
տեն որ կողմէն ուղէին՝ կրնային տա
նիլ . միևնոյնը մենք ալ կ'ընէինք . մեր
մեռեալներն ուրկէ ուղէինք կը տա
նէինք , և այս քաներուն վրայ և ոչ
մէկ օր քան մը ըսած ունէինք իրարու,
վասն զի պատով որոշուած ըրբալով
երեք ազգաց գերեզմանատուններն ալ

ոտքի տակ էին, ինչպես է հիմայ մերն
ու Յունացը:

“ Բայց Պ. Հիւպատոս, գուցէ
գուք չէք գիտեր թէ լատինաց այս
երկու դուռը հակառակ իրաւանց
բանալնուն բուն նպատակն ինչ է.
զոր կը պարտաւորիմ ձեզ բացատրե-
լու ” ըսելով, ցայց տուաւ Արքաղան
Պատրիարքը նոյն յատակագծի վրայի
լատինաց գերեզմանատան կից եղած
Հայոց պարտիզին այն կտորը, որուն
լատինք տիրապետել կ'ուղեն յանի-
րաւի, և որոյ ընդարձակութիւնն 750
կանգուն է. “ ;թէ այս կտորը այսօր
լատինաց թողումք, իսկոյն նոյն եր-
կու գուներն ալ կը գոցեն, ըսաւ. բայց
խարուելով դատ վաստըկիլը ես չեմ
կրնար ընդունիլ, և ոչ ալ իմ ազգիս
արդար սեփհականութիւնն յանիրա-
ւի լատինաց տալ. այլ կ'աշխատիմ՝
կըսպասեմ ժամանակին, օր մը չէ՝ օր
մը հարկաւ և գուցէ մօտ ժամանակ-
ներս այս արդար իրաւանցս տէր պի-
տի ըլլամառանց նոյն պարտիզին յիշ-
շեալ կտորը լատինաց տալու, քանի

որիմ իրաւանցս բռնաբարուեն ձայնը
իմ խնամառատ թագաւորիս ականջը
հասնելով հաճեցաւ Ասէմ . Ա ալլ
Փաշայն և Վիւնիւֆ էֆէնտին այս
գործերուն քննութեանը խրկել յա-
տուկ պաշտօնով , քանի որ բոլոր աշ-
խարհ տարածեցաւ այս իմ բռնաբա-
րեալ իրաւանցս ձայնը . “ զրկեալն ՚ի
ձէնջ աղաղակէ ” , որով ՚ի հարկէ ան-
մեղն իւր սեպհական իրաւանց տէր ,
ինկ զրկողն՝ բոլոր աշխարհի դիտո-
ղութեան ենթակայ պիտի ըլլան :

“ Արդեօք կարողոցայ Պ. Հիւպա-
տոս , իմ սրտիս խար վէրքերը ձեղյայտ-
նելու և նոյն ցաւերուս բուն խիկ տղ-
բիւրներն ցուցնելու անհերքելի փառ-
տերով . և եթէ մութ կամ անհառ-
կանալի քան մը մնաց , շնորհք բրեք
ասացէք , քանի որ դուք յօժար էք
լսել և ես յօժարագոյն եմ տեղեկա-
ցուցանել զՃերդ Յարգութիւն , որ-
քան կարեմ : —

“ Ա ճապէս շնորհակալեմ , ըսաւ
Պ. Հիւպատոսը , որ ինձ օրինաւոր
անղեկութիւններ տուիք . Երբէք չեմ

ուղեր՝ որ դուք | ատին կրօնաւորնեւ-
րէն զրկանք կրէք, բայց միանգամայն
կը ինդրեմ որ՝ եթէ այսպէս դժուռի-
ներ պատահին, դուք ուղղակի Գաղ-
ղիոյ Հիւպատոսին դիմէք, նա կարող
է զանոնք զսպել, ձեր իրաւունքները
անբռնաբարելի ընել, և դուք ՚ի խա-
ղաղութեան կը մնաք: —

“Պ. Հիւպատոս, ըստւ սրբազան
Պատրիարքը, դուք բարեմտութեամբ
շատ գեղեցիկ կը խօսիք. մանաւանդ
թէ գործոց սկզբանը տեղեկութիւն
չունենալով կը կարծէք թէ մենք ոյդ
մարդափոյել և քրիստոնէական խա-
ղաղասիրութեան պարտաւորութիւն-
ները կատարած չեմք. ներում շնորհե-
ցէք ինձ ուրեմն, որ այդ կէան ալլու-
սաբանեմ ձեզ. և այն ատեն քաջ պի-
տի հասու ըլլաք թէ մենք մեր կողմէն
երբէք բան մը պակաս թողած չեմք.
արդեօք կը կարծէք որ այդ պիսի պա-
րագաներու մէջ ձեր Պ. Հիւպատոսին
դիմած չեմք. կընամնոյն խել Պ. Հիւ-
պատոսին մէկ ամենասիրելի բարեկա-
մին վկայութեամբն ստուգել թէ

Հարկ եղածը ըրած եմ լիովին :

“Ի՞սց երբ ձեր Հիւպատոսները
մեր իրաւացի ազաքանքը չեն լսեր,
մեր իրաւանց յափշտակութեան կը
թոյլատրեն, և ոչ այսցափ միայն, այլ
և շատ սննդամ իրենք նոյն կրօնաւոր
ներէն գրգռեալ անձամբ ձեռնաա-
մուխ կ'ըլլան սցաղիսի չարեաց պատ-
ճառ ըլլալու, և իրենց վրայ գոներ-
ւած իրենց տէրութեան պաշտօնի
ազդեցութեամբ կը յարձակին իմ տղ-
գային իրաւունքս ունակոխ ընելու
ամենայն զօրութեամբ . ուրեմն Պ.
Հիւպատոս, որու պէտք է դիմենք
այն տաեն երբ նոյն զրկանքներուն
ձեր հիւպատոսները գործիք կ'ըլլան.
կ'աղացեմ ցոյց տուէք ինձ և մեծա-
պէս ալ շնորհակալ պիտի ըլլամ ձեղ-
մէ . (այս խօսքերը արտասանելու միւ
ջոցին որբազան Պատրիարքին գոյնն
այլափոխեալ էր, աչքերէն արտաս-
ւաց կաթիլներ կը հոսէին և սասաիկ
եռանդով կը խօսէր .) Նոյն իսկ ձեր
հիւպատոսներն են՝ որ լատին կրօ-
նաւորաց ձեռքը գործիք ըլլալով մեղ-

այսքան աղէտներ կը պատճառ են :
 Այն խել ձեր Հիւպատոսն է՝ Պ. Հիւ-
 պատոս՝ երեք տարի առաջ Եղիպատոս
 գտնուած ատենս իմ ազգային վանու-
 ցը դուռը Տէրութեան կանոնաւոր
 զօրքը բերողը, իմ սուրբ Եկեղեցւոյս
 գուռը լավիկներ կայնեցնողը՝ պաշ-
 տօնական հանդերձով Եկողը և պաշ-
 տօնական աթոռ բերողը : Ա Երջապէս
 իրեն ազգեցութեամբն էր նայն օրը
 իմ կրօնէցո և սուրբ սննդատ Եկեղեց-
 ցիս այսպանելով և նախատելով | ա-
 տին կրօնաւորաց բարող տալը : Այս-
 պէս բան պատահած չէր Երբեք բար-
 բարաս ազգերէն անգամ : Այսքան
 աղէտներու պատահած ատենս որու-
 պէտք էի դիմել :

Ա Երեցէք Պ. Հիւպատոս թէպէտե
 կրօնէքով քրիստոնեայ եմք, որով և բոլըր
 քրիստոնէից և քրիստոնեայ թագաւո-
 րաց հետ հաւատով միացեալ այսու ա-
 մենայնիւ (Ճամանեան մեծազօր Տէրու-
 թեան հպատակն եմք և բարեխնամ
 թռագաւորիս բարիքն է որ կը վայելենք
 ազգովն : Ես իմ Տէրութեանս վրայ

վատահ եմ, որ միշտ իբրեւ հայր կը
դժայ իմհամայն ազգիս վրայ . և քաջ
կը ճանաչէ նա փորձով Հայոց աղը
գին հարազատութիւնն և հաւատար-
մութիւնն . և իմ ձեռքս գտնուած
բոլոր սեպհականութիւններս անոր
կը վերաբերին , և նա ինքն իմ ազգիս
հաճութեամբը և իւր ձեռագիր բար-
ձը հրովարտակովը ինձ յանձնած է
սոյն սեպհականութիւնները , պատ-
ւիրելով՝ որ անոնց վրայ հսկեմ , ա-
նոնցմէ երբէք բան մը չը կորսնցնեմ ,
և այն : Ձեր Պ. Հիւպատոսը Եպիպ-
տոս եղած ժոմանակս պարտաւոր էր
գոնէ մարդկութեան օրէնքը լեցնե-
լու համար իմ իրաւունքիս հսկել .
նա ոչ թէ միայն չը կատարեց զայս ,
այլ ատին կրօնաւորաց ականջ դը-
նելով կ'ուղէր զիս իմ տէրութեանս
աչքին կասկածեցի ցուցնել :

“Ո՞ր իրաւունքները կը ներէր իրեն
կանոնաւոր զօրք բերել իմ սեփական
վանքիս աւաջը շարելու պատրուակաւ
իրը թէ իրեն բարեւ պիտի բռնեն :

“Ո՞ր իրաւամբ կանոնաւոր զօրք

չըքաւականանալով՝ զապթիէ ևս բերել կուտայ իմ եկեղեցիխ դուռը կայնեցնելու :

“Ո՞ր օրէնքը կը ներէր, և Եւրոպացի ո՞ր համալսարանէն, Գաղղիոյ տեղութեան ո՞ր օրէնսուսոյցներէն սորվածէր չը հրաւիրուած տեղիւր պաշտօնական զգեստով երթալով պաշտօնական կերպարանիք տալ:

“Ո՞ր օրէնքը կը ներէր, իրեն պաշտօնական ամսութ՝ զօր միայն պապական եկեղեցւոյն մէջ դնելու իրաւունք ունի, (սուրբ տեղեաց մէջ միայն պապական մասը պաշտպանելուն համար,) բերել իմանտի պապական և ազգային եկեղեցւոյս մէջ դնելնըստիլ, պաշտօնական կերպարանիք միտալու նպատակաւ :

“Ո՞ր օրէնքը կը ներէր Պրանչիսկեան կրօնաւորաց՝ երբեք չը տեսնուած սովորութիւնն մի հնարել, այսինքն նոյն օրը իմ սուրբ եկեղեցւոյս մէջ կրօնքի վրայ քարոզ տալ ազգս և սուրբ եկեղեցիս հերձուածող անուանել. և իմ սուրբ պատարագ մասուցած նք սե-

զանոյս վրայէն իմեկեղեցիս սյագանել
և նախատել, և առանց քրտնելու ա-
սել ամեն ատեն ըստ պժգալի սա-
խօսքը, թէ արտաքոյ Հռովմայ եկե-
ղեցւոյն չիք փրկութիւն : Ա Եւ այս
տարուան շարժմունքնին եթէ յաջո-
ղէին, ինքնին կը ցուցնէր, որ առաւե-
լապէս պիտի գերազանցէին Հայոց ե-
կեղեցւոյն անարգութիւնները . վասն
զի մոքերնին դրած էին Հռովմայ
միշտ սիսալական պապին նոր ստացած
անսխալութեան տիտղոսը իմ՝ սուրբ
և անարատ եկեղեցւոյս մէջ անսխալ
և անմահ արարչին Վատուծոյ նուի-
րուած սուրբ սեղանոյն վրայ հրաշա-
փառապէս յիշատակել . և ո՛գիտէ
կրօնքիս և աղգիս վրայ ո՛ր աստիճան
նախատական անուններ պիտի բար-
դուէին : Եւ ես ի՞նչպէս կարէի տո-
կալ անոր:

“Վատքերնիդ դրէք հաստատապէս Պ.
Հիւսպատոս թէ ձեր պաշտօնակից Հիւ-
սպատոսին ինձ տուած վէրքը՝ որ ընդհա-
նուր աղգիս կը վերաբերի, անմոռա-
նալի է՝ չասացից թէ աններելի, վասն զի

իւր պաշտօնին աղդեցութիւր չարաշար գործածեց , և այն՝ Հայոց աղդին նման մարդասէր , եղբայրասէր և անմեղ աղդի մը սեպհականութե՛ դէմ և անկէց շնորհք եղած պատւոյն իրցեւ վերջին աստիճանի ապերախտութիւնն ցոյց տուաւ :

Այս թեմն Պ. Հիւպատոս , | պատին կղերաց դրդմամք , և նոցա երեսէն թէ՛ ներքսապէս և թէ արտաքսապէս այսքան վետառած ըլլալովս՝ յիշէ անզամ մի բոլոր ըստածներս այսինքն զըրկանքներս , զորս ասացի և զորս կըրնամ մի ըստ միօջէ օրինաւոր փաստերով ստուգելը աւթեմն ինչպէս կարելի է այսպէս յայտնի թշնամիի մը արտօնութիւնն տալ դարձեալիմ սեպհական եկեղեցին գալու . զիարդ կարեմ թիւնաւոր օձ մի իմ բնակարանս հրաւիրել , և չզգալ՝ թէ օր մը չէ օր մը պիտի սպաննէ զիս , այսինքն իմ իրաւունքս բալրուվին յափշտակելու և սեփիհականնելու պիտի ելնէ : Վոկէ աւելի ոչ մեծ պատճառներ կը դըտնուի և ոչ պատեհ ժամանակ , ու-

ըեմն թրջուսղը անձրեւէն ի՞նչ երկիւղ
ունի . տրդէն մեզ ըլլալիքն եղաւ ,
ալ ասկէ աւելի ի՞նչ կրնայ ըլլու , և
ի՞նչ չարիք կրնան հասցունել :

Դամասկոսի Պ. Հիւպատոսը ար-
դէն համազուած էր սրբազնն Պատ-
րիարքի խօսքերուն ճշմարտութեանը
և իմացած էր Տը Պարիէրի ապօրի-
նաւոր ընթացքը , ինչպէս յայտնած էր
առանձին խօսակցուելը մէջ իւր հետե-
ղող թարգմաններուն՝ գաղղթերէն խօ-
սելով՝ ի՞ներկոյութեան պատառելի Պ.
Աւալաննեանցին . սակայն չուզելով
բոլորովին մեղադրելի ցուցընել զանի
որ յանուն Պաղպիոյ տէրութեան կը
գործէր , որոյ երեսփոխանն էր , կը
ջանար հաւտացնել Արբազան Պատ-
րիարքին՝ ըսելով թէ , “Ե՞նշուշտ ի՞նչ
պէս ես կը սիրեմ հաւատալ , իմ
պաշտօնակիցս ճախող դիտաւորու-
թեամբ բռնած չէ այս ընթացքը , այլ
թերեւս ձեզ եւ միաբանութեանդ
պատիւ ընելու նպատակաւ է , ապա
թէ ոչ նորա այս օրինակ ընթացքը ,
մանաւանդ պաշտօնական հագուս-

տով գալը, պաշտօնապէս մեղանիշել
 է, և շատ սխալած է այդ մասին։
 Այսու ամենայնիւ մենք պիտի աշ-
 խատինք ատօնց առաջքն առնուլ, և
 արդէն կը ճանանք ձեր իրաւունք
 ները, և այս օրուան օրս մեք Գաղ-
 ղիացիքս ազգովին գիտեմք, որ սուրբ
 Յակովը վանքը Հայոց սեպհակա-
 նութիւնն է. և ոչ ոք ինչ ազգէ կ'ու-
 զէ ըլլոյ՝ կարող չէ ատոր հակառա-
 կիլ, ըստ որում ընդհանրապէս ճանչ
 ցուած իրաւունք է։ Կը խնդրեմ ու-
 րեմն ձեր Ամենապատուութենէն,
 որ անցեալը մոռնաք, և նորէն սէր և
 խաղաղութիւն հաստատուի երկու
 միաբանութեանց մշջ ինչպէս էր յա-
 սաջ։ Ես պիտի յորդորեմ և պիտի
 մեղադրեմ՝ ինչպէս մեղադրած եմ,
 տեղւոյս լատին կղերը, որ ետ կե-
 նայ այսուհետեւ իւր տպօրինաւոր
 ընթացքէն, և կ'երաշխաւորեմ ձեզ՝
 որ ասկէ յետոյ այս օրինակ գէպք
 մի չպիտի պատահի, սյսու ամենայ-
 նիւ ես ալ ձեր Ամենապատուութե-
 նէն փոխարէն զոհողութիւն մի կը
 խնդրեմ, որ ընէք։ ո

Այս վերջին խօսքովն կ'ուղէր իւ-
մացնել թէ կրկին անգամ թոյլատը-
րուի | ատինաց, որ գան պատարագե-
լու սուրբ Յակովը եկեղեցւոյն մէջ.

Եսն թոյլատուութիւնը սրբա-
զան Հայրը՝ ինչպէս միշտ ժխտած էր,
այժմ եւս ժխտեց և ըստւ. «Պ. Հիւ-
պատոս, այդ շնորհումը՝ որ Հայոց
ազգը վեհանձնութեամբ ըրած էր և
շարունակած մինչեւ մօտ ժամանակ-
ներս, նոյն շնորհքին դէմ փոխանակ
շնորհակալ ըլլալու՝ շասացից երախ-
տապարտ, այնպէս երախտամու մը-
տօք մեր վրայ յարձակելով ուղեցին
պաշտօնական կերպարանք տալով իւ-
րաւունք մը ստանան մեր սեպհակու-
նութեան մէջ. | թէ յաջողէին, ո՛
գիտէ ինչ եղանակ Շիզվիթական
հանգոյցներով անլուծանելի կապեալ
պիտի կաշկանդէին, և անելանելի լա-
բիւրինթոսի մէջ ձգէին, ուրկէ միայն
աստուածային ձեռքը պիտի կարողա-
նար ազատել զմեզ.

« Նոնց այս ցոյցը իմ և բոլոր միա-
բանութեանս սիրտը կարեվէր խոցեց

վշտացուց, որով և համայն չայոց ազ-
 գին սիրութ . վասն զի Ակմանեթէ խը-
 յանէթլիք օլտու՞ , ոյր վասն ալ իմ
 կարողութենէս և իմ ձեռքէս ելաւ
 այդ արտօնութիւնը շնորհելը : Եզդին
 կեդրոնական Վ արշութեան և ընդ-
 հաներութեան ձեռքը յանձնեցի ես
 լուր տալով գործին սկիզբը , մէջն ու
 վերջը տեղեկագրելով , որուն կողմէն
 ես միայն իբրեւ երեսփոխան եմ հրս-
 կելու և պաշտպանելու ըստ հրամա-
 նի մեծազօր Տէրութեանս շնորհած
 հրտվարտակին . բայց երբ իմ պարտա-
 ւորութիւնս կատարելէ զինի գործը
 իմ կարողութենէս վեր կ'ելայ , աղ-
 գային կեդրոնական Վ արշութե տե-
 ղեկագրելով լուր տալ է իմ պարտա-
 ւորութիւնս , և ահա այն եւս վերջ-
 նական կերպիւ կատարելու համար
 այս դատերուն վերջանալուն կըսպա-
 սեմ . ոյր վասն կ'աղաչեմ , զիս մի լո-
 տիալէք , վասն զի չը պիտի կընամ այդ-
 պէս իմ կրօնքիս՝ իմ նը եկեղեցւոյս՝
 և իմ ընդհանուր ազգիս վեասակար
 խնդիր մը ընդունել , որով իմ արդէն

մեղապարտ անձս յաւիտեանս մեղա-
դրելու ենթակայ ընել։ Ինձ համար
մահն աւելի դիւրին է յանձն առնել
քան թէ այդպէս ամենավասակար
խնդիր մը ընդունել։ Կ'աղաջեմ և
վերջնական կերպիւ կը խօսիմ ձեր
Յարգութեան Պ. Հիւպատոս, որ ինձ
համար այդ գործը լրացեալ է, եթէ
զիս համոզելու համար կը յորդորէք
կամ կըստիպէք զիս իմ խօսակցութիւ-
նըս շարունակել, գիտցած եղիք Պ.
Հիւպատոս, ոչ թէ միայն չպիտի կըս-
նաք համոզել, այլ պիտի ստիպուիմ
սրտիս ցաւէն լ ատին կըօնաւորաց
կողմէ իմ միաբանութեանս կրած զըր-
կանքները, բռնաբարումները, միով-
բանիւ՝ անհնարին վէրքերս նկարա-
գրել, որոյ արիւնալի զազրահոտու-
թենէն և դուք ձանձրացեալ, գուցէ
կը զղջաք զիս խօսել տալուդ։

“Ուրեմն խնդրեմ վերջ տանք այս
խօսքերուն, վասն զի քաջ գիտեմ որ
մեր ցաւալի և քիչ մը ալ եռանդուն
խօսակցութենէն, ձեր պատուական
գլուխը ցաւեցաւ, և ձեր մաքուր

սիրտը վիրաւորեցաւ չը գիտցածները լսելով։ Նաև այսօր ձեր առաջին անգամ՝ դալուն՝ գիտեմ որ չէր վայ լեր այսպէս դատական խնդիրներու վրայ խօսել, այլքանի որ ձեր Յարդութիւնը բարեսրտութեամբ խօսք բացիք . և ես պատասխանելու եւ պէտք եղածները իւր սարօքն խօսելու պարտաւորեցայ, ոյր վասն ձեր ներողամնութիւնը կը խնդրեմ, մասնաւանդ դուցէ այս խօսակցութեանը պատճառաւ՝ ինչպէս բնական է՝ ձեր Յարդութեան արժանաւոր պատիւը չըկրցայ սլահել, որոյ վասն ներողամիտ ըլլալնիդ կը խնդրեմ։»

Ոտք ելլալով Պ. Հիւպատոսը ըստ . «Զեր խօսակցութիներն երբէք ինձ գլխացաւանք չպատճառեցին . մանաւանդ ուրախ եղայ ձեր ինձ տուած օրինաւոր տեղեկութիւններէն, որոնց մէջ քաջ նկատեցի որ աւելրդաբանութիւններ չըկար, և քաջ ճանաչեցի ձեր հոգւոյն ազնը ւութիւնն, որ ձեր ազգային միակ պարտաւորութիւնն ճանաչելով եր-

բէք չէք զիջանիր իմ միակ խնդիրս
ընդունելու, հաստատելով թէ միա-
սակար է ձեր կրօնիքին՝ ձեր աղգին և
այլն. ձեր աղգասիրութիւնը ձեր կր-
օնասիրութիւնն ամենայն պարագա-
յիւք կը դովեմ, և իմ խնդիրքս ըն-
դունելնուդ համար ալ այս կը ցաւիմ;
այլ չեմ յուսահատիր բոլորովին, կը
յուսամեն կ'աշխատիմ և կը թախան-
ձեմ զձեր Ամենապատուութիւնը,
որ գուցէ համոզել կարօղանամ, որ
սելով վերջացուց : Բաժնուելու ժա-
մանակ Պ. Հիւպատոսը խնդրեց որ
եթէ կարելի է հրաման ըլլայ սուրբ
Յակովը եկեղեցին բանալ տալու,
որ ուխտ և երկրապատութիւն ընէ :

“Հրամանի կարօտ չէ, ամեն ժա-
մանակ բաց է, ըսաւ Ա. Պատրիարքը,
բոլոր աղգաց ուխտաւորաց, երբ
միամտաբար կուգան . բայց ձեր Յար-
գութեան առաւել պատիւ ընելու
համար ես անձամբ կ'իջնամյեկեղե-
ցին Ձեր հետ :”

Եւ ’ի միասին իջեալ սուրբ Յա-
կովը եկեղեցին, անձամբ ցոյց կու-

տար Ա . Պատրիարքն պէտք եղած
տեղեկութիւններն ՚ի պատիւ , Պ .
Հիւպատոսին . և երբ յանուն սուրբ
Գևադրին նուիրուած նը խորանին
եկան , ուր ամիսովուած է նը գլուխն
նորա . “ Եհա այս է լսաւ Ա . Պատ-
րիարքն Հայոց ազգին վեհանձնաբար
՚ի շնորհու ատին կրօնաւորաց տարին
միանգամ պատարագելու թոյլատը-
րուած նը սեղանը , որոյ յարգը շդիտ-
ցանքայց եթէ երբ կորսնցուցին իրենց
եղած շնորհքը և մարգասիրութիւնը : ”

“ Եսն շնորհքը կորսնցուցած չեմ
համարեր , լսաւ Պ . Հիւպատոսը ,
քանի որ դուք առաստասիրտ էք և նե-
րողամիտ Հայր . դարձեալ պիտի շը-
նորհէք նոյն արտօնութիւնն , որոյ
վասն դեռ ես իմ յոյսս կտրած չեմ ,
և կը թախանձեմ և պիտի թախան-
ձեմ որ ընդունիք սոյն խնդիրս , և
թոյլատէք ատինաց գալ իւրեանց
պատարագը ընել դարձեալ , և ես
ինչպէս փոքր մի յառաջ ալ ասացի ,
պէտք եղածները պիտի լսեմ և պի-
տի պատռերեմ , որ այսուհետեւ եր-

բէք ձեր իրաւունքին չդպչին , և նու
րանոր սովորութիւններ չհաստատեն
և զձեղ չվշտացնեն : —

Եւ աւելցուց Պ. Հիւպատոսն ը-
սելով թէ , “ի՞նչ պատուական եկեղեւ-
ցի ունիք եղեր , ասոր նմանը չտեսաց
Երուսաղէմի մէջ , իրաւ որ կ'արժէ :
Ուրեմն Արքազան Հայր , Երջանիկ եք
դուք և ձեր ազգը , որ Առւրբ Երու-
սաղէմի մէջ , պատուական Պատրիար-
քարան մի ունենալէ յետոյ՝ այսպէս
հոյակապ և փառաւոր եկեղեցի ալ-
ունիք : —

“Եւ այն ՚ի վերայ լերինն Ախօնիո
ըսաւ Արքազան Պատրիարքն : —

“Ուծ Երջանկութիւն է այս ձեղ
համար , կրկնեց Պ. Հիւպատոսը .
Առւրբ Երուսաղէմի մէջ , եւ այն
ալ Ախօն լերան վրայ այսպէս ընդար-
ձակ և հոյակապ վանիք ունենալը , սա-
կայն պարտաւոր էք նաեւ սյլոց խրն-
դրանաց եւս զիջանել , որ անոնք ալ
մասնակցելով մինիթարուին : —

“Ուրիշ ազգեր զանազան բարե-
մասնութիւններով Երջանկացէալ են :

ըստւ Արքաղան Պատրիարքը, դարձ
 ձեալ իրենց ձեռքը գտնուած տես
 զերով և վայելոծ բարիքներով . մի
 թէ քիչ տեղեր ունին | ատինք իրենց
 ձեռքը . թողայն անթիւ անհամար եւ
 կամուաները , որ գետօրէն կը վազեն
 կուգան Եւրոպոյի բոլոր թագաւու
 րաց և համայն ժողովրդոց կողմանէ ,
 և իրենիք երբեմն զմեզ նախատելով
 կը յոխորտան ըսելով թէ, «Անք Եւ
 րոպիոյ եօթը տէրութեանց կողմէն
 կը նստինիք հոս . » և երբեմն ալ դատ
 վարելու տաեն անսնց ազգեցութիւ
 նը մէջ բերելով կ'ըսեն՝ եօթն տէրու
 թեանց սեպհականութիւն է , և այն ,
 այսքան բարիքներ ունեցող , և զայն
 կշռապինդ վայելով միաբանութիւն
 մը , խեղճ Հայոց միաբանութեանը ,
 որք տարոց տարի եկող ուխտաւորաց
 արդեանց փոքր գումարովն աղբատօ
 քէն ապրելով շնորհիւ բարեխնամ(Օ)ս
 մանեան Տէրութեան օրինաւոր հրո
 վարտակներովը սեփհականեալ այս
 միակ միսիթարութեանս մէջ անգամ
 մասնակցիլ երազելովնին՝ ո՞ր աստիւ

Ճան մեղանչում կը սեպուի Պ. Հիւ-
պատոս, մասծեցէք կ'աղաշեմ. Եթէ
մենիք այս մեր փոքր վայելքէն անսնց
մասն հանել պարտաւոր ենք ըստ իւ-
րեանց կարծեաց, արդեօք իրենք իրենց
անհամար բարութեց զոր կը վայելեն
կշտապինդ, որքան պարտաւոր են մեզ
եւս մասն եւ բաժին հանելու, ըստ
տէրունական անսուտ բանին թէ՝
“Որում շատ տուաւ շատ ինդրեսի
՚ինմանէ” ։ Եւն։ Այսպէս խօսքերով
ողջոյնեալ զմիմեանս բաժնուեցան ա-
մենայն սիրով խօսք տալով Պ. Հիւ-
պատոսն թէ, յատուկ ուրիշօր մը
պիտի գայ։

Դարձեալ սուրբ Յակովի խնդրոյն վըսյօք
Յունաց վանուց Թջ եղած խօսակցութեան
(Խորաքայ), ուր ներկայ էին Ա սեմ. Ա այլ
Փաշայն, Ա սեմ. Ա յափի էֆենդին ե-
Դամակոսի Դաշներ Պ. Հեղապուր՝ Ի
իրմանե Լ ապին կրօնառորդոց :

Օ կնի սովորական տեսութեան
հարցուց Ա սեմ. Ա յունիփ էֆենտին
Ա. Պատրիարքին թէ, «Յերեկեան օր
մենք ուրիշ գործեր ունեցանք և փո-
քքը ինչ շրջագայելու տեղեր ալ գնա-
ցինք, ՚ի հարկէ դուք աւելի օգտա-
կար գործերու պարապած պիտի ըլ-
լաք : —

«Ն ֆենտիմ, ըսաւ Արքազան Պատ-
րիարքը, մեր գործերը արդէն ինքնին
յայտնի են, որ նախ մեր (Օգոստա-
փառ Առլթանին անգին կենաց եր-
կարութե՛, և նորա բոլոր ձեռնարկած
բարի գործերուն յաջողութեան, և
զինի բոլոր աշխարհի խաղաղութեան
և թագաւորաց հաշտութեան համար
ազօթելէ միշտ, և ապա շնորհիւ մեր

մեծազօր թագաւորին ձեռքերնիս
գտնուած վանօրէից վրայ հսկել, և
դարձեալ մեր բարեխնամ Տէրութե
անուան և համայն Վղգիս փառք պա-
տիւ բերող և հայրենեաց օգտակար
եղող գործերուն աւելի հոգ տանել
է, ինչպէս վարժատան, տպարանի և
թանգարանի, և այլ այսպիսի օգտա-
կար հաստատութեանց, ինչպէս որ
անցեալները թէ Ասեմ, Աալի Փա-
շայն և յետոյ Զեր Ասեմութիւնը
անձամբ այցելութեան գալով տկա-
նատես իսկ եղաք, ոյր վասն մեծապէս
շնորհակալութիւնս կը մասուցանեմ
թէ իմ համօրէն ազգիս և թէ բոլոր
միաբանութեանս կողմանէ Զեր Աը-
սեմութեան : Վհա ասոնք են մեր պաշ-
տօնին պարտաւորութիւնը և պա-
րապմունքները :

« Բայց յերեկեան օր, կրկնեց Ա.
Պատրիարքը, մինչ մենք կը պատրաս-
տուէինք մեր բարեկամ Պ. Հիւպա-
տոսի բարի գալուստը շնորհաւորե-
լու երթալու, ինքն կանխեց մեր վան-
քը եկաւ և բաւական միջոց ալ տես-

նուեցանք, և երկար խօսակցելու առարկաներ ունեցանք, եւ դուցէ Պ. Հիւպատոսը ձանձրացած ալ պիտի ըլլայ, այր վասն ներում կը խընդրեմ նորին յարգութենէն :

“Բաւ լիցի, ոչ թէ միայն չճանձրացայ, բաւ Պ. Հիւպատոսն, այլ և մեծապէս շնորհակալ եւս եմ որ մեծ մարդասիրութեամբ ընդունեցիք ըզ մեզ, և յանձն առիք մեր չգիտցած ները մեզի պատմելով տեղեկացնելու, և այն՝ օրինաւոր փաստերով և վկայութեամբ։ Եթէ ժոմանակս ներէ, միտք ունիմ դարձեալ գալու, և ձեր վանուց բոլոր հաստատութիւններն պտըտելու և աչքէ անցընելու դանոնք՝ եթէ կը բարեհաջիք։ և մանաւանդ կը լսեմ որ օրինաւոր վարժարան, տպարան և թանգարան ալ ունիք եղեր վանուցդ մէջ։ նաեւ դուք անձամբ քանի մի գեղարուեստներ ալ գիտէք եղեր, որոնք ինձ ալ սիրելի են, և կ'ուզեմ անոնց վորձերը տեսնելո՞ :

Այս կէտերուն վրայ Վ սեմ, Վ տ-

լի Փաշայն և Վ սեմ. Ա իւնիֆ է ֆէն-
տին բաւական գոհունակութեամբ
սկսան խօսիլ Պ. Հիւպատոսին հետ,
և իրենց այցելութեան օրը տեսած-
ները համարեա թէ մի ըստ միոջէ-
պատմեցին , թէ նոյն հաստատու-
թիւնները աչքէ անցընելնին , և թէ
թանգարանի Այցելուացհամարյատ-
կացեալ տումարին մէջ իրենց Վ սեմ.
անուննին ստորագրելնին մէջ բերե-
լով , ևն , ևն , ևն :

Բ ոտւ Ա . Պատրիարքն . “ Շատ
փոքր բաններ են , Պ. Հիւպատոս,
մեր ունեցածները Ձեր տեսածնե-
րուն և ունեցածներնուդ հետ բաղ-
դատելով . բայց դուք քանի որ կը
բարեհաճիք գալ , հրամեցէք երբ որ
կը կամիք , մեծ սպատիւ կը համարեմ
ինձ համար : Վ սեմ. Վ ալի Փաշայն
և Ա իւնիֆ է ֆէնտին ըսին . “ Բաթ-
րիք է ֆէնտի , կ'երեւի որ Պ. Հիւ-
պատոսին հետ պատարագելու խըն-
դիրը կամ լուծած էք և կամ դիւրա-
ցուցած , քանի որ ըստ ձեր խոստման
բաւական երկար տեսութիւն ըրած

ըլլալով, 'ի հարկէ գործը դիւրացուցած պիտի ըլլաք . եթէ այդպէս բան մը եղած է, շատ գոհ պիտի ըլլամբ։ —

“Այս թէ միայն չդիւրացաւ, ըստ Ո. Պատրիարքն, այլ և աւելի անկարելիութեան կերպարանիք առաւ իմ յառաջ բերած հաստատ փաստերովս, զորս Պ. Հիւպատոսին մի ըստ միոջէ պատմեցի ամենայն պարագայիւք և վկայութեամբ . 'ի հարկէ այսքան իմ բոնաբարեալ իրաւունքներս տեսնալէ զինի, վերստին վիտ չպիտի կրնայ ստիպել, և կամ աղաջել նոյն շնորհքը դարձեալ շարունակելու . —

“Շնորհքը միշտ շնորհքէ, ըստ Պ. Հիւպատոսը, զօր շնորհընկալը միշտ շնորհողէն կը թախանձէ մինչեւ կարողանալ զայն կրկին ձեռք բերելու, որ և իցէ կերպիւ . —

“Երբ ապերախտութեամբ շարժի շնորհընկալը, պատասխանեց Ո. Պատրիարքը, և վայելած շնորհքը չարաչար գործածելով իբրեւ իրաւունքի տէր կարծելով զինքն՝ պաշտօնական կերպարանիք տալ ճգնի, և միանգամայն

նոյն շնորհքը ընտղին խակ սեփհակաւ-
նութեան արդար իրաւունքին դրակ-
չի , այն առեն զիամրդ կարելի կ'ըլլայ,
Պ. Հիւսվասոս , նոյն շնորհքը դար-
ձեալ շարունակելու թոյլատրել այն
Այսաբանութեան՝ ի կորուստ անձին
աղգային արդար սեփհականութես :

Այս մանաւանդ , արդէն յայտնի
կ'երեւի որ՝ զուտ կրօնական եղած
խնդրայն քաղաքականի կերպարանք
տալ կ'երավեն . այս խնդիրը բոլորու
վին կրօնական է , և իմ տէրութիւնս
և բոլոր տէրութիւնք կրօնական գլո-
լուխներուն յանձնած են իրենց կր-
րօնքը ազատօրէն պաշտելու . ինչպէս
Քրանչխակեանք իրենց կրօնական ան-
սխալ Պապն ունին , նմանապէս ամեւ-
նայն ազգ . նոյնպէս և Հայոց աղգը
ունի կրօնական կառավարութեան
գլուխ իր Պապը , այսինքն սուրբ Եշ-
միածնաց սրբազն կաթողիկոսն ամեւ-
նայն Հայոց , (բայց ոչ անսխալ .) սր-
բասն ի հարկէ իմ կրօնական Պլուխս
ալ ինձմէն կրօնական հաշիւ կը պա-
հանջէ . և արդէն խակ ծանուցած

էր ինձ՝ (մինչ չոռվմայի Պատին անս
սխալութիւնն հաստատելու համար
տիեզերական ժողով կազմելու հրա-
ւեր կը կարդար, և լւելեայն քոլոր
չայ Եպիսկոպոսաց հրաւիրագրեր կը
խրիէր առանց խորհրդակցելու ա-
նոնց Գլխուն հետ,) թէ ահա չոռվ
մայի Պապը կ'աշխատի զինքն անսխալ
հրատարակել ինքն սխալական և մահ-
կանացու գոլով հակառակ հեղութի
և խանարհութիւն քարոզող Յիսուսի
Քրիստոսի աւետարանական վարդա-
պետութեան. զգուշացէք ուրեմն ՚ի
խմբոյ անտի անսխալութեան, և ըդ-
գուշացուցէք զորս ընդ ձեզ են, և
այլն և այլն և այլն :

Աթող իմ կրօնական գլուխս սրբա-
զան կաթուղիկոսս գրած և պատուի-
րած չըլլայ, և ոչ ալ զգուշացու-
ցած, ևս պարտաւոր չեմ միթէ իմ
պարտքս Ճանաչել, որ արդէն իսկ իմ
պաշտօնս ալ է և պարտաւորութիւ-
նըս, զգուշանալ յամենայն հակառակ
վարդապետութենէ, որք ոչ համա-
ձայնին հոգւոյն՝ սրբոյ Աւետարանին,

և այս իսկ իմ ուխտս ալ է առաջի
 անսխալ և անմահին Արտօնծոց և ո-
 ռաջի ամենայն աղդիս Հայոց . ուրե-
 մին զիարդ կարեմ իմ սուրբ ուխ-
 տիս հակառակ , իմ կրօնքս նախա-
 տող , այսպանող , և իմ սուրբ Եկեղե-
 ցւոց մեջ անգամ իմ սուրբ Եկեղե-
 ցիս և աղդս հերձուածող և հերետի-
 կոս քարոզող կրօնաւորներուն դար-
 ձեալ թոյլատրել , որ իմ մեծազօր
 Տէրութեանս շնորհիւ ինձ ՚ի բնե-
 անառի սեպհական իրաւունքս եղած
 սուրբ Եկեղեցւոց մեջ այդպէս ոճիլ
 գործուին աչացս առջեւ և ես ական-
 ջովս լսեմ . միթէ արդարութիւն ըլ-
 մնաց աշխարհիս վլոյց , և միթէ տէր
 և տիրական ըլ մնաց Հայոց Ազգին .
 քաւ լիցի , գեռ իմ մեծազօր Տէրու-
 թիւնս կարող և հաստատուն կանգ-
 նեալ կայ ամենայն կարողութեամբ
 և կարգադրութեամբ , գիտէ և կա-
 րող իսկ է զրկելոյն իրաւունքը զրկողին
 ժանիքներէն թափել , և իւր իսկ սեպ-
 հական տիրոջը յանձնելով ասել թէ
 երթ , ազատ պաշտէ քու կրօնքդ , ոչ

ոք կրնայ զքեղ արդիլել կամ անար-
գել։ Եւ դուք Ասեմ. Տեարք իմ։
Եթէ չէք կրնար իմ դատս որոշել և
զիս այսպէս անիրաւ բռնաբարողնեւ-
րուն ձեռքէն ազատել, կ'ազաքեմ ա-
սացէք ինձ, և ես անձամբ կ'երժամ
կը ներկայանամ իմ ողօրմած և արդա-
րադատ վեհափառ Ծագաւորիս, և
կը խնդրեմ Յորին Վեհափառութե-
նէն գոնէ. Եւ անդամնեւ անդամն, Եւ Գան-
չել ֆերման։

“Միթէ իմ վեհափառ Ծագաւորս
կուզէ իւր Հաւատարիմ Հպատակաց
իրաւունքին կորսուիլը կամ բռնա-
բարուիլը, մանաւանդ այսպիսի լու-
սաւորեալ դարօւս մէջ. քա՛ւ լիցի։—

“Բաժճրիք տօսթումուզ, ասաց Աք-
սեմ. Ա ալի Փաշայն իւր բնական ազ-
նիւ և Համեղ բնաւորութեամբն, մի
վշտանար և սիրոդ Հանգարա պահէ,
երբէք քու իրաւունքդ չկորսուիր։
և ոչ մէկը կրնայ քու իրաւունքդ քու-
ձեռքէդ յափշտակել “ Այսէի շահա-
նէտէ. ո բայց քանի որ դատ կը վա-
րուի, ՚ի Հարկէ երկու կողմէն ալ

պէտք եղածը սկիսի խօսիք, և մենք
 ալ սլարտաւորուած եմք լսել. նայե-
 ցէք մէկ անգամ, այս գործերուն
 համար տէրութեան կողմէն յատկա-
 պէս խրկուած է Ասեմ. Վիւնիֆ է-
 ֆէնտին. նմանապէս և ես հրամա-
 նաւ. նորին Վեհափառութեան եկած
 եմ աստ, այնքան գործերս ձգելով
 'ի Դամասկոս, 'ի Հարկէ այս հրաման-
 սերը մեզ ընող բարեխնամ Տէրու-
 թիւնը ոչ ձեր և ոչ ուրիշ որ և իցէ
 հպատակաց իրաւունքին կորսուիլը
 չուղեր. ուրեմն մի վշտանար. կրօնք-
 պատ է, և Տէրութիւնը քու կրօն-
 քիդ և կրօնական կարգերուդ և կա-
 նոններուդ երբէք չը խառնուիր, ա-
 զատ թողած է. ուրեմն առանց վշ-
 տանալու իրաւունքդ յառաջ բերե-
 լով խօսէ, մենք և Պ. Հիւպատոսը
 սիրով կը լսենք. և ոչ Պ. Հիւպատո-
 սը կ'ուղէ ձեր սեպհական իրաւուն-
 քին բռնաբարուիլը. միայն մեր և
 Պ. Հիւպատոսին խնդիրը այս է որ՝
 քանի որ դուք այսքան ատեն նոյն շը-
 նորհը ըսած էք, և լատինք վայե-

լած են զայն , եւ մոտ առեններս
ձեր սիրտը որ և իցէ կերպիւ վշտա-
ցուցեր են , նոյն վիշտերուն համե-
միչ դեղեր դնելով բժշկելէ մեր աշ-
խատու թիւնը . և այն ձեր յօժար կա-
մօքը և ամենայն սիրով նոյն շնորհքը
դարձեալ | ատինաց թոյլատրելնիդ
կուզենք , որք վայելել սկսին . բայց
այսու ամենայնիւ ինչպէս քանիցս ան-
գամ խօսուածէ , դարձեալ կրխու-
տանամք մենք և Պ . Հիւպատոսը՝ որ
սաստիկ պատուէր կը տրուի | ատի-
նաց , որ երբէք նորանոր շարժումներ
և սովորութիւններ չընեն . ոչ թէ
միայն այս մասին , այլ ձեք բոլոր ի-
րաւանց վրայ երբէք ակնարկու թիւն
անգամ չընեն . և եթէ դարձեալ այնպէս
շարժումներ ընել սկսին , դուք իրա-
ւունք ունենաք խկոյն հերքել և ոչ
երբէք ընդունել . մանաւանդ որ այս
քան կ'աշխատուի , մեր աշխատու
թիւնն ալ ՚ի դերեւ չելլայ : —

“ Կախ իմ վեհափառ թագաւորէս
շնորհակալ եմ , և ինձմով բոլոր Հա-
յոց աղքս , ըսաւ Որբաղան Պատրիար-

քըն, որ իւր հպատակ ծառայներուն
իրաւանց կորսուիլը և անոնց բռնա-
քարուիլը երբէք չուզելով՝ հրամայեց
թէ Զեր Վ սեմութեանը և թէ Վ ը-
սեմ. Վ իւնիֆ էֆէնտիին հոս խրկը-
ւիլը. ոյր վասն Զեր Վ սեմութենէն
եւս շնորհակալ եմ:

“Երդ՝ քանի որ իմ վեհափառ թառ-
գաւորս իմ կրօնիքս ազատ թողած է,
և իմ վանորայքս ինձ յանձնած է իւր
բարձր հրովարտակովը՝ գիտութեամբ
համայն Ազգիս Հայոց, իմ կրօնիքս
վրայ երբէք նախատինք չեմ կրնար ըն-
դունիլ. և իմ սեպհական վանօրէից
մէջ, յորս եռ անսխալ և անմահ Աս-
տուծոյ երկիրպագանեմ և զնա միայն
կը պաշտեմ, չեմ թողուր և ոչ զօք
պաշտօն կտոտարել, որ իմ կրօնիքս կ'այ-
պանէ, կը նախատէ, հրապարակա-
կան անէծք կը կարդայ, հերձուա-
ծող և հերետիկոս անուանելով զայն
Առվորականին գալով կ'ըսեմ, ես իրա-
ւունքի և Տալք տէր եմ, կ'ուզեմ
կ'ընդունիմ կ'ուզեմ չեմ ընդունիր:
Ընորհք մի է, այսքան ատեն է ըրած

եմ. այսօր չեմ ըներ : Ողորմութիւն
մի է, այսօր կուտամ, վազը չեմ տար :
Չեր Վ սեմութեան Պ . Հիւպատոսին
ուղած շնորհքը մանաւանդ թէ իմ
անձնական սեպհականութիւնս չէ ,
այլ շնորհիւ մեծազօր տէրութեանս
համայն Հայոց ազգին սեպհակա
նութիւննէ , նուաստս Տէրութեան
շնորհած հրովարտակին համտայն
պահպանող երեափոխան մի եմ , ուս
տի չեմ կրնար երբէք այնպէս յայտ
նի թշնամին դարձեալ իմ տունս հր
բաւիրել 'ի ցաւ , 'ի տրտմութիւն և
'ի գայթակղութիւն համայն Ազգին
և 'ի նախատինս իմ կրօնիքիս :

“ Այլ դուք , Վ սեմափայլ Տեարք,
հանդերձ Պ . Հիւպատոսով կը խընդո
րէք և կը յորդորէք զիս՝ որ զիջանիմ
ձեր հրամանին և թոյլատրեմ իսնդրեմ
իմ անձնական ծառայութենէս հրա
մայեցէք պատրաստ եմ կարելի եղա
ծը լնել , թէ և իմ անձիս անդամ
բացարձակ տէրը ես չեմ , այլ իմ
համայն ազգս է , վասն զի անոր նը
ւիրած եմ եկեղեցական եղած օրէս

՚ի վեր . ուրեմն այսքան պարտաւորութեանց դէմ , ես ի՞նչպէս կրնամ մեզանչել , մանաւանդ թէ նոյն մեզանչելն անգամ իմ ձեռքս չէ :

Ալ մնայ այժմ զմեղ վստահացուցած կէտին պատասխանել , որ կ'ըսէք թէ՝ « Ո՞՛չք լ տախնաց օստափիկ պատուէր կուտամք՝ որ նորանոր սովորութիւններ չենարեն և ձեր իրաւանց վրայ ակնարկ անգամ չը ձըգէն , են են են :

« Ե՞րնդունիմ Շեր Վ սեմութեան անգին խօսքերը նաեւ Պ . Հիւպատոսին , Ճշմարիտ կ'ըսէք և այն յօդուտ մեզ , զեսյնն յանձն կ'առնուն նաեւ Փրանչխակեան կրօնաւորք , և ամենայն վստահութեամք խօսք ալ կուտան երբէք չմեղանչել . վասն զի նոցա բնաւորութիւնն է վերջին աստիճան զիշանիլ , աղաչել , պաղատել . խոնարհել , ծունը կրկնել ամենայնիւ , մինչեւ իրենց ուզածը ձեռք բերեն . անկէ յետոյ քիչ մը ատեն ալ ամենայն սիրով կ'երթան մինչեւ վստահացնեն . ոյլ երբ իրենց գործիքները կարգի կը

դնեն և նապատակնին հասնելու կետին
կը բերեն , ալ անկէ յետոյ նոցա բե-
բանը ուրիշ խօսք չըդանուիր՝ ոյլ մի-
այն նօ , նօ , նօ : Աֆ , կ' լսեն , բէյլամ-
պէր չեն ըսեր . իմ աղգային իրաւուն-
քը կը կորսուի եղեր , կը միասուի ,
կը բռնաբարուի եղեր , որու հոգն է ,
իրենք արդէն անսխալ Պապայով մի-
աբանութիւն մի են , և մնացեալ քը-
րիատոնեայք , որոց մէջ եմք և մեք
Հայքս , հերձուածող , հերետիկոս և
գժոխոց զաւակ կոչուած եմք իրենց
մէ միշտ . մեր խօսքը կ' ըլլայ այն ա-
ռեն , վասն զի բոլը Երուսաղէմի և
ամենայն շրջակայից նորա իրենք են
բացարձակ տէրը ըստ իւրեանց կար-
ծեաց , ուր կը մնայ իւեղճ Հայոց աղ-
քը իւր Պատրիարքոյն հանդերձ :

Ա սեմափոյլ Տեմքը իմ նուաստ
եթէ ուրիշ վանքի կամ քաղաքի միա-
բանութենէ Պատրիարք ըլլայի ընտ-
րուած , այս խօսակցութիւններուս ,
ազաշանքներուս և ստիպումներուս
վերջապէս ոլիտի զիջանէի և համող-
ւէի թոյլարել Ատինաց որ գան

պատարագեն . այլ բարեբազդաբար
 ՚ի բնէ միաբան եմ , և ահա սուրբ
 Յակովը վանուցս մէջ այս շնորհի է
 որ կը սպասաւորեմ , և ամեն ժամա-
 նակ անսնց արարքները աչքիս դիմա-
 ցըն ուենիմ . թէ անսնց և թէ ուրիշ
 ազգաց վրայ տեղեկութիւններ ուրի-
 շն հարցնելու կարօտութիւն չու-
 նիմ . ուրեմն այսքան լիովին տեղեկու-
 թիւն ունենալովս և անսնց արարք-
 ները իմ ականատես վկայութեամբս
 մի ըստ միոջէ գիտնալովս , զիա՞րդ կա-
 րելի է անսնց կեղծուպատիր և առ-
 երեսս բարեկամական խօսքերնուն
 խաբուիլ , որք սուտ են բոլորավին : Եւ
 միանգամայն իմ սեփհականութեան
 իրաւունքիս գէմ յայտնի թակարթ մի
 է : Կանցնի այս օրս , այս տարիս կամ
 միւսն եւս խաղաղութեամբ , և կը
 պատահի դարձեալ ապագայ ժամա-
 նակին որ երը իմ իրաւունքներս կըր-
 կին բռնաբարել սկսին , այն ատեն
 ուր պիտի գանեմ Շեր Վ սեմութիլ
 և Պ . Հիւպատոսը որ ըսեմ . ահա
 կատինք Շեր Անծութեան տուած

խոստմանց հակառակը սկսան գործելը
գուք ձեզէն դատ արարէք ըստ ձեր
հաւատարիմ խոստմանը, և այլն :

“Քաւ լիցի Տեարք իմ, որ իմ ձեւ
ոօքս այս աղետքը թէ Ո. Աթուցս
և թէ ընդհանուր Հայոց աղգիս ԳԵԼ
խուն բերելու պատճառ ըլլամ, այդ
ստորասութեան չեմ կրնար հաճու-
թիւն տալ . մանաւանդ թէ Զեր
Վաեմութեան պատուական անուան
կը խնայեմ ապագային մէջ . որուն
հետեւութիւն շատ ծանր կ'երեւի ինձ
ամենայն կերպիւ Զեր հլու հպատակ
Հայոց աղգին համար, քանի որ այս
խնդիրը որ զուտ կրօնական է, երթա-
լովերժալովքազաքական կերպարանք
առնելով Հայոց աղգին միակ մխիթա-
րութիւն միացած սեփհականութեան
իրաւունքին սաստիկ հարուած պիտի
պատճառէ, և նոյն հարուածէն ահա-
զին վէրք մը անբուժելի, զոր բժշկե-
լու համար ճարտար և ամենաճարտար
բժշկի պէտս պիտի ունենամք՝ եթէ
կարողանամք երբէք գտանել . Ո՞ր
Տեարք իմ, խնդրեմ մի եւս ստիւ-

պէք զիս արդպիսի աղետից սկզբնաւ պատճառ ըլլալու . ինձ համար ահա օր յարմար և ահա ժամանակ փրկութեան . և այս է իմ խօսքիս սկիզբն և վերջն , այսինքն ոչ երբէք կրնամ ընդունել | ատինաց գալը պատարագ մտուցանելը իմ սեպհականն սուրբ Եկեղեցիիս մէջ , որ միայն Հայոց աղքին սեփհական ստացուածքն է :

Դարձեալ վերջացաւ ժողովն առանց որոշ վճիռ ինչ տալու :



Երրորդ անգամ Շատրվանի առինաց սուրբ Յակովայ, մէջ պատարագ էլուն համար, ուր ներկայ էին Աւեմանիայլ | ալէ դաշտան և ՈՒինիք էֆենայն և Դիկոյնի էպիստոննե | առինաց՝ Դամակոսի Գաղղըոյ Պ. Հիւղարան :

Առվորական տեսութիւնը լրանաւ է զկնի Ասեմ . Ոիւնիք էֆենտինը հակառ խօսիլ այսպէս . Անաթրիք էֆենտի , թէ և | ատինաց պատարագ ելուն

վրայօք մեր և Պ. Հիւպատոսի ներ-
կայութեամբը երկու նիստերուն մէջ
ալ բաւական խօստեցութիւններ ե-
ղան, բայց դարձեալ երկու կողմէն
ալ այսօր պիտի խօսուի նոյն խնդրոյն
վրայօք։ Եւ յլ ինչպէս որ դուք բացէ
՚ի բաց կը հերքէք՝ ի մէջ բերելով Հը-
ռովմայի Շաբին նոր ստացած անսխա-
լութեան տիտղոսը, և բոլորովին կրօ-
նական խնդիր է կ'ըսէք և կը հաստա-
տէք, Աստինք ալ իրենց մինչեւ ցայ-
սօր շարունակած ըլլանին մէջ բե-
րելով և սովորութիւն ունիմք պա-
տարագելու ըսելով կըպնդեն, թէ
պէտք է դարձեալ շարունակել։

“ Թէ և այս բաներուս վրայ բա-
ւականէն աւելի դուք և նոքա խօսե-
ցաք, և մեք և Պ. Հիւպատոսը սի-
րով լսեցինք երկու կողմի խօսածները,
այլ այսօր համարեա թէ վերջնական
կերպիւ պէտք է որ լրանայ. վասն զի
մենք այս տեղ երկար կենալու միջոց
չունիմք, նա մանաւանդ ուրիշ գոր-
ծեր ալ ունիմք. ուրեմն դարձեալ այն
առաջկային վրայօք ինչ որ ունիք կը-

նաք ըսել, որ մենք ալ անոր համեմատ
մեր տեղեկագրութիւնը պատրաս-
տեմք : Այսպէս Պ. Հիւպատոսը՝ որ
՚ի կողմանէ լատին կրօնաւորաց՝ հրա-
մանաւ Գաղղիոյ մեծազօր տէրութե-
եկած է, ահա հոս կը դանուի, որ ձեր
վերջնական խօսակցութեան վրայ հաս-
տատելով իւր տեղեկագիրը՝ թէ ասս
լատինաց և թէ զինքը խրկոյ տէրու-
թեան իմաց տայ :

“Կա և սա ալ ծածուկ չ’մնայ ձեղ-
մէ . քանի որ լատինք կ’ըսեն, ՚ի հար-
կէ լսած ալ կ’ըլլաք, թէ նոյն Վար-
շագուպ վանքը իրենց սեպհական
ստացուածքն է եղեր ՚ի վաղուց, և
ձեղ շնորհած են, և տարին մէկ ան-
գամ պատարագելն ալ, այդպէս իրք
նշան որոշած են, որ այնու նշանաւ
իրենց սեպհականութիւնը ըլլալը ըս-
տուգելով, երբ որ ուղեն, նոյն վան-
քը ձեր ձեռքէն ետ առնուն և այնուու

Այս նորալուր և անակնկալ առա-
ջարկութեան վրայ մինչդեռ կը մը-
տանէր Ա. Պատրիարքը, Պ. Գօնսօլին
կարծելով թէ նոր իրաւունք մը ըս-

տացան | ատինք || . Պատրիարքին
ըւռ մնալովը, Վ սեմ, Վիւնիք էֆէն
տին ըստւ || . Պատրիարքին, “Խօ-
սեցէք Ըաթրիք էֆէնտի , վասն զի
մոածելնիդ մեղի աւելի կասկած կու-
տայ : ”

“Ե յսօր տեսանք նոր նշան , ըստւ
Արքաղան Պատրիարքը , խօսելու եր-
բէք հարկ չեմ տեսներ , քանի որ այս-
քան խօսակցութիւններ եղան , չա-
սացից թէ Զեր Վ սեմութէ գլխացա-
ւանք , քանի որ | ատինք միշտ պիտի
ըսեն՝ ետ պէնիմ օգունում . ՚ի հար-
կէ ինչպէս մինչեւ ցարդ խօսածներս ,
նոյնպէս խօսելիքներս ալ ՚ի զուր պի-
տի երթան , ուրեմն լաւ է լոել քան
թէ հասկընալ չուզողի մը հետ խօսիլ :
Երդեօք չե՞ն հասկցեր դեռ մինչեւ
ցարդ խօսածներէս որ ես ազգաւ չայ-
եմ և (Օսմանեան մեծազօր տէրու-
թեանս հարազատ հպատակ , յերկի-
նըս երկնաւոր զլցոտուած կը պաշ-
տեմ , և յերկրի զկնի Վատուծոյ , իմ
մեծազօր (Օսմանեան թագաւորս կը
ճանչեմ , նմա միայն կը հնաղանդիմ և

կը ծառայեմ ամենայն հաւատարմութեամբ լսոտ գրոյն՝ “Օառասոյք հպատակ լերուք տերանց ձերոց, և ծառայեցէք նոյտ իբրեւ Առաւծոյ:”
Աչ զօք կը ճանչեմ ինձ ստեղծող յերկինս՝ բաց յԱռաւծոյ, և ոչ զօք տէր և բարերար թագաւոր յերկըի՝ բաց ’ի յ(Ս)ոմանեան տէրութենէ, և ոչ յոյլմէ ու մեքէ կախումըն ունիմ, քանի որ ԱՇՀափառ Ծագաւորա՝ իմ համօրէն ազգս, որք ’ի Տաճկաստան են, իբրեւ հարացատ հսկատակ և իբրեւ զսիրելի զաւակ ունի, կը պահէ և կը սկաշտովանէ յամենայնի թէ զինքն և թէ իւր իրաւունքները:

“Ահա՝ այս իմ Տերութեանս վրայ ունեցած վստահութեանս արդասիքնէ. արդեօք հասկցա՞ն մեր բարեկամները այս խօսածներս՝ թէ ոչ:

“Դանքայժմ՝ Ձեր Ասեմութեանը հարցման պատասխանելու:

“Առարք Յակովը վանուց ինդրոյն վրայ Ձեր Ասեմութեան ներկայ յութեանը այս երրորդ անգամին է որ՝

Հարցումիորձ կ'ըլլայ , առաջին անգամ
մեր խօսակցութեան նիւթ եղաւ Իշա-
քային նոր հնարած անսխալութեան
տիտղոսը , որ սուրբ Վահագանի վար-
դապետութեան և իմ կրօնիս ամե-
նահակառակ ըլլալուն բացէ ՚ի բաց
հերքեցի և պիտի հերքեմ միշտ , և ո-
րոց վասն Ենմահի Ամենակարողի և Են-
ողիսալ Աստուծոյ նուիրուած սեղա-
նոյս վրայ , իմ սեպհականութեանս
մէջ՝ մահկանացուի , անկարողի և ա-
մենասխալ բարի մը անունն յիշատա .
կելտալ և իմ ականջովս լսելս անկարելի
ըլլալը վերջնական կերպիւ յայտնեցի :

“ Երկրորդ նստին մէջ եւս կրօ-
նական մասին Ա . Եղմիածին գտնիր-
ւած մեր Վեհափառ Կամֆողիկոսին
հետունեցած յարաբերութեանս վրայ
էր , ուր խնդիրը իբրեւ արեգակն
պարզուեցաւ , որ լոկ կրօնական է , և
ոչ երբէք կրնայ պարունակել իր մէջ
նշանախեց մի քաղաքականութեան ,
թէ և թշնամիք զայն չարաչար մեկնե-
լով բազմաժամանակեայ հաւատարիմ
Հայոց աղգը երկրայելի ցուցընել կը

Ճգնին իւր Տերոջը բարեխնամ (Օս-
 մանեան Տէրութեան աչքին, չդիտ-
 նալով թէ Հայոց աղդին վրայ այնպէս
 աղաւ մը մրոտել այնչափ դիւրին բան
 չէ, որ վասն յակամօյից բռնադա-
 տեալ իրենց սրտին ամենագաղտնի
 մէկ խորհուրդը յայտնելով մեր մե-
 ծազօր Տէրութեան շնորհիւ՝ | Հայէ էճ-
 պատրժը պէրու սեպհական իրաւուն-
 քնիս եղած սուրբ Յակովը վանու-
 ցըս համար (ինչպէս որ ըսկէ), իրենց
 սեպհականութիւն ըլլալը կ'երազեն
 կանուխ ժամանակէն, և մեզ իբրեւ
 նուէր պարգեւած, և տարին մի
 անգամ ալ պատարագ ընելնին իբր
 թէ նշան դրած՝ որ երբ ուղեն, զայն
 ետ առնելու կարողանան, և այն և այն
 “Վկարմանալի փաստիս, զոր մարդ
 չկընար առանց արեան քրաինք մտնե-
 լու արտասանել, այսպիսի լուսաւոր-
 եալ դարուս մէջ, և Զեր վսեմու-
 թեան պէս տաղանդաւոր եւ ե-
 րեւելի անձանց ներկայութեանը,
 որոյ վրայ երկու խօսք խօսելու կը
 պարտաւորիմ, Տեարքիմ, որք բնակա-

նապէս կը լուծեն խնդիրը, զոր հրէշ
անուանել արժան է :

“Նախ՝ զիանրդ կարելի է տատառ
կէ թուղքաղել. այսինքն այսպիսի մի-
աբանութենէ մը այդպիսի անզուգա-
կան առատաձեռնութիւն ընդունել
որ իրենց միաբանութիւնը այնպիսի
խեղճ ու կրակ տեղեր զետեղելով,
այս մեծ և ընդարձակ վանքը Հայոց
աղքին շնորհելով տարին մի անգամ
միայն պատարագ ընելու գոհ եւ այ-
սօր նոյն պատարագելէն եռքը իրա-
ւամբ զրկուելնին տեսնելով առանց
կարմրելու այդքան փրդովիլ և քո-
լոր աշխարհ իրար խառնելու փորձ
փորձել, որ երբէք չհամաձայնիր ի-
րենց ըստած եղջերուաքաղ առատա-
ձեռնութեան հետ, թէ Ա. Յակով
բայ վանքը. իրենք տուած ըլլան Հայ-
ոց աղքին, որու հաւատալ ուզող մը
խենդ ըլլալ պէտք է :

“Նըկրօրդ, ուրեմն իրենց ձեռքը
օրինաւոր հրովարտակներ պիտի ունե-
նան իրենց սեպհականութիւն ըլլալուն
վասն զի ոչոք կընայ առանց հրովար-

տակի, առանց կալուածագրոց (հեօն
ձեթի) տէր ըլլալ աշխարհիս վրայ իր
կալուածոցը, որ տէրութեան հպա.
տակ ալ եղած ըլլայ. և թէ ունին այդ-
պիսի հաստատութիւններ, ինչու հա-
մար մեծազօր տէրութեանս գլուխը
ցաւցուցին և կը ցաւցնեն, և Չեր
Վուեմնւթիւնն ալ ՚ի զուր կը յոդնե-
ցընեն, որ աւուր համար կըսպահեն:

“Ելլրորդ, եթէ ունին իրենք այնպի-
սի վաւերագրեր, որք սուրբ Յակով
քայ վանքը իրենց սեպհական ըլլալը կը
հաստատեն, ուրեմն իմ ձեռքս գըտ-
նուած այօքան հին և նոր հրովար-
տակները, հին և նոր կալուածագր-
քերը, (հեօնձեթները) և այլն, ի՞նչ են և
ով տուած է, որոց զօրութեամբ այօ-
քան գարեր շնորհիւ մեծազօր Տէրու-
թեանս մէր իրաւունքները վայելած
եմք. եթէ յիշեալ հրովարտակները
ծայր ծայրի փակցունելու ըլլամք, աս-
կից մինչեւ բարեխնամ Տէրութեանս
Աթուոյն ոտքերուն քով կը հասնի,
զորս ժամանակ ժամանակ շնորհած են
Օսմանեան մեծազօր կայսերք, ան-

դորրութեամբ վայելել տալու համար
իրենց հարազատ հսկատակաց աղդա-
յին ստացուածքները :

“ Չորրորդ , իրենց այսօր յառաջ
բերած անզօր փասոր ջրելու համար,
թէ և ուրիշ վկայութեան կարօտ
չեմ , վասն զի իմ սեպհական իրաւ-
ունքս ըլլալը ստուգելու համար ան-
թիւ վկայութիւններ Տէրութեանս
դիւանական մատեաններուն մէջ լի-
են , այլ միայն իրենց անհիմն խօսքե-
րը և ստախօսութիւնները յայտնե-
լու համար , իրենց գրքերէն ժողո-
վուած վկայութիւններով հերքելու
չեմ դանդաղիր . և այն՝ իրենց մէջ
մէծ համարում ունեցող , բազմահա-
ւատարիմ , իրենց գրչին յարգը գիտ-
ցող իրենց ազգին պատիւը ու պար-
տաւորութիւն ճանաչող անձանց գիր-
քերէն : Ուրեմն Ձեր Վ սեմնութեան
ահա կը ներկայացնեմ փոքրիկ տետ-
րակ մի հաւաքածոյ՝ գաղղիարէն լե-
զուով , զոր 1866 թուոյն մեր Ախօն ամ-
սաթերթին մէջ մաս առ մաս հրատա-
րակելէ զկնի՝ զատ տետրակ մի եւս

կազմել տուի հետաքրքիր խուղարկո-
ղաց համար, ըսելով՝ Արբագան Պատ-
րիարքն նոյն տետրակեն օրինակ մի, զոր
մարդարէական ոգւով պատրաստածի
սլէս ծոցէն հանեց և Ա սեմ. Ա ալի
փաշային ներկայացուց. և Ա որին Վ ը-
սեմութիւնն առնելով, անմիջապէս
սկիզբէն մինչեւ վերջը ամբողջ կար-
դալէն յետոյ ըսաւ. “Ա յս Բ նէ իրա-
րու հակառակ բաներ են մի և նոյն
ազդին կողմէն, իրենց երեւելի հեղի-
նակաց գրոց մէջ Հայոց սեպհակա-
նութիւն է կ'ըսեն, և բերնով կ'ելլեն
անոր հակառակը կը գործեն, այսպէս
բաներ պատիւ ըներեր իրենց ։”

Ա սեմ. Ա յւնիֆ էֆէնտին դար-
ձեալ նոյն տետրակը աչքէ անցուցած
միջոցին, պատահեցաւ անոր մէջ Հազ-
րէթի Խօմէր խաթապին եւս տուած
հրովարտակին յիշատակութեանը, զոր
թարդմանիչ Պ. Ա աւալանեանցը իւր
յառաջաբանին մէջ յիշած էր ։ Հար-
ցուցաբագան Պատրիարքին, թէ՞ Ա յ-
ժըմ այն հրովարտակներուն սուրե-
թը դեռ կը կենա՞ն ձեր քովը ։ Ա յի՛, ը-

սաւ Արքաղան Պատրիարքը : Յաւելցուց Վսեմ. Եկեղեցի է ֆեռատին. Արդեօք տեսնել կարելի է : Պատասխանեց Արքաղան Պատրիարքն . Այս, կարելի է, ինչ ժամանակ որ կը բարեհաջիք՝ հրամայեցէք մեր վանքը, պատրաստ եմք ներկայացընել Ձեր Վսեմութեան : ” (Եւ հետագայ ուրբաթօր հետը քանի մի գիտնական է ֆեռատիներ առած յատկապէս եկաւ տեսնելու յիշեալ հրովարտակաց օրինակ ները և ուրիշ քանի մի հին հրովարտակներ , եւ գոհ եղաւ տեսնելով իւր մեծանուն նախահարց նուիրական յիշատակները) : Արտեք մեծ խրնամքով և ամենայն զգուշութեամք կը պահուին Պատրիարքական գիւանատան մէջ :

Յաւելցուց ասել Արքաղան Պատրիարքն . ” Վսեմափայլ Տեարք , սոյն գաղղիարէն տետրակը Ձեր Վսեմութեան իբրև վկայ կամ փաստ ներկայացընել չեմ ուզեր , ինչպէս վերը յիշեցի , վասն զի իմ մեծաղօր Տերութես վէհապետք իրենց արքունադրում հը

ըովարտակներամբ ընդհանուր Հայոց
 ազգին արդար սեպհականութիւնն ըլ
 լալը հաստատած էն, և ոչ նշանախեց
 մի անգամ կարծիքաւոր բան թողու-
 ցած էն իրենց շնորհած հրովարտակ-
 ներուն մէջ, ուրեմն անիրաւութիւնն
 մի ըրած կ'ըլլոմ, նոյն իսկ իմ սեպհա-
 կանութեանս մէջ օտար ազգ ընդու-
 նելուս համար. միթէ նոյն վանուց սե-
 փականութեան արդար իրաւունքս շն-
 որհիւ մեծազօր Տէրութեանս ճակա-
 տաբաց վայելելէ ովլ կրնայ զիս արդի-
 ւել. միթէ լատինք կամ այլ Քրիստո-
 նեայք իրենց ազգային վանուց մէջ
 ազատ չեն, եւ նոյն սեպհականու-
 թիւնները վայելելու մէջ արդելք մի
 ունին մէզմէ, ինչպէս իրենք մեզի ըլ-
 լալ կ'ուզեն. և եթէ իրենց մեզի ը-
 րածներուն դէմ մէք կամ այլ քրիս-
 տոնեայք իրենց ըրած ըլլոյինք, ար-
 դեօք ինչ կ'ըսէին, դռները բանալով
 հրամայեցէք կ'ըսէին, թէ նախ Շա-
 բային, յետոյ բոլոր Եւրոպիոյ տէրու-
 թեանց ականջները լեցնելով բոլոր
 աշխարհը վլլուկի կուտային. Ուրեմն

իրենց իրաւունքն՝ իրաւունք և սեպ
 հականութիւնը՝ սեպհականութիւն
 է, միայն չայսց աղգը դատապար-
 տուած է իւր սեպհականութիւն հա-
 մարձակ չը վայելելու, միթէ միայն
 չայսց աղգին համար է այս զրկողու-
 թիւնքը. ասացէք, Տեարք իմ վսեմա-
 փայլ, միթէ լատինք չե՞ն կարդար Ա.
 Եւ ետարանին այն խօսքը՝ որ կ'ըսէ,
 “Արակէս կամիք թէ արացեն ձեզ մար-
 դիկ, նոյնպէս եւ դուք նոցա տռնիւ
 ջիք” : Իրենց չընդունածը ուրիշին
 ինչ իրաւամբ կը ստիպեն ընդունել
 տալու բռնութեամբ . եթէ այն իմ
 վրաս իշխսէ, բռնանայ, ուր կը մնայ իմ
 սեպհական տէր ըլլալս այն վանաց .
 ուր կը մնայ (Սոմանեան մեծաղօր տէ-
 րութեան շնորհած հրովարտակաց զօ-
 րութիւն, յարգն ու պատիւը, միթէ
 ջնջուած է աշխարհիս երեսէն սեփա-
 կանութեան իրաւունքը. հզօրը՝ զան-
 մեղը պիտի կոխկրտէ, այսուհետեւ
 առնող առնողի, զարնող զարնողի պի-
 տի ըլլայ, կամ բոլոր աշխարհ լատին
 կրօնաւորաց տրուած է . միթէ մեղի

գերի պիտի ընէք | ատին կրօնաւու-
րաց . միթէ Հայոց ազգին | ատինաց
ըրած շնորհքէն այսպէս հետեւութիւ-
ներ պիտի ելլէք . եթէ սեպհական
տէր էին , ինչու համար ամեն տարի
որ յառաջ յատուկ իրենց թարգմա-
նը խրկելով հրաման կ'ուղէին հետեւ-
եալ օրը գալու . հրամանաւ գալը մի-
թէ յայտնի ըստուցնէր թէ սեպհա-
կան տէր Հայոց ազգնէ . եթէ առանց
հրամանի գալ կարող էին , ինչու հր-
աման կ'ուղէին . —

“ Ի՞աթրիք էֆէնտի ըստաւ Ասեմ .
Վիւնիւֆ էֆէնտին , դարձեալ ձեր
հրամանաւը գալ կ'ուղէն | ատինք ,
առանց հրամանի չեն գար , միայն
դուք հաճեցէք անսնց հրաման տալու ,
որ շարունակեն իրենց գալը . այն սե-
փականութեան վրայ անսնց խօսածը
ոչինչէ , բոլոր աշխարհ գիտէ , որ Աս-
յել շահանեպէ նոյն վանուց սեպհա-
կան տէրը միայն Հայոց ազգնէ , և
դուք այսօր թէ ընդհանուր ազգին և
թէ (Սամանեան մեծազօր տէրութե-
կողմէն իրեսվուսան և տէրն էք . թէ

ազգը և թէ տէրութիւնը ձեղ են
յանձեած, ձեզմէն կը պահանջեն նոյն
վանուց բոլոր վերաբերեալները, բայց
լատինաց ըստածները խօսք մի է միայն,
որ կ'ըսեն, և չունին իրենց ձեռքը
ոյն վանուց վերաբերեալն ոչ անգամ
մատի մը չափ թուղթ, և իրենք տլ
գիտեն որ՝ իրենց խօսքը հիմ չու-
նի, մանաւանդ որ՝ ես ձեր հրովար-
տակներուն մեծ մասը տեսած և կար-
դացած եմ, անոր վրայ երբէք տա-
րակուսութիւն չկայ. աշխարհիս վրայ
քանի որ Հայոց ազգը կայ, թէ և մէկ
մարդ միայն մնայ, դարձեալ Հայոց
ազգին սեպհական ստացուածքն է
Վայր-Լագուագ մանասոթըրը, և ոչ
ոք կրնայ դայն ձեր ձեռքէն յափըշ-
տակել:

“ԵՅԼ լատինք միայն այս բաները
մէջ բերելով կը թախանձեն որ՝ նոյն
շնորհքը դարձեալ շարունակել տան
Ձեղ. եթէ դուք հաճութիւն կու-
տաք, անոնք այն խօսքերը բոլորովին
կը մոռնան, խօսքը անգամ չեն ըներ-
աւըեմն դուք վերջնական կերպով խօ-

սեցէք այսօր որ՝ գործը լրանայ, անոնք
ալ հանդստանան : —

“Տեարք իմ ըստ, Արբազան Պատ-
րիարքն իւր խօսքը առ Վսեմ. Վաղի
Փաշայն և առ Վսեմ. Ոյիւնիք է-
ֆէնտին ուղղելով, եթէ խօսել է
Զեր խնդրածը կարծեմ թէ բա-
ւականէն աւելի խօսեցայ . եթէ
բողոքել էր ձեր խնդրածը, բողոքե-
ցի . եթէ վկայութիւններ, փաստեր,
հաստատութիւններ, աւանդու-
թիւններ, պատմական կրտսրներ,
որքան կարելի էր, մինչեւ ցարդ ըստ
իւր կարդին կատարեցաւ . եթէ մեր
սեպհականութեան վրայ կարծիք ու-
նէիք ըստ լատինաց անհիմն բանից,
իմ մեծազօր Տերութեանս շնորհած
հին և նոր հրովարտակներուն մեծ
մասը տեսաք եւ անձամբ քննեցիք .
դուք Զեղէն վկայեցէք . և դուք Զե-
ղէն ըսէք իմ ըսելիքներս (Ծէֆքեաթ-
լլմբզըն աղիղ պաշը իշին օլսուն) ը-
սած ժամանակը՝ Արբազան Պատրիար-
քին աչքերը շառագունեալ սկսաւ
սիրութ բարախել արեան յաւղմանէն :

և յաւելցուց ասել եռանդագին, թէ
 «ի՞նչ արդեօք կ'ուզէք որ ըսեմ, Տեարք
 իմ, ես այս գործը իմ կողմանէս վեր-
 ջացած գիտեմ, քանի որ մեծազօր
 տէրութեանս շնորհիւ տէրն է հա-
 մայն Հայոց աղդը . ուրիշէն երբէք
 կախում չունենալով բացարձակ տէ-
 րըն է նոյն սեպհականութեան . ե-
 թէ | ատինք իմ ձեռքս գտնուած հին
 հրովարտակներէն աւելի հին, նորե-
 րէն աւելի նոր հրովարտակներ ու-
 նին, թող հանեն ատեան, ըսմ այնմ
 խօսինք. իսկ եթէ միայն Հայոց աղդին
 ըրած շնորհքին վրայ է բուն իսկ պատ-
 ճառը, որ վասն զմեզ այսքան տա-
 ռապեցունել կը յանդգնին . իրենք
 օտարտկան ըլլալով հանդերձ, «Տաղ-
 տաքի կէլիալ, պաղտաքինի քովմուշ
 կիալիո, անդէն անոր պատասխանը տը-
 ւինք վերջնական կերպիւ . քանիցս ան-
 գամ է բացասութիւն ըրինք թէ, այն-
 պէս յայտնեալ թշնամիին նոյն շնորհ-
 քը այսուհետեւ ընել անկարելի է .
 դեռ ի՞նչ ըսելիք մնաց : Նկատեցէք
 Տեարք իմ . նկատեցէք կ'աղաւեմ,

ինդիրը ուսկից սկսաւ և ուր կայանք
առաւ , սկսան ինդրելնախ մեր ըրած
շնորհքը շարունակելու , որ մեր կրօն-
քին և սեպհականութեան սաստիկ կը-
դաղչի . իսկ երբ իրենց այս ձեռնարկու-
թիր ՚ի գերեւ ելաւ յառաջին նստին ,
ինդիրը փոխել ուղեցին և փոխեցին
ըստ իւրեանց քմացն , այսինքն շնորհքը
սովորութեան և շարունակութեան :
Երբ գործոյն անյաջողութիւնն տե-
սան և իրենց ստախոսութեան խայ-
տառակուիլը զգացին , սկսան ը-
սել թէ Ա . Յակովը վանքը ՚ի կար-
դի բաժանորդական Ա . Տեղեաց է ,
այսինքն մալուրեկ տեղեաց . և պնդե-
ցին որքոն կարողացան և Բ . Դուռն
անդամ կերպիւ իւրիք հաւատացու-
ցին , տռանց վախճանը մտածելու
թէ օր մը ճշմարիտ երեւան կ'ելլայ ,
ինչպէս ալ եղաւ :

“Իսկ երբ տեսան յաջողիլ՝ խարեալ
կարծելու զի՞ . Դուռն իրենց երա-
զական կարծեաց համեմատ , գործը
իսկոյն կերպարանափոխ ընելով մեր
իսկ սեպհականութիւնն էր ժամանա-

կաւ և Հայոց ազգին տուած եմք ը-
սին , և այն՝ առանց և ոչ գոնէ նշա-
նախեցի մը չափ հաստատութիւն
ցուցանել կարող ըլլալու և միայն ի-
րենց նօ , նօ , նօ ըսենուն ապաւի-
նելով . վասն զի զսցդ առնելով շատ
անգամ իրենք իրենց վափաքին հաս-
նելու յաջողած են 'ի խնդիրս Ա . Տե-
ղեաց , և ու և իցէ զօրութեան միջոցաւ
իրենց կամքը պաշտել տուած :

“Ել նեսնաք Տեարք իմ , ուր կայա-
ցուցին իրենց խնդիրը . վայելած ը-
նորհքնուն համար փոխանակ երախ-
տապարտ ըլլալու Հայոց ազգին , ա-
նոնց իսկ սեպհականութեանն անհա-
ւատարմութիւն ընել յանդգնեցան .
ապա ուրեմն Տեարք իմ , զիարդ կա-
րեմ ես այսուհետեւ այնպէս յայտ-
նի թշնամւոյն շնորհք ընել , հրաման
տալ՝ որ գայ իմ կրօնքս այպանէ և
նախատէ , և այն իմ 'ի բնէ սեպհա-
կան իրաւունքս եղած եկեղեցւոյս
մէջ : Աւրեցէք Տեարք իմ , ներեցէք ,
չերնար Հայոց Պատրիարքը զկնի այս-
քան մետաներ կրելոյ և նախատինքներ

լելոյ ընդունիլ այնպիսի կերպարա-
նեալ բարեկամմի, որ ըստ առակին
ովնաց, զկնի փոքր ժամանակի՝ իւր
փուշերը ուռեցնելով՝ զտանուտէրն
ստիպէ արտաքս ելանել:

« Տէր մի արասցէ, եթէ Հայոց
աղգը Ա. Յակովը վանքը ճախելու
ըլլայ, և գնողն ուրիշ աղգ ըլլայ,
լատինք արդեօք դարձեալ նոյն ծա-
խու առնող աղգէն. կամ մարդէն,
նոյն եղած չնորհը, զօր առ ժամա-
նակ մի Հայք ըրած էին, գնողներէն
բուռն զօրութիւն սկիտի կարողանայ
պահանջել, երբ գնողը մերժէր: Ի՞.,
Դրան դարձեալ այսքան ձանձրու-
թիւն տալու սկիտի յանդգնէին ար-
դեօք բոլոր աշխարհ վլվուկի տալով,
ի հարկէ չպիտի կարողանային զայն
առնել, վասն զի գնողն այնպէս կեր-
պարանեալ թշնամի միէ, որ իւր սեպ-
հականութեան աչք ունի, անշուշտ
բացէ ՚ի բաց կը մերժէր: Ուրեմն ի՞նչ
տարբերութիւն կայ Հայոց մերժե-
լուն զայն, քանի որ առնողը՝ որ նոր
սեպհականութեան տէր է՝ կը մերժէ.

և զիանրդ ուրեմն ծախելու իրաւունք
ունեցող իսկ սեփական տէրը՝ Հայոց
աղքը չը կրնար իւր ըրած շնորհքը
ետ առնել, մերժել:

“Երդեօք կարողացայ, Տեարք իմ,
գոնէ այսօր մեր բարեկամաց հասկը-
ցնելթէ՝ որ և է սեպհականութեան
տէր մը ազատ է իւր սեպհակա-
նութիւնն ըստ կամացն գործադրել.
ում կամի՝ տալու, ում կամի՝ զլա-
նալու ունի իշխանութիւն. և եթէ
չունի, յայտնի է որ նոյն սեպհականու-
թեան տէր չը կրնար ըլլալ. և եթէ
տէր է, ոչ ոք կրնայ արդելուլ զայն
իւր սեպհականութիւնն ըստ կամա-
ցըն գործադրելոյ :

“Վեր սեպհականութեան մէջ
բնչպէս կրնամք ուրեմն թոյլատրել
անոնց, որոնք մինչեւ ցարդ վայելած
շնորհաց փոխանակ երախտադէտ ըլ-
լալու՝ ապերախտ հոգւով կը համար-
ձակին իրենց յափշտակիչ ձեռքը եր-
կընցընել մեր Ազգային միակ միմինա-
րութեան և սեպհականութեան վրայ.
զայն եւս կորդել որ Հայոց ընդհան

ըութեան, մեծատանց և աղքատաց, որբոց և այրեաց, ծերոց և երիտասարդաց համարեաթէ արեան գինն է. ո՞ր աչք կարէ չարտասուել, և ո՞ր սիրտ կընայ չըճմիլ, երբ զայս լաւ : ”

Վ սեմ. Վ ալի Փաշայն ըստւ . “ Բաթ բիք տօստում, իրենք ալ կը հասկընան որ այս սեպհականութեան համար խօսածնին բոլորովին անհիմն է, բայց միայն հաճեցէք դուք թոյլատրել որ՝ իրենք տարին մի անգամ դան իրենց արարողութիւնը կատարեն . բոլոր խօսակցութեան նիւթը և նպատակը այս է, ասկից աւելի ըսուածները բոլոր աւելորդ են, և զ’ Ձեզ համոզելու ձեւեր են, թէսկէտ և գովելի միջոցներ ալ չեն . վասն զի մէկ կողմանէ կը խնդրեն, որ գարձեալ նոյն շնորհը թոյլատրուի իրենց, և միւս կողմէն կերպիւ իւիք գործին աւելի գժուարութիւն կը պատճառեն : —

“ Գիտեմ դժուարութիւնք չեն անոնք, Վ սեմ. Տէր, ըստւ Ա. Պատրիարքն, որ Ձեր վսեմութիւնը ըստ Ձեր աղնիւ բնաւորութեան չկամիր

նոյն բառին բուն խել նշանաբանն արա
 տասանել . փոխանակ սպառնալիք ը-
 սելու դժուարութիւնը կ'ըսէք , այս ,
 այնպէս է , սպառնալիքները շատ ան-
 գամ կը դժուարացընեն դիւրաւ լու-
 ծուելիք խնդիրներն ալ . և 'ի հարկէ
 Ձեր Ասեմութեան այդպէս ըսել կը
 վայելէ . բայց և այնպէս մեզ անձա-
 նօթ չէ անոնց բոլոր բնաւորութիւնը
 քանի որ մենք բնիկ միաբան եմք այս
 Ա . Եթուոյս մէջ . եթէ օտար միա-
 բանութեն , ըլլալով այս Պատրիար-
 քական պաշտօնին կոչուած ըլլայի ,
 անոնց քաղցրախօսութեանը գուցէ
 հաւատայի , չասացից թէ խաթուէի
 և անոնց սպառնալիքներէն վախնայի ,
 քաւ լիցի . մենք համայն միաբանու-
 թեամբս դիտելիքնոցաբնաւորութիւնը ,
 միշտ անոնց շարժմունքը դիտած եմք .
 իմացէր եմք անոնց մտաց խորհուրդը ,
 որ նախ ամենայն անուշութեամբ կը
 վարուին , երբ ակնկալութիւն մի-
 ունին կամ բան մը խնդրելու մը
 տադիր են : Եւ կը միաբանին մեր
 հետ՝ երբ օտարազգի միաբանութեան

մի հետ դատ ունենալու լինին : Առ
 ռանձին եղած ժամանակ կ'անարգեն
 և իրենց եկեղեցւոյ շանթերը կ'արձա-
 կեն մեր վրայ, իսկ աեսու թեան ժամա-
 նակ անխըսիր կը մօտիկնան մեզ, հա-
 ւասար քրիստոնէու թիւն քարողելով
 միութիւն և միաբանական քաղցր յոր-
 դորանիքներ կ'ընեն մեզ : Երբ մեր ժո-
 ղովորդէն նոր դարձեր ընելու լինին
 կամ իրենց տօնական օրերը միատեղ
 պատահին . երբ երեւելի ուխտաւոր-
 ներ բերեն մեր Ա . Յակովլեայ վանքը
 ուխտ ընելու կամ շրջագայելու , ա-
 նոնց դիմացը ամենայն սիրով տեսակ-
 ցութիւններ կ'ըլլայ յերկուց կող-
 մանց , և իրենք մեզի աւելի սէր կը
 ցուցընեն և մեծարանք , թէ և մենք
 գիտենք թէ ինչ ձեւերէ որ կը բանե-
 ցընեն : Իայց երբ այսպէս խնդիր մը
 պատահի , իսկոյն նոյն հիւրերուն , ո-
 րոնք որ երեւելի մարդիկներ են և
 ամեն մէկը Եւրոպայի մէկ մէկ ան-
 կիւնը կը բնակին , իսկոյն անոնց կը
 սկսին գրել եւ ծանօթութիւններ
 տալ մեր վրայօք թէ , կը յիշէք վսե-

մափայլ իշխան կամ դօնթ . Երբ ձեր
 հետք չայոց վանքը գնացինք , մենք
 ինչպէս և որ աստիճան սիրով վար-
 ուեցանք և իրենց ողատիւը պահե-
 ցինք և միշտ կը պահենք , և այն և
 այն . այլ անսնք տմարդի և անկիրթ
 մարդիկ , միշտ մեղի ցաւ կը հասցը-
 նեն , մեր իրաւունքը կը յափշտակեն ,
 մեղի դռնէ ՚ի դուր կը քաշքըշեն , մե-
 ղի շատ մը դրամական նեղութիւններ
 կուտան , ևն ևն ևն : Աշքը այս լսուի
 հւրոպացի որ և իցէ անկիւնը , որ լը-
 սովը իսկոյն չհաւատար թէ չայոց
 ազգը անկիրթ է , անքաղաքավար է , և
 միշտ յափշտակիչ բնութիւն ունի .
 իսկ ատինք սուրբ , անարատ , ան-
 մեղ , և միշտ յափշտակեալ : Ե՞ս ը-
 սածս սոսուգեց հւրոպացի բարեկամ
 մի , երբ տեսութեան եկաւ մեղ ,
 այն ինչ սուրբ Տեղեաց վրայ խնդիր
 բացուած կը խօսէինք , ըստ . “Ո՞ինչ
 սուրբ Արուսաղէմ” եկած չէի , երբ
 տեղւոյս կրօնաւորաց գրութիւննե-
 րը , (դու իմա Պրանչիսկեանք) , կը կար-
 դայի , ըստ այնմ իմ մտքիս մէջ այն-

պէս հաստատեալ գիտէի որ ՚ի սուրբ
Երուսաղէմ Հայք և Յօյնք միշտ յա-
փշտակիչ են , և Պրանշխկեանք յա-
փշտակեալ . իսկ Երբ սուրբ Երուսա-
ղէմ եկայ և Երկու Երեք տարի ալ
աստ մնալով քանի մը խնդիրներու ալ
ականատես եղայ , այժմ կը խոստո-
վանիմ և միշտ պիտի ըսեմ՝ որ սուրբ
Երուսաղէմի մէջ միշտ լ ատինք են
որ կ'ուղեն այլոց քրիստոնէից տեղե-
րը յափշտակել . և անսնցմէն աւելի
յափշտակութե հեանող ազգ չկայ: ո
Աւրեմն ալ գու մտածէ թէ ի՞նչ տարա-
ձայնութիւններ կ'ելլէ խեղճ Հայոց
ազգին վրայ , որ միշտ խաբուեր է ,
և միշտ յափշտակուեր է , միշտ հա-
լածուեր է , նախատուեր է , և միշտ
իրաւունք ունենալով աղաչեր պա-
ղատեր է , և միայն նօ , նօ , նօ պատաս-
խանն առնելով ցաւ ՚ի սիրտ կորա-
գլուխ ետ դարձեր է :

“ Ի՞այց ալ բաւական է՝ որ ա-
տոնց յափշտակութեանց , հայհու-
թեանց , նախատանաց , սուտ սիրոյն
և համեղ լեզուացն և այլն և այլն և

այն խաբուեցանք , ալ խաբուելիք չունինք անոնց , և ոչ անոնց ըրած սպառնալիքները զմեղ կը վրդովեն մեր արդար սեպհականութեան վրայ . միայն իրենք իրենց ինչ ըլլալը , սրտեր նուն մէջ մեր || . Յակովը սեփական վանուցս վրայ ինչ ծածուկ խորհուրդներ ունենալին յայտնեցին , և այն Զեղ նման Ասեմ . քաղաքագէտ և միսնգամայն (Սամանեան բարեխնամ Տէրութեան երեւելի Աէղիքի մը և Ասեմ . քննիչ Ոիւնիֆ էֆէտիի պէս տաղանգաւոր անձանց դէմ :

“Խօսքս կը վերջացնեմ Ասեմափայլ Տեարք ինչպէս սկիզբը և մէջը նոյնպէս և վերջը՝ ըսելով թէ այսուհետեւ ոչ երբէք կրնամ զ ատին միաբանութին ընդունիլիմ ազգային սեպհական վանուցս մէջ . որ ահա տսով երեք նիստ եղաւ միայն || . Յակովը վանուցս խնդրոյն համար որու վրայ բաւականէն աւելի խօսեցաւ , և դուք Ասեմ Տեարք ունկնդիր եղաք . ուրեմն չմնաց ինչ ծածուկ որ շխօսուի , և չմնաց գաղտնիք որ չյայտնուի , ահա իմ արդար

իրաւունքս արեւի նման յայտնուեցաւ, թէպէտ և արդէն յայտնի էր Ուրեմն, Տեարք իմ, այսքանս բաւական համարելով՝ թէ և դուք ալ բաւականէն աւելի ձանձրացաք, կը խընդորեմ այս խնդրոյն վրայօք մեր նուաստութիւնը կրկին չնեղացընէք, վասն զի ինչպէս յայտնեցի երկրորդ նստին մէջ ալ, այս գործը իմ ձեռքէս ելաւ, այսուհետեւ ես այս գործը վերջացած գիտեմ, և չունիմ այլ եւս ըսելիք, և ինչպէս իմ աղգային Վարչութեանս արդէն գրած իմացուցած էի, այս անգամիս վերջնական կերպիւ պիտի տեղեկագրեմ բոլոր անցքերը որք անցին . Եւ եթէ այսուհետեւ լատինք կրկին զմեզ դատ կոչելու լինին, ոչ գալիք ունիմ և ոչ բան մը խօսելիք, ալ նոյն խնդիրը աղգային Վարչութիւնը և ընդհանուր Հայոց աղգը գիտէ՞՞ ըսելով՝ վերջացոց խօսքը:

Բաւական միջանկեալ խօսակցութիւններ ըլլալէ զինի՝ Վսեմ. Վիւնիք էֆէնտին յաւելցուց ասել թէ՝

իմացանք Ա. Յակովլեայ մասին ձեր
վերջնական որոշումը . Առւրը Փրկչայ
վանուց (որ է տուն Կայիավայի) հա-
մար ի՞նչ ըսելու էք, ուր լատինքնոյն-
պէս տարին մի անգամ կը պատարա-
գեն եղեր, դարձեալ ձեզմէ հրաման
խնդրելու:

Արբազմն Հայրը, որ այսպիսի
տաղտկալի և սրտամաշ խնդիրէն ա-
զատած կը կարծէր զինքը, երբ այս
նոր առաջարկութիւնը լսեց, զարմա-
ցաւ, և դարձաւ ասաց. «Ի՞նչի՞նտիմ, կը
զարմանամ» լատինաց նոր յարուցած
խնդրոյն վրայ, այսպէս տարտամ խրն-
դիրներէն ինչ օգուտ պիտի քաղեն,
՚ի հարկէ ինչ որ լսեցին Ա. Յակովլեայ
խնդրոյն վրայօք, Ա. Փրկչայ վանուց հա-
մար ալ մի և նոյն ընդարձակութեամբ
բանից՝ մի և նոյն փաստերը պիտի կրկ-
նուի, և այսու պատուական գլխոց
Ձերոց ցաւ և նեղութիւն պիտի
պատճառին ՚ի զուր. բայց եթէ կը բա-
րեհաճիք՝ սկսինք սկիզբէն, վասն զի
Ա. Յակովլեայ վանքը ընդհանուր
Հայոց աղդին սեպհականութիւնն

է , Ա . Փրկչայ վանքը սեպհակա-
 նութիւնն ըլլալ կ'երազեն , կամ ա-
 ռաջինը ընդհանուր Վզգին , իսկ երկ-
 րորդը մասնաւորաց կը վերաբերի կը
 կարծեն , և կամ մինն (Օմանեան մե-
 ծազօր Տէրութեն հզօր հոլանաւորու-
 թեան տակ , իսկ միւսը օտարաց , քանի
 որ երկոքեան միտսին շնորհիւ մեծա-
 զօր Տէրութեանս Հայոց ազգին սեպ-
 հական իրաւունքն են այսքան դարե-
 րէ ՚ի վեր , քանի որ մի և նոյն ազգին
 կը վերաբերին , և անոր հրամանին տա-
 կըն են , անոր տրօք և ողորմութեամբը
 կը պահպանուին , ի՞նչպէս կարէ լինիլ
 միոյն մէջ | ատինաց արարողութիւնը
 չժոյլատրուի , իսկ միւսին մէջ իբրեւ
 անվնաս զանցառութիւնն ըլլայ . և կամ
 ի՞նչպէս կարէ լինիլ միոյն մէջ կատա-
 րած պաշտօնն իմ կրօնքիս դպչի , իսկ
 միւսինը անվնաս համարուի . այս
 հակասութիւնները իսկ իրենց բնու-
 թեան մէջ հակառակ ըլլալը կը յայտ-
 նեն : Չեր վսեմութեան ալ աւելի
 նոր դլխացաւ մը աւելցնելը անպա-
 տեհ կըսեպեմ . թող | ատինք Ա . Յա-

կովկայ վանուց համար մինչեւ ցարդ
եղած այնքան խօսուածները մոքեր-
նին բերելով կ'ուղեն Ա. Յակովկայ
համար հասկընան, կ'ուղեն Ա. Փրկչայ
համար, վասն զի մեղ համար երկուքն
ալ մի է. և որքան այս գատը կրկնեն,
միշտ առնելիք պատասխաննին մի և
նոյնն է, շատ դիւրին է ինձ համար իմ
իշխանութենէս հրաժարիլ, հեռանալ
քան թէ այնպէս վատանուն մեռնիլ
առակ նշաւակի. ըլլալ իմ ազգային
սեպհականութեանս անհաւատարիմ
գտնուելով, և թշնամեաց ճիրանէն
աղատելու տեղ՝ անոնց թոյլատրութի
ընելով վտանգի մէջ ձգել Եղային
իրաւունքս :

Ա Յուսով եմ Ա սեմ. Տեարք, թէ
այս համառօտ խօսակցութեամբս հա-
մոզուեցաք թէ նոյն Փրկչոյ վանքը եր-
բէք տարբերութիւն չունի Ա. Յա-
կովկայ վանքէն ՚ի մասին ազգային
սեպհականութեան, և կը յուսամ
գարձեալ թէ այս երկու վանուց վե-
րայ կրկին հարց և փորձ ընելու կարօ-
ուութիւն չմնաց : —

Ա Յ Ն Հ Ո Գ Ե Ղ Ի Ք , ը ս ա ւ Վ Ա Ե Մ . Վ ա լ ի
Փ ա շ ա յ ն , Ե ր բ է ք ձ ե ր ի ր ա ւ ու ն ք ն ե ր ը
չ կ ո ր ս ո ւ ի ր , մ ե ն ի ք մ ե ր տ ե ղ ե կ ա գ ի ր ը
պ ի տ ի ղ ր կ ե ն ի ք Պ օ լ ի ս մ ե ր ք ն ն ո ւ թ ե ա ւ
ն ը հ ա մ ե մ ա ս տ , և 'ի հ ա ր կ է ի ւ ր ա ք ա ն ։
չ ե ւ ր ո ց դ ի ր ա ւ ա ն ց հ ա մ ե մ ա ս տ ա մ ե ն ։
մ ա ր դ ի ր ե ն ս ե պ հ ա տ կ ա ն ո ւ ն ե ց ա ծ ի ւ
ր ա ւ ո ւ ն ք ի ն տ է ր ն է 'ի ք ն է ա ն տ ի , ո յ ր
վ ա ս ն կ լ ը յ ո ւ ս ա մ ո ր՝ ք ի չ ա տ ե ն է ն ա յ ս
խ ն դ ր ո ց հ ր ա մ ա ն ն ե ր ը կ ո ւ գ ա ն ։ Բ .
Դ ո ն է ն : „

Ե յ ն ի ն չ ժ ո ղ ո վ մ ա ր ձ ա կ ո ւ ե լ ո ւ
վ ր ա յ է ր , յ ա ւ ե լ ց ո ւ ց խ ո ն ա ր հ ա ր ա ր Վ .
Պ ա տ ր ի ա ր ք ն Վ ա ե մ . Վ ա լ ի Փ ա շ ա յ է ն
խ ն դ ր ե լ ո ր՝ լ ա տ ի ն ա ց մ ե զ տ ո ւ ա ծ
ե ր կ ր ո ր դ զ ր կ ա ն ա ց ե ւ ս յ ա յ լ ո ւ մ պ ա
հ ո ւ ո ւ ն կ ն դ ի ր լ ի ն ի ն , ո ր՝ Վ ի օ ն լ ե ր ա ն
վ ր ա յ մ ե ր գ ե ր ե զ մ ա ն ա տ ա ն մ է ջ լ ա
տ ի ն ի ք ե ր կ ո ւ դ ո ւ ո ն բ ա ց ա ծ է ի ն յ ա
ն ի ր ա ւ ի , յ ա ւ ո ւ ր ս կ ղ զ է թ Փ ա շ ո յ ի .
փ ո խ ս ա ն ա կ թ ա գ ա ւ ո ր ա կ ա ն ս ր ո զ ո տ ա յ ի ն
վ ր ա յ բ ա ն ա լ ո ւ , և ա յ ս պ է ս չ ա ր ա չ ա ր
մ ե ր ի ր ա ւ ա ն ց դ պ ա ծ ե ն , ի ն չ պ է ս կ ա ն ։
խ ա գ ո յ ն պ ա տ մ ե ց ա ւ պ ա տ մ ո ւ թ ե ա ն ս
ս կ ի զ ր ը . և ս ո յ ն դ ա տ ի ս հ ա մ ա ր ք ա ն ի ց ա

անդամ ալ պաշտօնական կերպիւ Պօ-
լիս գրուած էր :

“ Թէև , ըսաւ Ասեմ . Վալի Փա-
շայն , այդ խնդիրը մեղ հրամացուած-
ներուն մէջ չէ , բայց քանի որ այդքան
կը թախանձէք , երկու երեք օրէն յե-
տոյ անոր եւս կը նայիմք . այս օրերս
ուրիշ ստիպողական գործեր ունիմք .
պէտք է որ զանոնք նախ լըմիցընեմք:”
Այսպէս վերջացաւ երրորդ նիս-
արն ալ :

Ա . Փրկչաց գերեզմանապան խնդիր :

Երեք աւուր յետոյ նամակ մը ըս-
տացաւ Արքազան Պատրիարքն Վալի
Փաշայի հրամանաւ գրուած , որով
լուր կուտար թէ , Ախօն լերան վրայ
չայց աղդին գերեզմանատան վե-
րաբերեալ բոլոր թղթերն հետեւ առ-
նելով՝ Յունաց վտնքը բարեհաճի
երթալ այս ինչ ժամուն :

‘Աշտնակեալ ժամանակին գնաց լլ. ·
 Պատրիարքն առանց թուղթ մի հետք
 տանելու : Հոն գտաւ նաև ‘Դամաս-
 կոսի Գաղղիոց Պ. Հիւպատոսն Վ սեմ-
 Վ ալի Փաշային և Վիւնիք էֆենտիին
 հետ : Օ կնի սովորական խօսակցու-
 թեան ըստ Կորին Վ սեմութիւնն ,
 “Դամրիք էֆենտի , ինչպէս անցեալ
 օր յատկապէս խնդրեցիք, թէ քանի որ
 ոք քաղաքս եմք, Վիօն լերան վրայ ձեր և
 լ ատինաց մէջ եղած գերեզմանատան
 վէճին ալ նայինք . և մենք ձեր խընդ-
 րանաց զիջանելով խօսք տուած էինք
 երկու կամ երեք աւուր յետոյ լուր
 տալու . ահա այսօր ձեզ լուր տըր-
 ւեցաւ որ նոյն տեղի վերաբերեալ
 բոլոր թղթերը առնեք գայք . ահա
 Պ. Հիւպատոսն ալ հոս ներկայ է լ ա-
 տինաց կողմէն . ուրեմն հաճեցէք
 ձեր նոյն տեղեաց վերաբերեալ թըլ-
 թերը հանել որ տեսնեմք թէ ինչ
 են , և ձեր մէջը ծագած անհամաձայ-
 նութեան պատճառը ի՞նչ է : —

“Խնդրած թղթերդ չըերի , ըստ
 Արքաղան Պատրիարքն . և լ ատինաց

Հետ այ մեր ունեցած անհամաձայն նութեան պատճառը ուրիշ բան չէ, միայն մեր իրաւանց յափշտակութիւնն է | ասինաց կողմէն, որում կը նպաստէ Տէրութեան կողմէն եղած թոյլատրութիւնները, զոր անցեալ օր մի ըստ միոջէ պատմեցի ձեր Ասեմութեան, զորս կրկնել աւելորդ կը համարիմ: —

« Ինչու համար չքերիք ձեր թըլ թերը և պատճառը ի՞նչ է, ըստ Կորին Ասեմութիւնն: Հապա ի՞նչպէս դատ պիտի վարէք, քանի որ ձեռքեր նիդ անոր վերաբերեալ թղթեր չունիք: ըսել է թէ դատերնիդ պիտի կորսընցընէք և մենք ՚ի զուր պիտի հոգնիմք: —

« Հարկ չտեսայ, ըստ Արբազան Պատրիարքը, երբէք թուղթ չունենալ ձեւացընելով ինքզինքն նոյն տեղեաց վերաբերեալ: Անձազօր Տէրութեան շնորհիւը ոչ մեր դատը պիտի կորսնցընէմք, որ ամենոցոյնի իրաւունքնիս է, և ոչ ալ ձեր Ասեմութեան ՚ի զուր տեղը հոգնութիւն

պիտի տամբ . քա՛ւ լիցի . միայն խըն-
 դրեմ , Վ սեմ . Տէր , խնդիրը ասդին
 անդին շճառազի օտար խնդիրներ
 մէջ բերելով , ինչպէս որ քանիցո ան-
 գամ տեսաք Գրանչխկեանց ըրած
 շարժումները . և այս խնդրոյս մէջ
 անոնց ըրածը այնքան յայտնի անիքա-
 ռութիւն է , ինչպէս վերը փոքր ինչ
 յիշուեցաւ , որուն համար այսօր ե-
 թէ մենք չքողոքենք , 'ի վաղիւ քա-
 րինք պիտի աղաղակեն . ինչպէս յայտ-
 նի տեսաք Ա . Յակովը , Քառասնից
 Ա . Ա յրին , և սուրբ Օհննդեան տե-
 ղեացին , և ուրիշ խնդիրներու մէջ .
 նոյնպէս այս գերեզմանատան խընդ-
 րոյն մէջ Գրանչխկեանք զմեղ յան-
 հնարինս վշտացուցած են և կը վշտա-
 ցընեն միշտ : Այս իրաւունքը այն-
 քան արդար ու ճշմարիտ է որ՝ ուրա-
 նալու համար մարդ առանց խղճի ըւ-
 լալու է : Ի հարկէ կը յիշէք , Վ սեմ .
 Տէր , անցեալ օր այս գործը իմ հետո
 դատ վարելու պաշտօն ունեցող Պ .
 Նիւպատոսին յանձնեցի իմ կողմէս
 ձեր Վ սեմութեան ներկայութեանը ,

և ըսի թէ՝ ես ձեր հետը չպիտի դամ։
գուք առանձինն օր մը Պ. Հիւ-
պատոսն ալ հետերնիդ առնելով այ-
ցելութեան ելէք դոնէ ձեր հարա-
զատ հպատակ Հայոց աղդին սեպհա-
կանութեան բանաբարութիւն տես,
նելու համար, ուր լատինէք հիւսիսա-
կողմը թագաւորական արդար պողո-
տայ ունենալով, որ աւելի յորմար,
աւելի մօտ և աւելի դիւրին է իրենց,
անկէց դուռ չքանալով, անիրաւա-
բար՝ չասացից թէ բռնի, և այն երկու
դուռը մէկ տեղ բանալով մեր սեպ-
հական գերեզմանատան վրայ, զմեղ
միշտ սաքի տակ տռած են, և միշտ
մեր գերեզմանատան մէջէն ճանապարհ
ընելով՝ մեր իրաւանց վնաս տալ և
փճացնել է մոքերնին անշուշտ։—

“Աւելի լու չէր ըլլար, ըստ Վը-
սեմափայլ Վալի փաշայն, եթէ նոյն
տեղին վերաբեալ թղթեր ունիք, հե-
տերնիդ բերած ըլլայիք. բայց և այն-
պէս գուք ձեղէն կըսէք թէ, երբէք
նոյն տեղին վերաբերեալ թղթեր բե-
րելու հարկ չկայ, և կամ երբէք

Ըուղթ չունեցող կը ձեւացնէք դուք
զձեզ, ապա ի՞նչ բանի վրայ հիմնելով
գատ վարել կ'ուղէք, ուրեմն ձեր ի-
րաւունքը ինչով պիտի պաշտպա-
նէք : —

“Ասի ձեր Վաեմութեան ներկա-
յութեանը կ'ուղեմ իմանալ թէ այս
գործին համար Գրանչիսկեանք ի՞նչ
կ'ըսեն, և ի՞նչ կ'ուղեն, պատասխա-
նեց Արքազան Պատրիարքն . ի՞նչ որ
կ'ուղեն անոր համեմատ սկսինք խօ-
սիլ : Մենք մեր իրաւունքը հաս-
տատելու եւ Գրանչիսկեանց ըրա-
ծը բոլորովին բռնաբարութիւն ըլ-
լալը յայտնելու համար ամենայայտ-
նի փաստեր ունիմք յառաջ բերե-
լու , որոնք ձեր Վաեմութեան ու-
ղած կալուածագրերէն տկար փաս-
տերով հաստատելէս զկնի , չէք ստի-
պեր զմեղնորէն նոյն գերեզմանատան
վերաբերեալ թուղթեր բերելու ՚ի
ցաւ ձեր Վաեմութեան պատուական
գլխոյն : Ուրեմն , Վաեմ . Տէր , շնորհք
ըրէք մեղյայտնելու լատինաց նոյն

խնդիրը ձեր Ա սեմութեան բերնով,
որ ըստ այնմ խօսեցուք : —

“ Յախ , ըստ Կորին Ա սեմութիր ,
Ֆրանչիսկեանք կ'ըսեն թէ , նոյն գե-
րեզմանատունն որ այժմ ձեր ձեռքն
է , ձեր սեփհականութիւնը չէ :

“ Կը կըսորդ , թէ ձեր և թէ Քունաց
գերեզմանատան մէջէն միշտ անցու-
դարձ կ'ընեն եղեր իրենց սպատերը
դեռ չքաշած անարդել , եւ դուք
ալ չէք արգիլեր եղեր , ոյր վասն ի-
րաւունք ունեցած են դուռ ալ ձր-
գելու անկից :

“ Կը սորդ , նոյն ձեր գերեզմա-
նատան մէջէն լարիս - էլամ արքունի
ճանապարհ կայ եղեր , որ օրինաւոր
ճանապարհ ըլլալուն համար՝ իրենց
դուռը այն կողմէն ձգած են որ դիւ-
րութեամբ երթան գան . նա մանա-
ւանդ հոն ուխտասեղի մը ալ կայ ե-
ղեր , նոյն տեղն ալ երթալու համար
ձեր գերեզմանատան վրայ դուռ ձր-
գելու համարձակուծ են . ահա Ա ա-
տինաց ըստը ատոնք են , հիմա դուք
ձեր կողմէն այս երեք կտոր խնդիր-

Ներուն վրայօք ինչ որ ունիք դուք ալ
խօսեցէք : —

“ Ա սեմ . Տեարք , ըստ Արքա-
զան Պատրիարքը , նախկին կըտորին
պատասխանելով կ'ըսեմ որ , նոյն գե-
րեզմանատունը Հայոց ազգին սեալ
Հական իրաւունքն է . ոչ թէ միայն
մեր գերեզմանատունը մերն է , այլ
իրենց այժմեան գերեզմանատունն
անդամ ամբողջ Հայոց ազգինն է , և
իրենք Հայոց ազգէն յափշտակած էն .
որոց մէկ մասը ի նշան բարեկամու-
թեան նուիրած են մեր նախնիքները
իրենց մեռեալները թաղելու ։ մար .
Երբ տակաւին Ախօնի լերան վրայ տեղ
չունենին . իսկ մնացեալ մասը ասկէ իրո
մէկ դար առաջ⁽¹⁾ բուռն զօրութեամբ

(1) 1774 թույն Պօղոս պատրիարքի ժամանակ
Լատինք Պօղոյ Գաղղիոյ գետականին վատահելով
սոք ելած են բռնութեամբ Խլել Հայոց գերեզմա-
նատքնեն մաս մի , իրաւունք մէջ բերելով՝ թէ ան-
կէ իբր 120 տարի յառաջ , այսինքն Փրկչի 1654
թույն Սուրբ Աթոռոյու մէկ փոխանորդը սկս-
նած իրենց ծախած է հարիսար յիսուն զօլաթոյի .
բայց այն ժամանակին կարօտութիւն չունենալով .
չեն տիրած այն մասին , և հիմակ , կ'ըսեին , այն տե-

գարձեալ յափշտակած են | ատինիք
մեր սեպհական տեղէն , զոր այժմ
ձեր Ա սեմութիւնը եթէ տեսնելու
ըլլայ , անշուշտ սիստի ըսէք թէ նոյն
| ատինաց գերեզմանատունն ամբողջ
Հայոց գերեզմանատան մէկ կտորն է .
ուրեմն ինչպէս առանց սկատկառե-
լու | ատինիք մեր մնացեալ մասին հա-
մար կը համորձակին ըսելու թէ նոյն
սեպհականութիւնը Հայոցը չէր : ”
Ա սեմ . Ա ալի փաշայն ըստ .
” Համ լու . ուրեմն ինչու համար

զը կը սկահանջեմը իրաւամբք վաճառման : Եւ թէ-
պէտ Հայոց միաբանութիւնը ’ի բռնութենէ զօ-
րաւորին ստիպեալ սիրով յանձն առեր է տեղ մի
տալու . Լատինաց իրենց գերեզմանատան արեւմբ-
տեան կողմէն և ոչ անոնց սկահանջած մասը , որ
Հայ քաղաքացւոց սեփական գերեզմանոցն է , այսու-
ամենայնիւ չեն կրցած բռնութեամբ խլել զայն
մինչեւ 1777 տարին . յորում Համայ Ա ալի Հատրմ-
ողու Մէհմէտ Փաշայն Փէշէր ելու ըլլարվ և
ուրբ քաղաքս գալով , Լատինիք կը դիմեն անոր և
անոր չափաղանց ագահութիւնը կաշառելով կը
յաջողեն ուղած տեղերնին անոր ձեռօրը գրաւել
և թէպէտ Յովակիմ Պատրիարք բողոքած է Բ .
Գուռը , բայց նորա բողոքը սյս անդամնես նման
լուլի եղած չէ ’ի ցաւ սրտի բովանդակ Ազդիս :

ձեր թղթերը չքերիք որ՝ ձեր իրաւունքն իսկայն յայտնուի, որով անսնց ալ խօսելու առիթ չը մընար, և դուք ալ խպառ կ'ազտտիք սցսպիսի գլխացաւութենէ մը : —

“ Տեր իմ, ըստ Արքազան Պատրիարքը, ոուրբ Յակովը ինդիրը յուղուած ատենը կը յիշեք անշուշտ, որ ոչ թէ միայն թղթեր, այլ և մեծամեծ հին և նոր հրովարտակներ անդամ տեսնուելէ զինի՝ դարձեալ Զեր պատուական կլուխը սյնքան ցաւցուցին, և իրենց նօ, նօ, նօներբէք մեղմացընել չւղեցին . ուրեմն ինչ հարկ կայ ինձ այսօր թուղթը բերելու և խօսելու և աշխատելու իմ սեպհականութիւնս ըլլալը տալացուցանելու համար, քանի որ անոնք ուրիշն իրաւունքը ճանչնալչեն ուղեր, ուրեմն թողիրենք ասլացուցանեն նոյն գերեզմանատան մերը ըլլալը եթէ կրնան :

“ Ասեմ. Տեր, նոյն գերեզմանատան վերաբերեալ թղթերը կ'ուղէք մեղմէ, ինչ հարկ կայ դանոնք ցուցը

նել, քանի որ նոյն գերեզմանատան
մէջ գերեզմանաբարերուն ամեն մէկը
մէկ մէկ թուղթ, մէկ մէկ հրովար-
տակ և մէկ մէկ կալուածագիր են,
անզգոյ քարերը անդամ իրենց վրայի
հին և նոր տապանադրերովն ինքնին
կը վկայեն թէ նոյն գերեզմանատունն
խկ Հայոց սեպհականութիւնն է . եւ
թէ Թրանչիսկեանք այսպէս յայտ յան-
դիման երեւցած Հայոց ազգին ար-
դար իրաւունքն չտեսնեն, նոյն քարե-
րը լեզուի ելելով պիտի աղաղակեն: Ա-
հաանոնց այսպէս անիրաւ վարմունքին
համար է, որ արժան չտեսայ այս խըն-
դրոյսվերաբերեալ գրերը հետո բերե-
լու, Վ սեմ. Տեր, ապա թէ ոչ չկարծէք
որ Հայոց ազգը առանց օրինաւոր
կալուածագրեր ունենալու տիրած է
անոր, քան լիցի : —

“ Ձեր ըսած խօսքերէն առաջին
մասը բաւական իմացուեցաւ . և հա-
մարէ թէ կիսով շափ լուծուեցաւ
ինդիրը, ըսաւ Վ սեմ. Վ ալի Փաշայն.
ուրեմն երկրորդ մասին վրայօք ի՞նչ ու-
նիք ըսելու | ատինաց, որոնք կ'լսեն թէ

գերեղմանատան պատը դեռ չքաշած՝
ձեր գերեղմանատան մէջէն կուղան
կ'երթան եղեր անարգել, և դուք ալ
երբէք արգելած չեք եղեր, ոյր վասն
անոնք ալ նոյն իրաւամբ համարձաւ
կեր են դուռ ձգելու, զոր դուք հիմայ
արգիլել կ'ուղեք, ուստի քանի որ
այս այսպէս է, իրենց իրաւունքն է,
և դուք սրգիլելու իրաւունք չեք ու-
նենար—ըսելով նորին Ասեմութիւնը
քովէն ծրարած թուղթ մը առնելով
բացաւ. — ահա նոյն տեղւոյն ճիշդ
յատակագիծն այ շինել տուած են
լատինք, որու վրայ ձեր ուշադրու-
թիւնը կը հրաւիրեմ, բաւ Արքա-
զան Պատրիարքին : —

“ Այս, բաւ Արքազան Պատրիար-
քըն, այդ այդպէս է, բայց Ճշմարիտ չէ,
այլ Ճշմարտանման է բածնին. բայց
և այնպէս նոյն ասացուածները բա-
ւական բացատրութեան կարօտ են,
ոյր վասն նախ ձեր Ասեմութեան նե-
րողամտութին խնդրելով բացատրեմ
ձեզ, Տեարք իմ, թէ ինչպէս է—ըսելով
իրեն, բաշել տուած նոյն գերեղմանա-

տան յատակագիծն նորին Վ սէմաւթե
 ներկայացնելով, որ յար և նման էր մե-
 ծաւ մասամբ | ատինաց յատակագը-
 ծին, և զոր արդէն ՚ի պատրաստի ու-
 նէր իրեն հետ, ըստ .—Այս քանի որ
 | ատինք իրենց գերեզմանատան դեռ
 սկաս չէին քաշած, ինչպէս Հայոց
 և Յունաց գերեզմանատուններն այ-
 ժըմ աչքերնուու դիմացն է, նոյնպէս
 | ատինաց գերեզմանատուննեւս կո-
 խան ոտից էր հասարակաց և անաս-
 նոց անգամ արածելու տեղի . և այն-
 պէս մենք և Յոյնք | ատինաց անց ու
 գարձը մեր գերեզմանատան մէջէն
 արգիլած չէինք և չէինք ալ արգիլեր
 քանի որ երեք ազգաց գերեզմաննե-
 րըն ալ մի և նոյն անարգութեան մէջ
 էր և ամեն կողմը ճանապարհ եղած
 էր . Յոյնպէս ալ | ատինք ոչ մեր և
 ոչ Յունաց անցուգարձը արգելած
 էին իրենց գերեզմանատան մէջէն
 և ոչ ալ կրնային արգիլել, որովհե-
 տեւ միայն սահմանաքարերով որո-
 շուած էին իրարմէ : Այլ | ատինք
 երբ իրենց գերեզմանատան պատը

քաշեցին, որպէս կերպիւ իւիք արդիւ-
 լեցին իրենցգերեզմանատունէն և այսոց
 և Յունաց անցուղարձր, և իրենց
 տեղը ապահովուցին նաեւ անաս-
 նոց արածելիք ըլլալէ, որու վրայ ու-
 րախ եմք և ոչինչ ունիմք ասելիք. այլ
 միայն սո է մեր վնտուած իրաւուն-
 քը, քանի որ իրենց գերեզմանատու-
 նը իրենց համար (մուգատաէս) սուրբ-
 է, նոյնպէս է մերիններն ալ. ինչպէս
 իրենք իրենց գերեզմանատան պատ-
 քաշելով ապահովուցին, նոյնպէս և
 մենք պարտիմք մեր տեղերը ապահով-
 ցնել մեր պատերը քաշելով. ուրեմն
 | ատինք որ իրաւամք մեր գերեզմանա-
 տան վրայ դուռ կը ձգեն, և ան ալ եր-
 կու դուռը մէկէն, ասօր մը օրէնքը կը
 ներէ: || Որ սիրտ կարէ տոկալ. եթէ | ա-
 տինք կ'ուղեն մեր գերեզմանատան մէ-
 ջէն անցուղարձ ընել ըստ առաջնոյն,
 ուրեմն թողքակեն իրենց գերեզմա-
 նատան նոր շինած պատերը, և առա-
 ջին կերպարանքը մտնայ գործը, ինչ-
 պէս էր պատ չքաշած ատեն, այն տ-
 տեն կընան դարձեալ իրենց անցու-

գարձը շարունակել մեր գերեզմանաւտան մէջէն , դարձեալ երբէք չեմք արգիլեր , ոչ մենք և ոչ Ծոցնք : —

“Երկրորդ խնդրոյն վրայ ևս ձեր խօսածներէն բաւական տեղեկութիքաղեցինք , ըստ Վորին Ա սեմութիւնը , և հասկցուեցաւ ինչ ըլլոլք . հիմա կը մնայ երրորդ խնդրոյն վրայօք եւս ձեր տալիք պատասխանները խմանալ և տեսնել թէ անոր մէջ եւս ինչ գաղտնիք կայ որ այսքան խոժոռուածէք Ֆրանչիսկեաններուն և երբէք չեք զիջանիք անոնց խնդրոյն : —

“Երրորդ խնդիրը . ըստ Արքաղան Պատրիարքը , ըոլորովին պարզ և ամենայայտնի է , երբ անազառապէս մոածեմք և քննեմք , հետեւապէս իրենց ըսածներուն բոլորովին սուտ ըլլալք ինքնին կը յայտնաւի : Այսկայն կ'աղացեմ , Ա սեմ . Տէր , որ նոյն երրորդ խնդրոյն վրայօք լ ատինաց պահանջմաննքները շնորհք ընեք տեղն ՚ի տեղը ձեր բերնովը ըսել ինձ . վասն զի լ ատինք մոօք այլ ինչ կը խորհին միշտ , եւ բերնով այլ ինչ կը խօ-

սին, ինչպէս քանիցս անգամ վորձը
տեսնուեցաւ : —

“Երին, Ա սեմնւթիւնը դարձեալ
լ ատինաց բերած նոյն գերեզմանաւ-
տան յատակագծին վրայ մատը դնե-
լով՝ ըսաւ . . . լ ատինք կ'ըսեն թէ՝
մենք արդէն միշտ Հայոց գերեզմա-
նատան մէջէն կ'անցնէինք կը դառ-
նայինք իբր Հասարակ պողոտայէն,
(ոյսինքն՝ Առիք – իւամ) , զոր ահա
նշանակած են իրենց յատակագծին
մէջ, — ըսելով ցոյց տուաւ այն Հաս-
տրկեկ քաշուած սեւ գիծը, որ կը
ցուցընէր նոյն Ճանապարհին տեղը՝
որ Հայոց գերեզմանատան մէջէն
կ'անցնէր : —

“Եյն, Հիմայ նոյն գծին տեղը
Ճանապարհ կայ, Ա սեմ. Տէր, ըսաւ
Արբազան Պատրիարքը . բայց ասիկայ
շատ ժամանակ չէ որ զանցառութք
թող տրուած է Ճանապարհ ըլլալու,
և քանի որ երեք ազգաց գերեզմանաւ-
տունն ալ պատ չունէին, ՚ի հարկէ ոչ
թէ մէկ տեղէ, այլ ամեն կողմէ Ճա-
նապարհ եր թէ մեր՝ թէ Հունաց և

թէ | ատինաց գերեզմանատունները ,
որուն կարծիք չկայ երբէք : | Եւ նոյն
գծին տեղին համար | ատինք որ կը¹
պնդեն թէ ճանապարհ է , բոլորովին
սուտ է . և երբէք անկէց օրինաւոր
ճանապարհ եղած չէ և չկրնար ալ
ըլլալ :

‘Յորին վեճմութին ըսաւ . “Դուք
կ’ըսէք թէ նոյն տեղը ճանապարհ չէր,
և չէ . բայց | ատինք կ’ըսեն՝ թէ ճա-
նապարհ է , և ճանապարհ ըլլալուն
յայտնի նշաններէն ալ մին այն է որ
կ’ըսեն թէ դեռ նոյն ճանապարհին յա-
տակաբարերը (զալտըրըմ) տեղ տեղ
կը տեսնուին , զորս այք չեն կրնար
ուրանալ : Ուրեմն նոյն յատակաբա-
րերուն համար ինչ կրնաք ըսել , և
ասկէց աւելի հաստատուն փաստ ինչ
կրնայ ըլլալ . եթէ իրաւ են նոյն յա-
տակաբարերն , ուրեմն իրաւունք ու-
նին | ատինք ճանապարհ է ըսելու և
հետեւապէս դուռ ալ բանալու : —

“ Յոյն իսկ իրենց յատակաբար
կարծած քարերն են , ըսաւ Ուրբաղան
Պատրիարքն , որք յայտնապէս կ’ըս-

սուռգեն ոչ թէ միայն ճանապարհ չըկ-
լալը, այլև նոյն քարերուն տակը իսկ
գերեզման ըլլալը. վասն զի | ատինաց
յատակաքար կարծելով վկայ բերած
քարերն իսկ պիտի ստուգեն թէ իւ-
րենց տակը մարդ կայ թաղուած : —

“ | ;ւ ի՞նչպէս, ըսաւ Կորին Վ սե-
մութիւնն : —

“ | ասն զի, կրկնեց Արբաղան Պատ-
րիարքն , ընդհանուր սովորութիւն է
ամեն ժամանակ , ամեն ազգաց , և ա-
մեն տեղ ուր ուրեք որ կը գտնուին
այնպիսի կարօտ աղքատ կամ անտէր
մարդիկ , որք ոչ կարեն իրենց գերեզ-
մանը օրինաւոր կամ սրբաքարով շի-
նել տալ , ոյր վասն կը տիպուին մանր
քարեր շարել անոնց վկայ գոնէ տե-
ղը անյայտ չմնալու համար , նոյն սո-
վորութեան համեմատ ահա գրուած
են սալայատակ կարծուած քարերն ալ
—Ո գիտէ , որ անտէր աղքատաց կամ
որ անկարող անձանց գերեզմանն են
անոնք . եթէ Ջրանշխակեանք չեն հա-
մոզուիր , ըսածս ստուգելու համար
հրաման ըրեք , Վ սեմ . Տէր , ուր տեղ

որ | ատինք սալայատակ կը կարծեն ,
 թող փորուի , եթէ նոյն քարերուն
 տակէն մեռելոց ուկորներ չելլան , ան-
 ձամբ կը վճռեմ նոյն տեղին ճանա-
 պարհ ըլլալը : Բայց եթէ մեռելոց
 ուկորներ ելլելով դարձեալ չեն հա-
 մոզուիր Որանշխկեանք , ինչպէս յայտ-
 նի է , և դարձեալ կը տարակուսին .
 Տեր իմ , այն տեղէն կրկին հրաման
 ընելու պիտի պարտաւորիք նոյն Ճա-
 նապարհ ըսուած տեղը ծայրէ ՚ի ծայր
 մէկ մարդաշափ խորութեամբ փո-
 րել տալու . եթէ մեռելոց ուկորներ
 չելլեն նոյն Ճանապարհ կարծուած
 ծայրէ ՚ի ծայր փորուած տեղէն , ամ-
 բողջ իմ սեփհական գերեզմանա-
 տունս իրենց կը թողում՝ եթէ | ա-
 տինք ձեր Վ սեմութեան ներկայու-
 թեանը դաշնագրութիւն ընելու կրո-
 նան համարձակել . իսկ եթէ ընդհա-
 կառակը պատահի , այսինքն՝ մեռելոց
 ուկորներ ելլեն , իրենք ալ իրենց գե-
 րեզմանատեղին մեղ թողուն , զոր մեր
 գերեզմանատան հետ բաղդատելով
 հաղիւ չորրորդ կամ հինգերորդ մա-

որ կրնաց ըլլալ : Եթէ կը վստահին իւ
րենց հնարած ստութեանը , թող ա-
տեան գան , և գործադրեմք առանց
ժամանակ անցընելու :

“ Աերեցէք Վսեմ . Տէր , եթէ
Պրանչխակեանք ինչպէս միշտ նօ , նօ ,
նօէն զատ բան ճանաչել չեն ուզեր ,
թէ և բոլոր աշխարհ վկայէ թէ Ճըշ
մարիտը այս է , բայց և այնպէս եթէ
իմ ստուգած ճշմարտութիւններուս ,
որոնք որ աւելի տպացուցական են ,
դարձեալ չեն ամսզուիր , պիտի ըս-
տիպուիմ իրենց խորհրդով գծուած
իրենց դրշն ելած , իրենց բերած
և ձեր Վսեմութեան յանձնած յա-
տակադին վրայ յակամայից բռնա-
դատեալ , ըսեմ թէ յարդարութենե-
ստիպեալ , իրենց նշանակած մէկ տն-
հերքելի վիսյութիւնը յառաջ բերել-
րուելով Ա . Պատրիարքն ձեռքը յատա-
կադին վրայ երկարցընելով և նոյն
Ճանապարհին տեղը ցուցընող հաստ
սեւ գծին վրայ դնելով ըսաւ . Վսեմ .
Տէր , այս գծին տեղին վրայ չէ լա-
տինաց պնդելը թէ Ճանապարհ է :

“ Ե՞յլ, պատասխանեց Կորին Ա ըսեմութիւնն : —

“ Աւրեմն, ըստ Արքազան Պատրիարքն, իրենց գծած և ներկայացուցած յատակագծին վրայ վստահ են . անոր Համեմատ խօսինք , և ինչ որ վճռուի ՚ի հարկէ սիրով պիտի լսեն , և ամենայն սիրով պիտի ընդունին և պարտաւոր իսկ ալ են շիտակը խօսելու Համար : —

“ Ի հարկէ , ըստ Կորին Ա սեմութիւնն . քանի որ իրենք գծած և բերած են սոյն յատակագիծը ըսել է որ իրենց ուղածին Համեմատ գծուած է . եթէ իրենց մէջէն է գծողը ՚ի հարկէ քաջ գիտելով գծած է , և եթէ օտար ոք է . ՚ի հարկէ իրենք լսւ մը հասկրցնելով և պատմելով՝ գծել տուած են , եւ կամ աւելի ստուգագոյն է գծողին՝ նոյն իսկ գերեզմանատուն ները տեսնալով գծելը այս յատակագիծը , ինչպէս ահա դուք ալ կը տեսնաք . նոյն իսկ տեղւոյն Համեմատ չէ . ինչպէս ահա ձեր քաշել տուածին գիծերն ալ ասոր նոյն է , միայն ճանաւ

պարհի տեղւոյն գիծը կը պակսի ձեր
 գծել տուածին մէջ։ Առաւելութիւն
 մի ալ ունի մեր քաշել տուած յա-
 տակագծին վրայ՝ անոնց քաշել տր-
 ւածը, ըստ Արքադան Պատրիաքը,
 վասն զի ամենայն պարագայիւքը օ-
 բինաւոր կերպիւ քաշել տուած են。
 նա մանաւանդ երեք աղքաց գե-
 րեզմանատանց սահմանաքարերը նր-
 շանակելէ զինի, գերեզմանաքարերն
 անդամ նշանակելով աւելի օրինա-
 ւոր ըրած են, որ համարէ թէ Ասե-
 մափայլ Տէր, յատուի յԱստուածա-
 կոյս կողմանէ եղած է այդ, և Եր-
 րորդ խնդիրը բոլորովին լուծելու հա-
 մար պատահած է այդ, թէ և իրենք
 չեն դգացած։ Աւրեմն Տեարք իմ, քաջ
 նկատեցէք սա իրենց ճանապարհ ը-
 սած տեղը ցուցընելու համար քաշած
 սա հաստ և սեւ գծին, որ Հայոց գե-
 րեզմանատան մէջէն կ'անցնի, մեծա-
 պէս շնորհակալ պէտք է ըլլամք նոյն
 Թրանչիսկեաններէն որ զմեզ մեծ
 տարակուսութենէ և աշխատութենէ
 աղատեցին. իրենք ահա նոյն գծովը

օրինաւորապէս հաստատած են թէ,
նոյն ձանապարհ ըստ տեղը ձեփառ
այսինքն Ասրիւ-իւած չէ, այլ գերեզ
մաններ են : —

“ Ի՞նչ կ'ըսէք, ըստ Վ սեմ. Վ ալի
փաշայն . ի՞նչ բանի վրայ հաստատե-
լով զայդ կ'ըսէք, և ըստներդ ինչով
կրնաք ստուգել և հաստատել : —

“ Եմենայն դիւրութեամք, վասն
զի , ահա նոյն գծով ստուգուած է
արդէն, ըստ Արբաղան Պատրիարքն,
և ինձ ստուգելու աշխատութիւն չէ
մնացերու-ըսելով մատը նոյն սեւ գծին
վրայ դնելով ցուցուց Վ սեմ. Վ ալի
փաշային լ ատինաց քաշած յատակա-
գծին մէջ նշանակուած Հայոց մա-
սին մէջ այն գերեզմանաքարը , ու
ըուն իսկ կիսովի վրայէն քաշուած էր
նոյն եղջերուաքաղ ձանապարհը ցու-
ցընող հաստ սեւ գիծը . և ըստ . .

“ Քաջ դիսեցէք Տեարք իմ, նայեցէք
ինչ օրինաւոր պատահած է այս ,
մի թէ ուրիշ վկայութեան և ըս-
տուգութեան կարօտութիւն մնաց
դեռ, ահաւասիկ իրենք իրենց ձեռօ-

Քը ստուգած են թէ նոյն ճանապարհ
 ըսուած տեղը գերեզմանատուն է . և
 այժմեան գտնուած ճանապարհը ետ-
 քէն անցուդարձով հաստատուած է ,
 քանի որ իրենք իրենց ձեռօքը այդ-
 պէս հաստատապէս վկայած են , ալ
 ուրիշ ոչ վկայութեան և ոչ ուրիշ
 ստուգութեան կարօտութիւն մնաց ,
 ալ թող | ատինք ինչ որ կ'ուզեն թող
 ըսեն . ահա լիակատար ստուգեցաւ-
 գործն , և այն իրենց բերած յատա-
 կագծովը : Ձալտեցաւ Վ սեմ . Վ ալի
 փաշայն և բոլոր ներկայ գտնուողք ,
 և ըսին՝ ճիշտ այդպէս է , և այս յայտ-
 նի ապացոյց է . ուրեմն յայտնի անիւ-
 րաւութիւն է | ատինաց ըրածը և
 խօսածը , — ըսելով բոլոր այս ե-
 ղելութիւնը հասկցուցին Պ . Հիւ-
 պատոսին , որ արդէն խօսքերուն ե-
 ղանակէն և յատակագծին վկայ եղած
 քննութիւններէն և մատնացոյց շարժ-
 մունքներէն կիսով չափ հասկցած էր ,
 և նա սկսաւ ժալտել :

«Յայտնուեցաւ ուրեմն Տեարք իմ
 | ատինաց արարքը , ըսաւ Արքաղան

Պատրիարքը, և տեսաք ահա անոնց
շարժմունիքները, իմացաք անոնց խօ-
սած խորամանկ խօսքերուն յարդը.
որոշեցէք ուրեմն, և դարձուցէք իրա-
ւունքը իւր սեփական տիրոջը, եւ
պատուիրեցէք զրկողին որ մէկ մ' ալ
չյանդոնի այսպիսի յափշտակութիւն-
ներ ընելու : ”

Յաւելցուց ասել Արքազան՝ Պատ-
րիարքն, թէ “ Կիտեմ Տեարք իմ,
դարձեալ Պարանչիսկեանք չպիտի զի-
ջանին իրենց յայտնի անիրաւութիւնը
ճանաչելու, և պիտի պիտի են, թէ այն
տեղը ճանապարհ է, և չպիտի զիջա-
նին իրենց անիրաւութեամբ շնչած
դուռները գոցելու, եւ իրենց կից
ճանապարհի կողմը դարձնելու . բայց
և այնպէս Տեարք իմ, դարձեալ պի-
տի պատասխանեմ իրենց, Տէրութե-
օրէնքին համեմատ . ուրեմն կը խընդ-
րեմ Տէրութեան կանոնին համեմատ
և դատաստանական օրինաց համաձայն
պատասխան տուէք ինձ դուք Տեարք
իմ, և Պ. Հիւսվատոսն եւս ըստ իւ-
րեանց Տէրութեան օրինաց սլատաս-

խանեսցէ ինձ ճշմարիտն , որովհես կը
պահանջէ արդարութիւնն ու -ըսելով
սկսաւ այսպէս :

“Եափ” Վիրանչիսկեանց ըսած և
սինդած խօսքերնուռն համեմատ գոր-
ծին հակառակ կողմը բռնենք , և ը-
սենք թէ նոյն խակ իրենց ըսած տեղը
ճանապարհ եղած ըլլայ կամ ճանա-
պարհ է , նա եւ իրենց անիրաւու-
թիւնը աւելի գատապարտելի քնելու-
համար բոլոր աշխարհի առջեւ , դի-
ցուք թէ նոյն տեղը թագաւորական
ճանապարհ Ապրիւ-իւ-ամ է . բայց և
այնպէս Վիրանչիսկեանք դատը երբէք
չեն կրնար վաստըկիլ . վասն զի իրենց
թողած գոներուն և ըսած ճանապար-
հին մէջ տեղի գտնուած հողը թէ և
մէկ թիւ ըլլայ , իմ աղգային սեպհա-
կանութիւնս է , ըստ օրինաց իրաւունք
չունիմ ըսելու թէ իմ գետնիս վրայէն
մի անցնիր . իմ սեպհականութեանս
վրայ մի կոխեր , երբէք հրաման չու-
նիմ . ինչ կըսէ գատաստանը , արդեօք
կը թոյլատրէ այդպիսեաց :

“Երկրորդ” քանի որ նոյն գրան առ-

ջեւը եղած գետինն իմ սեպհակա-
նութիւնս է , քանի որ | ատինաց գե-
րեզմանատան հիւսիսակողմն հասա-
րակաց պողոտայ կայ , այսինքն Առլիք-
իլամ , իրենց Ճանապարհ տալու սղար-
տաւորութենէ աղատ եմ ըստ Տէ-
րութեան օրինաց . ուրեմն և ես ա-
նոր քաշած պատին ճիշտ առջեւէն
իմ գերեզմանատանս պատը երբ կ'ու-
ղեմ , կրնամ քաշել Տէրութեան օրի-
նաց համեմատ մէկ ձեռք սղմելու չոփ
անոնց և մեր պատին մէջ միջոց ձգելով ,
ով կրնայ զիս արդելուլ . քանի որ իմ
ըրածս | ատինաց ըրածին պէս օրինաց
և արդարութեան դէմ չէ : ”

Համարէ թէ միաբերան պատաս-
խանեցին Աոցին | սեմութիւնը , թէ
Քանի որ հողին տէրը արտօնութիւն
չտար իւր հողին վրայէն անցնիլ , դը-
րան տէրը իր դռնէն դուրս չկրնար
ոտք կոխել . բայց եթէ ուրիշ կողմա-
նէ դուռ բանալու դիւրութիւն չու-
նենայ , այն ատեն իրաւամք կրնայ
պահանջել նոյն հողին ոիրոջմէն իրեն
Ճանապարհի համար ըստ բաւականին

դետին, և այն ոչ թէ բռնութեամք, այլ համօղելով որ և իցէ կերպիւ, և նոյն հողին տէրն ալ պարտաւոր է ամենայն սիրով հնաղանդիլ և շնորհել. բայց եթէ | ատինք քովերնին հասարակաց պողոտայ ունին, ինչպէս որ դուք կ'ըսէք և կը պնդէք, երբէք չեն կընար իրաւունք ունենալ. դուք ձեր սեակ հական հողին վրայ կընաք ձեր սկառը քաշել երբ որ ուղէք մէկ ձեռք սըդ մելու չափ միջոց ձգելով. Տէրութե օրինաց համեմատ | ատինք ձեղմէն ուղած գետինը ուրիշ կերպով չեն կընար ստանալ, եթէ ոչ փոխարինելով կամ ծախու առնելով և այն ձեր ամենայն յօժարութեամքը նուեր ընելու միջոց գտնելով: —

“ Աւրեմն, ըսաւ Արբաղան Պատրիարքը, այս ո՞ր աստիճան անիրաւութիւն է Վրանչիսկեանց մեզ ըրածները, և ո՞ր աստիճան անհասկանալի է մեր բարեխնամ կայսեր հպատակասէր բարի կամացը հակառակ Տէրութեան պաշտօնէից կողմանէ ցոյց տըրուած թոյլատրութիւնն որ Հայոց

աղդին արդար սեպհականութեան իւրաւունքները այսպէս իւր աչքին դիմացը ստնակոխ եղած է և կ'ըլլայ . և արդեօք դեռ պիտի շարունակուի , ոյր վասն շուարեալ մնացեր եմ թէ , եթէ դարձեալ պատահի , ո՞ր աղդի , և ո՞ր տէրութեան օրինաց կամ դատաստանի դիմեմ : Եւ դուք Պ . Հիւ պատու արդեօք տեսած էք այսպէս արդար և սեպհական իրաւանց շարաջար բրոնաբարուիլը . արդեօք ձեր Տէրութեանոնները կը ներէն , կամ ձեր Տէրութեան մէջ օտար Տէրութեան հըպատակներ այսպէս յափշտակութիւններ կրնան ընել . և ընելու ալ ըլլան , արդեօք կարելլի է թոյլատրէք , կ'ազաչեմ պատմեցէք՝ եթէ ունիք այսպէս անօրինակ անիրաւութեան նմանը :

Այս միջոցին Վ սեմ . Վ ալի փաշայն գործին բացատրութիւնն ուրիշ եղանակի դարձնել ուղելով ըստ « Փաթրիք տօստում , այս լ ատինաց պատը չքաշուած , անոր տեղը ի՞նչ կար , և այս գործին սկիզբը ի՞նչպէս պատեցաւ , որ այսքան գժտութեան

պատճառ տուած է , եթէ կարելի է ,
մեղ պատմէ : —

“ Աւրեմն գործը նորէն պիտի ըս-
կըսինք , ըսաւ Ա . Պատրիարքը . վսաս
չունի , դարձեալ Ձեր Վ սեմութեն գը-
լուխը պիտի ցաւի , բայց քանի որ դուք
այդ ձանձրութիւնը յանձն կ'առնուք
տանիլ , ինձ ուրիշ բան չմնար , միայն
սիրով յանձն առնուլ պատմել : Վ սե-
մափայլ Տեարք , ըսաւ , նոյն պատին
տեղը արդէն մէկ կանգուն հաստու-
թեամբ հողին երեսին հաւասար պատ-
մի կար կիսովի քաշուած , կիսովի
կ'ըսեմ , այսինքն՝ կէսը մեր և կէսը
լատինաց , այսինքն՝ մեր կողմին ե-
րեսը մեղ կը վերաբերէր , իրենց կող-
մի երեսը՝ իրենց . և նոյն պատը որ
յատակին գրեթէ հաւասար էր , իսկ
մէջ տեղը տեղ կէս կանգունի
չափ բարձրութեամբ տնկուած քա-
րեր կացին , որոնք յայտնի նշան մի
կընային սեպուիլ նոյն պատին կիսովի
ըլլալուն . այսինքն՝ Հայոց և լատի-
նաց ծախսով շինուած ըլլալուն : Նոյն
անկուած քարերը ուրանալը և խոր-

տակելով անյայտ ընելը այնքան դիւ
 րին չըլալը գիտնալով | ատինք, սկսան
 ՚ի սկզբան ամենայն կերպիւ սիրով և
 ամենայն խոնարհութեամբ վարուիլ.
 որ երբէք չէր կարծուեր, թէ այս աս-
 տիճան համակրութիւն ցուցընող մի-
 աբանութենէ մը այսպէս խորամանկ
 խարդախութիւնութամբ դուրս գայ, ոյր վասն
 մենք և Յօնք այսպէս վստահացեալ
 մնացինք . և կը յուսացինք որ դոնէ
 այս անգամ խաղաղութեամբ գործ
 մը գլուխ պիտի հանեմք . վասն զի
 | ատինք կ'ըսէին թէ մենք երեք եղշ-
 բարք ենք, և գերեզմաններն ալքանի
 որ միատեղ են, և միայն սահմանա-
 քարերով որոշուած, իւրաքանչիւր
 ազգ իւր գերեզմանատան պատը իւ-
 րեանց որոշեալ սահմանին համեմատ
 թող շինէ, լմննայ երթայ : Այսպէս
 խորամանկ խարեսութեամբ զմեղ և
 զՅօնսս երբ պաշարեցին, և այն աս-
 տիճան վստահացուցին որ համարէ
 թէ իւրաքանչիւր ազգ սեպհական տե-
 զին պատը շինել պիտի սկսէին : Երբ
 տեսան որ գործադրութիւնը մօտ է,

սկսան գործին բոլորովին ուրիշ կեր-
 պարանք մի տալ, և աւելի վստահա-
 ցընելու համար ըսին՝ Շատ լաւ, իւ-
 րաքանչիւր աղդ իւր պատը թող շի-
 նէ, բայց դռները Բնչպէս պիտի ը-
 նեմք, և որ կողմէն պիտի ձգեմք,
 ըլլայ որ ասոր համար ալ մէջերնիտ
 գժութիւն մի պատահի, — վասն զի
 իրենց նպատակին համեմատ իրենց
 գերեզմանատան դրան վրայ կասկած
 ունին եղեր, ՚ի հարկէ վերսիշեալ ե-
 ղանակաւ գործը կատարուելու որ
 ըլլար, հիմակուան ըրած անիրաւու-
 թիւնները չպիտի կրնային ընել, եւ
 պիտի ստիպուեին իրենց դուռը իւ-
 րենց կից եղած արքունի ճանապար-
 հին կողմէն ձգել, որ և ոչ մէկուն իւ-
 րաւանց կը դպչէր : Ոյր վասն դար-
 ձեալ խօսքերնին փոխելով ըսին, — լ-
 ւելի լաւ ըլլար որ երեք գերեզմա-
 նատան մէկ պատքաշեմք, և երկու
 գուռ ձգեմք, դարձեալ ըստ առաջ-
 նոյն անցուդարձ կ'ունենամք իրարու-
 գերեզմանատան մէջէն, առանց զի-
 րար ցաւցընելու : —

“ Այլ երբ այս խորհուրդն եւս
արդիւնաւորելու վրայ էր , և ըստ
այնմ ընելու սկսելու մօտ , դարձեալ
խնդիրը փոխելով ըսին , Շատ լաւ ,
բայց այն դռներուն բանալիներն ո՞ր
ազգին քովը պիտի մնան , եւ ասոր
պատճառաւ չըլլայ որ մեր մէջը դար-
ձեալ անհամածայնութիւններ ծագի
և խռովութեան փոխուի , (՚ի հարկէ
ունկնդիք կ'ըսեն այս ինչ զարմանալի
խաղաղասիրական հոգի ունեցող կը-
րօնաւորներ են , երկնային հրեշտակէք
են ինչ են , որ երբէք խռովութեան
առիթ անդամ տալէն կը փախչին և
կը հեռանան) :

“ Ուրեմն կարելի չէ արդեօք նոյն
դռներուն քով մէկ մէկ սենեակ շե-
նուի երեք ազգաց ծախիւքը . պահա-
պաններ դրուելով բանալիները անոնց
յանձնուի , և որ ազգին որ պէտք ըւ-
լայ և երթայ հոն , պատրաստ գտնայ .
այս եղանակաւ ահա երեք ազգաց
գերեզմանաստուններն ալ նախ անառ-
նոց արածելու տեղ չըլլալէ ՚ի զատ՝
հասարակութեան ոտնակոխ ըլլալէն

ալ կ'աղատի, և մենք ալ ՚ի զուր տեղ
 իրարու սիրտ չենք վիրաւորեր : Այն
 առաջարկութեան մէջ միասը միայն
 Հայոց աղդին պիտի ըլլար . վասն զի
 թէ երկու դրան տեղերը եւ թէ
 դոնապանաց համար շինուելիք սե-
 նեակներուն տեղը Հայոց աղդին գե-
 րեղմանատընէն պիտի առնուէր եւ
 միշտ ալ Հայոց աղդին գերեղմանա-
 տունն երկու աղդաց ոտից տակ պի-
 տի մնայր յաւիտեան : Ոյր վասն ՚ի
 հարկէ այս խորհուրդը մենք պիտի
 հերքէինք և հերքեցինք իսկ . և միան-
 գամայն մենք ալ մեր կարծիքը յայտ-
 նեցինք, որ և ոչ մէկին սեպհականու-
 թեան չդպչելէ ՚ի զատ, շատ ալ պարզ
 էր և դիւրին, այսինքն՝ Հայոց և Յու-
 նաց գերեղմանատան մէջ տեղէն ճա-
 նապարհ մը բանալ երեք կանգուն
 լայնութեամբ . որով ամենայն դիւ-
 րութեամբ և խաղաղութեամբ Հա-
 յոց և Յունաց գերեղմանատուններն
 իրարմէ պիտի որոշուէին . նոյն ճա-
 նապարհը ըստիք եթէ ուղեմբ, բայց
 կը թողումբ հասարակաց երթեւե-

կութեան համար . և եթէ ուղեմք ,
 երկու գլուխը երկու դուռ դնեւ
 լով կը փակենք : Հայոց և Յունաց
 քով մէկ մէկ բանալի կը դտնուին ,
 երբ պէտք ըլլայ , իրենց բանալով կը
 բանան կը դոցեն երկու աղդն ալ .
 այս երկու եղանակն ալ կարելի է և
 շատ ալ դիւրին : Ամանապէս ալ Հայոց
 և լ ատինաց գերեզմանատանց մէջ
 տեղը եղած պատն ալ երկու աղդաց
 ծախիւք և գիտութեամք կը շինուի .
 ինչպէս արդէն նոյն սկատին մէջ տրն .
 կուած քարերն ալ կը յայտնէին քէ
 նոյն խոկ շինուած ժամանակն ալ այդ .
 պէս եղած է . և լ ատինք իրենց դու .
 ռը իրենց արեւմտեան կողմը կից ե .
 ղած թագաւորական պողոտային կող .
 մէն կը բանան , այսպէսով երեք աղ .
 դաց գերեզմանատունները ամենայն
 դիւրութեամք իրենց պատերովը ո .
 ըոշուած և առանձին առանձին կը կ .
 պանքի տակ մնացած կ'ըլլար , և այսօր
 ալ այս սրատամաշ դատին սկատմառ
 ըլլալու առիմներ երեւան չէր ելլար .
 “Այլ այս մեր օրինաւոր առաջար-

կութիւնն ինչպէս որ ինքնին յայտնի է
 խաղաղասէր անձանց , 'ի հարկէ । աւ
 տինաց խռովասէր սրտին ծանր պիտի
 դար և եղաւ այնպէս . վասն զի եթէ
 դործը այս եղանակաւ սկսուէր, անոնց
 շար և յափշտակիչ խորհուրդը իրենց
 սրտին մէջ պիտի խղդուէր մնար . և
 իրենց նպատակին հասնելու համար
 միջոցը պիտի սկակսէր և չպիտի կըր-
 նային իրենց ըրած խորհուրդը գլուխ
 հանել 'ի վեսա երկուց ազգացս , մա-
 նաւանդ Հայոց ազգին : Երբ այս խա-
 ղաղասէր առաջարկութին լսեցին , զոր
 արդէն Յունաց Ամեն . Ա. Պատրիար-
 քըն ամենայն սիրով ընդունած էր , 'ի
 խոր խոցեալ խռովեցան । ատինք , և
 վաքր մի յառաջ իրենց այն քաղցր և
 հեղ խօսուածքը եղբայրսիրութիւները
 զոր առատօրէն կը խոստանային մեղ ,
 առ 'ի պաշարել և խաբել , և որովրդէ
 մեղ զբաղեցուցած իսկ էին քանի մը օր
 առ 'ի օրինաւոր սկատրաստել իւրեանց
 մեքենայութիւնները 'ի դառնութիւն
 փոխեցին , որով և բոլոր ջանքերն և աշ-
 խատութիւնները անօգուտ եղան :

Հայք և Յոյնք մինչդեռ այս սրբ-
տամաշ եղելութեանց վրայ կը խոր-
հեինք և ելք մը գտնալու համար
ուրիշ եղանակ կը մտածէինք, մեկ մը
ալ լսեցինք որ Կատինք իրենց գե-
րեզմանստան պատը սկսեր են շինել
կայծակի արագութեամք, և երբ հար-
ցուցինք թէ այդ ինչ ընթացք է որ
բոնած էք, ոչ ապաքէն դարձեալ
խորհրդակցէինք պիտի, և որ և իցէ
կերպիւ համաձայնութեամք սկսի
սկսէինք. այժմ գուք բոլոր ձեր ըսած-
ները մոռնալով անոր հակառակը ՚ի
դործ կը դնէք. և եթէ մոքերնիդ
բարի է, ինչու այդպիս առանձին,
ինչու առանց լուր տալու մեղի, և
ինչու այնիքան կայծակի արագութէ
կը դործէք. միթէ անկարելի բան մի
էր անոր միջոցը գտնալ, կամ համո-
զել և կամ համոզուիլ:”

Պատասխան տուին անոնք մեղի
ըսելով թէ, “Եյ՛ մենք ալ այնպիս
ըլլալը գիտեմք, և կ'ուղէինք ալ, որ
և իցէ կերպիւ վերջմը տալ, այլ երբ
նայեցանք որ գուք պատ շինելու միտք

չունիք, եթէ ձեղ մնայ, շատ սկսի
ուշանայ, մեզի ալ մեր Տէրութիւն-
ներէն սաստիկ հրամաններ կան որ
առանց ժամանակ անցընելու գերեզ-
մանատան պատերը լրացընեմք, վասն
որոյ ձեղ լուր տալու հարկ չմնաց:—

“ Անդ այս բանիս վրայօք ինչ որ
կարելի էր լնել՝ ըրինք Իզդէլք փա-
շայի օրով. և անձամք ինքը եկաւ
նոյն տեղը, ինչպէս յառաջադոյն ալ
պատմուեցաւ, և անոնց երեսին ը-
սաւ. “ Իրաւունք չունիք Հոյոց գե-
րեզմանատան վրայ դուռ ձգելու, քա-
նի որ արեւմտեան կողմը թագաւու-
րական ճանապարհ կայ: Ես Դուտուա
Ութասարրքը ըլլալովս այդ տեղ
Հոյոց իրաւանյ վրայ ձեր դուռը
չեմ ճանաչեր ո: Բայց ով էր լսողը.
Ութասարրքին ըսած խօսքերը բո-
լորովին ասկարդիւն մնացին, վասն զի
արդելու չկարողացաւ. ահա այն է,
որ մնաց. քանիցս անդամ ի. Դուռն
ճանձրացուցինք, այլ անօդուտ. և չեմք
գիտեր թէ ինչո՞ւ համար մեր գործե-
րը այսպէս երեսի վրայ կը մնան:

« Ահա վսեմ. Տեարք, պատմեցի
 ըստ ձեր Բարձր Հրամանի, ըստ Ս.
 Պատրիարքը. և ահա ականատես եղաք
 Օսմանեան բարեխնամ Տէրութեան
 այսքան դարերէ ՚ի վեր հաւատարիմ
 հպատակին այս Փրանչիսկեան միա-
 բանութեան երեսէն քաշած անտա-
 նելի նեղութիւնները, հալածանք-
 ները և ըրած կորուստները զորս Փր-
 րանչիսկեանք յափշտակած են և դեռ
 այսօր նոր իրաւունքներ յափշտա-
 կելու ձեռք կը զարնեն : Ուրեմն
 Տեարք իմ, կը խնդրեմ իմ կողմէս իմ
 Վեճազօր և խնամաւատ թագաւորիս
 հաւատարիմ հպատակ այսոց ազգին
 իրաւանց կորուստեան կոկիծները ։ Ե.
 Վեհափառութեան իմացուցէք, և
 Նորին հայրական քաղցր ակնարկու-
 թիւնները և գթութիւնները խոր սիրե-
 լի հպատակին իրաւանց վրայ դարձը-
 նելու միջնորդեցէք . և եթէ Դուք
 Վսեմ, Տեարք, այսքան մանրախոյզ
 քննութեամբ յայտնի տեսնելէն և
 իմանալէն յետոյ դարձեալ զանց պի-
 տի ընէք, ինչպէս ըրին Չեր նախորդ

ները, կը խնդրեմ այս օրեն ասացէք
ում զիմեմ, զնվ աղաչեմ, զնվ միջ-
նորդ գտնամ, ասացէք ինձ կ'աղա-
չեմ, զի այս ցաւերը զորս Գրանչիս-
կետնք հետղիւտէ հասուցած են մեղ
և միշտ կը հասցընեն, ալ անտանելի ե-
զած են մեղ և անհամբերելի։ Ասացէք
Տեարք, եթէ բարեխնամ Տերութիւն
չուզէր մեր աղաչանքները լսել, մեր
կորուստները տեսնել, որ երբէք չեմ
յուսար, ասացէք մեզի վասն զի մենք
հոս այս մարդկանց ձեռքը դերի և
խաղալիք եմք եղած։ ալ չպիտի համ-
բերեմ, և ամենայն զօրութեամբ պի-
տի բողոքեմ և չպիտի դադարիմ ՚ի
բողոքելոց :

“ Վեճաղօր Օսմանեան Տերու-
թեան Վեհափառ թագաւորին մե-
րոյ, ըստ Վանմ։ Վալի փաշայն, եր-
բէք չներեր իւր հպատակասէր բը-
նութիւնը, որ իւր իշխանութեան
տակ գտնուած հպատակաց արդար
իրաւունքը կորսուի. ասոր յայտնի ա-
պացոյց կրնայ սեպուիլ ձեր սուրբ
Յակովը տաճարին խնդիրը որ այ-

սօր աչքերնուդ դիմացն է, որուն համար ահա յատուկ հրամաններ եւ քննիչ խրկեց ՚ի Պօլսոյ Նորին Ա Ե Հավառութիւնն , և զմեղ ՚ի Դամասկոսէ կոչեց :

“Այս, եղած է ժամանակ որ Տէրութեան օրինաւոր չեն կրցած հասկրցնել և վեր ՚ի վերոյ հասկցուած բաներուն վրայօք ալ յանկարծ վրձուահատութի չկրնար ըլլալ և ըլլայ ալ օրինաւոր չէ, ոյր վասն կ'երկարի երբեմբն միջոցը, բայց ոչ երբէք կը մօռցուի , այլ երբ օրինաւոր կերպիւգործին խակութիւնը կը յայտնուի և կղտուի, խակոյն արդար վճռահատութիւնն ալ վրայ կը հասնի . ասոր պէս ալ նայեցէք այս գործերուն մէջ որքան կնճռալի կէտէր կան , որ մենք երբէք չէինք գիտեր , և չէր ալ յուսացուեր , որ այս աստիճան հակառակութիւններ եղած ըլլան , անյօւսալիք բաներ , անլսելի խարդախութիւններ գուրս ելաւ լցուեցաւ , է որ դուք անձամբ պատմեցիք , և է որ դորձը ինքնին յացանեց . ՚ի հարկէ այս մեր

տեսածները, քննածները և լսածները
բոլոր պիտի տեղեկագրեմք ի՞ն. 'Դրան
և պիտի ծանուցանեմք մի ըստ միովէ,
և ի՞ն. 'Դուռան ալ ըստ այնմ կը տնօրիւ-
նէ. ուրեմն դուք երբէք կասկած մի
ընէք. արդարապէս դրել, և բանին
ձիշտէութիւնը հասկըցընելմեր պար-
տաւորութիւնն է, ուրեմն դուք մի
ամիտ կացէք, "ըսելով վերջացուցին
թէ վսեմ. Վայ փաշայն և թէ
վսեմ. Ո՞իւնիք էֆէնտին իրենց խօս-
քերը :

'Դարձեալ Վսեմ. Վայ փաշայն
յաւելցուց ասել թէ "Փամթրիք տօս-
թումուղ, ձեր ըսածներէն շատ բա-
ներ հասկցուեցաւ. և շատ մը մութ
մնացած պարագայներ լուսաւորուե-
ցան, բայց ինձ այնալէս կը թուի, որ
նոյն դռները այդպէս անիրաւաբար
ձգուելուն գլխաւոր պատճառ մը պի-
տի ըլլայ, վասն զի ինչպէս որ թէ ի-
րենց քաշած յատակագիծը (խարդան)
թէ ձեր քաշածը յայտնի կը ցուցընեն
որ լատինաց դերեղմանատան արեւ-
մտեան կողմը օրինաւոր ճամբայ կայ

և իրենց աւելի դիւրին է անկեց դուռ
բանալ, այդ մարդիկները այդքան իւ-
րաւունիք չճանցողներէն չեն, ՚իհարկէ
դիտեն. բայց ի՞նչպէս կարելի է որ իւ-
րենք ըստ իրենց քմաց այլոց իրաւանց
վրայ դուռ ձգեն, բոլոր աշխարհի
և Տէրութեանց հակառակ է այդ և
կատարեալ բռնութիւն. ուրեմն եւ-
թէ այս բանիս յատուկ պատճառ մի
կայ թէ՛ ձեր և թէ լատինաց կողմա-
նէ, այն ալ եթէ իմացընէք, աւելի
լաւ կ'ըլլայ, դուցէ դործին ալ աւելի
դիւրութիւն կ'ընծայէ. բաէք ուրեմն:

“ ՚իանի որ ՚Չեր Ա սեմութիւնը կը
խուզարկէ. և կը կամի իմանալ բռն
խել արմատն սոյն սրտամաշ դործոյն,
ուրեմն սլարտաւոր եմ ՚Չեր Ա նեծու-
թեանը պատմել նոյն խել արմատա-
կան սլատճառը, ըստ Ա. Պատրիարքը
ևսկսաւ այսպէս սլատմել միքատմիոցէ:

“ Այս գերեզմանատան դռներուն
խնդիրը ուրիշ խնդիրէ ծագած է որ
շատ հետաքրքրական է, և նոյն դռներուն
ձգուելուն մէջ եղած դաղտնի
նպատակը յացնել չեն ուղեր | ա-

տինք . վասն զի իրենց ըրած յայտնի
 անիրաւութե՛ իրենք վկայած կ'ըլլան ,
 բայց ես կը յայտնեմ Ասեմափայլ
 Տեարք : Ինչպէս յատակագծին մեջ
 կ'երեւի , Ո . Այօն լերան վրայ | ատի-
 նաց գերեղմանատան կից սլարտէղմի
 ունիմք մեղ Հայոցս սեփհական . | ա-
 տինք իրենց միտքը դրած են 'ի վա-
 զուց նոյն սլարտէղէն բաւական մե-
 ծութեամբ մաս մը , այսինքն՝ 750 կան-
 գուն գետին իրենց կողմը կորզել որ
 և իցէ եղանակաւ , ինչպէս ըրած են
 իրենց գերեղմանատան մեկ մասը զոր
 վերը յիշեցինք , որով իրենց գերեղ-
 մանատունն աւելի ընդարձակել . և
 այս խնդիրը ժամանակ ժամանակ մեղ
 առաջարկեցին թէ և զանազան եղա-
 նակաւ . այսինքն երբեմն իբր շնորհը
 և 'ի սէր եղբայրութեան խնդրելով ,
 երբեմն ուրիշ տեղի հետ փոխել ու-
 ղելով . երբեմն սպառնալիքներով ահ
 և սարսափ ձգելով իրենց պաշտպան
 եղող Տէրութեանց անունով . երբեմն
 միշտ հաշտ ակամք նայելու պայմա-
 նաւ , և երբեմն մեծ մեծ խոստմունք

ներ ընելով . լաւ ևս է ասել խաբել
 կամելով զմեղ իբրև տհաս մանուկ ,
 ինչպէս Վեսարիոյ մէջ այն Հրէայն ,
 որ իւր խորամանկ խաբեքայ բնու-
 թեամբն յափշտակել կը ջտնալր տը-
 զուն ձեռքէն պատուական ոսկին .
 Ասոնք կը կարծեն թէ Հայոց միաբա-
 նութիւնը Ոիօն լերան վրայ ունեցած
 իւր սեփական տեղին յարդը և պա-
 տիւը չդիտեր : Այլ երբ տեսան որ
 անոր յարդը իրենց կարծածէն աւե-
 լի լաւ գիտէ , և գիտնալով լ ատինաց
 այդպէս խարդախ խնդիրները մեր-
 ժեր էր և պիտի մերժէ յաւիտեան ,
 քանի որ չեն ճշմարիտ չեն արդար և
 չեն անխարդախ Երբ այս եղանակնե-
 րով Հայոց միաբանութիւ չկարողացան
 խաբել , ելան այս գերեղմանատան
 պատերը շինելու խնդիրը հնարեցին .
 այսինքն՝ յանիրաւ տեղը Հայոց գե-
 րեզմանատան վրայ Երկու դուռը մէ-
 կէն ձգել . և մենք որքան խորհեցանք
 և խօսեցանք , բողոքեցինք , իրաւունք
 պահանջեցինք , և այն . ամենն ալ ՚ի-
 պերէւ ելաւ , քանզի մտիկ լնող ըս-

կար, քանզի Տէրութեան պաշտօնեա-
 ներն անդամ բարեխնամ Յագաւո-
 րիս հրամանները կատարելու դժուա-
 րութիւններ կը հանէին . ՚ի հարկէ
 այն անվայել էնթիմերու երկիւղէն
 խեղճ Հայոց ազգին արդար սեպհա-
 կանութեան իրաւունքը ոտքի տակ
 պիտի երթար, սիմի բռնաբարուեր,
 բողոքը, լալը, ողբալը, աղաչանքը,
 պաղատանքը անխելի պիտի ըլային,
 ինչպէս որ եղաւ : Լատինք յաղթու-
 թեան դռները հաստատեցին իբրեւ
 Փարիզի յաղթութեան կամարը, Փա-
 րիզի շնորհիւ, սկսան յաղթութեան
 դռներէն մանել ելել ՚ի նախատինս
 Հայոց միաբանութեան, կարծեցին
 որ եղաւ կառարեցաւ . բայց զրկեալ
 Հայոց միաբանութիւնն կ'աղաղակէր
 և ասէր . զրկեալ եմ յարդար և սեպ-
 հական իրաւանցս՝ շնորհիւ
 կ'աղաղակէմ առ Լատինս և չկամիր
 լսել և իմ իրաւունքս ետ դարձնել.
 կ'աղաղակէմ առ Քաղաքապեան, նա-
 եւս ոչ կարէ զիմ իրաւունս կորզել
 բռնաւորին ձեռքէն . կ'աղաղակէմ

առ Բ. Դուռն , և նա ոչ դիտեմ
 ինչու իմ խնդիրներուս կարեւորու-
 թիւն չտար և չպատասխաներ . թէ
 և այս աղաջանաց ձայնը չէր լոււեր ,
 բայց զրկողին ականջին սուր աղդե-
 ցութիւն կ'ընէր , իրեն խիղճը ներ-
 սէն զինքը կըտագնապէր : Այս խրլ-
 ճահարութենէն ալ աղատելու հա-
 մար և Հայոց միաբանութեան բե-
 րանը գոցելու համար որ չաղաղա-
 կէ , միջոց մը գտնելը չուշացուցին
 Վրանչիսկեանք , և յաջողեցան ալ և
 գտան իրենց կամակատար կաթօլիկ
 Գօնսօլողին մէկը , որ նախ իւր կող-
 մանէ և յետոյ նոյն միաբանութեան
 կողմանէ շատ թախանձանօք կը խնդ-
 րէր նոյն վերոյիշեալ սլարտիղին կտո-
 րըն և կ'ըսէր , թէ « Եթէ կը հաճիք
 տալ նոյն կտորն , ես Վրանչիսկեան-
 ները կրնամ համոզել որ նոյն ձեր ի-
 րաւանց վրայ բացուած երկու դրու-
 ներն ալ բոլորովին ձեր ուղածին պէս
 անյայտ կերպիւ գոցուին : Երբ սյա
 խնդրոյն բացասական պատասխան
 տրուեցաւ , ուրիշ անդամ մի դար-

ձեալ գալով ըսաւ . “ Եթէ կամիք նոյն
կտորն տալ , դռները դոցուելէն զատ՝
նոյն պարտիզի կտորի արժողութիւնն
կամ անոր փոխարէն գետին մը կու-
տանք : ” — “ Պ . Հիւպատոս , ըսի , նոյն
տեղին համար դրամ չեմ ընդունիր ,
այլ տեղի հետ կրնամ փոխել երբ ու-
զած տեղս ըլլայ , այնպէս որ գոնէ
կորսնցուցած տեղիս ցաւը ինձ մառ
ցընելու չափ արժողութիւն ունենայ :
— Բատ՝ շատ լաւ , ըսէ , որ տեղ կ'ու-
ղես : — Բայ ! Գեթսեմանի ձորին մէջ
Ո . Սատուածածնայ գերեղմանին մօտ
լատինաց պարտէղը , ուր կան ութ
հատ հնագոյն ձիթենւոյ ծառք ողջու-
նի ծառուք կոչուած , Քրիստոսի աղօթա-
տեղւոյն մօտ : Երբ այս լեց Պ . Հիւ-
պատոսը , ժաղտեցաւ և ըսաւ . “ Ո՞ի-
թէ կարելի բան է այդ . և ի՞նչպէս
կրնայ լինիլ : ”

“ Ուրեմն ասացի ես ոլ , ի՞նչպէս
կրնայ լինիլ Ո . Վիօն լերան վրայ
750 կանգուն գետին ոչ ինչ տեղի
մը հետ փոխել . Չեր մեծութիւնը
միթէ ընդիտեր , որ մեր տեղը ոչ թէ

միայն մեղ համար , այլ ամենայն աղքաց համար եւս Ո. Ո.իօն լեռան անունով պանծալի և տօնելի անուն միէ (մուգատառէս) , ձեր տալիք տեղէն աւելի յարգի և աւելի մեծ , ուրեմն մտքերնիդ ինչ է . ոչ ապաքէն դուք ըսիք թէ ուղեցէք | ատինաց ձեռքը գտնուած տեղերէն որ տեղ որ կ'ուղէք , և ես ըստ այնմ ասայի . ահա , եթէ չէք կամիր , շատ լաւ . մեր գետինը մեղ պէտքէ : ” Այս բանին վըրայ շատ մը խօսակցութենէ ետքը վերջապէս այն օրն ալ գնաց : —

Դարձեալ ուրիշ օր մի ալ գալով նոյն հիւպատոսն , կ'աղաշէր և կ'ըսէր . “ Ուղղակի ինձ համար կը խնդրեմ , ինձ պառկելու տեղ ընելու համար շընորհք ըսէք , ես իմ գերեզմանս պիտի շինեմ նոյն տեղը իմ անձիս համար , և այլն : —

“ Այսացի , ♩ . Հիւպատոս , դուք ինչու համար այսպէս չօր և ցամաք տեղէր պիտի պառկիք . դնացէք ձեր այն զուարժալի , ջրով , խոտով և ծառով և ծաղկօք լի Եւրոպայն , հոն պառ-

կեցէք . քանի որ այնպէս հայրենիք ու-
նիք , կարեւորութիւն չկայ ձեղ դաւ-
ինձ նոյն կտորին համար այնքան աղա-
շելու և ինձ չլաւլու : — Ես օրը կ'ե-
րեւար որ իւր լեզուին տակը բան մը
կար , կ'ուղէք դուրս հանել , բայց
հանելու դժուարութիւն կը կրէք ,
խօսքը շատ մը ասդին անդին պտըո-
ցընելէ ետքը ձեռքս բռնելով վեր-
ջապէս համարձակեցաւ սոյն հետա-
գայ խօսքերը արտասանել բերնէն ,
այսինքն՝ թէ կ'աղաշեմ դուք այս կը-
տորը | ատինաց շնորհեցէք, և ես նոյն
շնորհքին տակը չեմ մնար , և զձեղ
դոհ ընելու չափ կ'աշխատիմ , և այն : —

“ Բոի , Պ . Հիւպատոս , սյդպէս ան-
նշան խօսքերէ և մութ խնդիրներէ
բան չեմ հասկընար . կը խնդրեմ ձեր
խօսքերը բացայատ խօսիք՝ թէ ի՞նչ
ըսելէ եթէ նոյն գետինը ձեղ տըր-
ուի , զիս դոհ ընելու չափ ձեր աշ-
խատիլը : —

“ Այս ըսել կ'ուղեմ ըստւ , դուք
շնորհեցէք նոյն գետինը | ատինաց ,
և ես խօսք կուտամ ուղղակի ծանու-

ցանել Կայսեր ձեր ըրած առատաւ
ձեռնութիւնը . և նոյն տեղին յար-
դը եւս կը ծանուցանեմ Տէրութես,
և 'ի հարկէ անոր փախարէն
ձեղ համար Կայսրը օրինաւոր բան մը
կը դրկէ , „ և այն :

“ Հիմա իմացայ Ձեր աշխատու-
թիւնն , մեծապէս շնորհակալ եմ Պ .
Հիւպատոս ըսի , այդ աշխատութիւ-
նն համար մի կրէք . այդ թող մնայ .
կեցիք Ձեղ բաելիք ունիմ : Այդ խօս-
քը ձեր բերնէն հանելու համար կը-
րած նեղութիւննիդ ինձ համար բա-
ւական է . դուք Պ . Հիւպատոս , այդ
խօսքը ձեր բերնէն հանելու չէիք . այդ
խօսքը ձեզմէ չլած , գուցէ կարելի էր ,
թէ և չէր , այլ քանի որ այդ խօսքը
ձեր բերնէն ելաւ , ահա այժմ ամե-
նա - անկարելի եղաւ այդ գետինը | ա-
տինաց որ և իցէ կերպիւ տալը . վասն
զի ձեր այդ խօսքը Պ . Հիւպատոս ,
ինձ համար անտանելի է . դուք ի՞նչ
կարծեցիք Հայոց Պատրիարքը , այս-
պէս սնոտի բաներու խաբուելով իւր
Եզդին սեպհականութիւնն (որու վրայ

իր անձը դրած է) օտարաց կը շնորհէ
կարծեցիք՝ ի նախատինս իւր անուանը
աղգաց յաղգու : Քաւ լիցի, չայոց
Պատրիարքը այդ ստորութիւնն ըս-
կրնար ընդունիլ. այդպէս մնոտի բա-
ներով չկրնար փոխանակել իւր սիրել-
ին Ազգին օրինաւոր և նուիրական ի-
րաւունքը. ասա ինձ, քո Կայսերդ ինձ
դրկելիք պատուանշանին արժողու-
թիւնն քանի հարիւր ուկիի արժո-
ղութիւն կրնայ ունենալ. Թող ըլլայ
հինգ հարիւր լիրայի, առաւել եւս
հաղար լիրայի, ասկէց աւելի կարելի
է : Ոչ, ըսաւ Պ. Հիւպատոսն, և ոչ
երեք հարիւր լիրայի, գուցէ ըլլայ եր-
կու հարիւր կամ երկու հարիւր յի-
սուն լիրայի, բայց և այնպէս գիտէք
որ արժողութեան վրայ չէ թագաւո-
րաց տուած պարգեւը, միայն անունը
բաւական է, և դինն անգին . և ձեզ
համար մեծ պատիւ կը սեսլուի :

“ Ինձ համար մեծ պատիւ և ան-
գին գանձ և բարութիւն՝ իմ սիրելի
Ազգիս իմ ունեցած պարտաւորու-
թիւնս ճանչնալս է. իմ Ազգային սեսլ-

Հականութեանց և իրաւանցս վրայ
 օրինաւորապէս և հաւատարմաբար,
 ըստ իմ պարտաւորութեանս հսկելս
 է, և նոյն պարտաւորութիւնս կատա-
 րելէս կը ծագի այնպիսի մեծ պատիւ-
 մը, որ ասկից աւելի մեծ և անդին
 դանձ և պատիւ ինձ համար չկրնար
 գտնուիլ 'ի ներքոյ արեգական : Եւ
 դուք Պ. Հիւպատոս կը զարմանամ
 թէ Բ'նչպէս համարձակեցաք առա-
 ջարկել այնպէս վատ և ամենավատ
 խնդիր մը . և յումմէ ստիպուեցաք,
 և ով յորդորեց զձեղ այդպէս ցուրտ,
 անլի առաջարկութիւն մը ընել դի-
 մացնուդ մարդուն բնաւորութեան
 վրայ առանց տեղեկութիւն ունենա-
 լու : Դիցուք թէ Ձեր թագաւորին
 ինձ զրկելիք պատուանշանն իմքիչ մը
 յառաջ ըսածիս չափ մեծ արժողու-
 թիւն ունենայ, և ձեր ըսածին չափ
 ալ մեծ պատիւ բերած ըլլոյ իր հե-
 տը . ես ինչո՞ն պիտի ստիպուիմ այն
 արժողութեան և այն պատուոյն խա-
 բուելու . միթէ իմ սիրելի Վզգս և
 իմ բարեխնամ Տէրութիւնս 'ի պա-

տիւ իմ Ազգիս պակաս թողուցեր է .
և զրկե՞ր է զիս այն պատիւներէն , ոչ
ապաքէն կուրծքիս վրայ լեցուած է
արդէն . Եթէ երբէք չունենամարդին
չու համար այդ անարդ անունն վրաս
առնեմ իմ ազգային սեպհականու
թիւնս իմ սիրելի Ազգիս արեամբը
գնուած գետինը սյլոց շնորհելով իր
բեւ անհաւատարիմ և իրբեւ մատ
նիչ . քաջ գիտցէք Պ . Հիւպատոս ,
մարդ աշխարհիս վրայ միայն անուան
համար կ'ապրի , և այն՝ բարի անուան ,
վասն զի ըստ գրոյն՝ “ | աւ է անուն
բարի . քան զգանձս բաղումն : ”

“ | այս խօսակցութիւներէն յառա
ջացած սրտիս կակիծը չկրնալով զապել
գլխիս վեղարէն գնտասեղ մը (թօփւ
լու) քաշելով ըսի իրեն . Կայեցէք Պ .
Հիւպատոս , այս գնտասեղին հատը
մէկ փարայ կամ երկու հատը երեք
փարայ կը ծախուի , բայց երբ իմ Ազ
գը կամ իմ թագաւորս իմ պաշտօ
նիս մէջ հաւատարիմ գտնուելուս
համար մէկ հատիկ սյսպէս գնտա
սեղ մը զրկեն ինձ՝ գլխուս վեղարին

գործածելու համար, ձեր լինջութեն
 ձեռօք ձեր թագաւորէն դալիք հա-
 ղար լիրայի արժողութեամբ պատուա-
 նշանէն և իւր հետը բերելիք պատիւ-
 էն աւելի մեծ պատիւ կը համարիմ
 ինձ . իմացա՞ք հիմո Պ. Հիւպատոս
 այսոց Պատրիարքին տմարդի բնա-
 ւորութիւնն : Ահա երբեմն այսպէս
 օդտակար կարծուած առաջարկու-
 թիւններ որ առաջարկողին աչքին
 մեծ կ'երեւայ , այլ երբ առաջար-
 կողը առանց որոշելու բնդունողին
 բնաւորութիւնն առաջարկէ , այսպէս
 այն պատուական շնորհքը իւրաքար-
 քը կը կարսունցընէ : Ես չեմ կընար
 իմ Վզդիս և Տէրութեանս դէմ ան-
 հաւատարիմ գտնուիլ սնոսի և ան-
 ցաւոր պատուանշանի մը համար . կը
 խնդրեմ Պ. Հիւպատոս ոչ այս առա-
 ջարկութիւնն և ոչ նոյն գետնին խըն-
 դիրը կըկնէք ինձ ուրիշ անգամ , ե-
 թէ կ'ուզէք մեր քարեկամութեան
 կապը չխղել , և կը խնդրեմ ներողա-
 միու եղիք իմ պարաւորութենէս
 ստիպեալ ըստծ խօսքերուս ծանրու-

թեանը, զորս համարէ թէ յակամայից
ստիպուեցայ արտասանելու; զոր դուք
այ գիտէք :

“Պ. Հիւպատոսին այս բանին վը-
րայօք խօսածները իմ անձիս գովու-
թեան վերաբերելուն համար զանց
կ'ընեմ Զեր Ասեմութեան պատմե-
լու . այսքանը իմացէք որ բոլոր ը-
սածներուս իրաւունք տալէն ետքը,
ամենայն սիրով բաժնուեցաւ մեզմէ:

“Ահա Ասեմ. Տեաքք, կոտարե-
լապէս իմացաք Ախօնի գերեզմանաւ-
տան խնդրոյն ծադման բուն աղքիւ-
րը, և տեսաք որ (Օսմանեան բարե-
խնամ Կայսեր հաւատարիմ հպատակ
Հայոց աղգը ո՞ր առինձան նեղու-
թեանց եւ տառապանաց տակ ընկ-
ճեալ իբրեւ գերի կեանիք կը վարէ,
այսպէս օտար ժողովրդոց և օտար
աղղեցութեան ձեռքէն, որք որ և
իցէ կերպիւ բոլոր Ճիգերնին կը թա-
փէն մեր և մեղապիսի Տէրութեան
հարազատ հպատակաց ձեռքը գըտ-
նուած սեպհական ստացուածքները
յափշտակելու և իւրացընելու հա-

մար, մինչեւ անդամ Հիւպատոսաց
և 'Դեսպանաց ձեռօք ինչ գաղտնի
գործեր կը դառնայ, զորս միայն Առ
տուած դիտէ:

"Ահա ինձ ինչպէս որ պատահեցաւ
Զեր Ասեմութեան առջեւ մի ըստ
միոջէ պատմեցի . և դուք լսեցիք
Տեարք իմ, այս գործիս մէջ դարձած
մեքենայութիւնները . դուք ինքնին
դատեցէք եւ մեր իրաւունքը մեղ
դարձուցէք . Ծէֆքեաթլը Կաֆէնտի-
միզ Փատիշահըմիղըն ազիղ պաշը ի-
շիւն օլսուն, վէ սէլամ: "

Եւ այսպէս վերջացաւ Առւրը Տե-
ղեաց խնդիրը եւ տեղեկագրեցաւ
եւս Ի. Դուռն . դեռ կ'լսպասեմք
նոյն խնդրոց համար ելլելիք արդար
վճիռներուն որ մենք ալ մեր կորու-
սած սեպհական իրաւանցս Տէր ըլ-
լամք . ՚ի հարկէ այն այ մօտ է Այէի
շահանէտէ :

Այնչդեռ Արքաղան Պատրիարքը
հանդերձ համայն իւր Այսաբանու-
թեամբ սուրբ Յակովայ և սուրբ
Փրկչայ Հայոց սեպհական վանքերուն
անցեալ տարուան անցքերը յիշելով
և քանիցս անդամ է . Դուռը թէ
սուրբ Երուսաղեմէն և թէ Պօլիս
աղգային Վարչութեան կողմէն տըր-
ուած խնդիրներուն պատասխանին կը
սպասէին ակնդէտ, որ Փրկչայ վանքին
մէջ լատինաց պատարագ ընելու օրն
հասաւ Այսիս 17, յերկրորդ աւուր
Պէնտէկոստէի : Քանի որ սոյն օրը կը
մօտիկնար, այնքան ալ լատին միաբա-
նութեան և իւր ժողովրդեան կողմէն
շըուկները կը շատնար: Վասն զի սպա-
սուած փրկարար հրամանները ուշա-
ցաւ և սուրբ Քաղաքիս Վսեմ: Առւ-
թասարուֆ Ալի պէյն ալ նոր եկած
ըլլալով, անցեալ տարուան անցքերուն
բոլորովին անծանօթ էր . ուստի հարկ
եղաւ Արքաղան Պատրիարքին, նորին

Վ սեմութեան քով երթալ թէ օրեւ
 րուն մօտիկնալը և թէ մինչեւ ցարդ
 տրուած խնդիրներուն պատասխան
 ներուն ուշանալուն պատճառն իմա-
 նալ, և հարցնել թէ արդեօք ինքը լի-
 ովին տեղեկութիւն ունի այս գործե-
 րուն վրայօք : Ա, որին Վ սեմութիւնն
 պատասխանեց թէ, քանի որ ինքն
 ոք Քաղաքը եկած է, նոյն գործերուն
 վերաբերեալ հրամաններ երբեք եկած
 չեն, և ոչ ինքն այդ գործերուն եղե-
 լութեանը վրայօք տեղեկութիւն ունի:
 «Պօլիս եղած ժամանակս, յաւեցուց
 նա, հարեւանցի լսեցի . բայց և այն-
 պէս կատարեալ տեղեկութիւն ու-
 նիմ ըսել չէ այդ : Ուստի թէ և ես
 կ'ուղէի յատուկ այդ գործին համար
 ձեր հետ խօսիլ, և տեղն ՚ի տեղն իւ-
 մանալ, այլ կը կարծէի որ գեռ բաւա-
 կան օր կ'ուղէ 】 ատինաց պատարա-
 գելուն, իսկ քանի որ օրերը մօտիկցած
 են, ուրեմն խնդրեմ որ օրինաւոր կեր-
 պիւ եղելութիւնը ինձ ճիշտ իմա-
 ցընես ինչպէս սկսուիլն, և հիմայ որ
 կէտին եկած հասած ըլլալ : »

Պստ խնդրանաց Ա սեմ. Այութաւ
ասրութ Պէյին պատմեց Արբաղան
Պատրիարքն մի ըստ միովէ որ ժաման
նակէն մնալն, դատին ինչպէս սկսուիւ
լըն, ետքէն պատահած պատահարնեւ
րըն, անցեալ տարի Ե. Դրօն հրա
մանաւ սուրբ Քաղաքս Եկող Ա սեմ.
Վալի փաշային և Ահւնիֆ Եփէնա
տիին և Դամասկոսի Գաղղիոյ Հիւ
պատոսին ներկայութեամբ այս խըն
գիրներուն յառզուիլն ըստ կարգի ինչ
պէս որ պատմուեցաւ մինչեւ հիւմայ
Աիօն հանդիսին միջոցաւ . և այս քըն
նութեան արգեսնց տեղեկագրին
Պօլիս զրկուիլն եւս իմացուց :

“ Բ սած տեղեկագրին Պօլիս զըր
կուիլը լաւ դիտե՞ք . ” Հարցուց Ես
րին Ա սեմութիւնն :

“ Պօլիս զրկուիլը լաւ չեմ դիտեր,
ըստ Արբաղան Պատրիարք, այլ սա
միայն դիտեմ որ Ա սեմ. Վալի փաշա
յին ասկէց բաժնուելու միջոցին՝ երբ
թախանձանօք իրեն հարցուցի թէ,
“ Ա սեմ. Տէր, դուք կ'երթաք բար
եաւ և խաղաղութեամբ, բայց մեր

գործերը ինչպէս եղան, և ուր կայացան : » Պատասխանեց թէ՝ « Դուք միամիտ եղիք . մեր քննութեան բոլոր տեղեկագրերն Պօլիս զրկեցինք առ ի . Դուռն, Աստուծով կը յուսանք որքիչ օրէն անսնց պատասխաններն կը ստանամք և ձեզ ալ կը հաղորդեմք . մի վախնաք ձեր իրաւունքները երբէք չեն կորսուիր Այէի Շահանեաէ : » —

« Բայց և այնպէս, քսաւ Վսեմ . Ութասարուֆ Պէյը, այդ խնդիրը ինչպէս որ դուք կը պատմէք, այնպէս ճիշտ ըմբռնած չէ ի . Դուռը . վասն զի իմ Պօլիս իմացածս ձեր պատմածէն շատ տարբեր է : Իմ լսածս այս է թէ, որ Յակովայ և Փրկչաց վանքերն ձեր սեպհականութիներ չեն . այլ մեջ պէրէի տեղեաց կարգը կը սեպուին, թէ միայն պահպանսւթիւնն ձեզ յանձնըւած է, թէ Կատինք ամեն տարի նոյն երկու տեղեքը կը պատարագեն իբրև արդար իրաւունք, թէ՝ դուք անցեալ տարի զանանք վոնտած էք, և անսնք այս բանիս համար կը բողոքեն կաշխատին, որպէս զի կարողանան նոյն

իրաւունքը նորէն հաստատել, թէ և
դուք բաւական զիջումներ ցուցրցած
էք դարձեալ շնորհելու ըստ առաջ
նոյն։

“Քան լիցի, ըստ Արքազան Պատ-
րիաբքն, այդ լուրը բոլորովին սուտ է
և սխալ և ’ի կողմանէ । ատինաց տա-
րածուած պիտի ըլլայ ըստ իւրեանց
քմաց . վասն զի ոչ նոյն վանքերը մ-ը
պերդի տեղերուն կարգն են, և ոչ ալ
նոյն վանքերուն վրայ մազի չափ սեպ-
հականութեն իրաւունք ունին । ատինք,
և ոչ ալ չայոց Պատրիաբքը զիջում ը-
րած է մինչեւ ցարդ, և ոչ ալ ընելու
միտք ունի . նա և ոչ իսկ կրնաց ընել
ճշմարիտը խօսելով . վասն զի վանքերն
ընդհանուր չայոց ազգին արդար
սեպհականութիւնն են. այլ । ատինաց
մինչեւ ցարդ վայլածը չայոց ազգին
կամ միաբանութեան կողմէն շնորհք
մ’ էք . թէ և մինչեւ ցարդ շնորհած
է, այլ այսուհետեւ չկրնար նոյն շը-
նորհքը ընելու, և չընելու ալ շատ օ-
րինաւոր և բանաւոր պատճառներ
ունի, և այն . եթէ կամիք, Վոեմ.

Տէր, այս ըստածներս դուք ձեզէն կը ը-
նաք ստուգել սուրբ Երուսաղէմի բը-
նակիչ աղքերէն, և շատ ալ դիւրին է.
վասն զի ամեն մարդ դիտէ, ամեն աղդ
կը վկայէ՝ որ սուրբ Երուսաղէմի սրբ-
բաղան տեղիքը, վանքերը և եկեղեց-
իները երկու կարգի կը վերածին :
Եռաջին կարգինն է, իւրաքանչիւր Եղ-
դի իր ձեռքը օրինաւոր հրովարտակ-
ներով Հոգմէնելով ունեցած սեպհա-
կան Եղդային վանքերը, որք միայն
իրենց կը վերաբերին անկախ յումեքէ,
որոնց բացարձակ տէրն են շինելու,
քակելու, և մինչեւ անգամ Եղդային
հաւանութեամբ ծախսելու . և զայն
կը վայելէն ամենայն համարձակու-
թեամբ՝ աղօթելով մեր Բարեխնամ
կայսեր կենաց երկարութեան և խա-
զաղութեան համար :

Երկրորդ կարգին է մշշէրէկութան
իրաւանց տակ եղած սուրբ Տեղիքը,
որք կը սկատկանին երեք աղքաց, այս-
ինքն՝ Հայոց, Հունաց և Ղատինաց .
և նոյն տեղեաց համար դարձեալ իւ-
րաքանչիւր աղդ իւր ձեռքը օրինաւոր

Հրովարտակ կամ Առօծել ունի ըստ
 չափու իւր ունեցած իրաւունքին, որ
 ըստ այնմ եւս համարձակապէս կը
 վայելեն իւրաքանչիւր ազգ իւր իրաւ
 ունքը Թւղթելիութեամբ, ինչպէս են
 սուրբ Յարութիւնը, սուրբ Օհուն
 դը, սուրբ Առտուածածնայ գերեղա-
 մանն, Քառասնից սցըրը՝ (զար | ատինք
 սիւ Տաղարտալ կ'անուանեն), նա եւ
 չամբարձման լերան վրայ Քրիստոսի
 Տեառն մերս Ոտնատեղւոյն աւերակ
 մատուոը, և այն . ահա ասոնք են
 առ այժմ յոյտնապէս որոշեալ սուրբ
 տեղիքը որք են Թւղթելիս երեք աղ-
 գաց . թէ և անոնց մէջ տարբեր
 իրաւունքներ ալ կան իրարմէ աւելի
 կամ սկակաս, բայց անոնք ժամա-
 նակին այնպէս կարդադրուած են .
 ՚ի բաց աւեալ զայս տարբեր իրաւ
 ունքները, մնացեալներուն մէջ իւր
 աքանչիւր ազգ ինչ իրաւունք ունի,
 քանի կանթեղ ունի, քանի պատկեր
 ունի. իւր արարողութեան ժամանակն
 երբ կ'ըսկաի, երբ կ'աւարտի . նոյն
 տեղերուն մէջ իւրաքանչիւր ազգին

թափորը, հանդէսը երբ է, և այն,
 ՚ի բնէ անտի որոշուած և կարգադրուած են . ոյր վասն նոյն տեղերը ոչ ոք
 կրնայ պատկեր մը կամ կանթեղ մը
 աւելցնել իւր կողմանէն կամ պակսեցընել . և ոչ մէ կը իր կարգէն դուրս
 պատարագ ընել կարող է, և ոչ օք
 մը իր կարգէն ետ կրնայ կենալ . մինչեւ
 անգամ նոյն սուրբ տեղերը աւելու և լուալու մասին, կարգադրութիւններ հաստատուած են . եւ
 եթէ նոյն մէլլէրէ տեղերը մէկ քար
 մը դնել կամ քար մը հանել հարկ ըլլայ, և ոչ մէկ ազգ զայն առանձին
 կրնայ դնել վերցնել . այլ երբ այնպէս
 փոքր փոփոխութիւններ հարկ ըլլայ,
 երեք ազգի գիտութեամբ և յօժա
 րութեամբ և նոյն խել երեք ազգաց
 ծախիւք կը շնուրին . և եթէ մեծ նո
 րոգութեան պէտո ունենայ, նոյն եւ
 ըեք ազգը մէկ տեղ գալով կը խորհրդակցին . և եթէ համաձայնին իրա
 րու հետ, մեր Շարեխնամ թագաւորէն հրովարտակ կը խնդրեն . երեք ազ
 գաց գիտութեամբ եղած նաղաթեային

Համեմատ, և այնպէս կը սկսին վերա-
նորոգութեան . և եթէ չկրնան հա-
մածայնիլ իրարու հետ տեղի մը նո-
րոգութեան մասին, կը մնայ նոյն տե-
ղը յաւիտեան . ինչպէս ահա աչքեր-
նուս առջեւն է սուրբ Յարութեան
գմբէթը, զոր նորոգելու համար չը-
կարողացան երեք աղդ միաբանիլ . և
որովհետեւ վերանորոգութիւնն ըս-
տիպողական էր, վասն որոյ երեք աղ-
դաց կողմէն երեք Տէրութիւն, այս
ինքն՝ Ի. Դուռը, Գաղղիայն և Որու-
սիայն համածայնելով և մեր Վեհա-
փառ Յագաւորին յատուկ հաւա-
նութեամբ շինուեցաւ . նմանապէս
ահա սուրբ Օննիդեան այրին առաօ-
տաղի հնացեալ վարագորը որ երեք
աղդաց կը վերաբերի, դժութեան
տեղիք չտալու համար վերջապէս մեր
Բարեխնամ Յագաւորը շինել տաէ
հրամայեց յիւր կողմանէ :

« Եհա նոյն միշտերէի եղած սուրբ
տեղեաց կարգը և կանոնը Ձեր Ասե-
մութեան խնդրանաց համեմատ հա-
մառօտակի պատմեցի : Ասկէ ՚ի զատ

կան նաև միւլութերի տեղերուն շուրջը
իւրաքանչիւր ազդաց իրեն յատկաց-
եալ տեղեր, զորոնք գարձեալ ամեն
մէկը կրնայ քակել, շինել, լուանալ,
մաքրել անկախ յումեքէ, և այլն :

Խնչուէս որ վերը բոխնք, և ատինաց
միաբանութեան եւ իւր ժողովրդոց
մէջ շուկը բաւականէն աւելի շատ-
ցած էր, և առաջանայն կարծիքներ և
սուտ սխալ խօսակցութիւններ հա-
սարակաց բերանը ինկած . ոյր վասն
ժամ յառաջ այս գործին վախճան մի
տալ հարկ էր, ուստի Ամեն . Ա. Պատ-
րիարքը խոհեմութիւ համարեց կրկին
անդամ փութալ, հետք տանելով սպատ-
րաստած խնդրագիրն՝ զոր ներկայա-
ցուց, Ն. Ա սեմ. Ութասարբուֆ
Պէկին, որոյ օրինակն հոս կը դնեմք :

“ Այէի իհսան վայէի Հաղթեթի
թաճարիտէ վէ էֆէնտիմիզ տախի
Տէվլէթի վէլիխւնիմէթ էֆէնտիմի-
զին վէրիլի միւրախսաս պուլունտու-
զու հալտէ քեաֆֆէի ումնւրի խու-

սուսաթը վագաամբղ անձադ էֆեն
 աիմիզին թէ էյ վէ իրատէի ալիլէրի
 վէճհլէ վիճուաէ կէլէճէկինի հիշպիր
 վէճհլէ շիւպհէ իթմէտիկիմիղտէն
 մուգատտէմ վէ մուախխերէն արդ
 վէ իսթիտա իյլէտիկիմ իւզոէ Գուտ
 սու Շէրիֆտէ քեաին Վար Եշտուար
 մանասթըրը ապա էն ճէտ եէտիմիզ
 տէ պուլունան ֆէրմանի Ալիշան մու
 ճիպինճէ քէնտի միւլրիւմիւզ օլուու
 զու հալտէ աթինլէրին սէնէտէ պիր
 տէֆա մանասթըրի մէզքիւրտէ զլյա
 րէմլէրինի գապուլ իյլէյէմէյէճէկիմ
 շիւնքի տին վէ միլէթ վէ տիյանէթիւ
 միլէ տօգանուր քէլամ զայրի լայե
 գաի մանասթըրի մէզքիւր իշնտէ
 գուլազըմ իլէ քեաֆֆէի միլէթիմ իւ
 շիթափիկի հալտէ գապուլ իյլէյէմէյէ
 ճէկիմ աշիքեար օլուալ, պունտան ադ
 տէմ չէնտ տէֆա պա միւզէքէրէ արդ
 վէ իշար իյլէմիշիսէմտէ, սիր սէմէ
 րէսի կէօրիւլէմէտիկինտէն պահսիլէ
 վէ կիւնլէր թէգարրիւտ իյլէմէքտէ
 պուլունտուզունտան, շիմտիտէն զա
 թի Ալի ասրֆիլէրինէ արդ վէ իս

թիղան խոերիմքի էյամի մէղքիւրտէ
մէրգումլէրին զիյարէթլէրի կէրէք
պէնտէնիզ վէ կէրէք միլէթիմ թա-
րաֆընտան պիր վէճհլէ գալուլօ-
լունմայաճազընտան իճապի հալըն շիմ-
տիտէն հիւսնի իփասընա հիմէմի Ա-
լի ասաֆիլէրի պույուրուլտուգտա-
լութքէն վէ իհսանէն պիրան էվլէլ
նէթիճէի հալին թարաֆը պէնտէ-
կեանէմէ իշարիլէ մէրգում | աթին-
լէրին սէնէտէ պիր տէֆա իճրայի ա-
յին լոլէմէլէրինտէն ստրֆի նազար
պույուրուլմասը նիյազը Պապընտա է-
մըր վէ ֆէրման հաղըթի մէնլէհիւլ
էմըրինտիր :

Ֆի Սէֆէր չ\ Սէնէ ԱԱ

Վէ ֆի Աղմէլ չԶ Սէնէ ԱՎ

Փանիկի Էրմէն
Գուպուր Շէրիֆ

“Շատ բարի ըստւ Ե. Վ սեմու-
թիւնն . ըստ ձեր խնդրանաց հեռա-
գրեմ թէ Ա իլայէթին և թէ Բ.

‘Իուռն, և անկից ստացած հրամանը
եւս ձեզ կը հաղորդեմ:’

‘յապէս ողջունեալ’ Ա. Վ սեմու-
թիւնն, բաժնուեցան իրարմէ:

Կնդրագիրը ներկայացուելէն յե-
տայ, որուն մէջ արեւու նման յայտ-
նի կ'երեւի Հայոց աղգային սեպհառ-
կանութեան իրաւունքը և անոր վե-
րաբերեալ ամեն պարագայներն, կը
վստահացնէին Հայոց միաբանութիւն
այնպէս մէկ փրկարար հրաման մը ըն-
դունելու ։ ‘Վրնէն, որ Լատին միւ-
աբանութեանց թէ իրենց բռնաբա-
րութեամբ և թէ օտար աղգեցու-
թեանց ձեռօք պահանջած անիրաւ-
պահանջումները խօսկառ խափանէր.
և ահա նոյն միջոցին էր որ սուրբ Ա-
րուսաղէմի Վ սեմ. Ոյւթասարրութ
Պիշէն նամակ մը ստացաւ Արքաղան
Պատրիարքն, որով կ'իմացընէր և կեր-
պիւ իւիք Լատինաց թուլարել կը
թախանձէր: ‘Քանի որ նոյն չնորհքը
այսքան ատեն ըրած էք կ'ըսէր, հիմայ
հարկ չէ զլանուլ. և ես կը վստահա-

ցընեմ զձեզ որ | ատինաց եւս սաստիկ պատուէր պիտի տամ և ստատեմ որ իրենք ալ նոր ՚ի նորոյ բաներ չհանեն և ձեր կրօնքին և սեպհականութեան դպչելու բաներ չընեն, այլ ամենայն պարկեշտութեամբ, սիրով և խաղաղութեամբ կատարեն իրենց արարողութիւններն, այսպէսով երկու աղգաց մէջ սերտ բարեկամութիւն, սէր և միաբանութիւն կը հասատառուի. դուք ալ անսնք ալ հանդիստ և խաղաղ կը մնաք, ինչպէս որ հարկ է կրօնականներուն, որք հասարակաց հայելի են, և սիրոյ և միաբանութիւն օրինակ, և այլն :

Ոիրելի ընթերցողք ՚ի հարկէ կը գդան որ այն նոր եկած հրամանը չայց Պատրիարքին սպասած փրկարար հրամանը չէր. չայց միաբանութեան վերալից սրտին ցաւոցն ամսիչ դեղմը չէր, այս հրամանով չայց՝ օտարաց աղդեցութեամբ բռնաբարուած իրաւունքները ձեռք անցնել անկարելի էր. իւր սեպհականութեան տէր ըլլալու իրաւունքին համաձայն չէր.

այլ միայն սիրոյ և միաբանութեան
յորդոր , յուսաղըութիւններ ապա-
գայի համար . վերջապէս աւելի | ա-
տինաց գերի ըլլալու յորդոր էր . ուր
կը մնար ապա Հայոց այսքան դարերէ
՚ի վեր Բարեխնամ Տէրութեան հլու
և հպատակ և հաւատարիմ զաւակ
ըլլալը , երբ թոյլատրուի այն անիրաւ
յափշտակչին բռնաւոր ճիրաններուն
մէջ Ճնշուիլ մնալ . և այն իւր արդար
իրաւունքը եւ սեպհականութիւնը
թշնամին բռւռն զօրութեամք Գլլըճը
հագիլ իշն ըսելալ իւր աչքին դիմացը
խլէ և ինքը առանց Ճիգ հանելց թոյլ
տայ անոր . ո՞հ անտանելի ցաւոց զոր
ընդունել , կրել և տոկալան հնարին էր :

Կաեւ կը գուշակուեր սոյն եղե-
լութիւններէն , որ նոյն երկու վան-
քերը Հայոց արդար սեպհականու-
թիւնը ըլլալը բարեխնամ Տէրութեան
օրինաւոր կերպիւ հասկցուցած չէին .
այսինքն օտար ազգաց հետ հաղոր-
դակցութիւն (Թ-Հ-Ե-Ր-Ե-Լ-Ի-Ն) ըլ-
նաւ չունենալը և Հայոց ազգին սեպ-
հական առացուածք ըլլուլը , ապա թէ-

ոչ ի՞նչպէս կարելի էր որ մինչեւ ցարդ
 Հայոց ազգային սեպհականութիւնը
 այսպէս անիրաւ բռնաբարողներէն բռ
 լորովին ազատելու համար գալիք փըր-
 կարար հրամանին ուշանալը : Վիթէ
 մոռցուած էին այնքան գարերէ ՚ի վեր
 Օսմաննեան բոլոր Վեհապետաց խո-
 կական կնիքը կրող հրավարտակներովը
 Հայոց ազգին անկախ և ազատ սեպ-
 հական իրաւունքը ըլլալը և ոչ յումե-
 քէ կախում ունենալը , և լատինաց
 տարին մի անգամ նոյն երկու վանուց
 մէջ պատարագելու թոյլասրութիւնը
 միայն գթասիրտ Հայոց ազգին կողէ
 մանէ շնորհք ըլլալը :

Վրանիշխոկեանիք այս շնորհքը փո-
 խանակ երախտագէտ մտօք վայելելու ,
 յանուն ամենակարողին , անմահին
 և ամենեցուն Երարչին Երատոնց նր-
 ւիրուած սուրբ սեղանոյն վրայ , տկար՝
 մահկանացու՝ արարածի և ամենասր-
 խալ մարդոյ միանունը Վրիստոնէա-
 կան սուրբ հաւատոյ և սուրբ Վէե-
 տարանի երկնաւոր վարդապետու-
 թեան հոգւոյն հակառակ նորահնար

անսխալ տիտղոսով Հայոց սեպհական
սուրբ Եկեղեցւոյն մէջ ՚ի լուր ընդ-
հանուր ազգին յիշատակելու համար
Եղած մեծ պատրաստութիւնները գի-
տե՞ր արդեօք բարեխնամ Տէրութիւն:

Ի վերջ ամենայնի, ՚ի բնէ Հայոց
սեպհական և միակ միսիթարութիւն-
նը մնացած սուրբ Յակովը Եկեղեց-
ւոյն մէջ Հայոց կրօնիքին դէմ քարոզ
տալով (որ Երբէք տեսնուած ալ չէր),
“Հայք հերետիկոս են, Հայք տ-
“նիծեալ են, քանի որ Հռոմայի փառ
“փան չեն ընդունիր, անոր չեն հեա-
“զանդիր, անոր ստքերուն չեն խո-
“նարհիր՝ չեն համբուրեր, Հռոմայի
“ընդհանրական Եկեղեցիէն դուրս
“են. ոյր վասն արքայութեան Երես
“տեսնալիք չունին, դժոխոց որդիք
“պիտի ըլլան. մեղք և հաղար ափսոս
“որ այս հոյակապ, դարաւոր և պայ-
“ծառ Եկեղեցին այսպիսի հերետիկոս
“ներուն ձեռք մնացեր է ո ըսելով՝
հաղար և մէկ հայհոյանք և նախատինք
Հայոց ազգին կարդալնէն բարեխնամ
Տէրութիւնը լուր ունէր արդեօք:

Աղա թէ ոչ ինչպէս կարելի է հաւատալ թէ, բարեխնամ ջերութիւնը իր սիրելի հպատակ ազդին այսքան անսունելի տառապանքները և նախատինքները թէ իր կրօնքին դէմ, թէ իր ազգութեան և սեպհականոթւեան դէմ քաշած ըլլալը լսելով իսկոյն իր փրկարար հրամանները չփութացնէր ՚ի փրկութիւն Հայոց իրաւանց :

Եւ ահա զինի այսօնի սրտամաշ մտատանջութեանց, Արբազան Պատրիարքն նոյն եկած հրամանին համեմատ տրուելիք պատասխանն արդէն պատրաստած և զրկելու վրայ էր, համարէ թէ ձիշտ նոյն միջոցին սուրբ քաղաքիս Վանմ . Ութասարրուֆ Պէլը Նորին Արբազութեան քով տեսութեան եկաւ :

Այն խնդրոյն վրայօք անմիջապէս խօսք բացուելով, Արբազան Պատրիարքն ըստ . “ Ութասարրուֆ Պէլ, այս ինչ լուրեր և հրամաններ կը հազորդէք մեղ, մենք մեր բարեխնամ թագաւորէն մեր ցաւոցը դեղկը կը սեպ, մեր արդար իրաւանց և սեպ,

Հականութեան ազատութիւն, օտար
աղդեցութեանց երեսէն ծագած կըն-
չիռներուն լուծումն . միթէ ՞ Ձեր
Վսեմութիւնն ականատես չեք հոս
| ատինաց անիրաւ արարքներուն և
պահանջմունքներուն . Եթէ տակաւին
ի . Դուռը և ձեր Վսեմութիւնն
լուէք, քարերու սիմափ ազազակեն :

Այիթէ մեր բարեխնամ թագաւոր
ըլ իւր սիրելի հպատակ Հայոց աղ-
դին ընդհանրութե սեղհական եղող
տուրը Յակովը վանաւց բացաբակ
իրաւունքը կ'ուզէ որ կորսուի. և զա-
նիկայ | ատինաց կամացը զահ սիմա-
ընէ , կամ իւր սիրելի հպատակը | ա-
տինաց ձեռքը գերի սիմափ ձգէ . ես
երբէք չեմ կրնար | ատինաց այսպէս
անիրաւ պահանջմանց զիջանել և իմ
սիրելի ազգիս ընդհանրութեան սեղ-
հականութենէն , որ այսքան գարերէ
՚ի վեր իւր ստացուածքն է , փոքրիկ
քար մի անգամ չեմ կրնար կորսնցը-
նել . միթէ այսքան սորկացան Հայոց
աղդը իր բարեխնամ թագաւորին աչ-
քին . միթէ հառատարիմ և ամենայն

պարագսյից մէջ աղգովին հնազանդ
 և հլու ըլլունիս մեզի յանցանիք եղած
 է . կ'աղաւեմ այս կտորները ինձ բա-
 ցարեցէք Յան խօսքերը արտասա-
 նած առեն Արբազան Պատրիարքին
 աչքերէն արտասառաց կաթիլներ ը-
 կամ հօսիլ . ոյր վասն բաւական ը-
 փոփելի խօսքեր խօսիլ պարտաւորե-
 ցաւ Ասեմ Վաթասարբուժ Պէյը :
 Եաւ յաւելցուց ասելով թէ “ Բաթ-
 րիքէֆէնտի, ես ալ յատկապէս այս բա-
 նին համար եկայ ձեր քովը . թէ և ձեր
 ըրած այցելութէ փոխարէն ալ կա-
 լու պարտաւորութիւն ունենալս դի-
 տեմ , բայց այն թսղումք այլում պա-
 հու , վասն զի այս ստիպովական է .
 յատուկ եկած եմ ըսաւ Կորին Ասե-
 մութիւնն , որ զձեզ եթէ կարելի է ,
 համոզեմ որ մարդ ասիրութեամբ նե-
 րէք Ատինաց քանի որ նոյն շնորհ-
 քը այսքան ատեն ըրած էք , և անոնք
 ալ վայելած են , դարձեալ ձեր մար-
 դասիրութիր ցոյց տուէք , թսղ գան
 գարձեալ իրենց պաշտօնը կատարեն .
 թէ և ինչպէս դրաէ ՚ի դուրս լսած եմ

որ անոնք զձեղ քանի մը պատճառ
 ներով վշտացուցած են, նա մանա-
 ւանդ ձեր սեպհականութեան իրա-
 ւանց դալած են, և ձեր տեղերէն
 քանի մը տեղեր յափշտակած են,
 դուք այս անդամ ալ անսնց ներողա-
 միո եղիք, թող Տէրութեան գլխա-
 ցաւին մէկը պակսի. Ես ձեր միւս
 կորուսած բոլոր իրաւունքները հետ-
 զհետէ կը գրեմ կ'իմացնեմ առ ։
 Դուռը և որքան կարելի է, կ'աշխա-
 տիմ ձեր մէջը դանելու հաշտեցնելու
 և բոլոր իրաւունքնիդ տեղը բերելու։
 Դուք այնպէս գիտնալու էք և կը
 յուսամ որ քաջ գիտէք, թէ Տէրու-
 թեան միասը ձերն է, և ձեր վնասը
 Տէրութեան է. քանի որ դուք Տէ-
 րութեան հաւատարիմ և հնապանդ
 հպատակն էք, | շւ դարձեալ | ատի-
 նաց ալ բոլոր պէտք եղածը կ'ըսեմ,
 որ անոնք ալ այսուհետեւ զձեղ ցաւ-
 ցնելու առիթներէն հեռանան, ձեր
 իրաւունքներէն յափշտակածնին ետ
 դարձնեն, եոր ՚ի նորոյ իրաւունք յա-
 փշտակելէ դադրին. իրենց արարողու-

թիւնը կատարելու համար եկած աւտեննին ամենայն պարկեցութեամբ վարութին . սովորականէն աւելի բաներ ընելով ձեր սեպհական իրաւունքին շը դպչին . և կը յուսամ որ այս այսպէս ըլլալէ ետքը , միշտ սիրով պիտի մնաք և անհամածայնութիւններ հանելու առիթները կը պակսին . դուք ալ հանդիսու կը մնաք : —

“ Ուժապէս շնորհակալ եմ Ասեմափայլ Պէջ , ըստ Արքազոն Պատրիարքը , ձեր բարեմոտաբար խօսած խրատներէն , և իմ բնական սղարտաւորութիւնս ալ նոյնը կը սորվեցնէինք . այլ ցաւօք սրտի կը յայտնեմ , որ արդէն այդ պարտաւորութիւնը լիովին կատարած եմ , և Վասուած գիտէ որ՝ ինչ որ Քրիստոնէական , ինչ որ մարդկային օրէնքները կը սորվեցը նեն և կը պարտաւորեն , մեր կարողութեան համեմատ կատարած եմք . բայց ինչ օգուտ որ մենք որքան մարդասիրաբար վարուեցանք , որքան պատիւ ըրինք և իրենց պատիւը պահեցինք , անոնք մեզի միշտ լիսասիւք փո-

խարինեցին . և սկսան իրենց բոլոր
Ճիգը Թափելով աւելի մեծամեծ վը-
նասներ տալու ձեռնարկել , կարծե-
լով թէ իրենց խարդախ ընթանցքնե-
րը մենք չենք գիտեր : Իրենց տուած
վնասներն և բրած և ընելիք յափրշ-
տակութիւններն այն աստիճան ըզ-
դալի եղած է այսօր Հայոց միաբա-
նութեան և ընդհանուր Ազգին , որ
եթէ գիտնամք թէ սուրբ Յակովը այ-
վանքը մեր ձեռքէն բոլորովին պիտի
ելլէ , զոր Տէր մի արացէ , աւելի լաւ
կը համարիմք նոյն սուրբ Յակովը այ-
վանքը կորսեցնել , քան թէ այնպէս
մեր Ազգին , կրօնքին և միանդամայն
սեպհականութեան թշնամիին մեր
սուրբ եկեղեցւոյն մէջ պատարագե-
լուն թոյլատրել :

“Այս մարդիկները այսքան չարիք
հասցնելով և մեր արդար իրաւունք-
ները յափշտակելով՝ ոչ թէ միայն
գոհ չեղան մեզմէ , այլ և իրենց խել-
քովը կարծեցին որ մենք իրենցմէ կը
վախնամք և իրենց յափշտակած և յա-
փշտակել ու զած տեղերուն յարդը և

պատիւը չենք ճանչեր . և եթէ հար-
 կը պահանջէ առեան ելլու , նոյն տե-
 ղերուն համար դատ վարել , խօսիլ
 խել չեմք գիտեր . վասն որոյ օր ըստ
 օրէ սկսան համարէ թէ բուռն զօ-
 րութեամբ Գրլը ճը հագուր իշտն ըսելով
 Տէրութեան անդէն հպատակաց վրայ
 յարձակել . և այն այնպիսի անխնայ
 կերպիւ , զոր եթէ մարդ նկատողու-
 թեան առնէ , անշուշտ առանց տա-
 րակուսելու կը կարծէ որ սյս սուրբ
 քաղաքը մարդկային սեռին բնակած
 երկրագնուէն բոլորովին դուրս առան-
 ձին որոշեալ երկիր մ' է , ուր ոչ տէ-
 րութիւն կայ և ոչ տէրութեան մը
 հոկողութե տակն է : Պրանչիսկեանք
 երբ տեղ մը յափշտակել ուզեն , նախ
 քնաբանը սիրոյ վրայ հիմնելով , բա-
 րեկամաբար կը սկսին , որով մինչեւ
 յերկիր կը խոնարհին . եթէ այնու
 չկարացին իրենց բաղձանքին հասնել ,
 սպառնալիքներ տեղացնել կ'ըսկսին
 յանուն օտար Տէրութեանց ազդե-
 ցութեանց . և եթէ այնու եւս չկա-
 րողացան յառաջ տանել , ալ ըստ կար-

գի կըսկսին նախ գալթօլիկ գօնսօլներուն ձեռօք տեղւոյս կուսակալը կամ համոզել որ և իցէ կերպիւ, կամ վախցնել . ապա գեսպանաց ձեռօք ի. Դուռը ձեռք կ'առնեն և այն ասաին ճանոր մինչեւ բարեխնամ Տէրութիւնն կըստիպուի իրեն անմեղ, հըլու և հնազանդ սիրելի հպատակին արդար և սեպհական իրաւանց դէմ հրամաններ տալ, և ստիպել զինքը որ ընդունի տրուած հրամաններն, և իրեն արդար իրտւունքները կամայ ակտմայ կորսնցնել յանձն առնու : Ով անմեղ և ակտմայ սպանութեան երբ վերոյիշեալ եղանակներով չկարողացան իրենց յափշտակիչ նպատակին ւն հաննել, ալ գործերը ուրիշ կերպարանիք կ'առնուն . մէկ մ' ալ կը նայիս որ Վրիստոսի Տեառն մերոյ սուրբ պատուիրանացն համեմատ հեղ և խոնարհ ըլլալու պարտաւորեալ և բոլորով սրտիւ ուխտեալ անսխոտ կարծուած պապական եկեղեցւոյ պաշտօնեայներն բոլորովին կազմ և պատրաստ, բռնութիւնը ձեռք առած

յանկարծ իրենց այն կրօնական պար
կեշտութեան տիպար եղող զգես-
տուց տակէն կռուի վերաբերեալ որ
և իցէ գործիքներ դուրս հանելնին
և անմիջապէս յարձակելնին մէկ կ'ըլ-
լայ անմեղ և անզէն ազդին միաբա-
նութեանը վրայ , և այն տասնապա-
տիկ մարդկան առաւելութեամբ , իր-
բեւ խաչակիր զօրք կարծես որ սուրբ
երկիրը աղատել կը ճպնին , չեմ զի-
տեր թէ որ Տէրութեան ձեռքէն , և
կըսկսին զարնել խորտակել փշուել ինչ
որ իրենց գիմացը կ'ելլէ , ինչ որ ի-
րենց աչքը կը տեսնէ , ինչ որ իրենց
ձեռքը կ'իյնայ անխնայ , մինչեւ սուրբ
եկեղեցւոյ Յոտուած ային պաշտամանց
վերաբերեալ զարդերն և սուրբ ըս-
պասներն և անօթներն . առաւել ող-
բալն այնէ , որ ամենայն Քրիստոնէից
սիրելին և երկրպագելին (1) անդամ՝

(1) Ըստ տարի չէ , Ա . Յարութեան տաճարի
մէջ , գիւտ խաչ ըսուած տեղը . Լատին կրօնաւո-
րին մէկը չայց հոն գրած արձաթեայ խաչը , որու
մէջ կը պարունակէր կենաց Փայտէն մաս մի , յա-
փշտակելով գետին կը զարնէ ու ստեակոխ կ'ընէ .

ոսնակոյս ընելով կը խորտակեն կը թաւ-
փեն : Քայց Տէր իմ, իմ միաբանու-
թիւնս ոչ զէնք ունի և ոչ ալ այդ-
պէս կրօնամօլ մարդիկներ են . և ոչ
երբէք ալ զինուց կարօտութիւն ու-
նիմք մեր իրաւունքները պահպանե-
լու համար . իմ զօրքս և զօրականս,
եւ զէնքերս նախ իմ արդար իրա-
ւունքս է . երկրորդ՝ Տէրութեանս
արդար ռատաստանն , որ կը յազմէ
տմեն զինուց և զօրութեանց : Եթէ
Լատինք իրաւամբ կ'ուղեն ինձմէ իմ
սուրբ Հակովքայ եկեղեցիս գալու
թոյլատրութիւնն , թող հանեն իրենց
հրովարտակին , իրենց Ահօճէնն կամ ար-
տօնագրերն , եթէ ունին . և ինչու
անցեալ տարի այնքան քննութեան աւ-
տեն չյայտնեցին և չկարողացան գոնէ
մասնաշափ թուղթ մի ցոյց տալ . ուր
ամեն կողմանէ իրենց իրաւունք չու-
նենալը արեւի նման յայտնուեցաւ .
մինչդեռ իրենք կ'ըսէին թէ սուրբ

զըր Հայ միաբանք լսելով կը դիմեն ու հազիւ թէ
զետնէն կը ժողվեն սուրբ Խաչը որ բոլոր քրիստո-
նէից երկրագութէ :

Յակովայ վանքը իրենց է, և Հայոց
Վզգին տուեր են, և տարին մի ան-
գամ պատարագ ընելը նշան դրած են,
որ երբ ուղեն ետ առնեն։ Վկար-
մանալի վաստիս, որուն հաւատալու
համար մարդ անխելք ըլլալու է։

Այս այն միայն միշտերէի տեղերուն
համար է, ուր երեք աղգ էն և ոչ մէկը
առանձին բեւեռ մի անգամ չկրնար
գամել. և ոչ թէ՝ Հայոց 'ի բնէ իւր
սեպհական ունեցած աղգոցին վանքին
համար է աղգ միշտերէի բառը. ոչ
Հայոց վանքերը, և ոչ միւս աղգաց
ունեցած առ անձին վանքերը պայմա-
նին ստուգ մտած են։

Աշուշ ամեն աղգ իրենց առանձին
ունեցած սեպհական վանքերը մէջ
տեղ բերելով ամենայն սիրով միշտե-
րէի կ'ընեն. թող սկսին նախ միւս քը-
րիստոնեայ եղբայրները, երբ կարդը
մեղի գայ, այն ատեն կը մտածեմք կը
պատասխանեմք իրենց. ապա թէ ոչ
այնպէս խօսքով միշտերէի է ըսելով.
Ա. Դուռն անգամ խարելով հրաման-
ներ բերել տալով, Հայոց 'ի բնէ անտի

Օսմանեան վեհապետաց այնքան արքունագրոշմ հրովարտակներով, առանձնաշնորհներով, և իմլիտներով հաստատուած աղատ և անկախ սեպէ հականութիւնն և ընդհանուր աղգին արեան գին եղող սուրբ Յակովը այ վանքը չկրնար երբէք մշտերէ տեղերուն կարգը դրուիլ. Հայոց Պատրիարքը այդ բանը չկրնար ընել թէ և մահ անգամ սպառնան իւր անձին, վասն զի՞ լաւ է քաջութեամբ մեռնիլ, քան վատ անունով ապրիլ: —

“Այսու Երուսաղեմէն որքան հեռի է, ըստ Յորին Վսեմութիւնը, Մար Եագուապ կոչուած վանքը. օր մը կ'ուղեմ երթալ տեսնել և պտըտիլ: —

“Չեր Վսեմութեան հիմակ գըտնուած վանքին պարսպէն դուրս չէ Մար Եագուապայ վանքը, պատասխանեց Արքաղան Պատրիարքն. այս վանքս է օր կըներկայացնէ ընդհանուր Հայոց աղգը, ուր այսօր Չեր Վսեմութիւնն այցելութիւն ընելու բարեհաճեցաք, և եթէ կամք կ'ընէք, յօժարութեամբ կ'ընդունիմ զ'Չեր Վը

սեմութիւնը պատրաստընելու աշխատաւութիւնը : —

« Այս մենայն սիրով, և արդէն իսկ կ'ուզէի լաւ մը պատրաստիլ և իմանալ, ըստ « Վարին Վ սեմութիւնն . այլ կը կարծեի որ սուրբ Քաղաքէս գուրս և բաւական ալ հեռի է . իսկ քանիք որ այսօր ալ հսս կը գտնուիմք, աւելի լաւ կ'ըլայ այսօր շըջագայիմք : »

Եւ յաւելցուց « Վ . Վ սեմութիւնն, թէ Կառնալով մեր խնդրոյն, վերջնական կերպիւ նոր եկած ոյս հրամանին ինչ պիտի ըսէք, և ինչ պատասխան պիտի տաք . կը խնդրեմ ժոմ յառաջ տուէք ձեր պատասխանն , որ ես ալ անօր համեմատ իմացընեմ ։ ». Դրան, վասն զի օրերը մօտիկցան : —

« Ես իմ կողմէս, ըստ « Վրբաղան Պատրիարքն, վերջին պատասխանս արդէն տուած եմ ։ » սեմ . Վ ալի փաշային և Վ սեմ . Վ իւնիֆ էֆէնտիին այն ատեն, այն էր իմ վերջին և վերջնական պատասխանս . նոյնն է այսօր դարձեալ Զեր Վ սեմութեան տալիք պատասխանս , և արդէն նոյն մոքին :

վրայ էի եկած հրամանին համեմատ
 սղատասխան մը գրել և բողոքել, թէ
 սուրբ Երուսաղեմի Հայոց Պատրիար-
 քը բողը իւր աղքովը մէկաեղ ոչ Տէ-
 րութեան դէմ դրած է, և ոչ ալ այդ-
 պէս վատ դրութիւն մը մոքէն ան-
 ցուցած ունի. իսկ Բարեխնամ՝ Տէ-
 րութիւնը իր սիրելի հպատակ Հայոց
 աղքին այսքան դարերէ ՚ի վեր իր
 նախնեաց հրովարտակներով անկախ
 յայլոց քրիստոնէից կրկին վաւերա-
 ցուցած ու շնորհած վանքին սեղ-
 հականութեան իրաւունք այսօր ի՞նչ
 կարելի է որ կամենայ օտար աղքաց
 աղդեցութեան տակ դնելով փը-
 ճացնել հակառակ այնքան հրովար-
 տակաց միջոցաւ արուած իմլիազներուն
 և այն. ասկա թէ ոչ սուրբ Երուսա-
 ղեմի Հայոց Պատրիարքը իւր աղքային
 իրաւունքները իւր ձեռքը դանուած
 հրովարտակաց համեմատ սղաշուղա-
 նելով, օտարաց աղդեցութեան տակ
 ձգել չուղելով, իւր աղքին, իւր կը-
 րօնքին, իւր ստացուածոց թշնամի ե-
 ղող հիւրը իւր սեպհական սուրբ տակ

Նը մէջ չընդունելովն, ոչ Տէրութեան
հրամանը չընդունած կ'ըլլայ և ոչ Տէ-
րութեան կամաց հակառակ գործած-
Ահա այս է Հայոց Պատրիարքին ա-
ռաջին և վերջին պատասխանն, երբ
որ ալ հարցընեն :

Այն տեսութենէս յետոյ երբ ։
Վսեմութիւնն ոտք ելաւ բաժնուե-
լու, Արբաղան Պատրիարքին հետին ըն-
կերանալով միատեղ իջան սուրբ Յա-
կովայ եկեղեցին : Եւ երբ տեսաւ
Յորին Վսեմութիւնն այն հրաշալի
տաճարն, երբ անոր հոյակապ եւ
վաղեմի շէնքը, սրանչելի նկարուած
սուրբ պատկերները, մշտավառ կան-
թեղները և ամեն կողմէն անոր մաք-
րութիւնն, սկսաւ մանրախոյզ հար-
ցումներ ընելիւրաքանչիւր մասերու-
վրայ, որոնց կը պատասխանէր Արբա-
ղան Պատրիարքը, այլ երբ եկան սուրբ
Յակովայ Գլխադրին հրաշակերտ սե-
ղանին դիմացը, ըսաց Արբաղան Պատ-
րիարքին, «Վսեմ Տէր, ահա այս է այն
Աինուպը (սեղանը) որոյ վրայ | ատինք
այսափ յուղմունքներ կը հանեն :

‘Առին Վսեմութիւնն ուշադրութեամբ լաւ մը նկատելէն յետոյ նոյն սեղանին չորս կողմը , ըստ . “ Եյտեղ | ատինաց պատկերը և կանթեղ ները որո՞նք են . և նոյն խորանին վրայ դրուած պատուական նկարուած միջակ մեծութեամբ պատկերը տեսնելով՝ գուցէ այս եղած ըլլայ ըստ | ատինաց պատկերը . քանի որ պատարագելու կուգան հոս տարին մի անգամ : —

“ Երեցէք , Վսեմ . Տէր , ըստ Արքաղան Պատրիարքն . աստ | ատինաց վերաբերեալ բնաւ . բան մը ըլգունուիր . Զեր Վսեմութեան բոլոր տեսածները թէ այս սուրբ Եկեղեցւոյս մէջ . թէ բոլոր վանուցս մէջ , չնորհիւ Անձազօր Օսմանեան Տէրութեան բոլորն ալ չայոց ազգին կը վերաբերի և նորա սեպհական ստացուածներն են , որք իւրաքանչիւր անհատի կամաւոր տրօք և ողօրմութեամբ պահպանուած են . և մանաւանդ ինչ կարելի է որ մեր սեպհական եկեղեցւոյն մէջ | ատինք պատա

կեր, կանթեղ և. այլ բաներ ունենան:

Այս խօսքերուն վրայ կարծես թէ
Նորին Վ սեմութիւնն զարմացեալ կը
սքանչանար և չտառատալու նշաններ
ցուցընելով ըստ . “ Հիմայ այս եւ
կեղեցւոյ մէջ բնաւ բան մը չունի՞ն
լատինք :

“ Ինաւ , սրատասխանեց Արքաղան
Պատրիարքն , և ոչ անդամ կրնան ու
նենալ Հայոց սեպհականութիւն մէջ .
վասն զի այլ է Թւշերէիրանիւն , այլ է
սեպհականութիւն :

“ Ազա ուրեմն լատինք Բնչողէս
տարին մի անդամ պատարագելու կու-
գան հոս , քանի որ բան մը չունին և
Թւշերէի չեն, ” ըստ Նորին Վ սեմու-
թիւնը :

“ Արդէն անոնց պատարագելու
թոյլատրութիւնն գթասիրտ Հայոց
աղդին կողմանէ շնորհք մի էր , ըստ
Արքաղան Պատրիարքն , ոչ թէ իրենց
յառկացեալ իրաւունք . վասն որոյ
միայն Եկած օրերնին իրենց պատա-
րագին վերաբերեալ դդեստ , սպաս ,
և այն կը բերէին , և զինի պատարա-

չին անսնց ամենն ետ ալ կը տանէին
առանց բան մը մնալու հոս : —

“ Եյդ իսկ են սքանչելիք , ըստ
Կորին Ա սեմութիւնն . ուրեմն քանի
որ բնաւ բան մը չունին , ըսել է որ
հիւր մը են , ուրեմն ինչպէս կրնան հա-
մարձակիլ ըսելու թէ՝ մշշերէի են այս
վանքին . այս ինչ իրարու անցարմար
խօսքեր են : —

“ Իրենք հիւր են , ըստ Արքազան
Պատրիարքն , և ոչ թէ միայն այս մեր
եկեղեցւոյ մասին կ'ըսեմ , այլ և սուրբ
Հրուսաղեմի մէջ ևս իրեւ հիւր ըն-
դունուած են Աալահատափինի ժամա-
նակեն ՚ի վեր , որ սուրբ Քաղաքիս տիւ-
րապետելէն զկնի սակաւալթիւ Գր-
քանչիսկեանց միայն թոյլատրած է՝ իւ-
րենց մնացեալ խեղճ աղգայինքը խը-
նամելու : —

“ Այն այս Գրանչիսկեան հիւրեւ-
րուն Նայոց աղգը , բաց ՚ի ուրիշ ը-
րած մարդասիրական բարիքներէ , զորս
կը ցիշատակեն նոյն ժամանակի ողատ-
միչք , բարեմտութեամք իրենց յա-
տուկ սեպհական եղած երկու երեւ-

ւելի եկեղեցիներուն մէջ տարին մի
անդամ պատարագելու թոյլատրած
են . թէ և իրենք ալ նոյն շնորհքին
փոխարէն իրենց երկու եկեղեցեաց
մէջ , այսինքն՝ 'ի 'Ապարէթ և 'ի Հովկ
հաննու 'Օնունդ մեղ թոյլատրած են
պատարագելու . այլ | ատինք իրենց
ըրած շնորհքը քիչ ատենէն հետրզ
հետէ քիչ քիչ սեղմելով , վերջապէս
այերը դուրս ըրած են . այժմ անոր
նշայլը միայն Երանեալի Եկեղեցին ուխ
տի երթալ մնացերէ Հայոց ազգին .
և ահա այժմ կարդը մեղի դալուն
ոչ թէ առանց բանաւոր պատճառի ,
այլ իրաւամբ և արդարութեամբ մենք
ալ մեր ըրած շնորհքը վերջացուցինք
ըսելով խօսքին վերջ տուաւ Արքաղան
Պատրիարքն՝ :

Առուոք Հակոմքայ եկեղեցիէն ըն
կերութեամբ Արքաղան Պատրիարքին
դուրս ելելով , ամենայն սիրով բարեր
հաճեցաւ նորին (վսեմութիւնն սուրբ
Հմուտոյս ժառանգաւորաց վարժաւ
տունն և տպարանը պտըտելու և
աչքէ անցընելու , և դոհ սրտով բաժ.

նուեցաւ, խոստանալով որ մի եւս
Փրկչայ վսնքը պտըտելու գալ:

Եւ հետեւեալ օրը Ա. Պատրիար-
քըն Ո՞նւթասարրութ պէջին հաղոր-
դած հրամանին պատասխանն խըր-
կեց՝ ինչպէս որ խոստացեր էր, որուն
մէջ յառաջ բերելով որ ինքն իւր ազ-
գային իրաւանցը նկատմամբ երբէք
չկրնար իւր քմացը համեմատ շարժիլ
քանի որ նախ Ազգին ընդհանրու-
թիւնը, յետոյ բարեխնամ Տէրու-
թիւնը յանձնած է իրեն. և թէ՝ այս
խնդիրը բոլորովին կրօնական ըլլալով,
Տէրութեան գլխացաւանք ըլլալու-
քան մը չկայ անոր մէջ, թէ և Պը-
րանչիսկեանք կ'աշխատին խնդրոյն քա-
ղաքական կերպարանք տալ, որ եթէ
իրենց նպատակին բոլորովին չհանին
ալ, գէթ մասամբ իւիք մօտենան.
բայց երբէք այդպէս միջոցներէ չը
վախնալով միշտ կը խնդրեմ և կը թա-
խանձեմ մեծազօր Տէրութենէս, որ
ինչպէս իւր տուած հրավարտակաց
մէջ նշանակուած մինչեւ յարդ նոյն
կրօնից աղատութեան շնորհքը վայեւ-

լած են և կը վայելեն բոլոր Քրիստո-
նեաց աղքերը, դարձեալ խնամք տա-
նին Հայոց այս արդար իրաւանց
քռնաբարութին արգիլելու . մշշփելեկ
տեղեաց համար ահմանուած հրա-
մանները, Հայոց միակ մխիմարու-
թեան՝ սեպհական վանաց վրայ, ինչ-
պէս որ կը վասկաբին Պարանչխակեանք՝
չգործադրուի, վասն զի սցլ է սուրբ
տեղեաց խնդիրը, և այլ իւրաքանչիւր
աղքաց սեպհականութեան խնդիրը :

Առ սոյն պատասխանին խմաստին
համեմատ Ա սեմ. Առ թասարրութ
պէյը Թէ ՚ի կ. Պօլիս առ Բ. Գուռն
և թէ ՚ի Պատմակոս տո Վ սեմ, Ա ալի
վաշայն հեռագրեց. և օրերը մօտիկ-
ցած ըլլալով ակնապիշ կը սպաէր պա-
տասխանին. բայց և այնպէս Ա ատի-
նաց պատարագելու օրը՝ սպածուած
հեռագրէն յառաջ կանխիւց, ոյր վասն
Ա ատինը արդէն ամենայն կերպիւ
կազմ՝ և պատրաստէին գալու և օր
մը միայն մնացած էր, ուստի իրենց
ժմորգմանը խրկեցին սրբազն Պատ-
րիարքէն հրաման առնելու համար,

որ հետեւեալ օրը գան պատարագեւ-
 լու ըստ սովորութե՛ : Իսկ ուրիշ տա-
 րի | ատինաց թարգմանը Հայոց վա-
 նաց թարգմանատունն կուգար և
 թարգմանին իմաց կուտար իրենց Տես-
 չին ըրած խնդիրը . նա ալ Արքազան
 Պատրիարք Հօր կ'իմացնէր | ատինաց
 հրաման ուղելը պատարագելու գա-
 լու համար . և ըստ հրամանի Արքազան
 Պատրիարքին՝ | ատինաց թարգմանին
 կը հաղորդէր Արքազան Պատրիարքի
 հրամանը Հայոց վանաց թարգմա-
 նը և ըստ այնմ գային | ատինք հե-
 տեւեալ օրը : Այլ այս անգամ | ա-
 տինաց թարգմանը ըստ պատուիրա-
 նաց իւրեանց Տեսչին (գուցէ աւելի
 պատիւ սեպելով) . կամ պատուելով
 խաբել ուղելով ըստ իւրեանց բնա-
 ձիր բարուցն ,) կը խնդրէր որ Արքա-
 զան Պատրիարքին՝ ներկայանայ և նոյն
 տարուան հրամանը անկէց առնէ .
 զոր երբ իմացուց Հայոց թարգմանը
 Արքազան Պատրիարքին՝ լժէ այսպէս
 կը խնդրէ , առատ բարի , ըստ , թող
 գայ , և եթէ կ'ուղէ՝ իրենց Տեսու-

չըն ալ հետը բերէ ։ Պը լ ատինաց
թարգմանն Արքազան Պատրիարքին
ներկայացաւ, ամենայն սիրով ողջունեւ
լով զնա և ըստ օրինի պատուելէ զկնի՝
հարցուց նաև իրենց Տեսչին զորպիւ
սութենէն և այլն ։ Եւ ապա լ ատինաց
թարգմանը ըստ իւրեանց տեսչին պա-
տուիրանացն՝ նոր տարիներ և անդորր
օրեր խաղաղութեամբ անցնել մաղ-
թելէ զկնի ։ Նորին Արքազնութե հա-
մար, ապա խնդրեց իրենց Տեսչին
կողմէն որ Արքազան Պատրիարքը հր-
բաման տայ ինչպէս ամեն տարի, նոյն-
պէս հետեւեալ օրը սուրբ Փրկչայ
վանքը գալու :

Խակ նորին Արքազնութիւնն պա-
տասխանեց թէ՝ « Ո՞նծապէս շնորհա-
կալ եմ ձեր գերապայծառ Տեսչին,
նոյնպէս և ես կը բարեմաղթեմ շատ
տարիներ խաղաղութեամբ խնդու-
թեամբ անցնելու խաղաղ կենօք և
երկար ամօք ։ Խակ ձեր Գերապայծա-
ռին ըրած խնդրոյն պատասխանելով
կը սեմ թէ՝ այդ գործը անցեալ տարի-
էն ՚իվեր ինձ համար բոլորովին լմնցած

գործ մ'է , քանի որ անցեալ տարի սուրբ Յակովայ եկեղեցին գալու հը րաման չտալու պարուաւորուած էինք և չտուինք ալ , և դուք ալ չեկաք , և գայիք ալ չը պիտի կրնայի զձեղ ըն դունել , լսել է որ՝ ինչպէս հիմայ ալ յիշեցի , արդէն լրացած գործ մ'է մեզի համար . ձեզի համար ալ այդ պէս պէտք էր ըլլալ : —

“Ո՞չ , ըսաւ | ատինաց թարգմանը , այդ անցեալ տարուան եղածը Սուրբ Յակովայ վանուց համար էր . մենք այսօր Զեր Արքազնութենէ կայիափայի տան համար , այսինքն՝ սուրբ Փրկչի եկեղեցւոյ համար հրաման կ'ու զենք գալու , ուր անցեալ տարի պատարագեցինք Զեր հրամանաւ : —

“Զեր անցեալ տարի ՚ի սուրբ Փրկչի եկեղեցին պատարագելը , ըսաւ Արքազն Պատրիարքն , մեր արդելու մէն յառաջ ըլլալուն համար է . վասն զի մենք զձեղ երբ արդիկեցինք սուրբ Յակով գալէն , արդէն դուք երկու կամ երեք ամիս յառաջ ՚ի սուրբ Փրկչի պատարագ ըրած էիք , և այն ա-

տեն ալ զձեղ արդիլելու պատճառ
ներն դեռ դիտելու կէտեր ուներ,
և տակաւին օրոշուած չէր մեր կողը
մանեւ, անոր համար սպասեցինք և ձեր
սուրբ Յակովը տօնին օրը զձեղ
արդիլեցինք ։ ուրեմն ձեր լմբոնու-
մը սուտ չէ, սխալ է : —

“Այնպէս չէ, ըստ լատինաց
թարգմանն, այլ ըսել կ'ուղեմ որ
սուրբ Փրկիչ Եկեղեցին զմեղ պաշ-
տօնապէս արդիլած չէք ։ վասնորոյ
կը խնդրէ մեր Տեսուշը դոնեւ այն
տեղը պատարագել թոյլատիք : —

“Հիմայ հասկցայ, ըստ Արքա-
ղան Պատրիարքն . ուրեմն ըսել կ'ու-
ղեք որ պաշտօնապէս արդիլուիլ կ'ու-
ղեք ։ ահա այսօր Պրանչիսկեանները
Հայոց սուրբ Փրկիչ Եկեղեցին գա-
լէն ալ պաշտօնապէս արդիլեցի, եր-
բէք հրաման չունիմ որ մեր սուրբ
Փրկչայ Եկեղեցին արարողութիւննիդ
կատարելու համար դաք ։ Հիմա միա-
մաեցաք ։ վերջին խօսքս առիք : —

“Ըստ բարի . ես թարգման մի
եմ, ըստ լատինաց թարգմանը, եր-

կու կողմին համար . անսնց խօսքը՝
ձեզի , և ձեր խօսքը՝ անոնց թարգա-
մանելու , տանելու և բերելու . ինչ
պէս անոնց ըսածը Ձեր Արբագնու-
թեան բերի , Ձեր Արբագնութեան
ըսածներն ալ անոնց պիտի տանիմ .
իմ պաշտօնիս սահմանը այսքան է ,
ասկից աւելի խօսելու ոչ կրնամ և ոչ
ալ հրաման ունիմ : —

« Քանի որ ձեր պաշտօնը և պար-
տաւորութիւնը այդ է , ուրեմն ինձ-
մեն ինչ որ պատասխան առիք , նոյնը
առանց այլայլելու պէտք էք ձեր Գե-
րապայծառին պատմել : Կաեւ սա
ալ աւելցուցէք ըսելու ձեր Գերա-
պայծառ Տեսչին , որ իրեն մարդիկ-
ները զապէ , շըլայ որ ինչպէս շատ
ժամանակ պատահած է՝ դարձեալ
այնպէս յեղափոխական պատրաստու-
թիւններ ընեն . ես ոչ զէնիք ունիմ և ոչ
զօրք իրենց յեղափոխական շարժում-
ները արդիլելու համար . միայն սա դիա-
տեմ , որ առանց տան աիրոջ հրամա-
նը և հաճութիւնը առնելու՝ ով որ
այն արգիլուած տան շեմին վլայ ոսք

կը կոխէ , յ մնցաւոր է օրինաց առ
 ջեւ . ես գիտեմ ձեր Ձրանշխկեան
 միաբանւթեան քնութիւնը . այսքան
 եղած անցած խօսքերը , քննութիւն
 ները , արգելքները առ ոչինչ համա-
 րելով հին գարերու մէջ ապրած կար-
 ծելովեթէ այնպէս մեր վրոյ պատրաս-
 տութեյարձակելու ըլլան, ինչպէս վե-
 ըլըսի , գիտցած ըլլան որ ես ալ ինչ որ
 կարելի է սլիտի ընեմ , գոնէ քոլոր
 աշխարհի տարածելու իրենց նոյն ա-
 զարքները ՚ի պատիւ նոյա : Ա ան զի
 այս երկիրը տէր և թագաւոր , դա-
 տաստան և դատաւոր , իրաւունք և
 արդարութիւն ունի , փառք Շարերա-
 րին . և դռները բաց , պաշտօնատար-
 ները պատրաստ են . թող հրամայեն,
 ուներութեան ատեաններուն մէջ ի-
 րաւամբ և արդարութեամբ հաստա-
 տեն օրենց օրինաւոր իրաւունքը կամ
 հրովարտակով կամ կալու ածագրով ,
 եթէ երբէք ունին , և կամ որ և իցէ
 զերպիւ եթէ կարողացան իրաւունք
 ստանալ կամ մեր սեպհականութեան
 մէջ մաս մը ունենալ , այն ատեն ոչ թէ

մինչեւ ցարդ ինչպէս կուգային՝ այն պէս իբրեւ շնորհք, այլ իբրեւ սեպ հական իրաւունք ճակատաբաց թող վայելեն : Ահա այս է իմ առաջին և վերջին խօսքս . ուրեմն այժմ կրնոք երթալ և իմ այս ազդարարութիւնս ալ հետերնիդ տանել : » այսպէս ել և գնաց | ատինաց թարգմանն :

Երբ այսլուրը կը տարածուի Թրան շիսկեան միաբանութեն և ժողովրդոց մէջ, 'ի հարկէ 'ի կրից յառաջացեալ շատ բաներ կրնան ըլլալ ինչպէս բը նական է . և շատ անդամ խառնիճաղանձ հասարակութիւնն շատ ան կարգ բաներ կրնայ ընել կամ գրգռումամբ և կամ վերջը չմտածելով, կարծելով թէ լաւ կ'ընէ :

Այս միջոցին շատ մը սուտ ու սխալ տարածայնութիւններ տարածուիլ ըսկան քաղաքիս մէջ իբր թէ պիտի յարձակին եղեր | ատինք Հայոց վանուց վրայ, պիտի ղառնեն եղեր, և այն և այն և այն . որքան կրնասնէ՝ հաւատացիր . քանի որ տարածայնութիւն շատ և նիւթն ալ ըստ ինքեան

մեծ և շատ ջուր կը վերցնէ :

Եւ ասոր վրայ անձամբ երթալով
Արքազան Պատրիարքն Առևթասար-
բութ Պէյին քով պատմեց նորին Վ սե-
մութեան թէ՝ « ատինները դարձեալ
այս տարի Եկան հրաման ուզելու ,
անկարելի ըլլալը անսնց հասկցուցի .
և պէտք եղած բաւական բաներ ալ
խօսեցայ . բայց և այնպէս Զեր Վ սե-
մութեան եւս ահա լուր կւետամ .
քանի որ ես և բոլոր միաբանութիւ-
նըս ժողովրդովքս հանգերձ նաեւ
վանքերս (Օսմաննեան բարեխնամ Կայ-
սեր հովանաւորութեան տակն եմք .
անոր ամենողորմած խնամոց կարու-
եմք . և Զեր Վ սեմութիւնը այսօր
նորին Վ Եհակաւութեան պատկեր և
արթուն գործակատարն և Ո . Երու-
սաղէմի իշխողն էք . ինչպէս շատ ան-
դամ պատահած է , եթէ սնկարդու-
թիւն մը ընեն | ատինք իմ վանուցս
պատւցն դէմ , որ Ազգիս և Տէրու-
թեանս պատիւն ըսել է , գիտցած
Եղիք որ այն տտեն անպատճառ պի-
տի բողոքեմ բարեխնամ թագաւորիս ,

և այն ոչ թէ | ասինաց ըրած անկար-
 գութեան համար իմ վանուցս պատ-
 ւոյն դէմ, ոչ, այլ Ձեր Ասեմութեան
 վրայօք բողոքելու պիտի սափառուիմ,
 իմ վանուցս պատիւը որ Օսմանեան
 բարեխնամ Տէրութեան կը վերաբե-
 րի՝ չպաշտպանելուդ համար : Ահա
 ես իմ պարտքս կատարելու համար
 անձամք եկայ Ձեր Ասեմութեան
 ըրւ տուի . Ձեզ կը մնայ , Ձեր միւ-
 ակ և նուիրական պարաքը , այսինքն
 օրինաւոր հսկողութիւնը կատարել .
 վասն զի վաղուան օր մեզ ալ նոյն ե-
 կեղեցւոյն տօնն է , զինի մեր արարո-
 ղութիւնը կատարելոյ հան , վանքին
 դուռը պիտի Կըզղեմ և բանալիները
 մէջքս խօթելով Առըրք Յակովը այ-
 վանքը պիտի գամ , միայն երկու հո-
 չի պահապան թողլով և անոնց պա-
 տուիրելով որ իրենք իրենցմէ ոչ ձայն
 հանեն երբէք և ոչ պատճառս տան
 որ և իցէ անկարգութեան . այլ եթէ
 Վյրանչիսկեանք իրենք իրենցմէ գրգը-
 ռեալ յարձակին վանքին գուռը խոր-
 տակելու կամ յարձակումներ ընե-

լու , իսկոյն նոյն վանքին զանդակը
 հնչեցնեն որ մօտ է սուրբ Յակովը այ
 վանուցս . և երբ զանդակին ձայնը կը
 լսենք , բոլոր միաբանութեամբս պէտք
 է հասնիմք նոյն տեղը՝ մեր անարգեալ
 արդար իրաւունքը պաշտպանելու . ալ
 ասկէց աւելի ուրիշ ըսելիք մը չու-
 նիմ . մնացեալը Ձեր Ասեմութեան
 կը թողում իմաստասիրել , ո ըստ և
 վերջացուց Արքաղան Պատրիարքն իւր
 խօսքը : Ասեմ . Ոութասարբուժ Պէյր
 չենք գիտեր ինչեն ստիպեալ՝ բաւա-
 կան յորդորելէ զինի , որ Արքաղան
 Պատրիարքը թոյլատրէ Կատինաց , որ
 Կատինք իրենց արարողութիւնը կա-
 տարեն . և երբ տեսաւ որ Արքաղան
 Պատրիարքը զիջում ցուցներ , և զայն
 համոզելը որ և իցէ կերպիւ անկարե-
 լիէ , յաւելցուց ասել , թէ Ակարե-
 լի՞ բան է արդեօք (Օսմանեան բարե-
 խնամ) Տէրութեան հսկողութեան
 տակ եղած այսպէս երեւելի սուրբ
 քաղաքի մը մէջ առանց Տէրութեան
 գիտաւթեանը մեր հարազատ հպա-
 տակաց սեպհական իրաւանց վրայ

յարձակին | ատինք որ և իցէ իրենց
կամքը կատարելու կարողանան մեծա-
զօր Տէրութեան օրինաց դէմ. եթէ
իրաւունք ունին, թող դատ վարեն
տէրութեան ատեաններուն մէջ, հաս-
տատեն իրենց իրաւունքները, այն
ատեն Տէրութիւնն կարող է իրենց
իրաւունքը տեղը բերել. ապա թէ
ոչ այդպէս անկարգ շարժումներով
ունեցած իրաւունքնին անդամ կը
կորսնցնեն, և իրենց ունեցած պա-
տիւնին ալ կը կոտրուի : -

“Ո՞ւնք այդ խօսքը շատ անդամ՝
ըսած եմք, ըսաւ Արբաղան պատրի-
արքը, այլ Արանջիսկեանք այդպիսի
օրինաւորութեան մտիկ ընելչեն ու-
զեր. և ինչպէս շատ անդամ տեսնը-
ւած է, այդպէս շարժումներ շատ ը-
րած են և համարէ թէ միշտ իրենց
քով մնացած է շնորհիւ . . . (Օրինակի
համար՝ հեռի շերթանք . ահաւասիկ
սոյն սուրբ Փրկչայ վանուցս կից եղած
մեր սեպհական գերեզմանատան վր-
այ բացուած երկու դռներն յայտ-
նի կը քարողեն անոնց ըրած անիրա-

ւութիւններն , ուր մեր արդար իրաւանց վրայ երկու դուռը մեկէն բայած են իրենց գերեզմանատան մէկ կողմը թագաւորական ճանապարհ կայ իքէն . նոյնալէս սուրբ Շննդեան այրին մէջ ձգուած կրակն . նոյն տեղէն Հայոց և Յունաց պատկերաց գողցուին . նոյն տեղը մեր եկեղեցին մէջէն անցուդարձի Համար իրաւանց դէմ բացուած դուռը , որով զմեղ միշտ ոտից տակ առած են . նմանատալէս Քառասնից այրին շէնքերը որ Տէրութենէ եկած Հրամանին հակառակ են . նաև Գեթսեմանիի ձորին մէջ Քրիստոսի Տեառն մերոյ աղօթած տեղը որ Երեք ազգաց միշտերէի է , պատքաշելով իւրացուցած են : ”

‘Եօրին Ասեմութին ըստ . “Դեռ ես նոյն Ջրանցիսկեաններուն բնութեան և արարքներուն տեղեկութիւն չունիմ . քանի որ այդ այդպէս է , դուք հօկեցեք արթնութեամբ Ձեր կողմանէ Երբեք պատճառ մի չտալով . և Երբ այդպէս շարժումներուն շուտով

ինձ լուր տուեք . ես խսկոյն հոն կը
հասնիմ պէտք եղած մարդիկներովս
առաջքն առնելու : —

“Ո սեմափայլ Տէր , ըստ Արբազան
Պատրիարքը , երբ լատինք այդպէս
բան ընելու դիտաւորութիւն ունին ,
յանկարծ կը գործեն . այն ատեն իմ
Զեղլուր տալս ինչ օդուտ կրնայ ը-
նել , և մինչեւ Զեր Ո սեմութեան
լուր հասնի և դուք գալու աճապա-
րէք , բանը բանեն կ'անցնի : Տէր իմ
եթէ Տէրութեն հարազատ հպատակ
Հայոց ազգին սեպհական արդար ի-
րաւունքը , որ կերպիւ իւիք բարե-
խնամ Տէրութեան իրաւունքն ըսել
է , ըստ Տէրութեան օրինաց և սլար-
տաւորութեանց պիտի պաշտպանէք ,
ինչպէս կը վայելէ հաւատարիմ հպա-
տակի մը , ահաւասիկ ժամանակն ար-
դէն իսկ հասեալէ , վստահացուցէք
զիս գոնէ Զեր բերանացի խօսքովը , և
եթէ չպիտի պաշտպանէք (ինչպէս
ժամանակին Զեր պաշտօնակցին մէկը
ըստ ինձ , ասկէց աւելի բան մը
չէմ կրնար ընել . դուն ալ գնա քեզի

տէր մի գտիր), նոյնպէս Զեր Վ սե-
մութիւնն ալ կրնաք ըսել յայտնա-
պէս թէ՝ Հայոց ազգին սեպհական
և արդար իրաւունքը Պիրանչիսկեան
կրօնաւորներէն չարաշար յափշտակ-
սւած առեն ես ձեր իրաւունքը
երբէք չպիտի պաշտպանեմ, և պիտի
թողում որ դուք ձեր թշնամւոյն
ճիրաններուն մէջ ճզմուիք։ Թէ սյա
և թէ այն, ինձ կառարեալ խօսք
առենք որ ես ալ գոնէ դիտնամ իմ
հարազատ Տէրութեանս կողմէն իմ
իրաւունքս պիտի պաշտպանուի թէ
սչ, անոր համեմատ գլխուս ճարը գըտ-
նալու աշխատիմ։ —

“Ես ձեզի չեմ ըսեր, բայտ Կորին
Վ սեմութիւնն, թէ ձեր իրաւունքը
չեմ պաշտպաներ, ձեր արդար և սեպ-
հական իրաւունքները ինչպէս բռլը
հպատակաց՝ նոյնպէս կը պաշտպանեմ
և պարտաւոր իսկ ալ եմ. բայց միայն
առ կ'ուղեմ՝ որ ինչպէս Տէրութեան
կողմէն, նոյնպէս ալ ձեր կողմէն, որ
Տէրութեան հարազատ հպատակ և
զաւակ իսկ էք, երբէք պատճառ մի

չորուի այս գործին մէջ Պրանշխակեաց
 գրգռման. Երբ Տէրութիւնն և դուք
 առանց պատճառ մի տալու կը մնաք,
 այն ատեն Երբ անսնց կողմէն յար-
 ձակում կամ որ և իցէ անկարգութիւ-
 նանի, չկարծէք որ ես պիտի կայնիմ
 մնամ առանց բան մի ընելու. քաւ լի-
 ցի. ՚ի հարկէ Տէրութեան կանոնին
 համեմատ արդարապէս ինչ որ պէտք
 է, պիտի ընեմ. այլ գլխաւոր դիտո-
 զութիւնս սա տեղն է, որ Պրանշխա-
 կեանք մեծազօր Տէրութեան սեպհա-
 կան Երկրին մէջ (ուր իրենք իբրեւ
 հիւր կը սեպուին), (Սոմանեան մե-
 ծազօր Տէրութեան հարազատ հպա-
 տակին վրայ ինչպէս պիտի յարձակին
 անոր սեպհական իրաւունքը յափըշ-
 տակելու. թէ և դուք կ'ըսէք, և
 գրաէն ոլ շատերը կը վկայեն անսնց
 արարքներուն վրայ, բայց ես միշտ
 տարակուսեալ եմ և չեմ կրնար հա-
 ւասալ, որ անոնք այդ աստիճան յան-
 գդնութիւն գործելու համարձակին.
 Եթէ ինչպէս որ դուք կ'ըսէք, այդպէս
 բան մի ընելու ըլլան, ըսել է որ Տէ-

բութիւն ի՞նչ է , չեն գիտեր , կամ
ճանաչել իսկ չեն ուզեր և այլն : —

“Եթու Զեր Ա սեմութիւնը նոր եւ
կած է , բաւ Արքազան Պատրիարքը
և իրաւունք ունիք թէ մեր և թէ
դրսէն լստծներնուդ վրաց տարակու-
սիլ . բայց և այնպէս շատ չտեւեր ,
Գրանչխակեանք իրենց շնորհքը Զեր
Ա սեմութեն օրովն ալ ’ի հարկի գոր-
ծով պիտի յայտնեն գոնե մեղի սուտ
չհանելու համար . Կատուծով կը յու-
սամ որ քիչ առենէն կը տեսնէք . Հի-
մայ մենիք մեր առաջը եղած մեռելը
լանք , հէմ լանք , հէմ երթանք ” բաելով
խօսքը վերջացրնելով մնաք բարեաւ-
լսաւ . Աորին Ա սեմութեանք . և բաժ-
նուեցան իրարմէ :

Հոգեգալստեան օրը մեր սուրբ
պատարագը և պաշտօնը մատուցանեւ-
լէ զկնի , Արքազան Հայրը միայն եր-
կու վարդապետ ձգելով սուրբ Փրկ-
չայ վանսւց որ հսկեն առանց ձայն
հանելու , ինչպէս ’ի վեր անդր յիշ-
ուեցաւ , սուրբ Փրկչայ վանսւց դուռը
իր ձեռօքը կղպելով և բանալիքը մէջ

քը խօթելով հանդերձ բոլոր միաբաւ
 նութեամբ եկան սուրբ Յակովայ
 վանքը . բայց և այնպէս թէ Արքազան
 Պատրիարքը և թէ բոլոր միաբանու-
 թիւնը արթուն հսկողութեամբ կը
 գիտէին | ատինաց շարժմանը կամ
 արարքներուն վրայօք , թէ ինչ ըն-
 թացք պիտի բռնեն . նոյնպէս դէտ
 ակն կային սուրբ քաղաքիս համարէ
 թէ բոլոր բնակիչքն և հետաքրք-
 րութեամբ երթեւեկս առնեին սուրբ
 Փրկչայ վանքին կողմերը : Վահաւանդ
 թէ նոյն երեկոյին ինչպէս Յոյնք սո-
 վորութիւն ունին իրենց գերեզմանաւ-
 տան մէջ ժամերդութեան հանդէսը
 կատարելու , որ մեր գերեզմանաւտան
 կից է , սոյն պատճառաւ և քան զեւս
 բազմութիւնը կը շատնար . և մանա-
 ւանդ քանի որ մէջ տեղ սոյն այս հե-
 տաքրքրական պատճառը կար , այս
 ինքն սուրբ Փրկչայ խնդիրը , ի հարկէ
 բնականաբար շշուկներ ալ պակաս չե-
 ին անդ նոյն բազմութեան մէջ . ոյր
 վասն | սեմափայլ | Վութասարրուժ
 Պէյլ կանխատեսութիւն ընելով՝ թէ

Քանի որ բաւական բազմութիւն
 հաւաքուած է անդ, չըլլայ որ ա
 նոնց մէջ փոքր ինչ արտաքին անկար-
 գութիւն մը պատահելով խնդիրը ըն-
 դարձակի, և ուրիշ կերպարանք առ-
 նէ, իր հսկողութիւնը դարձուց նոյն
 բազմութեան վրայ, որով և մեր ոուրբ
 Փրկչայ վանուց վրայ: (Օրը բոլորելով
 երեկոյ եղաւ. | առինաց կողմէն եր-
 բէք նշոյլ մ' անգամ չերեւեցաւ. և
 ի՞նչպէս ալ կարելի էր անսնց այն ան-
 ցած ժամանակներուն պէս շարժում
 ներ ընել, քանի որ թէ Տէրութեան
 կողմէն և թէ Հայոց կողմէն այս
 քան օրինաւոր միջոցներ և հսկողու-
 թիւններ եղան. ոյր վասն ամենայն
 խաղաղութեամբ անցաւ այն օրը.
 Թէ և հետեւեալ երկրորդ և եր-
 րորդ օրերն ալ բոլորովին անզգոյշ
 չմնաց նոյն տեղերը. ինչ և իցէ վեր-
 ջացաւ ամենայն անդորրութեամբ
 այս խնդիրը օրինաւոր և առանց տա-
 րածայնութեան Հայոց արդար եւ
 սեպհական իրաւունքը իրեն կարգին
 պահուելով նախ շնորհիւ բարեխնամ

Տերութեան և ապա իր արթուն պաշտօնակալ Ասեմ . Վութասարրուֆ Այլի Պէյին . ոյր վասն Ազգովին մեծ շնորհակալութիւն ունիմք մեր վեհափառ Ասւլթանէն որ այսպէս արթուն և խորախորհուրդ պաշտօնեաներ խրկած է այս բոլոր Քրիստոնէից սիրելի եւ պաշտելի սուրբ Երկրին պահպանութիւն ընելու :

Երկրորդ սուրբ Հակովի խորոյն =

Արդէն անցեալ տարի սուրբ Յակովի վանքը լատինաց գալլ օրինաւորապէս արդիլուած էր և այս տարի ալ Խանէի Գայիք, այսինքն սուրբ Փրբեչայ վանքն ալ Պենտէկոստէին օրը գալելնին արդիլուելէ զինի՝ կը կարծուէր որ Թրանչիսկեանիք ալ այսքան եղած անցած խօսքերը տարածայնութիւնները , նա մանաւանդ մեր Արքազան Պատրիարքին վերջնական կերպիւ իշենց ըրած բացասութիւնները նաև

Բ. Դոնեն Եկած հրամանը՝ որ կ'ըսէր
թէ Հայոց Պատրիարքը շատ մի նե-
ղէք, յիշելով, կամ լու եւս է ըստ
Տաճկաց առակին. “Իսպէնէն Եկըն կիլ-
ար կիլմէ. իսպէնմէյէն Եկըն կիպիլ Եկընի
պար կիլմէ :” Այս պատուական առա-
ծէն գոնէ իրենց ըրածներուն անտե-
զի ըլլալուն համազուելով՝ թէ քանի
որ տանուտէրը իւր սեպհական տա-
նը մէջ հիւր ընդունիլ չուզեր, կը կար-
ծէինք որ կը դադրին իրենց ոյս ան-
տեզի և անիրաւ ստիպումներէն :

Բայց և այնպէս Հայոց այս մտա-
ծութիւնը՝ որ ամենաօրինաւոր էր,
ինչպէս որ կը մտածուէր՝ այնպէս
չելու. վասն զի երբ լատինաց սուրբ
Յակովայ տօնին օրը մօտիկցաւ,
դարձեալ շշուկները շատնալ սկսան
լատինաց կողմանէ. և Հայոց Արքա-
զան Պատրիարքին բոլորովին հան-
դարտ և անկասկած կեցած միջոցին,
ահա սուրբ քաղաքիս Ասեմ. Առւ-
թասարութ Պէյէն գիր մը ստացաւ
՚ի 4 Յուլիսի 1871, որով դարձեալ
կը յորդորէր և կը ջանար համոզել ըդ-

Արքաղան Պատրիարքը . և ոչ այսակ
 միայն , այլ և պակաս չէր նոյն գրոյն
 մեջ ահ և երկիւղ պատճառելու կր-
 տորներ , որով զ' Ն . Արքավնութիւնը
 վախցընելով կը ջանար | ատինաց կա-
 մաց կատարումը դիւրացնել , և կ'ըս-
 տիպէր միանգամայն որ առանց ժա-
 մանակ կորսնցընելու վութօվ պա-
 տախսանէ վերջնական կերպիւ՝ ինչ
 որ պիտի ըսէ . վասն զի “ Յայս քանիցս
 անգամ է , կ'ըսէր , կը յորդորեմ կը
 թախանձեմ և կը խոստանամ ձեզ որ
 ձեր բարք կորսուած իրաւունքներուն
 համար ։ Դուռը կըդրեմ և կը ջանամ
 որ այն իրաւունքները դարձեալետդար-
 ձուին ձեզ . նա և | ատինաց սաստիկ
 պատուէր կուտամ որ ձեր եկեղեցին
 եկած օրերնին սովորականէն դուրս
 երբէք բան ընկեն , սովորականէն դուրս
 արարողութիւններ հնարելով ձեզ
 ձանձրութիւն չտան , և ձեր սեպհա-
 կանութեան իրաւանց դպչելու բա-
 ներէն զգուշանան , և այն : Յայց այ-
 սու ամենայնիւ զձեղ չկարողացայ հա-
 մողէլ , և ձեր այս անհամողելի մնալը

Երթալով Երթալով Տէրութեան կա-
մացը դէմ գործ կը համարուի . Եթէ
դուք դարձեալ անհամողելի մնաք ,
գուցէ ասկէց աւելի խիստ խօսելու-
պիտի պարտաւորուիմ ձեր հետ . ու-
րեմն դուք ձեղէն լաւ մտածեցէք , և
ըստ այնմ՝ պատասխան տուէք ինձ .
ինչ որ պիտի ըսէք վերջուպէս :

Արք այս անակնունելի և միան-
գամայն սաստիկ գրութիւնն ընդու-
նեց Արքազան Պատրիարքն , պահ մի
ափշեցաւ մնաց . և հետեւեալ օրը ան-
ձամբ Վութասարրուֆ Պէյին քով
Երթալով , հետն ունելով վերսիշեալ
նամակին պատասխանն , զինի սովորա-
կան տեսակցութեան ըսաւ ։ Վ ս-
սեմութեան . “Վութասարրուֆ Պէյ ,
յերեկեան օր Զեր Վ սեմութեան կող-
մէն զրկուած հրամանը Հայոց աղդին
ընդհանրութեան սեպհականութեան
իրաւանց դէմ ըլլալէ զատ՝ սաստիկ և
խիստ սպառնական ալէր միանգամայն
Վիթէ ։ Դուռը իւր հարազատ հր-
պատակին սեպհականութեան արդար
իրաւունքը օտարաց ուրբին տակ տա-

լով անոր ունեցած սեպհական իրաւունքները ճանաչել չուղեր . այս քանիցս անգամ եղաւ որ ինդիլներ կուտամբ , կը բողոքեմք , կուլանք , կ'ողքամք ազգովին և Պրանջխկեան կրօնաւորներուն մեղ տուած վեասները Ճշմարտապէս և բանաւոր փաստերով յառաջ կը բերեմք մի առ մի թուելով և կը հաստատեմք մեր արդար իրաւունքն ըլլալը , զորս բոլոր աշխարհ գիտէ թէ անիրաւաբար յափշտակած են մեզմէ . եթէ այս ըսածներուս չէք հաւատար , Վսեմ . Տէր , դուք ձեզէն կարող էք քիչ ատենի մէջ անձամբ տեսնել , քննել և իմանալ թէ որ աստիճան արդարութեան դէմ է այդ յափշտակութիւններն . և նոյն խոկ իրաւունքներն են զորս Վսեմ . Տէր , դուք ձեզէն կրսէք քանիցս անգամ թէ , եթէ թոյլ տաք | ատինաց ձեր տուրք Յակովը եկեղեցւոյ մէջ պատարագել , այն ձեր կորսուած բոլոր իրաւունքները ին . Դուռը գրելով կ'աշխատիմ ետ դարձընելու ձեզ :

“Նոյն խոստմունքը զօր այսօր Զեր

Վ աեմութիւնը կը խստանայ, Հայոց
 Պատրիարքին համար նոր չէ . վասն զի
 միւնոյն խոստմունքը միւնոյն ձեւով
 Բ. Դոնէն ՚ի կ. Պօլիս Աղգային Վար-
 չութեան քանի մի անդամ առաջար-
 կուեցաւ և անկից ալ ինձ իմացուցած
 էին և ես իսկայն հերքեցի, զոր արդէն
 Վարչութիւնն ալ հերքած էր, բայց
 այսօր վերստին նոյն մնուախ յոյսը դար-
 ձեալ նոր ՚ի նորոյ մեզ կ'առաջարկուի,
 իբրեւ թէ երբէք յիշուած չէ : Եւ ա-
 ւելի զարմանալին այն է՝ որ Բ. Դու-
 ռը փոխանակ այսքան ատեն իւր սի-
 րելի և հաւատարիմ հպատակին կոր-
 սուած իրաւունքները ժամյաւածյա-
 նիրաւ յափշտակչին ճիրաններէն թա-
 փելով իւր հարազատ տիրոջը Հայոց
 Պատրիարքին յանձնել սկսելու տեղ,
 Հայոց Պատրիարքը յորդորել, ստի-
 պել և երկեցուցանել կըսկսի, որ
 նոր կորուստներ ընէ անիկայ և թոյ-
 լատրէ । ատինաց որ դան շարունակեն
 իրենց արարողութիւնն կատարել,
 որով Հայոց սեղհական եկեղեցւոյն
 մեջ իրենց կրօնը, աղքութիւնը նա-

խառուի, հայհոյի, և անոնց սեպհայ
կանութեան իրաւունքները՝ ի հիմանէ
տապալի . կարծես թէ մինչեւ ցարդ
եղածները քիչ եկած են : Ո՞վ ողբալի
վիճակ . կը ներէ օրէնքը որ Հայոց
Պատրիարքը փոխանակ հին կորուսած
իրաւունքները ձեռք բերելու՝ նոր ՚ի
նորոյ իրաւունքներ կորանցընէ . փոխա-
նակ նոր ՚ի նորոյ իրաւունքներ կորան-
ցնելու Հայոց Պատրիարքը՝ նեքը կոր-
ուսի աւելի լու ըլլար . այս, բայց ա-
սով ալ խնդիրը չվերջանար, վասն զի
իւր յաջորդին ալ պարտաւորութիւնը
մի և նոյն է, գուցէ առաւելեւս :

“ Չեմ հասկնար, Ո սեմ . Տէր, ի՞նչ
կը նշանակէ թէ Ի . Դրան և թէ Չեր
Ո սեմութեան յորդորմունքը լ ատի-
նաց թոյլատրելու մասին . այսուհետեւ
լ ատինաց թոյլատրութի ընելը, լ ա-
տինաց արտօնութիւն տալ է . մանա-
ւանդ Հայոց ընդհանրութեան սեպ-
հական եղած վանուցս մէջ մասնակից՝
այսինքն մ-լանէի ընել ըսելէ . աւելի
պարզ խօսելու համար, Հայոց Պատ-
րիարքը իւր ձեռօքը իւր սիրելի ազ-

գին աչքը հանել ըսելէ . և | ատիւ
նաց ձեռքը սուր տալով հրամայելէ
որ նախ Հայոց Պատրիարքին գլուխը
կտրեն և ապա ըստ կարգին . քանի որ
Հայոց միամստաբար իբրեւ շնորհք
ժամանակին ըրած թոյլատրութենէն
այսքան աղետալի հետեւանքներ հա-
նել կարողացան Վրանցիսկեանք , այն
ատեն վանքը բոլորովին | ատինաց
յանձնելով դուրս ելլելու պիտի պար-
տաւորիմք . միթէ Ռ . Դուռը այսպէս
ըլլալուն կը փափաքէ , զոր Տէր մի
արասցէ և քաւ լիցի :

“Ռ . Դուռը զմեղ կը յորդորէ , կը ս-
տիպէ որ նախ մենք զիջում ընենք և
թոյլատրենք առանց արդարութեան
և առանց իրաւանց՝ որ | ատինք գան
մեր սեսլհական եկեղեցւոյն մէջ պա-
տարագելու . և զմեղ սնոտի յոյսերով
փայփայել կը ջանայ , այսինքն թէ | ա-
տինք այսուհետեւ օրինաւորապէս պի-
տի շարժին եղեր , աւելի բաներ չը
պիտի ընեն եղեր , և մեր իրաւունքնե-
րը չպիտի յափշտակեն եղեր , և 1856
թուականէն սկսեալ մինչեւ ցարդ

կորսուած իրաւունքնիս տեղը պիտի
գայ եղեր . կարծես թէ 1856 էն ա-
ռաջ Հայոց կորսուած իրաւունքները
աղդային իրաւունքները չեն կար-
ծես թէ նոյն հին իրաւունքները ևս
իւր սիրելի հարազատ հպատակին ետ-
դարձնելու ։ Դուռը պարտաւո-
րութիւն չունի , ոյր վասն այդ մասին
չէզոք մնալ պարտաւորեալ է . զարմա-
նալի գործ :

“Չեր Վ սեմութիւնը զմեզ նախ
յորդորեցիք , և երբ նայեցաք որ Հա-
յոց Պատրիարքը իւր աղդային իրա-
ւանց կորստեան չհամոզւեցաւ , իս-
կոյն խիստ պահանջումի փոխեցիք ձեր
յորդորը , և զայն այն աստիճան խստա-
ցուցիք՝ որ կարծես թէ Գրանչիսկեանք
՚ի բնէ անտի Հայոց հետ սոյն եկե-
ղեցւոյ հիմք ձգած , անոր շինութեան
ծախսերուն կէսը իրենք տուած , և
նոյն վանուց համար մինչեւ ցարդ
աղդովին քաջուած անտանելի նեղու-
թեանց և տառապանաց մասնակից ե-
ղած , Հայոց միաբանութեան և ընդ-
հանուր Աղդին հետ նոյն վանուց ա-

զատութեան համար թի՛ պարտուց
թէ արտաքին և թէ ներքին թշնա-
մեաց դէմ միասին աշխատած, արեան
քրտինք թափած, նախառուած, չարչա-
լուած, 'ի գան և 'ի բանդ մտած. թե-
ւերնին կոտրած, աչքերնին ելած, 'ի
մահ մատնուած են . և այսու ամեւ
նայնիւ այսօր ալ նոյն վանուց մէջ գա-
լու սլատարագելու սեսղական իրա-
ւունք ունեցածի պէս թոյլատրել կը
ստիպէք Հայոց Պատրիարքը. որ ամեւ
նաանկարելի է: Ապա ուր թողումք այս-
քան դարերէ 'ի վեր (Օսմանեան Բա-
րեխնամ կայսերաց տուած հրովար-
տակներն, իմիւազներն, արտօնագրերն,
որոնց մէջ երբէք լատինաց անուն
չկայ . և ասոր ո՞ր օրէնքը կը ներէ և
ո՞ր սիրտ կարէ դիմանալ:

“ Վիթէ Բ. Դուռը 1856 թուէն
զինի Հայոց կորսուած իրաւունքները
ետ դարձնելու խօսք տալովը ինքն վը
կայած չըլածք որ ինքը գիտէ եղեր իւր
սիրելի հաղատակ Հայոց ազգին կոր-
սուած իրաւունքներ ունենալը, եթէ
Բ. Դուռը տեղեակ չըլար և չգիտ-

նար, այնքան ցաւ չեր մեղ, այլ երբ
 գիտէ և դարձեալ զայոց Պատրի-
 աքը կը ստիպէ որ | ատինաց թոյլա-
 տրէ, չեմ հասկընար թէ ի՞նչ ըսել է:
 Եթէ ըսեմք ի՞չ. Դուռը իւր սիրելի
 հսկատակին ունեցած պարտաւորու-
 թիւնն չդիտեր, քա՛ւ լիցի. եթէ ը-
 սեմք գիտէ, ուրեմն Հայոց այսքան
 առենէ 'ի վեր կորսուած այնշափ իրա-
 ւունքներուն վրայ ինչու չհսկեր, ին-
 չու յափշտակչին ձեռքէն առնելով ի-
 րեն սեպհական տիրոջը չդարձներ:
 Քանի որ Հայք զկենի ամենակարու-
 զին Աստուծոյ (Սամանեան Բարեխը-
 նում Տէրութենէ զատ ուրիշ աէր
 չունին, անոր յանձնուած են այն երկ-
 նաւոր տրաբչէն, ուրեմն ո՞ր աստի-
 ճան պարտաւորէ այսօր իւր գթոտ
 աչքը իւր սիրելի հսկատակին կոր-
 սուած ու կորսուելիք սեպհական ի-
 րաւանց վրայ դարձնելու, իւր բոլոր
 ազգեցութիւնները 'ի գործ գնելով
 զայն ազատերու այսպէս սաստիկ մի-
 տատանջութենէ. և յափշտակութիւն-
 ներէ: Առ գուք ձեղէն դատեցէք նա

և այսօր իմ սրտիս սաստիկ յուզման
նեն կրած տագնապներս որք զիս այն
աստիճան կը նեղեն, որով այս եռան-
դուն խօսքերը արտասանելու կը ստի-
պուիմ և գուցէ պէտք եղածէն ալ-
աւելի խօսելով Ձեր Վսեմութեան
գլուխը ցաւցուցած կ'ըլլամ, ոյր վա-
օրն Ձեր Վսեմութենէ ներում կը
խնդրեմ այնպիսի վշտացեալ սրտիւ-
մը, որ այսօր իւր Շարեխնամ Տէրու-
թենէ իւր կորսուած և կորսուելու-
մօտ սեպհական իրաւանց պաշտպա-
նութիւն խնդրած միջոցին մեծամեծ
արգելքներ և ՚ի զուր ստիպումներ
կ'ելլէ իւր առջեւը:

“Վիթէ աւելի զարմանալի և դի-
տելու արժանաւոր կէտ չէ այսօր Շ.
Դրան մեղհամար ըրած առաջարկու-
թեան սա կտորը, այսինքն ՚ի բնէ ան-
տի Հայոց ընդհանուր Վզգին վերա-
բերեալ անկախ և ազատ սեպհակա-
նութեան մէջ օտար ազդեցութեան
տակ օտար ազգաց սլատարագելու-
թոյատրութիւնը իւր սիրելի և հա-
ւատարիմ հպատակէն նախ գրաւ կը-

պահանջէ , որ եթէ խոստանայ և տայ
չայոց Պատրիարքն նոյն գրաւը , ի՞ն .
Դուռըն ալ չայոց կորսուած իրա-
ւունքները ետ պիտի դարձընել տայ ,
ապա թէ ոչ :

“Ով անտանելի ցաւոյս . կորսուած
արդար իրաւունքները փոխանակ ար-
դարութեան սուրբ միայն շողացնե-
լով ամենադիւրին կերպիւ ետ դար-
ձընելու , այսօր ի՞ն . Դուռը չայոց
Պատրիարքէն գրաւ կը պահանջէ ,
գրաւ մը որ չայոց ընդհանուր ազգին
արեամբը գնուած և շաղախուած է .
գրաւ մը որ (Սամանեան Բարեխնամ-
բուր Կայսերաց ձեռնադրուշմհրովար-
տակիներով ազատ և անկախ չայոց
ընդհանուր ազգին արդար սեպհակա-
նութիւնն է : Այնպէս գրաւ մը որ
այսօր սուրբ Երկրին մէջ չայոց ազ-
գին ընդհանութիւն կը ներկայացընէ .
և չայոց համար անդին և չնաշխար-
հիկ գանձ մը եղած է միշտ և է յա-
ւիտեան :

“Ուրեմն Ասեմ . Տէր , չայոց Պատ-
րիարքը այսպէս արդար սեպհականու-

թեան մէջ ամենոյին սղարտգայիւք այս
սօր յայտնեալ իւր սեպհական իրա-
ւանց թշնամի Պրանչեսկեաններուն
ինչպէս կրնայ թոյլատրել . այսպէս ար-
դար սեպհականութեան անհաւա-
տարմաւթիւն ինչպէս կրնայ ընել . իւր
ձեռօքը իւր և իւր սիրելի ազգին աչքը²
Հայոց Պատրիարքը ինչպէս կրնայ փո-
րել . այս տուր և առը ուրիշ բան մը
չէ , եթէ ոչ ՚ի խուղել զերկրորդն՝ ըզ-
նախկինն զանգիւտն զանգինն և ըզ-
նաշխարհիկն կորուսանել է :

“Ով անգիւտ կորստեանս , որոյ հա-
րեւանցի յիշատակն անգամ ընդհա-
նուր Հայոց ազգին սիրար ՚ի խոր խո-
ցեալ թունդ կը հանէ : Ուրեմն ո՞ր
անգութ սիրար պիտի ըլլայ որ անոնց
թոյլատրելու համոզուի . ո՞ր յաւի-
տեան խցանելի ականջը պիտի ըլլայ .
որ զայս սիրով լսէ . ո՞ր կուրանալիք
աչքը պիտի ըլլայ , որ այն թոյլատրու-
թիւնն տեսնելու ցանկայ . ո՞ր չորա-
նալիք ձեռքը պիտի ըլլայ , ո՞ր այդ ա-
նիրաւ թոյլատրութե պայմանը գրէ .
վերջապէս ո՞ր անմիտ , անզգամ , ան-

խիղճ և անօրէն անձը պիտի ըլլայ , որ
այսպէս մնասակար խնդրոյն համոզուի՝
ընդունի , թոյլառորէ ու տեսնայ . լաւ
է այնպիսոյն կենդանւոյն ՚ի դժոխս
իջնալ , կամ երկայն իշոյ կախեալ ըդ-
պարանոցէ և անկանիլ ՚ի ծով , քան
ընդհանուր աղգի մը սիրու յաւի-
տեանս յաւիտենից անբուժելի վիրօք
և արեամբ լեցընել :

“Ա սեմափայլ Տէր , ներեցէք , թէ
և խօսքերս վերջացնել կ'ուզեմ . բայց
և այնպէս քանի կը տեսնամ իմ աղ-
գային արդար իրաւանց կորուստնե-
րը , և նորէ նոր յափշտակութեանց
ձկտումները , աւելի քան զամենայն
ցաւալին ասեմ՝ երկնաւոր թագաւո-
րին Վստուծոյ դէտ և տէր կացու-
ցեալ (Օսմանեան Բարեխնամ Տէրու-
թեան ողորմած թագաւորիս մի քա-
նի անարի պաշտօնեաները , որոնք յան-
ձըն կ'առնուն ըստ բարձր կս մաց
Բարեխնամ Կայսեր իրենց պաշտօնն
կատարել ամենայն հաւատարմութե
և նորին Ա Եհափառութեան կամացն
համեմատ իրաւունք և արդարութի

ընել, սրբոց և այրեաց արդար դատաստան առնել. անիրաւաց, յափրշտակչաց Ճիրանները կտրել, վերջապէս արդարները պսակել, անիրաւնները պատժել, բայց բանիւք և եթ: Այլ երբ պատառիչ գայլերը կը յարձակին Բարեխնամ Տէրութեան հլու և հընազանդ հպատակաց իրաւունքները յափրշտակելու, փոխանակ քաջութեն դէմ գնելու և իւր անձը նոյն հպատակին վրայ զոհելու, իբրեւ վատասիրտ հովիւր ձգելով գայլոց կամքին իւրեանց Տէրութեան սիրելի հպատակը, իրենք կը փախչին և աներեւոյթ կ'ըլլան, և թշնամին զնոսա կը յափրշտակէ և կը ցրուէ ըստ կամոցն: Այս այս է ամենայն աղետից նախադուռն:

“Ակիզըէն մեր իրաւանց վրայ ըստ բարի կամաց Բարեխնամ Տէրութեան եթէ օրինաւոր հսկողներ ունենայինք, ինչու այսքան պիտի մեծնար այս գործը, ոչ ապաքէն ոմանց պաշտօնէից թուլութեան. և անհոգութեան պտուղներն են ասոնք:

“Տէրութիւնը կը սկահանջէ իւր

Հպատակներէն հնազանդութիւն հաւատարմութիւն, որ արդար և սեպ հական իրաւունքն է. բայց Երբ իւր հպատակները օրինաւոր կերպիւնոյն պարտքերը կատարած կ'ըլլան, արդեօք չէրութեան պարտաւորութիւնըն որ աստիճան կը ծանրանայ նոյն ամենահնազանդ հաւատարիմ հպատակին վրայ գութ ունենալու, և ամենայն կերպիւթէ անոր վրայ և թէ անոր բոլոր իրաւանց վրայ օրինաւորապէս հսկելու. ոչ թէ միայն անոր կորսուած իրաւունքները ետ դարձընելու, այլ միանդամայն ամենայն արթնութեամբ հսկելու, որ անոր իւրաւունքները չկորսուին երբէք. թողցուցնեն ուրեմն իմ սիրելի շայոց ազգիս համար՝ եթէ կրնան, թէ Երբ հնազանդ և հաւատարիմ չէ գտնուած նա. բոլոր աշխարհի յայտնի է արեւի նման, ստուգելու կարօտութիւն չկայ. ուրեմն այսպիսի հասարակութիւնն մի իւր Ա հափառ թագաւորին կողմէն փոխարինութիւն ըլլալու համար (զի արժանի է մշակն վարձուց իւրոց) ա-

նոր թէ կորսուած և թէ կորսուելու
անդունդին եզերքը մօտիկցած սեպ
հական իրաւանց վլայ օրինաւորա-
պէս հակողութիւն, և անիրաւ զըր-
պարտչին և յափշտակչին ձեռքէն ու-
զատելու համար է զոր կը պահանջէ .
նոյն պաշտպանութիւնը կը պահանջէ
և Հայոց Պատրիարքը . բայց ընդհա-
կառակը, այսօր ցաւօք կը դիտեմ թէ
ո՞ր աստիճան տկարտցած է Հայոց
ընդհանրութեան պատիւը () սմանեան
Քարեխնամ թագաւորիս քով . որ իւր
աղէտները իւր իրաւանց կորսուեան
համար թափած աղի արտասունքնե-
րուն կոկիծները լսելի չըլլար իւր Ա Ե-
հապետին . և ինչու համար արդարու-
թեան սուրը անիրաւ յափշտակչին
գլխուն վրան շողալու տեղ՝ միշտ Հա-
յոց Պատրիարքը կը յորդորուի , Հա-
յոց Պատրիարքը համոզելու կ'աշխա-
տուի , Հայոց Պատրիարքին սպառ-
նալիքներ կ'ըլլան իւր արդար սեպհա-
կանութեան իրաւունքները կորսնցը-
նելու համար . ո՞չ :

Ա Ա սեմ . Տէր , մեր Քարեխնամ ո-

զորմած կայսեր նողատակին և հրամաւ
նին համեմատ գործեր են ասոնք հի-
մայ . դուք ձեզէն դատեցէք : —

« Պատմածներուդ մէջ ստոյգ է որ
օրինաւոր իրաւունքներ կան , ըսաւ
վաեմ . Առութասարբուժ Պէյը . և
ձեր իրաւանց քանի մը կտորներուն
կորառուած ըլլալը յայտնի կ'երեւի ,
որոյ վասն և ես ձեզ ցաւակից եմ . և
խօսք ալ տուի ձեզ և կուտամ որ ի .
Դուռը ատոնք պիտի կարդադրէ , ա-
սոր համար անհոգ եղիք , իմէ և գու-
ցէ կ'ուշանայ , բայց երբէք չկորսու-
իր . երբ որ ըլլայ՝ ձեր իրաւունքնե-
րը իրաւունք են : Եւ շատերը կը վկայ-
են թէ դուք անոնցմէ շատ նեղուած
էք և շատ ցաւեր քաշած . և նոյն
ցաւերն են որոնք ձեր սիրով կարե-
վէր խոցած են և կը տագնապեն ըզ-
ձեզ , ոյր վասն աւելի եռանդով կը
խօսիք , և ոյր վասն դուք ալ քիչ մը
յառաջ վկայեցէք և ներում խնդրե-
ցիք ձեր տաքութեամբ խօսելուն , և
ես գիտեմ որ միշտ ցաւալի սիրո
ւնեցող վշտացեալ մարդ սաստիկ

տաքութեամբ կը խօսի , մանաւանդ
երբ դիմացի մարդոյն իւր ցաւոյն
կարեկից ըլլալու նշոյլն առնել : Եւ
ես կը գովեմ ձեր այդ եռանդը և
կը վկայեմ ձեր ազդային հաւատար-
մութիւնը . և նոյն խակ այդ հաւա-
տարմութեան պտուղն է , որ կը վսյ-
ելէ ձեր ազգը , վասնորոյ Տէրութեան
ատեաններուն և բարձր պաշտօն
ներուն մէջ բաւական ազդայիններ
ունիք և հետզհետէ աւելնալու վը-
րայ ալ են : Ասոնք ձեզ համար փոքր
պատիւ չեն և Բարեխնամ Տէրու-
թիւնն ալ այնպէս զիտէ , և անոր
համեմատ կը սիրէ զձեզ որպէս կը վայ-
ելէ հարազատ և հաւատարիմ հպա-
տակի մը . սակայն այս գործին մէջ
զձեզ կը յորդորենք , կը ստիպենք այն
գիտնալով միանգամայն որ լատինք՝
ինչպէս որ կը կարծեն , այնքան իրա-
ւունք չունին այս գործին մէջ : —

“ Բնաւ երբէք , ըսաւ . Արբազան
Պատրիարքն ընդմիջելով : —

“ Այլ այսօր զձեզ կը յորդորեմք
որ հաճութիւն տաք լատինաց պա-

տարագելուն, թէ և առանց ձեր հը-
րամանին չեմք ուղեր . ՚ի հարկէ ՞ .
Դուռն որ և է կերպիւ ստիպուած
կ'ըլլայ որ այս խնդիրը ձեզ կ'ընէ , և
միանդամայն կը թախանձէ . եթէ կա-
րելի է այս ընել , ձեր հաւատարիմ
ըլլալուն մեծ տպացոյց մի տուած պի-
տի ըլլոք : —

“ Ազգիս ընդհանրութեան իրա-
ւանց ալ անհաւատարիմ ըլլալս իմ
ձեռօքս վճռած պիտի ըլլամ , ըսաւ
Արքազան Պատրիարքն խօսքը ընդմի-
ջելով , և այն՝ մեծ կորուստով , և ապա-
ցցցով ալ հաստատած և ստուգած : —

“ Դուք համոզուեցէք . ինձ խօսք
տուէք , Կատինք իրենց արարողու-
թիւնը թող կատարեն . այս փորձան-
քըն անցնի որ մեծ կէտ մ'է , թողանց-
նի երթայ , անկէց ետքը մենք ալ մեր
խօսք տուածները ՚ի գործ . դնելու
կ'ըսկսինք , կարծեմ որ գուք ալ գոհ
կ'ըլլաք . Նա մանաւանդ Կատինաց
գալը այդքան ալ մեասակար չերեւիր
ինձ , բայց և այնպէս չեմ գիտեր թէ
ինչու համար այսքան կը պնդէք . և

Եթէ այդքան վեասակար էր, ինչու
Համար այնքան ատեն թոյլատրեցիք:

“Այս, | ատինաց մենք թոյլատ-
րութիւն ըրած էինք բաւական ատե-
նէ ՚ի վեր իրեւ շնորհիք, ոչ թէ իր-
եւ իրաւունք. և ամենայն սիրով
ալ կ'ընդունեինք, որուն իրենք ալ կը
վկայեն :

“Այս, այնպէս կը վկայեն | ատին-
ները, ըստ նորին Վսեմութիւնը:

“Տայց անոնք իրենց տահմանին
մէջ չմնացին, այլ իրենց գէմ քաշուած
սահմանին ցանկը պատռեցին. իրեւ
իրաւունք պաշտօնական կերպիւ (ըն-
թէն) վայելել ու զեցին, որով մեր սեպ-
հականութեան իրաւունքը հիմնիվեր
տապալելու Ճիղվիթական փորձ մի ընել
ու զեցին. որ վասն մենք մեր ըրած շնոր-
հը ետառնել ստիպուեցանք, և վերջ-
նական կերպիւ ալ ետ առինք, և այ-
սու հետեւ այդ շնորհը անոնց ընել ան-
կարելի է Հայոց Պատրիարքին Համար,
և հետեւաբար Ազգին ընդհանրու-
թեան եւս. քանի որ անոնք այն ան-
հաւատարմութիւնը ըրին մեղ թէ՞ի

կրօնս, թէ քաղաքականապէս և թէ իսլ-
 նաս մեր արդար սեպհականութեն. ու-
 րեմն թող ներողամիտ ըլլայ մեր Վե-
 հափառ Կայսրը ընդհանուր Հայոց
 ազգին, որ իւր սիրելի և հաւատա-
 րիմ հպատակն է, և իւր թագաւորին
 տուած և բոլոր Եւրոպից քրիստոն-
 եայ թագաւորաց ստորագրած և ըն-
 դունած կրօնից ազատութեան վրո-
 տահանալով չընդունիր իւր տանը մէջ
 իւր կրօնը, իւր ազգը նախատող
 այպանող և յայտնի թշնամի հիւր մը-
 “Եաւ չեմ գիտեր թէ այս քանին
 մէջ ինչու այսքան կը տագնապի Բ.
 Դուռը, և զմեզ կըստիպէ . ինչու
 չըսեր մեր թշնամեաց թէ՝ ալ բաւա-
 կան է, իմ սիրելի հպատակիտ Հայոց
 ազգին վրայ բաւական ծանրացար, ծա-
 նիր՝ որ ըրածներդ անիրաւութիւն է
 և յայտնի թշնամութիւն, որ Տէրու-
 թեանս հողին մէջ իմ սիրելի հպատա-
 կիտ իրաւունքները յափշտակես և ա-
 նոր անհանգստութիւն պատճառես .
 կացիր դու քո սահմանիդ մէջ, և շատ
 է քեզ, և այն :

“Գիտեմ, Վսեմ, Տէր, պիտի
ըսէք որ՝ չես գիտեր թէ Տէրութիւ-
նըն ալ ստիպեալ է օտար ազդեցու-
թիւններէ այդ ընդդէմ արդարու-
թեան և խղճի որոշումն և բռնա-
դատումն ընել։ Այս այս ալ իրաւ-
է, բայց և այնպէս դարձեալ այդ
Տէրութիւնները որ զիրենք կրօնից
աղատութեան և ազդաց իրաւանց
պաշտպան կը քարոզեն ’ի լուր աշ-
խարհի, (Օսմաննեան բարեխնամ Տէ-
րութեան հարազատ հպատակ այ-
ոց ազգն ինչու այսքան կը տագնա-
պեն. այոց կրօնքը աղատ մնալու ին-
չու արգելք կ’ըլլան. ինչու այոց
աղգին իրաւանցը կը վնասեն. իրա-
ւունք ունին Գյուղանչիսկեանք մեր թոյ-
լատրած մեր սուրբ եկեղեցւոյ մէջ
մեր կրօնքը քարոզ տալով նախատելու-
և մեր Վզգը հերձուած և հերետիկոս
կոչելու, սատանայի որդի և դժոխոց
ժառանգ անուանելու։ Եւրոպիոց այդ
Տէրութեանց ո՞ր օրէնքը կը ներէ եւ-
զեր և ո՞ր դատաստանը այդ վճիռը կրո-
նայ տալ. և եթէ Օսմաննեան Տէրու-

թեան հայատակ քրիստոնեայ մի կամ
նոյն տէրութեց և կամ որ և իցէ օտար
Տէրութեան հողի մէջ բնիկ Եւրոպա-
ցիի մը հետ այսօրինակ դատ մը ունե-
նալու ըլլար, ինչպէս Թրանչիակեանք,
արդեօք նոյն Տէրութիւնները իրենց
հաղատակ բնիկները այսքան պիտի ըս-
տիպէին, այսքան պիտի նեղէին իրենց
սեպհական իրաւունքին մէջ օտար
հիւր մը ընդունելու, ինչպէս Բ. ‘Դու-
ռը այսօր զայոց Պատրիարքը կ’ըս-
տիպէ . քաւ լիցի . ոչ թէ միայն չէին
ստիպեր, այլ և եթէ իրենց հաղատա-
կը թոյլատրած եւս ըլլար իրենց սեպ-
հականութեան մէջ, նոյն իսկ տէրու-
թիւնները անշուշտ պիտի հերքէին
ըսելով՝ այդ մեր բոլիթիքային դէմէ:
Արդ՝ իրենց ուրիշի համար արգիլա-
ծը, իրենք այլոց ինչու կ’առաջարկեն.
և կըստիպեն և ստիպել կուտան հա-
կառակ ամենայն օրինաց :

‘Ուրեմն Բ. ‘Դրան տագնապը ի՞նչ
է . միթէ Տաճկաստանը իրեն համար
յատկացեալ բոլիթիքա մը չունի . ե-
թէ Բ. ‘Դուռը ցաւիր և կը թոյլատ-

ըէ մեզ, մենք ընդհանուր Հայքո
ազգովին կը բողոքեմք նոյն Եւրոպիոյ
Տէրութեանց թէ ամենուն միանգա-
մայն, և թէ զատ զատ իւրաքանչ-
չիւր Տէրութեան, տեսնենք ի՞նչ պա-
տասխան կրնան տալ: Ո՞իթէ աշխար-
հիս վրայ արդարութիւն, իրաւունք,
դատ և դատաստան չմնաց, ջնջուե-
ցան ամենքն ալ. արդարութիւն և
իրաւունք հզօրին ձեռքը գերի ինկան
որ ուղածին պէս գործածէ. քան լիցիւ

“Հայոց ազգին մարդասիրութենէ
շարժեալ և միամտաբար տարին մի
անգամ իբրեւ շնորհք պատարագե-
լու համար ըրած թոյլատրութեան
փոխարէն, նոյն Հայոց Եկեղեցւոյն
մէջ Հայոց կրօնքին դէմ հայհոյու-
թիւն ընելլ որ քրիստոնեայ Տէրու-
թիւն կրնայ յանցանք չէ ըսել:

“Հայոց Պատրիարքին ԱՇԳԻպատոս
գտնուած ժամանակին Պատանիսկեան
կրօնաւորաց գրգռմամբ Կաղղիոյ Պ.
Հիւղատոսին (Ծոմանեան բարեխո-
նամ Տէրութեան հպատակ Հայոց Աղ-
քին վանուց դրան առջեւ կանոնա-

ւոր և անկանոն զօրքեր բերելը առանց Հայոց Պատրիարքին հաճութիւնը առնելու , ո՞ր Տէրութիւն կը քնար թոյլասրել , Տէրութեան մէջ աէրութիւն չըլալը միթէ չէին գիտեր : Եւ չէին գիտեր որ Հայոց աղքը իւր թագաւորէն ամենայն կերպիւ գոհէ , ուստի միշտ հլու և հնագանդ . և այդպիսի արարքներ ընելը Հայոց դարաւոր հաւատարմութեան սաստիկ հարուած տալէ :

“ Այն օրը Պ . Հիւպատոսին իւր պաշտօնական աթուր զօր | ատին եկեղեցւոյ մէջ միայն դնելու իրաւունք ունի , և ոչ այլ ուրեք երբէք , Հայոց եկեղեցւոյ մէջ բերել դնելը և նստելը միթէ փոքր անպատուտ թիւն էր . ինչ պիտի ըսեն Եւրոպիոյ Տէրութիւններն այս արարքին : Եւ այսքանեօք եւս չըաւականանալով կարծես թէ Հայոց սեպհականութիւնը ծախու առած են , կամ թէ Հայոց աղքէն երբէք մարդ չէ մնացեր աշխարհիս վրայ , ևն , ևն , ևն : Եւ այսքան ամարդի վարմունքներէ զինի , ար-

գեօք կրնայ Հայոց ազգը ներել ա
նոնց որ դան և իւրեանց սեփհակա
նութեան մէջ վերոյիշեալ հայհոյանք
ները դարձեալ ընեն . ոչ , ոչ , այսու
հետեւ Հայոց ազգին կողմանէ ան
կարելի է ներել ոյնովիսիանհաշտ թըշ
նամւոյն , որ իւր սիրելի և բարեկամ
եղած միջոցին անգամ այսքան աղէտից
պատճառ տուաւ : Եհա այս է իմ ա
ռաջին և վերջին խօսքս և պատասխա
նըս » . ըսաւ Հայոց Արբագան Պատ
րիարքը և վերջացուց իւր խօսքերը :

Եւ արդ կարելի է որ այսքան դա
րուց ՚ի վեր երաշխաւորեալ և փոր
ձեալ հաւատարմութեան հակառակ՝
այսօր Հայոց Պատրիարքը ելլէ ինքնօ
րէն շարժելու փորձեր ընէ ՚ի վնաս իւր
և ազգ ային պատւոյն . այլ աւելի լաւ
համարեց մերժել լ ատինաց խնդիրքը,
զոր եթէ յանձն առնուր՝ իւր ազգին
վստահութեանը դէմ պիտի մեղան
չէր :

Հետեւեալ օրը ՚որին . Արբագ
նութիւնը Վաեմ . Վութասարրուֆ
Պէյինքով գնալով խմացուց անոր լ ա

տինաց պատարագին աւուր մօտենալը , ու ըստ . “ Առքա իրենց թարգմանը խրկելով հրաման խնդրեցին . ես պատասխանեցի թէ այդ թոյլառուութիւնը անցեալ տարիէն ՚ի վեր խափանուած է , և անոր համար յուղուած խնդիրը վերջացած . դուք Նայոց ըրած շնորհքը չարաշար գործածել ուղեցիք , վասն որոյ ես ալբոլոր ազգիս հաճութեամբը ետ առի զայն , ուստի այդ բանին համար հրաման խընդրելը անօգուած է . որովհեաեւ չպիտի կրնամ շնորհել և պատասխանառութիւնը ընդհանուր ազգիս : — Այս վըճական պատասխանս հաղորդելու համար մուժացի Շեր Վ սեմութեան քով անձամբ գալ , և իմոնալ թէ Քարեխնամ Տէրութեան հարազատ հպատակ ժողովրդեան մի իրաւունքը պիտի պաշտպանէք պէտք եղած միջոցներն ՚ի դործ դնելով՝ թէ ոչ : ”
 “ Առին Վ սեմութիւնը կէս մի հեգնելով բոաւ . “ Դուք վանքին գուորդոցելով բարձրացաւ բանալիքները մէջ քերնիդ խոթելը արդէն գիտէք : ”

“Այս, կրկնեց Ա. Ա. Խանելի Գայ-
 ֆի վանքը քաղաքէն դուրս և առան-
 ձին տեղ մի ըլլալուն, մանաւանդ Ձեր
 Վսեմութեան և Տէրութեանո պաշ-
 տօնէից և զօրաց նեղութիւն չտալու
 համար, այդ դիւրին միջոցը ձեռք ա-
 ռինք այն ատեն: Ե. Ա. և յիշեալ վան-
 քը գրեթէ միշտ գոց կը մնայ և ուխ-
 տաւոր եկած ժամանակ և կերակուր
 ընդունելու համար միայն կը բացուի-
 նայց Մար-Ղագուստ վանքը, որ այ-
 սօրեայ օրո Ծարեխնամ Տէրութեան
 շնորհիւ Հայոց ընդհանրութիւնը կը
 ներկայացնէ, անոր դուռը միշտ բաց
 կը մնայ, չէ թէ միայն այս ժամանա-
 կիս մէջ յորում շնորհիւ (Սամանեան
 Տէրութեան ամեն աղատութիւն կը
 վայելնմք, այլ և անցեալ հին ու վր-
 տանդաւոր գարերուն մէջ անգամ
 միշտ պաշտպանուերէ տիրող կառա-
 վարութեանց ձեռօք: Աւրեմն Հայոց
 Պատրիարքը Բնչպէս կրնայ այդպիսի
 երեւելի վանքի մի դուռը գոցել ա-
 ռանց շարաչար մեղանչելու Տէրու-
 թեան և ազգին պատոյն դէմ: Քա-

նի որ մեծազօր Տէրութեանս աթոռը
 հաստատ է , և ողորմած կայսրն Ապ-
 տիւլ-Աղիղ խանը իբրեւ առիւծ հը-
 զօր անոր վրայ բազմելով կը հսկէ իւր
 հպատակաց անդորրութեանը և իրա-
 ւանց , կարելի չէ որ Հայոց Վար-
 շագուալ վանքին դուռը ցերեկ ժա-
 մանակ գոցուի , Ուրեմն , Վ սեմա-
 փայլ Պէջ , քանի որ անկարելի է գոց-
 ուիլը , կը խնդրեմ Ձեր Վ սեմութե-
 նէն որ միամիտ ընէլք զիս , թէ կրնաք
 կատարեալ խօսք տալ իմ իրաւունք-
 ներս պաշտպանելու , որ վստահ ըլ-
 լամ տէր և պաշտպան ունենալուս :
 Եթէ ինչպէս որ պարտաւոր էք , կրս-
 նաք զիս ամեն կողմէն ապահովէլ , կը
 դառնամ իմ վանքս միամտաքար ա-
 զօթելու բոլոր միաբանութեամբս
 Վարեխնամ Յագաւորիս կենացը հա-
 մար , ինչպէս որ պարտաւոր եմք
 միշտ . իսկ եթէ չէք կարեր վստահա-
 ցընել զիս , ոլէտք է որ ըսէք ինձ յայտ-
 նապէս , որպէս զի ըստ այնմ ես ալ
 ջանամ միջոց մի գտնել իմ աղգային
 վանքիս պատիւը պահպանելու , որու

դէմ եղած անպատռւութիւնը Տէրութեան կը վերաբերի :

“Աւստի համառօտելով կ’ըսեմ՝ Ձեր Ասեմութեան, կամ միամտեցուցէք զիս օրինաւոր կերպիւ պաշտպանելնուդ, և կամ հրաման ըսէք որ վանքիս դուռը գոյեմ երբ անկարող տեսնեմ զիս | աւտինաց յարձակմանը դէմ դնելու . Բայց այս ալ գիտցէք որ՝ թէ՝ Ձեր հրամանաւ գոյելու ըլլամ, և թէ ես անձամք ստիպուիմ գոյելու, հետեւ եալ օրը . պիտի պարտաւորուիմ, Վը սեմ. Պէտք է բողոքել ձեզ համար առ Բ. Դժուռը, ըսելով թէ՝ ազգային իշխաւունքս պաշտպանելու մասին չեզոք մնալով, և ես ընդհանուր ազգիս և Բարեխնամ Տէրութեանս պատիւը պահպանելու համար ստիպուեցայ վանքիս դուռը գոյել. ասկէ պիտի գուշակուի որ դուք | ատինաց ակնառութիւն ըրած էք, և հետեւապէս պատասխանատուութեան ներքեւ կը համարիք Տէրութեան առջեւ : —

Պատասխանեց Ա. | Ասեմութիւնը
“Ես չեմ կընար հրաման տալ ձեզ որ

վանքիոր դուռը գոցես, բայց չեմ ալ
 ստիպեր ըսելով թէ՝ անպատճառ բաց
 պիտի պահես դուռը. այդ ձեր կամ
 քէն կախեալ է : Ե՞ս՝ դիտէք որ նոր
 եկած ըլլալով, տեղւոյս քաղաքական
 սովորութեան և անցքերուն վրայօք
 կատարեալ տեղեկութիւն չունիմ. եւ
 թէ ձեր և այլոց ոմանց խօսքին նայիմ՝
 ստոյգ է որ Կատինք ընդդէմ Տէրու-
 թեան կամաց և կանոնին զձեզ կը
 նեղացնեն եղեր, ձեր իրաւունքը բըռ-
 նալքուելով, ինչպէս անցեալ օր ալ
 յիշեցի . բայց և այնպէս՝ ես քանի որ
 եկած եմ, այդպիսի բան մը պատա-
 հած չէ, և չեմ ալ յուսար որ պատա-
 հի այդպիսի անիրաւութիւն մի : Իսկ
 իմ անձիս գալով, ես պարտաւոր եմ
 իմ Տէրութեանս բոլոր հպատակաց
 իրաւանցը հսկելու, եւս առաւել
 չայոց ազգին՝ որչափ որ կարելի է,
 որպէս զի իրարու իրաւանց վեաս ըլ-
 լորտի և խոռվութիւն մի չծագի. այս
 է իմ պաշտօնս և պարտքս : Ե՞այց այս
 դէպքիս մէջ դուք ալ պէտք չէ որ ան-
 տարբեր մնաք, պէտք է արթուն կե-
 ցա քանի յառ մասնաց

նաք որ ձեր միաբանութեան մէջէն
ալ տմարդութեամբ կամ տգիտու-
թեամբ գրգոռութեան պատճառ չը-
տան, որու առջեւն առնելը դժուար
կ'ըլլայ և դուք ալ պատասխանառու-
կը մնաք: Այս պատուերը սիրահի ը-
նեմնաեւ | ատինաց միաբանութե-

“Մենք մեր վանքին դուռը, լսաւ
Ն. Ա. մինչեւ ցարդ դոցած չեմք
և Ծառուծով չենք դոցեր շնորհիւ մե-
ծաղօր Տէրութեան: Աակայն մեծ
ցաւ զգացի, Ա սեմ. Պէյ, որ դժուար-
ընութիւն յայտնեցիք | ատինաց մին-
չեւ ցայսօր մեր իրաւանց տուած վր-
նասներուն հաւատալ, անկարելի հա-
մարելով որ | ատինք Տէրութեան կա-
մաց և կանսնին հակառակ մեր սե-
փականութեանց դէմշարժած ըլլան.
Հոգ չէ, աղատ էք հաւատալու կամ
ոչ. բայց ես ալ կ'ըսեմ ձեղ, թէ՝ ա-
գան կամ անագան սիրահի տեսնէք բա-
նի որ հոս էք, | ատինաց շնորհքը,
զոր շպիտի ուշանան ցոյց տալու ի-
րենց ծանուցեալ վարժունքով. և
թերեւս մեր լսածները սուտ չհանե-

լու , և կամ Զեր Ասեմութեան դօ-
րութիւնը փորձելու համար ստիպ-
ուին տեսարան մը բանալու . այս գու-
շակութիւնս պարագ մի համարիք .
իէտ մի դրէք հոն :

Խոկ Հայոց միաբանութեան գալով
վատահ եղիք որ ամենեւին անկար-
գութեան մի պատճառ չարուիր .
Երաշխաւոր եմ բոլոր միաբանու-
թեանս և ժողովրդոց . ես աշխա-
տած եմ և սիրոի աշխատիմ որ բոլոր
վանքերուս և քաղաքիս ժողովուրդ-
ները հնազանդութեան մէջ պա-
հեմ և Տէրութեանս կամքն ու հրա-
մանները յարգել տամէ Ուստի յիշեցը-
նելով Զեր Ասեմութեան մեր գալո-
ւեան բուն նպատակը , Զեր հոկո-
ղութեան կը յանձնեմ Խար-Եագուազ
վանքը , և ես կը փութամ երթալ և
ինձ պատկանեալ զգուշութիւնները
ձեռք առնուլ : » Եւ բաժնուեցաւ
Ե . Ասեմութեան քովէն :

Քանի որ Ժամանակն ու Ժամերը
կը մօտենային , Երկու կողմէն ալ մտա-
տանջութիւնները կ'աւելային . Խա-

տինք՝ իրենց սեփականութիւն հա-
 մարած իրաւունք մի կորսունցընելու
 երկիւղը կը տագնապէր . իսկ Հայք
 վտանգաւոր թշնամիի մի ճանկէն ընդ-
 միշտ աղատուելու կասկածանօք ու-
 րախութեան և երկիւղի մէջ կը տա-
 տանէին : Եւ Վսեմափայլ Պէյը իւր
 կողմէն երկու վանուց վրայ եւս 'ի
 հեռուստ դիտելով կը հսկէր արթ-
 նութեամբ , որպէս զի շշուկի մի ձայ-
 նը լսելուն արծուի նման սլանայ : Կը
 տեսնէր նա որ Հայոց միաբանութիւր
 մէկ կողմէն իւր իրաւունքը պաշտ-
 սրանելու համար սրտապնդեալ , բայց
 միանգամայն ինչպէս կը վայելէ իւր
 վկայեալ հաւատարմութեանը և ագ-
 նիւ բնաւորութեանը , ամենայն հան-
 դարտութեամբ կը սպասէր իրաց վախ-
 ճանին՝ մեծազօր Տէրութեան աշխոյժ-
 ու խոհեմ պաշտօնէին խնամոցը վրա-
 տահանալով : Իսկ ընդհակառակը | ա-
 տին միաբանութեան մէջ իրաբան-
 ցում մի կը դիտէ նա , ըսելեայն եր-
 թեւեկութիւն մի պակաս չէր անոնց
 մէջ , և որքան որ բոնութիւն 'ի գործ

գնելու պահ մի տրամադիր եղած է՝
ինայսու ամենայնիւ Վութասարրութ
Պէյին արթուն հսկողութիւնը տես-
նելով՝ իրենց զօրութեանը դէմ կը
զարնուէին, ինչպէս ալիք մի որ իւր վը-
րայ դառնալով կը փշուի . Եւ ոչ
այսափ միայն, այլև կը դանդատին
Վսեմափայլ Պէյէն որ իրենց չէր նե-
րեր գործադրել ինչ որ կը պահանջէ-
ին և Հայոց իրաւունքը աւելի կը
յարդուէր :

Եյսպէս ուրեմն երրորդ անդամի
փորձն ալ ապարդիւն մնաց | ատինաց
կողմէն . Հայք յաղթանակեցին ողոր-
մութեամբն Վստուծոյ և շնորհիւ մե-
ծաղօր Տէրութեան . անցաւ Յուլիսի
137 օրն ալ ներկայ տարւոյն առանց
խոռվութեան . և իմացաւ Հայոց մի
աբանութիւնը և բոլոր ազգը բարե-
խնամ Կայսեր հպատակ ըլլալը և անոր
արժանիքը : Եյն առանց արտաքին
խոռվութեան անցաւ, բայց ոչ ա-
ռանց մտատանջութե, որտերը դեռ
կը յուղուին երկուստեք, բայց ոյս
ունիմք որ ազգաց իրաւունքը և ար-

դարտւթիւնը վերջապէս պիտի յաղը
թէ միջնորդութեամբ Բարձրապա-
տիւ և արդարակորովնորընտիր փոխ-
ալքային, զոր պահեսցէ Տէր յամայր
ամս ՚ի պատիւ մեծազօր (Օսմանեան
Տէրութեան և ՚ի պարծանս անուան
Ե. Վ. Կայսեր :

Յէպէտ և Յուլիսի 13Դ օր անցաւ
ըսինք խաղաղութեամբ, սակայն 14Դ
օրը լուսնալու գիշերը ուրիշ տեսա-
րան մի կը բացուէր Բէթէմի մէջ:
Կատինք չուզեցին բոլորովին ընկճեալ
մնալ, լաւ առիթ համարեցին հին խոր-
հուրդ մի զոր մի քանի անգամ ջանա-
ցեր են ՚ի գործ դնել և չեն յաջո-
ղած, այս անգամ ամենայն փութով
և գիշերային պատրաստութեամբք ՚ի
գլուխ հանեցին : Այս ալ անիրաւի
յափշտակութիւն մի էր, ոչ միայն
Հայոց ազգին իրաւանց, այլընդհա-
նուր քրիստոնէութե : Այն է Բէթ-
էմի Քառասնից այրին սեփականու-
թիւնը : Այն Այրը որ բոլոր քրիստո-
նէից կը վերաբերի և առանց պահպա-
նութեան բաց կը մնար միշտ, նոյն

գիշերը աճապարանօք և զարմանալի
 փութով պարսպի մէջ առին դուռը
 հակառակ Տէրութեան հրամանին, որ
 քանի մի անքամ քակել տուած էր և
 գարձեալ նոր հրաման ալ եկած էր
 որ քակուի, զոր Փրանչիսկեանք իրենց
 սեփականելու համար պատ հիւսել
 կ'ուղեին, Շինուածքը զարմանալի էր,
 ըստ որում սրբատաշ քարերը կան
 խաւ պատրաստեր և փրանին թուա
 նշաններով նշանակած էին, այնպէս որ
 կարծես թէ քանի մի տարիէ ՚ի վեր է
 շէնքը : Հետեւեալ օրը թէպէտ և
 լուր տրուեցաւ Հայոց և Յունաց
 Պատրիարքաց և կառավարութիւնը
 փութաց երթալ և քննութե առնուլ
 շէնքը, այսու ամենայնիւ մինչև ցայսօր
 դեռ կը մնայ յիշեալ Այրը Փրանչիս
 կեանց հսկողութեանը տակ ՚ի մնաս
 իրաւանց ընդհանուր քրիստոնէից :
 Հոս լրացաւ Արբազան Պատրիարքի
 գուշակութիւնը զոր ըրած էր քանի
 մի օր յառաջ Վսեմ. Ուռթասարրուֆ
 Պէյին, ինչպէս վերը յիշեցինք, ըսելով
 թէ՝ « Քանի որ հոս էք, ագան կամ

անադան՝] ատինք իմ ըսածներս սուտ
չհանելու համար իրենց շնորհքը ցոյց
պիտի տան . „ այսինքն այլոց սեփակա-
նութեանց մեաս հասցընելու փորձ
պիտի փորձեն , եւ խռովութեանց
սպատճառներ պիտի տան :

Այս է աւասիկ Առւրբ Տեղեացո
խնդրոյն մանրամասն ծանօթութիւն-
ները զոր 'ի տեղեկութիւն ընդհա-
նուր հասարակութեան և աղքաց , և
'ի գիտութիւն և 'ի զգուշութիւն
ազադայից 'ի գիր արձանացուցաք :



10

0024822

2013

2001

«Ազգային գրադարան»



NL0014812

